Գիրքը համացանցում է **տեղադրվել** Գրքամոլ Նախաձեռնության կողմից՝ «Նոր Նախագիծ Հայ Գրողների Համար» ծրագրի շրջանակներում:

Բոլորիդ կողմից սիրված «Գրքամոլ»-ը մեկնարկել է մի նախաձեռնություն, որի նպատակն է համացանցում էլեկտրոնային տարբերակով տեղադրել բոլոր այն գրքերը, որոնք սիրված են հայ ընթերցասերների կողմից և ցանկանում են դրանք ընթերցել նաև էլեկտրոնային տարբերակով: Ժամանակի ընթացքում մեր կողմից համացանցում կհայտնվեն բոլոր այն գրքերը, որոնք մինչ այս ձեզ համար եղել են դժվար ձեռքբերելի:

Գրքամոլը, ունենալով իր ուրույն տեղը ընթերցասերների հարթակում, իր առջև նպատակ է դրել հասարակության մեջ բարձրացնել սերը դեպի ընթերցանությունը, առաջացնել հետաքրքրություն դեպի դասական և արդի գրականությունը, և կոտրել բոլոր այն կարծրատիպերը, թե այսօրվա հայ իրականության մեջ ընթերցողներ չկան:

Սիրելի՛ ընթերցողներ, մենք շատ ուրախ կլինենք, եթե կլինեն մարդիկ, ովքեր կցանկանան օգնել մեզ այս հանրօգուտ գործում: *Էլեկտրոնային գրքերի պատրաստման և մեր կայքում դրանք տեղադրելու հարցում մենք չունենք որևէ շահ և չենք չհետապնդում որևէ եկամուտ*, բացի հայ և արտասահմանյան գրականությունը հայ ընթերցասերներին հասանելի դարձնելուց, և մենք բաց ենք բոլոր նվիրյալ ու օգնել ցանկացող մարդկանց համար: Եթե դուք ունեք լուսապատճենահանման սարքեր, և ուզում եք միանալ մեր կողմից ձեռնարկվող գործին, ապա գրեք մեզ grqamol@gmail.com հասցեով:

Շնորհակալություն, որ հետևում եք մեզ: Ցանկանում ենք բոլորիդ հաճելի ընթերցանություն:

Գրքամոլ Նախաձեռնություն
URL: www.grqamol.am, e-mail: grqamol@gmail.com

Since 2012 © Grqamol. All Rights Reserved.

Անի Միրզոյան

Երևան-Փարիզը Տիայն չվերթ չէ

Անի Միրզոյան

ԵՐԵՎԱՆ-ՓԱՐԻԶԸ ՄԻԱՅՆ ՉՎԵՐԹ ՉԷ

Ամառաես
Երևան
2021

Միրզոյան Անի
Երևան-Փարիզը միայն չվերթ չէ: Վեպ/Ա. Միրզոյան.– Եր.: Անտարես, 2021.– 232 էջ:

Ֆրանսիայի հայ համայնքի ներկայացուցիչների կազմակերպած միջոցառումը դառնում է վեպի առանցքային հերոսներից երկուսի ճակատագրական հանդիպման պատճառ: Նրանց միջև սեր է ծնվում, բայց միասին լինել չի սպացվում: Տարիների դադարից հետո այդ զույգին միավորողը դառնում է նրանց որդին, ով նույնպես համտեսում է թե՛ սիրո դառնությունը, թե՛ քաղցրությունը: Այս վեպը քեզ կտանի մի ուրիշ աշխարհ, որտեղ դու մի էջում կարող է ծիծաղես, մյուսում՝ տխրես, հաջորդում՝ հիանաս, հետո՝ արտասվես, վերջինում՝ զարմանաս: Սա վեպ է ոչ միայն սիրո մասին, որն անվերջ խոսելու ու խոսվելու կարիք ունի, այլ... մնացածը գրքում:

ISBN 978-9939-76-831-1

© Միրզոյան Ա., 2021
© Անտարես, 2021

Անտարես

Ճակատագիրը եկավ ու քանդեց ամեն ինչ,
քանդեց, որ կառուցի:

Առաջաբան

Նորից բարև, սիրելի՛ ընթերցող: Արդեն երկրորդ գրքովս եմ քեզ ողջունում: Հուսով եմ, որ իմ առաջին՝ «Հայը» վեպը դու արդեն կարդացել ես, իսկ եթե դեռ չես կարդացել, խորհուրդ կտամ այս մեկից հետո այն ևս ընթերցել: Այս մեկը սիրո մասին է, մարդկային փոխհարաբերությունների փխրունության, փոփոխվող զգացմունքների ու դրանցից բխող վարքագծի մասին: Այդ ամենի կենտրոնում սերը թագավորում է աննկատ. նրան չեն տեսնում, բայց նա ունակ է կառավարել մեզ անկախ մեր կամքից:

Այս վեպում կարևորվում է պատասխանատու լինելը: Վեպում ներկայացված առանցքային հերոսներից մեկը անընդհատ փախչում է խնդիրներից, ընդ որում ոչ թե աշխատանքային, այլ կոնկրետ հենց ընտանեկան: Նա փորձում է կասկածամիտ թվացող մտքերը վանել իրենից, որպեսզի ապրի ավելի հանգիստ, արդյունքում՝ ապրում է ավելի անհանգիստ:

Երևի քիչ կլինեն աշխատանքներ, որտեղ ես չանդրադառնամ ազատությանը: Այս պարագայում

դիտարկել եմ անհատի ազատությունը և դրանում նրա հնարավոր կողմնորոշումը, որը միշտ չէ, որ դեպի լավն է տանում մարդուն: Կարող է տանել նաև դեպի վատը ու խորտակել ճակատագիրը կամ լավագույն դեպքում հանգեցնել մեր անգին ժամանակի կորստին: Ժամանակը մեր կյանքի աննկատ սպառվող հարստությունն է: Այն ամենամեծ գանձն է, որն ի ծնե տրվում է մեզնից յուրաքանչյուրին: Այն ավելի թանկ է, քան աշխարհի բոլոր քեշ փողերը, ոսկյա ձուլակտորները, արժեթղթերը, վարկային միջոցները, փոխառությունները, շքեղ առանձնատները: Հետևաբար բոլորս ի ծնե հարուստ ենք, այլ հարց է՝ կգիտակցենք մենք դա, թե ոչ: Ժամանակ կոչվածին գումարեք խելամտություն, և հաջողությունը պատրաստ է: Ժամանակ կոչվածին թողեք մենակ, և մարդ արարածն այդ ժամանակում կկործանի ինքն իրեն:

Գրքում արծարծվում է նաև վրեժի թեման: Ո՞ւմ է այն ավելի շատ վնասում՝ նրա՞ն, ումից վրեժ ես լուծում, թե՞ նրան, ով վրեժ է լուծում: Վրեժ լուծում են, երբ հոչակում են մեղավորին, իսկ ո՞վ է հոչակում մեղավորին, միգուցե հենց նա, ով մեղավո՞րն է:

Սիրելի՛ ընթերցող, գիրքը կյանք է, կյանքը գիրք, ընդ որում մինչև վերջ այն ոչ ոք դեռ չի կարդացել: Եկեք այս գրքով միասին կարդանք կյանքի ևս մեկ էջ: Բարի ընթերցում:

Գլուխ 1

Սեր: Սիրո մասին գրելը դժվար է, առավել ևս, երբ այն կարգին չես զգացել: Բայց արդյո՞ք դա պարտադիր պայման է: Ավելի հետաքրքիր է, երբ այդ անծանոթ զգացումի մասին գրում ես հեռվից՝ նրան չճանաչելով, նրան հեռվից տենչալով: Այդ նրանը միայն հենց բուն զգացմունքը չէ, այդ նրանը հենց Նա է: Էակ, ով ասես քո ներսում լինի, քեզնից տարբեր լինի, բայց քեզնից թանկ լինի: Ինչքա՜ն շատ է խոսվում այսօր սիրո մասին, ինչքա՜ն շատ են նշում, որ այն լցնում է մեր կյանքի դատարկությունը: Այն տառապանք էլ է բերում, բայց տառապանքն էլ է լցնում դատարկությունը: Ընդհանրապես դատարկությունը ինչով ասես կարող ես լցնել: Իսկ կարևո՞ր է արդյոք՝ այն ինչով կլցնես՝ տառապանքո՞վ, սիրո՞վ, թե՞ սիրուց առաջացած տառապանքով: Վերջինս տառապանքի մասնավոր դեպքն է, իսկ կարո՞ղ է սփոփիչ լինել հանգամանքը, որ սիրուց է այդ տառապանքն առաջացել... Երևի կարող է:

Ճերմակ, թափանցիկ վարագույրների շերտի ստորին հատվածի վրա թույլ արտահայտված ոսկեգույն նախշազարդերը և դրանց անմիջապես վրայից իջնող ոսկեգույն երանգի ամրակուռ գործվածքից կարված վարագույրների երկրորդ շերտը յուրօրինակ

շքեղություն էին հաղորդում հանդիսասրահին: Միայն պերճաշուք և միլիմետրի ճշգրտությամբ դասավորված թանկարժեք սպասք, բարձրակարգ սպասարկում, կոկիկ հագնված մատուցողներ. ամեն ինչ կազմակերպված էր բացառիկ պատասխանատվությամբ: Ոչինչ չպետք է վրիպեր մատուցողների տեսադաշտից: Նրանք պետք է աչքերով զգային, որ պետք է մոտենալ, և հյուրը որոշակի պահանջներ ունի իրենց՝ առանց հյուրերի՝ «աֆիցանտ» գոռալու տհաճ վանկարկումների և ակնհայտ անհարմարություն պատճառող ձեռքի ժեստերի, որոնք սովորաբար ուղեկցվում են աչքերով այդ նույն «աֆիցանտ» կարգավիճակ ունեցող որևէ անձի գտնելու՝ տեսողություն լարող, որոշ դեպքերում նաև կործանող փնտրտուքով: Ի՛նչ խոսք, համաձայնեք՝ բարդ առաջադրանք է: Սակայն մատուցողները գիտեին՝ եթե նրանց նման բան են հրահանգում, դա ուղղակի չափազանց ուշադիր լինելու հրամանի գեղարվեստական կողմն է, մնացյալ բովանդակային կողմը նշված է աշխատանքային պայմանագրերում սևը սպիտակի վրա: Հետևապես ավելորդ դյուրագրգռություն հարկավոր չէր դրսևորել. արդեն սովորական էր: Հյուրերը նույնպես իրենց հերթին ձուլվել էին ընդհանուր տրամադրությանը: Այո՛, պետք էր ժպտալ, պետք էր ուրախ ձևանալ, պետք էր սրահին վայել շենշող տեսք ունենալ՝ էթիկետին համապատասխան, բայց ոչ մեկն այդ էթիկետը այդպես էլ չտեսավ, պետք չէր. բնազդն ինքնին հուշում էր հյուրերի վարքագիծը:

Փարիզյան նրբաճաշակությունը երևում էր թե՛ սրահի ներսում, թե՛ սրահից դուրս: Դահլիճը մարմարեպատ էր՝ սպիտակի և մոխրագույնի հաճելի

համադրությամբ բարձրաճաշակ սալիկներով կահավորված, ձգտում էր թագավորական պալատի հյուրի վերացական կարգավիճակ տալ յուրաքանչյուր ներս մտնողին, սակայն դա միայն մի քանի ժամով՝ մինչև երեկույթը կավարտվի, և մատնաչափիկի նման բոլորը կշտապեն դուրս՝ կախարդանքի ավարտին միայն մի քանի վայրկյան ժամանակ ունենալով: Առաստաղի վրա տեղ-տեղ քառակուսիկների տրոհված հայելիներ էին ամրացված, որ գլուխդ բարձրացնես ու այն միանգամից պտտվի: Լավ են չէ՞ մտածել, աչքիս ինտերիեր դիզայները հայ էր:

Հյուրերի հոսքը կանոնավոր հերթի բոլոր կանոնները պահած մտնում էր սրահ ու փորձում կտրվել դրսի աշխարհի թատրոնից և հագնել ներսի աշխարհի թատրոնի դիմակը, լինել ուրիշ: Կարելի է կարծել, թե դրսի աշխարհում ուրիշ չեն, իհարկե ուրիշ են, այնտեղ էլ են ուրիշ. մարդը մի դիմակի հավես չունի, նրան մի քանիսն են սովորաբար պետք լինում:

Կային հյուրեր Հայաստանից, կային հրավիրված ֆրանսիացիներ, սակայն հիմնականում հավաքվել էին Փարիզի ազդեցիկ հայ համայնքի ներկայացուցիչները կամ Փարիզի հայ համայնքի ազդեցիկ ներկայացուցիչները, մի խոսքով՝ ոնց կուզեք: Տարբերությունը այնքան էլ մեծ չէ, քանի որ ազդեցիկ գործիչներն են համայնքը ազդեցիկ դարձնում, և ազդեցիկ համայնքի արդենիսկ ազդեցիկ լինելու փաստը հարթում է պոտենցիալ նորելուկների՝ ավելի բարձր մակարդակի կարիերիստական նկրտումների ճանապարհը: Ուղղակի ճարպիկ է պետք լինել: Ինչ խոսք, այդ հարցում հայերը լուրջ մրցակիցների հետ միայն կմրցեն: Մերոնք ամեն տեղ են ճարպիկ, բացի

Հայաստանից: Չնայած Հայաստանում էլ են ճարպիկ, ուղղակի այստեղ գրեթե բոլորն են հայ, այսինքն՝ ճարպիկ, հետևաբար բոլորը բոլորի ճարպկությանը խանգարում են: Վերջում ստացվում է հայկական «աջաբ սկանդալ». բոլորը բոլորից դժգոհում են, այնուհետև իրարից հոգնելուց հետո երկրից են դժգոհում, հետո երկրից գնալու դեպքում աշխարհից են դժգոհում, էն աշխարհ ճանապարհվելուց հետո էլ երևի թե տիեզերքից են դժգոհելու, որ այդպես էլ չհասցրին Իլոն Մասկի Քրյուդրեգընով[1] մի հատ պտույտ տալ էդ անտեր մնացած տիեզերքով: «.....Թե ասա դրա եղածն ի՞նչ էր, որ ճարպկությունս չհերիքեց». կասեն հայերը՝ աշխարհի բոլոր ազգերին իրենց մատին փաթաթած ունենալու անկեղծ համոզմունքով: Մի խոսքով՝ թողնենք «Քրյուին իրա Դրեգընով» տիեզերքում կայֆեր անելու ու հետո՝ «հայերի մուրազը փորումը թողած» վերադառնալու Երկիր մոլորակ՝ նախանձախնդիր ռուսների ճակատին թեթև կտտացնելու առաքելության առաջին էտապը համարելով «done»:

Հիմա կասեք՝ այս աղջիկը ինչու է իր տան վարագույրները արդուկելու փոխարեն գլուխներս արդուկում գրքի սկզբում սրահի վարագույրների նկարագրությամբ: Բանն այն է, որ հերոսուհին, ում հետ կապված պիտի սկսեմ պատմությունս պոկ չէր գալիս հենց այդ նույն վարագույրներից: Այդ չքնաղագեղ աղջիկը, վարագույրների երկու շերտերը թեթևակի մի կողմ

[1] Crew Gragon – Մարդկության պատմության մեջ առաջին անգամ տիեզերագնացներին ուղեծիր դուրս բերեց մասնավոր ընկերության ստեղծած հրթիռը: Դա հենց Քրյու Դրեգընն է՝ Իլոն Մասկի հիմնադրած Սփեյսիքս ընկերության հրթիռը: Այն Տիեզերք արձակվեց 2020 թվականին նոր նշաձող սահմանելով համաշխարհային տիեզերագնացության մեջ:

քաշելով, մտազբաղ զննում էր պատուհաններից դուրս կատարվող անցուդարձը: Ոչ մեկի հետ երկար չէր շփվում, նայում էր գիշերային փառամոլ քաղաքի դյութիչ լուսավորության ներկապնակին ու բախվում շատ մեծ երկընտրանքի: Երկնտրանքը բարդ էր. ի՞նչ անել՝ դուրս գալ քաղաքի վայելուչ տեսքով զմայլվե՞լ, թե՞ սրահի գեղեցկությամբ հիանալ, մանավանդ, որ շատ ժամանակ չուներ. նա այստեղ հյուր էր, ոչ միայն սրահում, այլ նաև սիրո քաղաքում էր հյուր: Իսկ ո՞վ էր այդ «Նա»-ն: Տղամարդկանց խելքահան անելու համար Աստված տվել էր նրան այդ մարմինը և ասել՝ «գնա՛, խենթացրո՛ւ նրանց», բայց աղջիկն աչքիս այդ վերջին պահը լավ չէր ֆիքսել, որովհետև դրա համար առանձնապես ոչինչ չէր անում: Բայց Աստծո կողմից տրված մարմինն անում էր. մի արարչագործություն, մի հրաշք, որ տեսնում ու քեզ թվում է, թե այդուհետ միշտ ես նրան տեսնելու ամենուր, որովհետև թափանցում է ուղեղդ և տեսիլքի նման հայտնվում դիմացդ, երբ ուղեղդ ազատ է մնում առօրյա գործերից: Տենչում ես նրան ինքնամոռաց, ասես նա է սկիզբը, և նա է ավարտը, բայց այդպես էլ չես հասկանում՝ ինչի սկիզբն է և ինչի ավարտը: Երևի ամեն ինչի, քանի որ ամեն ինչն էլ սեր է... ամեն ինչում սեր է: Ինչպես արդեն հասկացաք, նա համեստության տիպար էր: Յուրահատուկ խորություն կար նրա խոշոր ու սև աչքերում: Հեզ ու չափազանց նուրբ, բայց վառ ընդգծված հայկական դիմագծերով թխադեմ այդ աղջիկը Հայաստանից եկած հյուրերի շարքում էր: Նա փայլում էր իր գեղեցկությամբ ու ակամա գերում բոլոր տղամարդկանց, ովքեր շշկռվել ու միամիտ մի հայացք էին գցել նրա վրա: Հետո, իհարկե, չէին փոշմանել, որ շշկռվել

էին, ավելին ասեմ, շատ էլ ուրախ էին, որ շշկռվել էին, բայց նրանց հիասթափություն էր սպասվում: Սա ձեր համար թեթևության կենսակերպով լցված ծովի մեջ լող տվող ֆրանսուհիները չեն է՛, այստեղ հայկական չորկող բնավորությամբ ու ծանր խոհափիլիսոփայական կյանքի ջատագով հայ կանայք ու աղջիկներն են: Չնայած պակաս կատու չեն նաև մերոնք, ինչևէ վերադառնամ մեր գեղեցկուհուն: Նայում էր նա պատուհանից դուրս՝ մտածելով մի կերպ փախչել այդ անհետաքրքիր ու, ըստ իրեն, անիմաստ խնջույքից, երբ հանկարծ նկատեց մի երիտասարդի՝ վճռականությամբ փայլող աչքերի սևեռուն հայացքը ուղղված ուղիղ իրեն: Մուգ դարչնագույն աչքերով, շագանակագույն մազերով, թիկնեղ, արկածախնդրություն փնտրող և կարծես թե այն գտած այդ տղամարդը այնպիսի կեցվածք էր ընդունել, ասես սրահում մեր գեղեցկուհի Տաթևից բացի ուրիշ ոչ ոք չկար, և անհնար կլիներ նրան հակառակում համոզել: Տղամարդը տարված էր, դա պարզ երևում էր: Մոտեցավ.

– Ես Պատրիկն եմ,– ներկայացավ տղամարդը:

– Տաթև,– ամաչկոտ աչքերը գետնից մերթընդմերթ կտրելով՝ ցածրաձայն պատասխանեց աղջիկը:

– Ես Փարիզում եմ ապրում: Մոտիկ հայ ընկերներս, որոնք նաև այս առիթի կազմակերպիչներից են, ինձ հրավիրել են մասնակիցը դառնալ այս երեկույթին: Ես էլ, մի քիչ չեմուչում անելուց հետո, ընդունեցի հրավերը:

Տեսնելով, որ Տաթևիկն ընդհանրապես հակված չէր իր ասածին որևէ կերպ արձագանքելու, իսկ ինքը վառվում էր խոսակցությունը շարունակելու ցանկությունից՝ շարունակեց նորից խոսել.

– Եթե իմանայի, որ Ձեզ նման գեղեցկուհու եմ այստեղ հանդիպելու, այդ չեմուչումը չէի անի, անմիջապես կհամաձայնվեի:

Տաթևիկը էլի լուռ էր: Պատրիկի համար հունից հանող վիճակ էր ստեղծվել. նա սովոր չէր այդպիսի ինքնամփոփ աղջիկներից զրուցելու ցանկությունը զոռով քաշելուն: Փարիզյան առօրեական կյանքում, հաճախ մասնակիցը լինելով գերող ու դեպի իրենց կանչող, կախարդիչ հայացքներով ֆրանսուհիների հետ պարզ ու արագ ստացվող շփումներին, սա առնվազն տարօրինակ էր: Բայց միևնույն է՝ Պատրիկը վճռական էր տրամադրված, չէ՞ որ չէր կարող լինել այնպես, որ ինքը ինչ-որ բան ուզենար անել և չստացվեր: Նա չէր նահանջում.

– Ա՛խ, ուրեմն այդպես հա՜, ուզում եք, որ անվերջ ես խոսեմ, Դուք լռեք: Լավ, այդ պայմանին էլ եմ համաձայն, ճարս ինչ: Երեկոյի թագուհին Դուք եք,– Պատրիկը շարունակում էր հաճոյախոսել:

– Իսկ ո՞վ է ինձ այդպիսին կարգել:

– Ձեր թույլտվությամբ՝ ես,– գլուխը փոքր-ինչ խոնարհելով՝ ասաց Պատրիկը:

– Բայց... Եթե հիշողությունս չի դավաճանում, ես Ձեզ նման թույլտվություն չէի տվել,– փորձեց ընդդիմանալ Տաթևը:

– Տվել եք: Աչքերով եք տվել, ուղղակի Ձեր աչքերը մոռացել էին Ձեզ զգուշացնել իրենց այդ չարաճճիության մասին, ի դեպ հրաշալի ֆրանսերեն եք խոսում,– գերող ժպիտով ասաց Պատրիկը ու շուրջը մի պահ նայելով՝ նորից դիմեց նրան:– Կուզե՞ք դուրս գանք մի փոքր զբոսնենք. օդը մի տեսակ արհեստական է այստեղ:

– Համամիտ եմ,– ուրախացավ Տաթևը. վերջապես սրտի ուզածը մեկն ասաց, ինչից հրաժարվել պարզապես չէր կարող: Ելքը գտնված էր: Կար մեկը, ով ևս ուզում էր դուրս պրծնել այդ բանկետից:

Ամենուր լույսեր, ամենուր սիրո բույր, սերն ամենուր ես զգում Փարիզում: Միգուցե իրականում դա այդպես չէ՞, միգուցե մեր՝ օտարերկրացիներիս վառ երևակայությո՞ւնն է դա ընդամենը: Իրականում ոչ մի արտառոց բան էլ չկա այդ քաղաքում: Միգուցե այդ մե՞նք ենք չափից շատ ուզում ձուլվել մեր պանծալի, սիրառատ երազներին: Արդյունքում ինքներս էլ հորինում ենք այդ երազների պատկերը մեր աչքի առաջ և ծրագրավորում այդ աչքերն այնպես, որ դա հենց այստեղ տեսնեն՝ Փարիզում: Երջանիկ ես Դու, Փարի՛զ ջան, քանի որ քեզ պատվել են նման փառքով, այնպիսի փառքով, որ բոլորը կուրորեն համարեն քեզ հիասքանչ, կանչող ու բաց թողնել չցանկացող, սիրո ջերմագին տենդով վարակված և քո ներսում գտնվողներին այդ տենդով վարակող մի դիցուհի, թագուհի, քաղաքների քաղաք, էտալոնների էտալոն:

Փարիզի կոլորիտային փողոցներից էր դա, նեղլիկ մայթերով՝ փոքրիկ, ուղղանկյունաձև աղյուսե սալիկներով պատված: Քաղաքի՝ հնի ու նորի միաձուլումից անվրեպ հրացմունքի արժանի այդ հատվածը զարմանալիորեն երեկոյան ժամը 10-ին մարդախեղդ վիճակում էր: Կարելի էր զբոսնել հանդարտ, հանգիստ, առանց շրջակա անցուդարձի խելահեղ ռիթմին տրվելու: Բնությունն ինքն էր օգնում մեր հերոսներին կառուցել իրենց աշխարհը, կառուցել իրենց համար: Գուցե այն տևեր մի կարճ ակնթարթ, րոպեներ, գուցե ժամեր: Արագ կառուցվող ու արագ քանդվող

աշխարհներից էր դա, սակայն իրենց այդ կառուցած աշխարհում օդը թավ ու խորհրդավոր էր, բայց նույնիսկ առանձին վերցված այդ օդն անգամ աշխարհ արժեր, որում տարօրինակորեն շունչդ դողալ գիտի, աչքերդ՝ վազել, ձեռքերդ՝ քայլել, ոտքերդ՝ ծափ տալ: Ամեն ինչ խառն է այդ օդում, ամեն ինչ՝ թարս, որովհետև սերն է այդ օդում... սերն է թարս:

Դրսում եղանակը ցրտոտ էր: Քամին չէր ալարում իր մասին հիշեցնել, չնայած անկասկած գիտակցում էր, որ խանգարում է: Խանգարում է մեր տարված երիտասարդին մտքերը շարադրել: Այնպես շարադրել, որ կողքով քայլող օտարազգի գեղեցկուհին չնկատի նրա մանկական շփոթվածությունը: Պատրիկը հանեց իր բաճկոնը աղջկա ուսերին գցելու համար:

– Չեղավ, այդպես էլ Դուք կսառչեք,– մեծահոգաբար նկատեց Տաթևը:

– Արևը կողքովս քայլում է, էլ ինչպե՞ս կսառչեմ:

Տաթևը գլուխը գետնից հազվադեպ էր կտրում՝ իր հեզիկ շարժուձևով ցույց տալով, որ ամաչում է, բայց նաև հաճելի էր այդպիսի ականջ շոյող խոսքեր լսել ոչ պակաս գրավիչ արտաքինով երիտասարդից:

– Դուք քանի՞ տարեկան եք,– հանկարծ հարցրեց Տաթևը:

– 26, իսկ Դո՞ւք:

– 21:

– Հայաստանի՞ց եք, թե՞ Ֆրանսիայում եք բնակվում,– հետաքրքրվեց Պատրիկը:

– Հայաստանից, և չորս օրից վերադառնալու եմ:

– Օ՜ միայն ոչ դա, իսկույն սիրտս կպատռվի: Մի՞թե ընդամենը 4 օր ունեմ զմայլվելու Ձեր պես լույս ճառագող հրաշքով:

– Մի ասեք այդպիսի բաներ, խնդրում եմ,– Տաթևը նորից ամաչեց:

– Ինչո՞ւ, ի՞նչ եմ ասում, որ Ձեզ նեղացրի,– զարմացավ Պատրիկը:

– Չեք նեղացրել, ավելի ճիշտ... ըըըմմ... Նեղացրել եք, ինձ անսովոր է լսել նման խոսքեր: Մենք դեռ նոր ենք ծանոթանում, դրա համար խնդրում եմ ավելի համեստ արտահայտվել:

– Կներեք, բայց սրանից համեստ էլ ո՞ւր: Հետո այն, որ դեռ նոր ենք ծանոթանում, դա չի նշանակում, որ Ձեզ արժանի ուշադրության չպիտի արժանացնեմ,– հաստատակամ հայտարարեց սիրառատ երիտասարդը:

Նրանք շարունակում էին զբոսնել, զրուցել: Հիմնականում Պատրիկն էր հարցախեղդ անում Տաթևին, մինչդեռ աղջիկն ամաչում էր շատ հարցեր տալ: Խոսում էին աբստրակտ թեմաներից, ոչ ճանաչողական: Սակայն այդտեղ նույնպես պարզվեց, որ նրանց աշխարհայացքները բավականին մոտ են իրար: Տաթևը մերթընդմերթ նայում էր Պատրիկին ու արագ հայացքը փախցնում նրանից, որպեսզի նա չնկատի իր մեջ արթնացող անճանաչելի հույզերը, որոնք միայն աչքերում է, որ հնարավոր չէ թաքցնել: Պատրիկը մինչև ականջների ծայրը սիրահարվել էր, գլուխը՝ լրիվ կորցրել: «Ինչպե՞ս է հնարավոր՝ ընդամենը մեկուկես ժամ է, որ ծանոթ ենք, ու ես ինձ չեմ տիրապետում». մտածում էր նա:

Հաջորդ օրը՝ կեսօրին, Պատրիկը Տաթևին հրավիրում է զբոսնելու: Գրեթե ամբողջ օրը միասին անցկացրեցին: Երկուսի զգացմունքներն ավելի ու ավելի էին արտահայտիչ դառնում: Դա արդեն անթաքույց

նկատվում էր նաև Տաթևի վարքագծում: Նա երբեք որևէ մեկի հետ իրեն այսքան երջանիկ չէր զգացել: Սկսում էր մտածել, որ այս պատահական ծանոթությունը կարող էր ճակատագրական լինել: Իրականում ճիշտ էր նա. ճակատագրական էր, սակայն ոչ այն ուղղությամբ, որ թվում էր: Նրանք երկուսն էլ իրենց սրտի խորքում հասկացել էին, որ սեր է ծնվում միմյանց հանդեպ, ու դեռ պարզ չէ, թե ում մոտ է այն ավելի ուժեղ: Տաթևը նկատում էր, որ երկու օր է, ինչ անընդհատ նրա մասին է մտածում, ու աչքն այդ անիծյալ հեռախոսին է գամված. «Աստվա՛ծ իմ, ե՞րբ է զանգելու, նորից ձայնը լսեմ: Չէ՛, սա խելագարություն է: Հնարավո՞ր է արդյոք այսքան կարճ ժամանակահատվածում այսպես սովորել սիրել մեկին, մտածել նրա մասին, գժվել նրա համար: Այս ի՞նչ է ինձ հետ կատարվում: Ես «ես» չեմ, ես այսպիսին չէի, սերն ի՞նչ է անում մարդու հետ: Երբ տեսնում եմ նրան, սիրտս այնքան արագ է խփում, ուզում եմ գա ու էլ չգնա: Բայց ի՞նչ կա դրա մեջ, երազել չի՞ կարելի: Ի՞նչ սխալ բան եմ անում ես: Ի՞նչ կա ամաչելու, իսկ գուցե կա՞, բայց ի՞նչ, ինչո՞ւ». մտածում էր Տաթևը: Սիրահար սիրտն ուրիշ է: Այն ջանում է վերագտնել իր նախկին հավասարակշռությունը, բայց չի գտնում, որովհետև սիրահար սիրտն այդուհետ փխրուն է: Միգուցե հետո ավելի կարծրանա, բայց ներկա պահին սրտի տիրակալը այդ անձի մարմնից դուրս է, և դա ամեն ինչ փոխում է: Իսկ ի՞նչ ես զգում այդ ժամանակ: Սիրտդ լցված ուզում է գոռալ, և ինչո՞ւ չթողնել, որ նա գոռա, քանզի դու սիրում ես, երբ սիրում է նա: Այդ գոռոցի մեջ խոսքդ չի լսվի. սիրտդ գոռում է, երբ գալիս է Նա: Իսկ ի՞նչ կա թաքնված սրտիցդ դուրս եկած ամեն մի գոռոցի

մեջ, երբ այն անձայն խլացնում է քեզ: Սրտիդ թրթիռով ապրել ես սովորում: Այդ թրթիռը կա, երբ գալիս է Նա: Խոսքդ ինչպե՞ս տեղ հասցնես, երբ բղավոցը դուրեկան չէ: Սիրտդ հանդարտություն է տենչում, իսկ հանդարտություն գտնում ես, երբ գալիս է Նա:

Երրորդ օրն էր: Հաջորդ օրը երեկոյան պիտի մեկներ Հայաստան, բայց Տաթևի ուշքն ու միտքը Պատրիկն էր: Այդ օրը ևս հանդիպելու էին: Անհամբեր էր, ուզում էր տեսնել ու ամուր գրկել նրան նորից, կարոտած գրկել: Սիրող սրտի համար անգամ սիրելիի գրկում կարոտ ես զգում ու տանջվում այն դեռ չկայացած պահի սպասումից, որ ուր որ է նրա գրկում քեզ զգալու պահն ավարտվելու է: Տաթևը երկնքում էր, երջանիկ էր, փայլում էր այնպես, ինչպես երբեք չէր փայլել: Բազմաթիվ գերված աչքեր եկել ու անցել էին նրա կողքով, սակայն նա գերված չէր եղել երբևէ որևէ մեկով, պարզապես չէր նկատում ու վերջ: Հիմա ինքն էլ զգաց, թե դա ինչ զգացմունք է: Սիրո խայծը ուտում է քեզ, սիրո խայծը նորից ձևում է քեզ, նորից կյանք տալիս, ուրիշ կյանք տալիս, ու դեռ հարց է՝ եթե քեզ մնար, որ կյանքը կընտրեիր՝ «մինչև դա՞»-ն, թե՞ «դրանից հետո»-ն: «Դրանից հետո»-ն բարդ է, «դրանից հետո»-ն խաղաղ չէ: «Դրանից հետո»-ն կոփում է, կոփում գրատան «սեր» վերնագրով բոլոր գրքերը կարդալու արդյունքում, դրանցով ապրելու արդյունքում:

Պատրիկը, ինչպես իսկական ջենտլմեն, մի մեծ ծաղկեփունջ վարդեր ձեռքին, դուրս եկավ նրան դիմավորելու, ու միասին բարձրացան երիտասարդի բնակարան: Ընթրիք էր իր ձեռքով պատրաստել, սեղան գցել, ամեն ինչ հրաշալի էր: Պատրիկը հրավիրեց

աղջկան պարի, բայց կեսից մոռացել էին, որ պիտի պարեին: Հավերժական սիրո մասին պատմող ազնավուրյան երգի կախարդող հնչյունների ներքո նրանց հայացքները միացան, դարձան մեկ: Նրանց առաջին համբույրը կայացավ, ու նայեցին նորից մեկմեկու: Տաթևն արդեն ինքնավստահ, առանց վախի ուղիղ նայում էր Պատրիկի աչքերի մեջ՝ փնտրելով իրեն դրանցում... գտավ... Նա այնտեղ էր, նա տեղափոխվել էր այնտեղ: Նա Պատրիկի հոգում էր, ամենաարքայավայել հատվածում՝ ուղիղ կենտրոնում: Թվում էր, թե այդտեղ հայտնվողին երբեք դուրս չեն հանի իր հաստատված տեղից: Ու հենց այդ ժամանակ Պատրիկը՝ մեր այդ երջանիկ ապուշը, որոշեց ասել այնպիսի մի բան, որ դժվար թե սիրո հարցում մի քիչ քթածակ ունեցող տղամարդ նման իրավիճակում կասեր: Նա ամուսնացած էր: Երեք օր է, ինչ ուզում էր խոստովանել դա Տաթևին, բայց չէր համարձակվում: Տաթևը մի պահ սառեց, քարացավ հայացքը, ու արցունքները դանդաղ գլորվեցին այտերն ի վար... վրդովմունք, ափսոսանք, անորոշություն, տառապանք... Չգիտեմ էլ՝ որը պիտի ավելի շատ լիներ. վրդովմունք, որ ավելի շուտ չի տեղեկացվել դրա մասին, ափսոսանք, որ դա այդպես է, անորոշություն, թե՝ «բա հիմա ի՞նչ անեմ ես», և տառապանք, որ «ինչո՞ւ ես սիրեցի սխալ մարդու», մտքեր, որ պիտի պտտվեին նրա գլխում, սակայն ոչ... դատարկություն էր... Ոչ մի միտք էլ չէր պտտվում: Տարօրինակ է, այդ ինչպե՞ս: Բացատրում եմ... սեր, լսած կա՞ք կամ ավելի ճիշտ զգացած կա՞ք, թե չէ լսելը այս պարագայում առանձնապես չի օգնի: Դեմքին արցունքի կաթիլների հայտնվելուն զուգընթաց շարունակում էր նայել Պատրիկին ու զգում էր,

որ խաբված չէ: Նա սիրում է, այդքան անկեղծ հնարավոր չէ խաղալ, թե չէ Պատրիկի աչքերը հիմա վաղուց մատնած կլինեին իրենց տիրոջը, կամ գոնե ուղիղ չէր համարձակվի դեմքին նայել, բայց նայում էր ուղիղ աչքերի մեջ, չէր էլ թարթում: Պատրիկն ուզում էր կռահել՝ ինչ է կատարվում աղջկա սրտում, և որն է լինելու նրա հաջորդ քայլը: Պարզ էր, որ Տաթևից է ամեն ինչ կախված՝ կփախչի՞, թե՞ կմնա: Իսկ բոպեները սահում էին, նրանք լուռ էին, չէին խոսում: Պատրիկը անհամբեր էր, տղամարդ է չէ՞ վերջապես: Ինքն իր ասելիքն ասել էր, քարն էլ՝ սրտից գցել: Նա համարձակվեց նորից համբուրել Տաթևին և դիմադրություն չստանալով՝ ինքն իրեն իրավունք վերապահեց շարունակել: Տաթևի սևաթույր, խոշոր աչքերից հոգու մաքրությունն աննկատ հորդում էր դուրս՝ կասկածի մեկ թույլ նշույլ անգամ չթողնելով Պատրիկի մտքում, որ իր գրկում եզակի հրեշտակ ունի: Անկաշկանդ լռության մեջ նրանցից յուրաքանչյուրը լսում էր դիմացինի սրտի տրոփյունը: Պատրիկը քաղցրաձայն շշնջաց Տաթևի ականջին՝ «մի՛ վախեցիր» ու մի փխրուն համբույր բաշխեց գեղեցկուհու այտին: Ամուր գրկեց նրան, հետո հայացքը հառեց դեպի փոքր-ինչ բաց թողնված պատուհանից երեկոյան նոսր մշուշի հետևից բացվող երկնքի խորհրդավոր հորիզոնը: Այդ կիսաբաց պատուհանից սենյակ ներթափանցող մեղմ զեփյուռը լուռ շարժում էր աղջկա երկար, ծովի ալիքներ հիշեցնող, չքնաղագեղ սև վարսերը: Պատրիկը ևս միացավ գործին՝ մատները խրելով նրա անուշաբույր վարսերի մեջ, հետո ձեռքի մատները նուրբ տարուբերում էր նրա դեմքով՝ շփելով դրանք աղջկա այտերին ու իր կրքոտ շուրթերով թույլ կիսահպում համբույրներ

պարգևում նրան, ասես դրանով էլ ավելի ցանկալի ու գրգռիչ դարձնելով իսկական ու լիարժեք համբույրի տենչանքը, որ պիտի գար հետո՝ փոխարինելու թեթև ու նրբազգաց հպումների համը: Տաթևը խելքահան էր լինում երիտասարդի՝ արևայրուք ընդունած թարմ մաշկի բույրից, նրա կրքոտ շնչից: Այդ շնչի հետ դուրս եկող ցանկացած կիսախուլ ձայն, բառ կախվածության մեջ գցող դեղահաբի նման ստիպում էր ավելի ու ավելի ամուր փարվել իր սիրուն, բաց չթողնել, զգալ նրան ներսից, իր իսկ սրտի ներսից: Հանկարծ Տաթևը սկսեց անհագ խառնշտել ֆրանսիացու մազերը՝ ակնարկելով, որ համաձայն է նրա կողմից էլ ավելի համարձակ քայլերի: Պատրիկի շուրթերի այրող համբույրները սահում էին հայուհու պարանոցի շուրջ: Այդ համբույրներից այրվող իր թուխ մաշկը ասես թմրեր նրա ամեն մի հպման հետ՝ աղերսելով բաշխել իրեն նման բերկրանքի ևս մեկ պարգև: Նրանց մարմինները հենց այդ վայրկյանին, հենց այդ ժամանակ ցանկանում էին կորչել, բայց կորած համարվել նույն տեղում, կապ չունի, թե որտեղ, կարևորը նույն տեղում... միասին... միաձուլվելով իրար, տենչալով իրար, զգալով իրար: Անվերջանալի համբույրների ու գրկախառնությունների տեղատարափի մեջ փշրվում էր գիտակցությունը, այն պարզապես անզոր էր: Նրանք այդ ժամանակ այլ աշխարհում էին: Ոչ ոք չկար այդ աշխարհում, միայն իրենք էին: Ժամանակը ևս ինչ-որ տեղ էր փախել: Երևի կարևոր գործեր ուներ, չգիտեմ, բայց նա էլ չկար, կամ գուցե կար, բայց նրան նկատող չկար: Երկու սիրող սրտեր այլևս չխոսեցին, միայն զգացին իրար՝ սիրո ծովում հանդարտ լող տալով: Սիրո վայելքը միայն ցանկությունների բավարարում չէ: Այն

անթափանց հաճույքի պես քնքուշ կարող է լինել, ոչ միայն սանձարձակ և կրքոտ, վայրագ ու կատաղի, այլ նաև նուրբ ու շոյող, գուրգուրանքով լի: Վայրկյաններ, րոպեներ, ժամեր, որ սլացան դանդաղ, որպեսզի տևեն երկար, որպեսզի տևեն անվերջ, զգան ու զգացնել տան անպատմելին, սահուն տանեն երջանկության անգին ակնթարթները վերև՝ անհունության մեջ կորցնելով վայրկյաններ, րոպեներ, ժամեր, գտնեն հավերժություն, որը սակայն նույնպես ավարտ ունի: Սիրո հրավառության մեջ մարում են ծովեր: Ծովերի մեջ կայծակում է կրակ, բոցկլտում մեկ աջ, մեկ ձախ, ու թքած, որ այն ծովի վրա է, ու թքած, որ այն չի հանգչում: Ջրի մակերեսին կրակը չի հանգչում. կրակը ջրից ուժեղ է: Այդպես էլ սերը վախից ուժեղ է: Կռիվ է տալիս, կռիվ է տալիս, վիատված ընկնում հատակին, բայց վեր է կենում ու հաղթում, որովհետև սերը վախից ուժեղ է, որովհետև կրակը մակերեսին չէ միայն, կրակը հատակից է գալիս, ծովի հատակից, ծովի խորքից, իսկ ծովերը մարում են, մարում՝ կրակից:

Գիշերն անցավ, երջանկությունն էլ հետը տարավ:

Առավոտյան Պատրիկը շուտ էր արթնացել: Դանդաղ շոյում էր անուշ քնած իր հրաշքի սև վարսերը, ձեռքով հպվում նրա մարմնին, նրբորեն շոյում մաշկը, այնպես, որ զգա միայն ինքը, Տաթևը չզգա ու չարթնանա: Մի քիչ էլ քնի ու թողնի Պատրիկին անվերջ նայել իրեն, որպեսզի վանի անախորժ մտքերը, որոնք պտտվում էին այդ ժամանակ երիտասարդի ուղեղում: Անցավ մի քանի րոպե, և Պատրիկը վեր կացավ անկողնուց ու մոտեցավ բացված պատուհանին: Մտահոգություններն արդեն անհնար էր վանել, դրանք

շատ էին գլուխ բարձրացրել: Թեթև բարկություն էր իջել դեմքին: Բայց ո՞ւմ վրա էր նա բարկացած՝ ի՞ր, թե՞ Տաթևի, կամ, հիմա ո՞վ էր մեղավորը: Դա կարևո՞ր էր արդյոք, եղածը եղած էր: Բայց բարկությունը չէր անցնում, ընդհակառակը՝ ավելի էր ուժգնանում: Մինչև Տաթևն արթնացավ, Պատրիկն անկառավարելի հոգեվիճակի պիկում էր, ուր որ է կպոռթկար.

– Ի՞նչ է պատահել, ինչո՞ւ ես գժված,– տարակուսած հարցրեց Տաթևը:

– Իսկ ի՞նչ չի պատահել,– տարօրինակ սառնությամբ նայեց նրան Պատրիկը:

Այդ պահին Տաթևը նույնպես վայրէջք կատարեց հողի վրա ու հասկացավ, որ բան է պատահել: Ինքն իր վրա բարկացավ այն բանի համար, որ ինքն ավելի շուտ պիտի դա գիտակցեր և ոչ թե Պատրիկի խոժոռված դեմքին նայելուց հետո, նրան իր ապուշ հարցը տար: Տաթևը հանդարտ ձայնով ասաց.

– Հիմա ի՞նչ է լինելու:

– Չգիտեմ, ես նրան սիրում եմ:

– Ո՞ւմ:

– Կնոջս:

– Իսկ ի՞նձ:

Պատրիկը շրջեց դեմքը դեպի պատուհանը... չէր խոսում: Դրանով ամեն ինչ հասկացնել տվեց:

– Չեմ հավատում: Ինչ-որ բան այն չէ, չի կարող այսպես լինել: Ես սիրեմ, իսկ դու՝ ոչ: Դու խաբում ես: Դու էլ չգիտես՝ ինչ ես ասում: Հիմա դու ինձ ես փորձում,– շփոթված հայտարարեց Տաթևը:

– Ես հիմա փորձեր անելու տրամադրություն չունեմ,– շատ անտարբեր ու սառը ասաց Պատրիկը:

– Եվ ի՞նչ:

– Ի՞նչը ինչ:

– Հետոն ի՞նչ:

– Ոչինչ:

– Հենց այդպես ու վե՞րջ:

– Ես պատասխանատու չեմ: Դա քո կամքով է եղել նաև: Ի՞նչ ես ինձանից ուզում: Ես ոչ մի վատ բան չեմ արել քո հանդեպ: Մենք երկուսս էլ ուզում էինք դա,– արդարանում էր Պատրիկը:

– Պատասխանատու չե՞ս,– զարմացած նայեց վրան Տաթևը ու մի փոքր լռելուց հետո կուլ գնացող ձայնով շարունակեց,– լավ, ոնց կուզես, հիմա ինձնից քիչ բան է կախված:

– Ի՞նչ նկատի ունես:

– Չեմ կարող քեզ համոզել ինձ հետ լինել, չեմ ուզում պարզապես,– գլխիկոր ասաց Տաթևը:

– Ինչո՞ւ,– փորձում էր հասկանալ աղջկա մտքերը Պատրիկը:

– Որովհետև սիրում եմ... Իրոք սիրում եմ:

– Ես քեզ ինչ-որ չհասկացա,– գլուխը թափահարեց Պատրիկը:

Տաթևի խոսքերը նման էին թույնի, որ ասես հենց նոր ներարկեցին Պատրիկին, սակայն նա չզգաց այդպես էլ, թե ինչ ներարկեցին, չհասկացավ պարզապես: Սա այնպիսի թույն էր, որն իր մեջ նաև հակաթույն ուներ և ամեն ինչի բացատրությունը, որը նույնպես չհասկացավ, չուզեցավ պարզապես:

Տաթևի դեմքին գույն չկար, խռովությունն էր տիրել ներսը: Խռովություն առաջին հերթին ինքն իրենից, սակայն նա հանգիստ էր, նա միշտ էր հանգիստ: Աչքերը սառել էին, նայում էին սենյակի ինչ-որ կետի, հավանաբար դիմացը դրված հարդասեղանի

հայելուն, կարևոր չէ: Մեկ է՝ նա իրեն այդ հայելու մեջ չտեսավ, նա ոչինչ չտեսավ, քանի որ ոչնչացված էր ներքուստ: Արցունքներն անշտապ գլորվում էին սառած ու անթարթ աչքերից:

– Մենք իրար չհասկացանք,– կամացուկ ասաց Տաթևը, բայց այնպես, որ պատուհանի մոտ շվարած կանգնած տղամարդ կոչվածը դա լսի:

– Բայց իրոք չհասկացա,– էլի իրենն էր պնդում Պատրիկը:

– Մի օր կհասկանաս, բան չկա,– անվերջ շրջապտույտի նմանվող այդ անիմաստ խոսակցությանը վերջ դնելու ցանկությամբ մարող ու անտարբեր ձայնով ասաց Տաթևիկը:

Տաթևն անխոս հագնվեց ու վերջում առանց որևէ բառ ասելու դուրս եկավ բնակարանից: Երեկոյան մեկնելու էր, արցունքներն աչքերից հոսում էին, նա քայլում էր փողոցներով շփոթված ու մտածում. «....ժամանակ ի՞նչ անեմ քեզ հետ, ինչպե՞ս քեզ հետ տամ, ինչպե՞ս քեզ ջարդեմ, որ էլ չլինես, որ էլ չլինեմ: Մեզնից ինչ-որ մեկը չլինի, որ էլ չզգամ, չզգամ, որ խաբվել եմ, չզգամ, որ ուզեցել եմ խաբվել: Երևի իրոք տամ ջարդուփշում անեմ ինքս ինձ, որովհետև դու մեղավոր չես, ժամանա՛կ, այդ ես եմ մեղավոր, որ քեզ մի պահ մոռացա: Մոռացա, որ կողքս ես, ու կորցրի քեզ, հետո կորա ինքս մի անծանոթ տեղում, մի սքանչելի տեղում, իսկ անծանոթ սքանչելին միայն թակարդում է: Զգուշավորությունը լավ բան է, եթե սիրուն չի պարտվում»:

Կյանքում երբեմն սխալներ ենք անում՝ գիտակցելով, որ սխալ ենք անում, բայց միևնույն է ուզում ենք այդ սխալը անել, որովհետև այդպես է հոգիդ թելադրում,

իսկ դու չես ուզում խոստովանել, որ քո ներսում կա ինչ-որ ուժ, ում դու ուզես, թե չուզես ենթարկվում ես: Այդ պահին դու նրա մեջ ես, ոչ թե նա քո մեջ: Այդ սխալը խնդիրներ է առաջացնում, ու ստիպված ես լինում դրանց միջով անցնել, բայց մեկ է այդ սխալը պիտի անեիր: Խնդիրները հեշտ է հաղթահարել, երբ այդ «սխալը» համարում ես ժամանակի «ճիշտ»: Նախ քեզ ես դրանում համոզում, հետո շրջապատիդ, ու թեթևություն է իջնում քո վրա, որն օգնում է հաղթահարել քո իսկ սխալի արդյունքում առաջացած խնդիրները: Բայց շրջապատը չի թողնում, ճնշում է՝ «չէ՛, դու պիտի քեզ միշտ սխալ զգաս, ի՞նչ թեթևություն, ի՞նչ բան»: Ի՞նչ ապրել, ապրել չկա, կա միայն զղջում, և այդ շրջապատը ստիպում է քեզ անընդհատ զղջալ: Այդ զղջման մեջ ապրել չկա, կա միայն ցավ, որը երբեք չպիտի մոռանաս, չեն թողնի, որ մոռանաս: Այդ չթողնելու գործում հատկապես դաժան է հայկական «նամուսով» շրջապատը, հանրությունը, մենք, մեր «ճիշտ» ապրելու կարծրատիպերը և ոչ մի քայլ դրանցից այն կողմ:

Տաթևիկը դեռ պիտի վերլուծեր կատարվածը, հանգիստ դներ, շարեր ամեն ինչ իրար ետևից և հասկանար՝ ինչպես ապրել հետո: Նա շատ հանդարտ բնավորությամբ աղջիկ էր, ունակ էր սթափ նայելու իրադարձություններին: Հայուհու համար սա ուրիշ հոգեվիճակ է, եվրոպացու համար՝ ուրիշ: Պատրիկը երևի չէր էլ խորացել այդ ուղղությամբ, իրեն պետք չէր դա: Բայց Պատրիկը չէր ստում: Նա անչափ սիրում էր իր կնոջը, ով այդ դեպքերի ժամանակ Ֆրանսիայում չէր, գործուղման էր մեկնել իր հայրենի Բրազիլիան: Մի տարի է՝ ինչ ամուսնացած էին: Կլաուդի էր անունը

ու 4 տարով մեծ էր ամուսնուց: Կլաուդին մեկ անգամ արդեն ամուսնացել, բաժանվել էր: Նախկին ամուսնուց երկու դուստր ուներ, նրանց իր հետ նույնպես Բրազիլիա էր տարել. փոքր էին:

Տաթևիկը վերադարձավ Հայաստան: Իր գործով էր շարունակում զբաղվել, նա լայն ճանաչում ունեցող հայաստանյան օրաթերթերից մեկի հիմնադիրն ու գլխավոր խմբագիրն էր: Վաղ տարիքից գնացել էր իր երազանքի հետևից ու հասել: Նա զբաղվում էր այն գործով, որն իրեն հաճույք էր պատճառում: Դժվարությունների առաջ չէր ընկրկում: Ուսանողական տարիներին զուգահեռ ծնողներին խնդրել էր իրեն հնարավորությունների սահմաններում գումարով ապահովել, որպեսզի իր գծագրած երազանքը փորձեր իրականություն դարձնել: Ծնողները թերահավատորեն էին վերաբերվում նրա մտադրությանը՝ օրաթերթի խմբագրություն հիմնելու հետ կապված, սակայն գիտակցելով, թե ինչ տուրուդմփոց կամ ավելի կոնկրետ «դը՛մփ, դը՛մփ, հո՛ւ» էր սպասվելու մերժման պարագայում, որոշեցին գումարը տալ: Փորձառության ու հմտության կուտակման համար շատերին իր հետ միասին առաջին քայլերն անելու հնարավորություն էր տվել: Լրագրողների ու հոդվածագիրների երիտասարդ, անփորձ, բայց էներգիայով լի թիմ էր հավաքել: Ժամանակի հետ Տաթևը պրոֆեսիոնալ էր դարձել, նոր կադրեր էր անընդհատ ներգրավում գործի մեջ: Նրանց սովորեցնում ու նրանցից սովորում, քանի որ սովորելը միակողմանի չի լինում: Այդպես փոքրիկ քայլերով, դժվարություններ հաղթահարելով՝ երիտասարդ Տաթևիկը փորձում էր կայացման ուղին հարթել «Օրվա թեմա» օրաթերթի համար:

Ֆրանսիական գլխապտույտ ուղևորությունից հետո, որի ժամանակ ճաշակել էր իսկական սիրո համը, Տաթևը մի քիչ փակ էր դարձել, մտատանջ: Դե, իր դեպքում դա նվազագույնն էր, որ պիտի կատարվեր: Բայց ընդհանուր այդ ամենը քիչ էր նկատվում: Նա աշխատում էր ցույց չտալ, որ իր կյանքում տեղի է ունեցել մի բան, որը սովորաբար տակնուվրա կաներ հայ աղջիկներից շատերի կյանքը: Մի քանի ամսից իմացավ, որ հղի է: Սպասելի էր: Նա երբեմն վախով մտածում էր նման զարգացման մասին: Թվում էր, թե պիտի խառնվեր իրար, գտներ այդ անիծյալ Պատրիկին ու գլուխը տար ջարդեր կամ էլ ասեր՝ «բաժանվիր ու ինձ հետ ամուսնացիր, թե չէ ամբողջ աշխարհով մեկ քեզ խայտառակ կանեմ»: Մի խոսքով՝ լաչառությունը կմիացներ ու ոտքը գազին դրած արգելակի գոյության մասին չէր հիշի: Բայց չէ, սա Տաթևն է: Այդ լուրն իմանալուց հետո անգամ իրեն հանդարտ էր պահում: Հավասարակշիռ էր, առանց սեփական նյարդերը պատառոտելու շարունակում էր ապրել, ապրել սովորական, առանց աջուձախ սրանրան անիծելու: Վերջին հաշվով եղածը իր գիտակցված քայլի արդյունքն էր: Բայց հայ հասարակությունը «վայ աման» ժանրի իրադարձություններին համապատասխանող ֆոնը հնարավոր չէ, որ անտեսեր: Իսկ նրա փորի մեծանալու հետ զուգահեռ պարզ էր, որ հրատարակվելու էր «վա՜յ ամա՜ն, բա չիմացար...» վերնագրով հերթական հատորյակը հարևանների ու այլ ծանոթների կողմից: Մասնավորապես այսպես. «.....Փորը մեծացավ..... է՜հ, հիմա էլ փոքրացավ..... չէ՜ է՜հ, աղջի՛, նույն ա մնացել..... Լսի՛ր, սա հաստատ էն մեր տակի հարևան Վալոդի արածը կլինի..... է՜,

Վարդուշ, ի՞նչ ես ասում: Նա անբաշարի մեկն ա: Մտքովս էն էլեկտրիկ Կամոն ա անցնում..... չէ՛, ինքն էլ դժվար լինի, է՛հ տենաս՝ ով ա է՛: Աղջի՛, դե՛ մի բան մտածեք էլի, ո՞նց բերանից հանենք ճիշտը, ա՛խր հետաքրքրությունից մեռնում եմ: Վա՛յ, էրեխե՛ք, սուսե՛ք, եկավ»:

– Բարև, Տաթև՛ ջան, ո՞նց ես... հը՞ն խփո՞ւմ ա:

– Ո՞վ... Ի՞նչը:

– Էրեխեն ներսից խփո՞ւմ ա:

– Հա՛, դա եք ասում... ըըըմմ... Ճիշտն ասաց բոքսի խմբակում տեղ չկար, դաշնամուրի տարա, դրա համար չի խփում,– բարեհամբույր ձևով կեղծ կիսաժպիտ դեմք նկարեց իր վրա Տաթևը:

– Հա՛,– բացականչեցին հարևանները... Դադար... Նա գնացել էր արդեն,– հը՞ն,– նայեցին իրար վրա, հատկապես խառն էր Վարդուշը:

Հայ հասարակությունը սպանում է, ինքն էլ դրա մասին չկռահելով, ու ոչ մի կերպ դա հասկանալ չցանկանալու միտումով նաև: Հիմա եթե Տաթևը թույլ, ոչ ամուր նյարդերով աղջիկ լիներ, մի քանի անգամ առիթ կունենար զմայլվելու Երևանի կամուրջներից մի քանիսի գեղեցկությամբ: Իսկ նման զմայլումներից մեկի ժամանակ հնարավոր է՝ էլ չկարողանային նրան համոզել, որ Երևանում ուրիշ զմայլվելու տեղեր ևս կան կամուրջներից բացի, քանի որ այս հետաքրքրասեր աշխարհին կասեր՝ հաջողություն:

Փորի թեման անցավ: Չէ՛, խնդրում եմ, մի գերագնահատեք մերոնց, հենց այնպես, ինքն իրեն չէր անցնի: Անցավ, որովհետև փոր էլ չկար, Տաթևը տղա էր ունեցել, հիմա էլ մեկ այլ թարմ թեմա մեջտեղ ընկավ: Երեխան դեռ երեք ամսական չկար, երբ.

«.....Էն մեր ընդհանուր ծանոթ Սյոմայի քթից թռած ա, հա՛, հա՛, հաստատ բան եմ ասում, ժողովո՛ւրդ: Ի՞նչ է, չե՞ք տեսնում, վա՜յ, դրանից պարզ բա՞ն: Ես մի բան գիտեմ, որ ասում եմ, ա՛յ կտեսնեք վերջում պարզվելու է, որ ճիշտ եմ»: Երեխայի մեծանալուն զուգահեռ խոսակցություններն ավելի էին թեժանում, հարևանները՝ ավելի խճճվում. «.....ու՜ֆ, է,՜ էս էրեխեն էլ լրիվ անֆայմ ոնց որ լինի: Փոխանակ մեկին կոնկրետ նմանվի, որ հասկանանք՝ ում երեխան ա, բռնել մորն ա նմանվել: Ասա, տնաշե՛ն, մորդ գիտենք, հերդ ո՞վ ա, հերդ: Ա՛յ, էդ հարցն ա համազգային կարևորության»:

Տաթևը, թքած ունենալու նուրբ արվեստին տիրապետելով, բառիս բուն իմաստով թքած ուներ կողքի «շուխուռի» վրա: Նա իր կյանքով էր ապրում ու ինքը ևս իր հերթին ուրիշի կյանքի մեջ չէր մտնում, իրեն հետաքրքիր չէր: Ինչի՞ համար, ի՞նչ կարիք կա ուղեղդ օտար մարդկանց կյանքի մանրամասներով ծանրաբեռնելու, երբ դու ինքդ լիքը հոգս ունես ու եթե անգամ ենթադրենք չունես, ի՞նչ, դա առի՞թ է, որ այլոց կյանքով ապրես, ոչ իհարկե:

Հատկապես կարևոր էր այն, որ Տաթևը, գլխավոր խմբագիր լինելով, անգամ այն տարիներին (2000-ականների սկզբին) լավ վաստակում էր: Կարողանում էր երեխայի կարիքները ինչպես հարկն է հոգալ, այդ վիճակը փրկում էր, հակառակ դեպքում իսկապես շատ դժվար էր լինելու: Ա՛յ, ի՜նչ է անում վաղ տարիքից սկսած ֆինանսապես ինքնուրույն կայանալու որոշումը ու դեպի այդ նպատակը անշեղորեն ընթանալը: Երեխան մեծանում էր, քանի որ պարտավոր էր մեծանալ, ինչպես կպնդեր բոլորիս հայտնի «դասականը»՝ մաեստրոն: Սակայն, բնական

է՝ հարցեր էին ծագում, երբ տեսնում էր, որ ուրիշ երեխաներ ունեն ևս մեկին կարևոր, ում ինքը չունի: Ինչո՞ւ չունի. «Մայրի՛կ, դե բացատրի՛ր, պուճուրդ ընդամենն առաջին անգամ գնացել է դպրոց ու այնտեղ մամաների հետ միասին մեկումեջ նաև պապաների է տեսել, խառնվել իրար». կասեի ես նրան՝ լավ իմանալով, որ գունագեղ հեքիաթների հորինման պրոցեսը համարվելու է բացված:

Ինչպես արդենիսկ կռահեցիք բոլորդ, Տաթևն ամեն անգամ փորձում էր ցրել թեման, հա բայց ինչքա՞ն: Մի քանի տարի դիմադրեց, վերջը՝ «պապան հեռու է, գործերով է» արտահայտությունը փոխարինվեց «պապան քո մասին չգիտի» բավականին տխրեցնող փաստով: Դա ասելու պարագայում Տաթևը գնահատում էր իրավիճակը, ինչպիսին այն կար, և գիտեր, որ դրան հետևելու էին մի շարք անցանկալի հարցեր:

– Բա ինչո՞ւ չգիտի:
– Դե, էդպես է ստացվել:
– Էդպես ո՞նց:
– Դե, էդպես:
– Ես բան չհասկացա:
– Ոչինչ, կհասկանաս հետո:
– Չէ՛, ես հիմա եմ ուզում հասկանալ:
– Հիմա չես կարող:
– Ինչո՞ւ չեմ կարող:
– Որովհետև փոքր ես:
– Փոքր չեմ:
– Արդեն բարկացնում ես:
– Դու էլ ինձ:
– Լավ, վերջ արդեն:
– Ես նրան կասեմ:

– Ի՞նչ կասես:

– Որ ես կամ:

– Ու ո՞նց ես ասելու:

– Հենց այդպես, ուղղակի կգնամ ու կասեմ:

– Դու ուղղակի խելոք կնստես տեղդ ու դասերդ կանես, հասկացա՞նք իրար:

Մերթընդմերթ ծագող նմանատիպ կռիվների ներքո անցնում է ևս մի քանի տարի: Արամը, այդ անունն էր Տաթևը տվել իր երեխային, դառնում է 14 տարեկան և մի օր պատահաբար նկատում է մորն արտասվելիս համակարգչի առաջ ինչ-որ էլեկտրոնային կայք քրքրելու ժամանակ: Նա այդ պահին կոնկրետ ֆիքսվել էր մի նկարի վրա: Պատրիկն էր: Երբ Արամը մոտեցավ, Տաթևը շտապեց սրբել արցունքները, թե իբր բան չի եղել, ամեն ինչ նորմալ է: Բայց դիմացը 6 տարեկան ու առաջին անգամ դպրոց գնացած երեխան չէր, ում կարելի կլիներ այդպես հեշտությամբ խաբել: Արամը շատ պրպտող, դաստիարակված անձնավորություն էր մեծանում, նպատակասլաց, նաև խելացի ու կշռադատված: Նա միանգամից հասկացավ, որ նկարում իր հայրն է: Աչքերը ֆիքսեցին կայքը, անունը, նկարը: Մտապահեց իր մտքում, որ ուր որ է գնալու էր իր սենյակ և իր համակարգչով սկսեր ուսումնասիրել, թե ով է, ինչացու է: Իսկ մինչ այդ մոր հետ անկեղծ զրույցի բռնվեց, վերջիվերջո արդեն հասուն տղա էր: Զրույցի ընթացքում մայրը որոշ մանրամասներ բացեց որդու առաջ, մեկ է՝ այդ օրը ինչ-որ մի ժամանակ գալու էր: Տաթևն էլ այդ պահը գտավ որպես ճիշտ ժամանակ: Լրիվ մոր տիպարն էր Արամը, նրա պես հանգիստ: Շշմեցնող հանգստությամբ որդին ընդունեց կատարվածը. չմեղադրեց

ո՛չ մորը, ո՛չ հորը: Տաթևն էլ զարմացավ, անգամ մտքով անցավ, որ ուղղակի իր մոտ չի ուզում ցույց տալ զգացմունքները, թե չէ հիմա կգնա իր սենյակ ու կպոռթկա: Բայց Արամն իրականում հանգիստ էր տանում ու դերասանություն չէր անում: Կյանք է, պատահել է: Հանգիստը հանգիստ էր, բայց դա ամենևին չէր նշանակում, որ չէր գործելու: Տաթևը վերջում որդուց պահանջեց, որ չխառնի ամեն ինչ իրար, քանի որ ինքը չի ցանկանում ընտանիք քանդել: Որդուց խոստում կորզեց, որ նա չի հակառակվի իր այդ ցանկությանը: Չէր հակառակվի, բայց սովորականի պես շարունակել ապրելը մի տեսակ ռեալ չէր արկածախնդիր պատանյակի համար: Մտավ իր սենյակ: Կողպեց դուռը: Բացեց այդ նույն կայքը: Գտավ Պատրիկին: Կարդաց նրա մասին: Կենսագրականը անգիր արեց: Ֆրանսիացի էր, ուրեմն սկսում ենք ֆրանսերեն սովորել: Շինարարական նախագծեր իրականացնող կոնսորցիում է ղեկավարում, շատ լավ, ուրեմն ճարտարապետության հետ կապված գիտելիքներ է պետք կուտակել: «Շատ է, ոչինչ կկարողանամ մարսել: Մնում է թանկագին մամաս գլխի չընկնի». մտածում էր Արամը: Սենյակի դուռը կողպում էր ու սկսում ականջակալներով պարապել ֆրանսերեն: Գրքեր էր գտել սկզբից գծագրությանը վերաբերող, այնուհետև՝ ճարտարապետությանը, նաև դրա հետ կապված մասնագիտական ֆրանսերենի ոչ մեծ պաշարներ էր փորձում ուղեղում կուտակել, մի խոսքով՝ զինվում էր գիտելիքներով: Ընդամենը երկու տարի ուներ: Այդ երկու տարվա ընթացքում ժամանակ առ ժամանակ անքուն գիշերներ անցկացնելով՝ շարժվում էր իր նպատակի ուղղությամբ: Դպրոցն ավարտեց ու Տաթևին ասաց,

որ ուզում է Ֆրանկֆուրտ մեկնել ուսումը շարունակելու:

– Գերմանիա՞: Ինչո՞ւ Գերմանիա,– զարմացավ Տաթևը:

– Այդպես եմ ուզում, մայրի՛կ, այդպես եմ որոշել: Դու չէի՞ր ասում՝ մեծ տղա եմ, ու դու իմ որոշումներին չես միջամտի հատկապես ուսման հարցում:

– Հա՛, էլի չեմ միջամտում, ուղղակի դրդապատճառն եմ ուզում հասկանալ,– մութ կողմեր էր նշմարում այդ մտադրության մեջ մայրը:

– Դրդապատճառ չկա: Ուղղակի այդպես եմ ուզում: Դու գիտես, որ մի բան ուզում եմ, հասնում եմ դրան: Դե հիմա սիրտս մի քիչ Ֆրանկֆուրտ է ուզում,– կասկածի տեղիք չտալու համար վստահաբար սրամտեց տղան:

– Իմ սիրտն էլ մի քիչ պաղպաղակ է ուզում: Գնա՛, սառնարանից բե՛ր,– թեթևացրեց խոսակցությունը Տաթևը:

– Վա՜յ, մա՛մ, քեզ շատ եմ սիրում:

– Սիրիր, սիրիր, վնաս չի, բայց մեկ է՝ ինձ չհամոզեցիր: Ինչ-որ բան թաքցնում ես:

– Օրինակ ի՞նչ:

– Դու կիմանաս,– խորամանկ հայացք փորձեց ընդունել Տաթևը, սակայն խորամանկությունը ընդհանրապես նրանը չէր, չէր ստացվում մոտը:

– Հա՛, ես գիտեմ, ու դա հերիք է,– ասաց որդին:

– Թե ասա՛ ո՞ւմ ես այսպես չորկող քաշել,– պատասխանն ինքն էլ լավ իմանալով՝ հռետորական հարց տվեց Տաթևը:

– Կռահի՛ր մեկ անգամից,– բացականչեց որդին:

– Գնա՛, պաղպաղակս բե՛ր:

– Գնում եմ, գնում, մի՛ գժվիր, մա՛յր իմ անուշ ու անգին,– թատերական կեցվածքից չէր շտապում ազատվել որդին:

Անհրաժեշտ փաստաթղթերը հավաքեց մի քանի օրում:

– Տոմսդ ե՞ս վերցնեմ,– մի օր խոսքի մեջ հարցրեց Տաթևը:

– Չէ՛, չէ՛, մա՛մ, այդպիսի բան չանես: Ես օնլայն եմ պատվիրելու:

– Հա՛, ինչո՞ւ այդպես վրդովվեցիր, ես էլ կարող եմ օնլայն պատվիրել:

– Չէ՛, դու գործ չունես: Ես կանեմ: Քեզնից գնում էր միայն ստորագրել լիազորագիրը նոտարի մոտ, որ թույլ ես տալիս երկրից մեկնել, ինչն արդեն արել ես:

– Լավ, լավ, մի՛ ջղայնացիր:

– Ես վիզաս ստացել եմ:

– Արդեն ստացե՞լ ես, ցույց կտա՞ս՝ տեսնեմ,– ձեռքը մեկնեց դեպի տղան Տաթևը:

– Ի՞նչ կա տեսնելու, հայտնագործություն չեմ արել: Ու հետս գալ պետք չի: Կգնամ օդանավակայան ու կմեկնեմ մեծ մարդու նման:

– Լավ, ասացինք՝ ինքնուրույն, բայց այս աստիճա՞ն,– փորձում էր հանդիմանել որդուն մայրը՝ լավ իմանալով, որ ապարդյուն է:

– Հա՛, հենց այս աստիճան,– պնդեց Արամը:

– Չեմ հասկանում: Այդ ես քեզ այսպիսին դաստիարակեցի՞, թե՞ դու ինքդ այսպիսին դարձար,– ինքն իր վրա սկսեց բարկանալ Տաթևը՝ աչքերը որդուց չկտրելով:

– Ի՞նչ կարևոր է, կարևորը փաստն է, որը քո դիմաց կանգնած է:

– Փա՛ստ ջան, մոտեցի՛ր սեղանին՝ ընթրելու, թե չէ կերակուրը սառավ արդեն:

Մեկնելու օրն էր: Տղան համառում էր ու մորը չթողեց իրեն ուղեկցել օդանավակայան: Մոր բոլոր հորդորները, որ գոնե ծանոթ բարեկամներից մեկը գա ճանապարհելու, նույնպես չանցան: Արամը անդրդվելի էր, համառում էր տարօրինակ ջղաձգվածությամբ: Պատճառը երևի թե կռահել եք: Ֆրանկֆուրտը թող ներող լինի, բայց տոմսը դեպի Փարիզ էր: Նստած էր օդանավում, ու մի փոքր լարվածություն անցավ մարմնով: Հաճախ չէր տուրք տալիս էմոցիաներին, նա ձիգ տղա էր, բայց այս անգամ այդ սովորական ձիգ վիճակը փոքր-ինչ երերուն էր: Երևան-Փարիզը միայն չվերթ չէր նրա համար: Նա գնում էր իր երազանքի ետևից: Պիտի գտներ հորը ու գտնելու էր, այլ տարբերակ չկար, նա շատ համառն է: «Բայց ասենք՝ գտա, հետո՞: Գնացի ու կանգնեցի դիմացը, ի՞նչ եմ ասելու: Բարև Ձեզ, ես Ձեր որդի Արամն եմ: Հենց այդպես դասակա՞ն, բա կրեատիվը ո՞ւր մնաց: Չէ՛, ես Արամը չեմ լինի, եթե այդ տաղտկալի, տրամաբանական ու անշուք տարբերակը ընտրեմ». մտածում էր նա: «Լավ, հասնեմ, կկողմնորոշվեմ». խառը մտքերը փորձեց ցրել Արամը, ոնց որ թե ստացվեց:

Գլուխ 2

Ժամանում: Փարիզ...

– Ի՜նչ լավ է, ազատությո՜ւն: Էլ գլխիս կոնտրոլ չկա, չնայած այնպես չէ, որ մայրս խեղդում էր, բայց միևնույն է: Ո՞վ չի ձգտում բացարձակ ազատության,– այդպես հրճվանքով փիլիսոփայեց մեր խիզախ համառը, բարևեց սիրալիր Ֆրանսիային ու գնաց առաջ:

Իսկ առջևում սիրո քաղաքն էր: Ասում ենք սեր, Փարիզը ավտոմատ հետևից գալիս է: Դե հիմա եկել կանգնել է այս ինքնավստահ պատանյակի դիմաց ու չգիտի մեր Փարիզը, թե այս շշկռվածի ուզածն ինչ է: «Ազատությո՜ւն» գոչեց նա, քաղաքին դեմ հանդիման կանգնած, սերն էլ եկավ կողքից կառչեց. «բայց ես սեր չէի կանչել, ես միայն ազատություն էի կանչել»: Չէ՛, Արամ տղա՛, այստեղ և՛ սեր է, և՛ ազատություն: Մեր երիտասարդի համար դեռ շատ բացահայտումներ կբերի Փարիզը: Բացահայտումներ, որոնց ետևից բնավ չէր եկել, բայց որոնք նրան այլ հունով կտանեն: Կփոխեն կյանքը, կփոխեն իրեն, դրանով ինքն իրեն կկարդա, կսովորի ինքն իրեն, փոխված «ինքն իրեն»-ին կսովորի:

Մի երկու օր մնաց հյուրանոցում, մինչև կարողացավ հարմար վարձով բնակարան գտնել. դեռ Երևանից փնտրտուքները սկսել էր: Մայրը բավականին

գումար տվել էր, ընթացքում էլ քարտին էր ուղարկելու: Ֆինանսի խնդիր չկար, բայց կապ չունի. Արամը լուրջ տղա էր, փորձում էր խնայել, շատ աջուձախ չէր շպրտում մոտն առկա գումարը: Նա այստեղ ֆոֆռալու չէր եկել: Գործերը տվեց իր ուզած մասնագիտությամբ ֆրանսիական բուհերից մեկն ընդունվելու համար: Մի քիչ անազնիվ է ասված «իր ուզած»: Այնքանով էր «իր ուզած», որ այդ ոլորտում հայրն էր աշխատում: Դա էր նրան դրդում այդքան նպատակաուղղել ջանքերը հենց այդ ուղղությամբ: Մեկ ուրիշ դեպքում շատ հնարավոր է, որ այլ ճանապարհ ընտրեր: Ձեռքի հետ զարգացնում էր իր հետախուզական կարողությունները՝ հորը հետևելով: Այո, գտել էր նրան: Հետևում էր՝ Ջեյմս Բոնդի կերպարի մեջ մտած՝ ե՞րբ եկավ աշխատանքի, ե՞րբ դուրս եկավ, ո՞ւր գնաց, տունը ո՞րտեղ է:

Ուսման առաջին վեց ամիսն անցել էր: Դեռ ադապտացիայի շրջանն էր հաղթահարում համալսարանում: Ֆրանսերեն միջին մակարդակի գիտեր մինչ մեկնելը: Ավելի կատարելագործեց լեզվի իմացությունը, չնայած սկզբից դժվար էր: Հայաստանում կուտակած ճարտարապետական գիտելիքները բավականին օգնեցին օտար միջավայրում չխեղճանալու համար: Մի խոսքով՝ գործերը նորմալ էին: Այդ ամիսների ընթացքում կլանված մի նախագծի վրա էր աշխատում: Մտքին կար դա հորը ցույց տալ և այդպես նրա հետ ծանոթության ուղին հարթել: Հերթական հետախուզական օպերացիայի ժամանակ հայտնաբերեց հորը Փարիզի կենտրոնի մի գողտրիկ սրճարանում մենակ նստած, սուրճ ըմպելիս: Նա ինչ-որ բան էր կարդում: Հրաշալի է: Սրանից լավ ժամանակ չէր գտնվի: Իր հեղինակած պրոեկտն իր ձեռքում էր: Հպարտ քայլերն

ուղղեց դեպի սրճարան և քաղաքը ջրհեղեղից փրկած սուպերհերոսի ինքնավստահությունը դոշին խփած մոտեցավ ու թղթապանակը մեկնեց Պատրիկին: Պատրիկը մի քանի ակնթարթ զննեց խրոխտ երիտասարդի աննկուն կերպարը, սուր հայացքը և պարտության հետ հաշտվելուն անընդունակ աչքերի բիրտ կայծերը, այնուհետև անցավ թղթերին:

– Կներե՛ք, սա ի՞նչ է:

Տարօրինակ էր, բայց պատասխան չստացավ: Պատրիկը ուշագրավ հայացքով սկսում է զննել թղթերը, մեկ-մեկ գլուխը բարձրացնում է, որ տեսնի՝ երիտասարդը իր ուղղությամբ դեռ շարունակում է նայել, թե ոչ: «Անգամ նստելու չի հրավիրում: Այսի՜նչ անշնորհքություն է, պապա՛ ջան, չեղա՛վ, հիասթափեցնում ես». մտքում ջղայնացած մտմտում էր Արամը: Նա էլ կարծես մտքերը կարդաց.

– Նստե՛ք խնդրեմ,– Պատրիկը ձեռքը մեկնեց աթոռի կողմը և հրավիրեց տղային նստելու իր սեղանի շուրջ:

– Շնորհակալություն,– հոր ուշացած քաղաքավարությունը իր իսկ քաղաքավարությունից դրդված գնահատեց Արամը:

– Եվ սա ի՞նչ է, կասե՞ք:

– Հավանո՞ւմ եք:

– Նախ ասեք, թե սա ինչ է, հետո կասեմ՝ հավանում եմ, թե ոչ,– մի փոքր տոնը բարձրացրեց Պատրիկը:

– Ես եմ նախագծել, ուզում էի Ձեզ ցույց տալ:

– Իսկ Դուք ո՞վ եք,– հարցրեց Պատրիկը:

– Ես կարծում էի Դուք ավելի շատ կկենտրոնանաք նախագծի վրա, քան թե իմ՝ ով լինելու, բայց պարզվում է՝ ոչ:

– Չհասկացա: Չիմանա՞մ՝ դիմացս ով է նստած, որովհետև ինչքան հասկանում եմ Դուք ինձ գիտեք: Եթե մոտեցել եք, ուրեմն գիտեք՝ մոտավորապես ում եք մոտենում չէ՞, իսկ ես Ձեզնից գաղափար չունեմ:

– Ես Արամն եմ: Սովորում եմ, հենց այս ուղղությունն եմ ընտրել որպես նախընտրելի մասնագիտություն: Առաջին կուրսում եմ: Հայ եմ:

– Իսկ ինչո՞ւ ես սա ինձ բերել,– անցավ դու-ին:

– Կարծես թե հավանել-չհավանելու հարցը ցրում եք հա՞:

– Լավ, եթե շատ ես պնդում, ասեմ՝ բավականին լավն է: Բավարարվա՞ծ ես պատասխանովս:

– Ո՛չ:

– Այսի՞նքն: Տղա՛, դու հաստա՞տ գիտես՝ ում դիմաց ես հիմա նստած:

– Ավելին քան,– աներեր ու հանդարտ ձայնով պատասխան տվեց տղան՝ աչքերը մի պահ արագ կկոցելով:

Խոսակցությունը դեռ շարունակվեց նրանց միջև: Արամը անտակտորեն վրա էր տալիս ու սառնասրտությամբ, գրեթե առանց աչքերը թարթելու ուղիղ նայում էր հոր աչքերի մեջ, իսկ Պատրիկը սկզբից նյարդայնանում էր այդ ոչ ստանդարտ պահվածքից, սակայն կամաց-կամաց սկսեց համակրել տղային, նրա մեջ տեսնել հաջողության ձգտողի համար ամենակարևոր գիծը՝ համառությունը: Շուտով նրանց խոսակցության տոնը սկսում է փափկել. ավելի հաճելի դառնալ երկուսի համար էլ: Կարծես լեզու գտան: Պատրիկը խոստանում է ավելի մանրամասն ուսումնասիրել ներկայացված թղթերը, Արամն էլ խոստանում է նրան ուղարկել նախագծի համակարգչային

3D տարբերակը նախագիծը ավելի արտահայտիչ և պատկերավոր տեսնելու համար: Պայմանավորվում են ու փոխանակվում կոնտակտներով: Արամի տրամադրությունը միլիոն էր. կարծես թե առաջին փուլն իր ուզածի պես ընթացավ: Պատրիկը մի քանի օրից զանգահարում է և տեղեկացնում, որ իրոք գովելի աշխատանք է կատարված, և ցանկանում է նորից հանդիպել նրան արդեն իր գրասենյակում:

Պատրիկը, տեսնելով տղայի խանդավառությունը և ոգևորությունը, որոշում է շանս տալ նրան ավելի մոտիկից ծանոթանալու իր գործունեությանը: Արամը կարող էր առանց հերթագրվելու գնալ ու մտնել մոտը, զրուցել ու քննարկել տարբեր հարցեր ինչքան ուզեր: Դրանից էլ լավ բա՞ն: Ամեն մեկին հո՞ չէր հաջողվի այդպես աչքը մտնել, որ ազատ ելումուտ ունենար կազմակերպություն, այն էլ ուղիղ Գլխավոր տնօրենի գրասենյակ:

Գրեթե մեկ տարի էր անցել հոր և որդու առաջին հանդիպումից, և Արամն արդեն հոր մոտ էր աշխատում: Սկզբում պրակտիկայի էր գալիս, ճիշտ է՝ կես օր, որովհետև ուսման հետ պետք է համատեղեր, բայց ամեն դեպքում շատ մեծ փորձ կուտակելու համար իսկական հնարավորություն էր: Գնալով ավելի էր աչքը մտնում, քանի որ բոլոր հանձնարարությունները կատարում էր շատ արագ և որակով: «Չէ սա գտած կադր է». մտածում էր Պատրիկը ու ավելի ու ավելի էր տղային ընկղմում չափազանց պատասխանատու գործերի մեջ՝ արդեն հիմնական աշխատանքի նրան վերցնելով: Նա դարձել էր Պատրիկի սիրելի աշխատողը, հատուկ գորովանքով էր խոսում և արտահայտվում իր «պատանի հայտնագործության» մասին:

«Իրականում այդ ես եմ քեզ գտել, բայց դե պապա է էլի, ոչինչ, թող մի քիչ իրեն լավ զգա, չհակաճառեմ». մրմնջում էր քթի տակ Արամը՝ քմծիծաղով նայելով հոր՝ վերևի «լալը» խփած ոգևորությանը:

Անցավ ժամանակ: Պատրիկը կարևոր իրադարձության էր պատրաստվում: Մի քանի ամիս տևած բանակցություններից հետո վերջապես իր կազմակերպությանը հաջողվեց համատեղ ծրագիր իրականացնելու համար խոշոր պայմանագիր կնքելու վերաբերյալ համաձայնության գալ ոլորտի մեկ այլ «գազան»-ի հետ: Պատրիկը երկար էր սպասել այդ օրվան: Երեխայի պես խառնվել էր իրար: Լինելով հասուն տղամարդ՝ կամակորությունները առաջին պլան էր բերել, ու «սթրես» անունով այդ անիծյալ «արարածը» անվերջ մեղադրանքներ էր շաղ տալիս Պատրիկի վրա՝ գտնվելով հենց իր մեջ: Պատրիկն էլ իր հերթին նյարդային էր դարձել այլոց հանդեպ: «.....Ամեն ինչ կազմակերպված պիտի լինի բարձր մակարդակով, վրիպումներ չեմ ընդունելու: Մի քանի օր է մնացել, իսկ մենք դեռ պատրաստ չենք». այսպես խրոխտ հրահանգավորիչի դերի մեջ փայլուն մտած էր նա, երբ սթրեսի մեկ այլ չափաբաժին իրեն հրամցրին այդ նույն «գազան» գործընկերոջ ոչ պակաս «առյուծասիրտ» ներկայացուցիչները՝ վերջին պահին պայմանագրի որոշ կետերի հետ համաձայն չլինելու մասին տեղեկությունը դեմքին շրմփացնելով: «Լավ, այս ի՞նչ թարսություն է». չէր հասցրել փնովել այս մի թարսությունը, երբ ծագեց մեկ ուրիշը: Այն է՝ զանգ, ավելի ճիշտ՝ «ծնգ»: Դե՛, կինը սովոր էր ծնգացնել: Պատրիկը մի քանի րոպե վրդովված բացատրում էր կնոջը, որ հիմա շատ խառն է և չի կարող մեկնել իր մոտ՝ Քյոլն

(գործերի բերումով մի քանի օր է, ինչ Կլաուդին Քյոլ-նում էր)։ Նա էլ պնդում էր, թե՝ ձև չկա, պիտի գաս։ Աաաա՜, դե ձև չկան ո՞րն է, ժողովո՛ւրդ, դե՛ հիմա չկա էլի, կանայք, որ ասում են ձև չկա, ապա այն ամեն դեպքում կա, բայց եթե անգամ կա, դա հաշիվ չի։ Ասում է՝ շատ կարևոր է։ Լսո՞ւմ եք, ժողովո՛ւրդ, Կլաու-դին ասում է՝ շատ կարևոր է։ Պատկերացրիք չէ՞ ար-դեն՝ ինչքան կարևոր է, ոչ թե կարևորն է կարևոր, այլ կարևորն այն է, որ Պատրիկը հավատա, որ կարևոր է։ Մեկնեց։ Մինչև մեկնելը Արամին ասաց.

– Հույսս դու ես։ Մի քանի օր է մնացել։ Խոսի՛ր հետները, չգիտեմ, մի ձև համոզի՛ր, փրկի՛ր գործար-քը, դե՛ հասկացար ինձ։

Պատրիկը իր աշխատանքային թիմի վերին բլո-կում տեղեկացրել էր, որ Արամը իր հրահանգներով է գործում, ու լուրջ պետք է վերաբերվեն նրան։

– Նա իմ խոսափողն է այստեղ, մինչև կվերադառ-նամ։ Եթե նա է ասում, ուրեմն ես եմ ասում,– ենթակա-ների հետ ժողովում հայտարարեց Պատրիկը։

Իհարկե կար որոշակի թյուրըմբռնում և ներքին ըմբոստություն նման տեսակետի վերաբերյալ իրենից մեկ մակարդակ ներքև գտնվող կոլեգաների շրջա-նում, սակայն դա Պատրիկին չէր հետաքրքրում։ Նա, չգիտես՝ ինչու, չափից շատ էր վստահում այդ տղային։ Զգում էր, ինքն էլ չէր հասկանում, թե ինչ էր զգում, բայց ինչ-որ բան ճիշտ էր զգում։

Կլաուդին, ինչպես կռահեցիք, կանչել էր ինչ-որ ախմախ բանի համար։ Մի լավ վիճել էին այդ առիթով, բայց մնացել էր կողքին, որովհետև տարբերակ չկար։ Դա էլ մի նոր հիստերիայի բուն էր լինելու։ Պատրիկը անընդհատ կապի մեջ էր Արամի հետ։ Նա զեկուցում

էր իր բոլոր քայլերի և նախաձեռնած շփումների մասին: Տակտիկորեն, այն է՝ այլ պատասխանատուների միջոցով, ո՛չ ավել, ո՛չ պակաս այդ կազմակերպության տնօրենի հետ հանդիպում ունենալուն էր հասել՝ կազմակերպությունից դուրս մտերմիկ միջավայր ստեղծելու ակնկալիքով: Ռիսկով, ինքնավստահությունը միլիոն, գնացել ու խոսել էր: Հանգիստ, հանդարտ, օձի լեզուն օձից լավ իմանալու իր հմտություններն ի ցույց էր դրել և մի քանի օրվա ջանքերի շնորհիվ ցանկալի արդյունքին էր հասել: Ստացվեց, որ գործը գլուխ բերեց: Վերադառնում են նախկին պայմանավորվածություններին գրեթե ամբողջությամբ՝ բացառությամբ պայմանագրում ոչ նշանակալի, տեխնիկական փոփոխություններ կատարելը, որոնք բնավ անհանգստացնող չէին Պատրիկի համար: Վերջինս կարողացավ տեղում լինել միայն պայմանագիր կնքելու օրը: Ամեն ինչ իդեալական կազմակերպված էր, տեղը տեղին: Պայմանագրերի կնքումը բարեհաջող ընթացավ, և բոլորը երջանիկ էին: Աջուձախ ամեն կողմից ասում էին՝ Արամը տաղանդ է, այս անախորժությունը հնարավոր եղավ հարթել նրա բանակցելու հմտության շնորհիվ: Հատկապես աշխարհի չափ հպարտ էր Արամով Պատրիկը և որպես երախտագիտության նշան հաջորդ օրը կանչել էր նրան իրենց տուն ընթրելու: Չէր ուզում գնալ, բայց Պատրիկը ստիպեց:

Ֆրանսիական նրբագեղ ոճով կահավորված առանձնատանը, ուր վախենում ես, թե մի անտիկվար ծաղկամանի վրա երկար նայես, այլապես աչքիդ կզարնի նրա գետնին ընկնելու և զոհ ձևանալու երևակայական տեսարանը, իսկ դիպչելու մասին էլ չասեմ, դրա մասին ընդհանրապես մոռացեք, տիրում

էր բավականին մտերմիկ միջավայր: Սակայն Արամի համար այդ «մտերմիկ»-ը խորթ էր, զգացմունքները՝ փոփոխական.

– Ինչո՞ւ ես այդպես շվարած կանգնել, արի՛ գնանք հյուրասենյակ, ընթրիքը շուտով կմատուցեն,– Իզաբելն էր՝ Կլաուդիի կրտսեր դուստրը: Խորամանկ, կանաչավուն աչքերը սևեռել էր Արամի վրա ու այդ նույն աչքերով ուտում էր նրան: Էլ ի՞նչ ընթրիք, էլ ի՞նչ բան, ձև էր թափում, իր դարդը ընթրիքը չէր:

«Ավելի լավ է այս ծաղկամանն ընկներ գետնին, քան այս աղջիկը հայտնվեր դիմացս, առանց այդ էլ տեղս չեմ գտնում, հիմա էլ սա: Ասա, աղջի՛կ ջան, ի՞նչ ես ուզում, ֆոֆռա էլի քո համար էս մեծ տան մեջ, մի զբաղմունք գտիր քեզ». փնթփնթում էր Արամը: Դե նա էլ գտել էր, այդ զբաղմունքը հենց Արամն էր:

Ընթրելու ժամանակ Պատրիկը «անաչառորեն» գովում էր Արամին, առիթը բաց չէր թողնում կշտամբելու Կլաուդիին, ով իրեն անտեղի մեկնել էր ստիպել երկրից, երբ կազմակերպությանը այդքան պետք էր ղեկավարի ներկայությունը: Կլաուդին էլ քմծիծաղով արձանագրում էր, որ եթե ինքը չկանչեր իր ամուսնուն Քյոլն, այս երիտասարդի սխրանքը չէր երևա: Ինչ խոսք, կինը սխալ բան չէր ասում: Իզաբելը շարունակում էր «ուսումնասիրել» երիտասարդին, տենչում էր նրան իր սարդոստայնը գցել: Արամն էլ անհույս դիմադրում էր՝ մտքում կրկնելով. «Ա՛խր, տեսնում ես հայացքս փախցնում եմ քեզնից, ի՞նչ ես կպել»:

Կլաուդին թեթև վարքի տեր, շատ հմայիչ կին էր՝ բարձրահասակ, շիկահեր, խնամված, հագուստի առումով էլ՝ ճաշակը տեղը: Այլ կերպ չէր կարող լինել, չմոռանանք՝ Ֆրանսիայում ենք: Անընդհատ պտտվում

էր ամուսնու շուրջը, սեթևեթում, ստիպում նրան ակներև ցույց տալ, որ գժվում է կնոջ համար: Իսկ Պատրիկը, թակարդն ընկած (դա սովորական վիճակ էր նրա մոտ), դեմքի միմիկայով, աչքերով, ինչու չէ նաև խոսքով ջանասիրաբար կատարում էր նրա կամքը: Ասել է թե՝ «մենք մոռացել ենք, որ դուք այստեղ եք, կներեք, բայց մենք միայն մեզ՝ երկուսիս ենք նկատում»: Անգամ օտարի ներկայությունը նրանց չէր կաշկանդում: Չնայած «օտարը» մի քիչ հարաբերական է ասված այս պարագայում: Բայց Արամը իսկապես իրեն օտար էր զգում: Նա փորձում էր իր անհարմար զգացողությունները մի կողմ դնել և հասկանալ՝ հայրը սիրում է իր կնոջը, թե հիպնոզի տակ է: Նա մտովի գնաց հասավ իր մոր հետ ունեցած վաղեմի խոսակցությանը, երբ մայրն ասել էր, թե չի ուզում ընտանիք քանդել: Ամեն դեպքում ինչ էլ, որ ուզում է եղած լիներ, հայրն այդ պահին երջանիկ տեսք ուներ: Իրակա՞ն էր, թե՞ ոչ այդ տեսք կոչվածը դժվար էր այդպես մի ընթրիքի ժամանակի մեջ տեղավորվելով հասկանալ: Այդ դեպքում ինքը՝ որդին, ի՞նչ գործ ունի այստեղ, կամ ավելի ճիշտ մինչև ե՞րբ է այսպես խաղալու: Պատրիկը անչափ հոգատար էր նաև Կլաուդիի դուստրերի նկատմամբ, ընդհանրապես խորթություն չկար նրանց միջև: «Է՜ մի րոպե՛, ստացվում է մեջների խորթը ե՞ս եմ». մտքում նեղվեց մի պահ Արամը. «Բայց, ա՛խր, հակառակն է»: Նա ուզում էր փախչել: Մի կողմից գլխում ծագող խառը մտքերն էին խեղդում, մյուս կողմից էլ՝ Իզաբելը, ով դժվար թե թույլ տար տղայի առաջ դուռն այսքան շուտ բացեին, որ նա գնար: Եկել, նստել էր կողքը, հարցախույզը՝ սկսել: Խեղճ տղան բաց պատուհան էր ման գալիս, որ թռներ:

Ի՞նչ ասեմ, թող ներող լինեն ինձ հայկական սերիալների արտադրությամբ զբաղվողները, ովքեր այս դրվագի վրա մոտ մի 850 սերիա կնկարահանեին, բայց եկեք անցնենք առաջ:

Հաջորդ օրը աշխատանքի վայրում գործ անել չէր ստացվում: Երեկվա տրագիկ կոմեդիայից հետո Արամը համակարգչի բազմապիսի ֆայլերի կույտում մի քանի րոպե է, որ չէր կարողանում գտնել անհրաժեշտ մեկը, ավելի ճիշտ չէր կենտրոնանում, որ գտներ: Անունն էլ ֆայլի մոռացել էր, որ գոնե «փնտրել» կոճակով արագ հայտնաբերեր: Հանկարծ գլուխը վեր է բարձրացնում և ի՞նչ տեսնի: Երեկվա հոգեառը հայտնվել է իր առջև, և ֆայլը գտնելու անհույս ճիգերն այդ պահից սկսած ավելի հաստատակամ կերպով հօդս ցնդեցին: Իզաբելը պճնվել էր ոչ իրեն հատուկ ոճով: Ավելի գրգռիչ հագուստով էր: Դեմքի շպարի հարցում մի տեսակ չափն անցել էր, ինչը հատուկ չէր իրեն և իր մորն առհասարակ, բայց կիրքն այդպիսի բան է, խելքահան է անում: Երբեմն դեմ ես գնում սովորություններիդ ցանկությունը ի կատար ածելու անկեղծ մղումով: Մի խոսքով՝ ռուսերեն լավ բառ կա «перестаралась»: Իսկ Արամին միևնույն էր՝ Իզաբելը մերկ կկանգնի դիմացը, միանձնուհու կերպարով, թե տեռորիստի շորերով՝ նռնակն էլ ձեռքին, տղան անգամ ունքը ձևի համար շարժելու հավես չուներ:

Մտքում քաղաքավարության կանոններ հորինող հիփոթեթիկ կերպարի վրա թուքումուր թափելով՝ Արամը այլևս ուժ չուներ ժպտալ, բարեհամբույր դեմքի արտահայտություն սվաղել հոգնատանջ դեմքի վրա, բա լավ ի՞նչ անել, չի գնում ու չի գնում: Փրկօղակը վերջապես ժամանեց: Ահա, Պատրիկը տեղում է:

Այսօր մի քիչ ուշ եկավ գործի՝ վստահ լինելով, որ Արամը աշխատանքի վայրում է, եթե ինչ-որ հարց առաջ եկած լիներ, արագ կտեղեկացներ իրեն: Տղայի վրա հալ կա՞ր, որ մի հատ էլ տեղեկացներ, որ այո բան է եղել: Այն դիմացը կանգնած չի թողնում գործ անել, որ հասկանար՝ կազմակերպության հետ իրոք բան է եղել, թե ոչ:

– Իզաբե՛լ, աղջի՛կս, թո՛ղ մենք անցնենք մեր գործերին, այսօր լարված օր է լինելու, տրամադրվի՛ր, Արա՛մ,– Իզաբելին մի կողմ քաշելով, ապա չափագրող հայացքը Արամին ուղղելով՝ ասաց Պատրիկը:

– Պաշտում եմ ուղղակի այսպիսի լարված օրերը,– Արամի դեմքին պայծառություն նկարվեց:

Արամը մոտ երկու ամիս է, ինչ թողել էր ուսումը, քանի որ չէր հասցնում, բացի դա իր համար կարծիք էր կազմել, որ պրակտիկ մեծ փորձն ավելի է կոփում իրեն որպես մասնագետ, մանավանդ, երբ այդ հնարավորությունն ընձեռնված էր, քան թե օրվա մի մասը, այստեղ լինելու փոխարեն, համալսարանում լիներ: Ինչ խոսք, վիճելի տեսակետ է, մանավանդ, որ մայրը հաստատ դրան կողմ չէր լինի, եթե իմանար իհարկե: Իսկ Տաթևը հաճախ էր զանգում որդուն, անգամ մեկ-երկու անգամ ուզում էր գալ տեսակցելու, սակայն արժանացել էր Արամի կոշտ հանդիմանությանը.

– Պետք չի գալ: Գերմանիան, իհարկե, հրաշալի է, բայց այն առանց քեզ ավելի հրաշալի է, մա՛մ ջան: Այնպես, որ Հայաստանին մի՛ նեղացրու, ինձ էլ թող ազատությունս վայելեմ:

Այսպես ամեն անգամ մի բան մոգոնելով՝ համոզում էր, որ իր մոտ ամեն ինչ կարգին է. համալսարանում փայլող աստղ է, գերմանուհիները խելագարվում

են իր համար, կլիման հատուկ իր համար մեղմացել է և մինչև իրենից թույլտվություն չի ստանում, անձրև չի տեղում: Նմանօրինակ անհեթեթություններ ասելով և, հումորային արտահայտությունների ժողովածուի թողարկմանը վերածելով իր «Գերմանական կյանքի» մասին մոր պատկերացումները՝ Արամը հաջողում էր երկու կյանքով ապրել: Մեկն իրական ֆրանսիականն էր, ուր հայրն էր և իր՝ հորը մոտ լինելու շատ ուժեղ ցանկությունը՝ թեկուզև նրա տարօրինակ ընտանիքի անդամների հետ գլուխ դնելու գնով, մյուսը՝ գերմանականը: Այն վերացական էր, զուտ նորություններին հետևել էր պետք, որ երբ մայրը զանգահարի, այդ երկրի կյանքից, եղանակից, կարևոր իրադարձություններից պատահաբար հարցնի, ինքը տեղյակ լինի, այլապես մեկ էլ տեսար Տաթևն այնպիսի մի հարց կտա, որ տակից չկարողանա դուրս գալ, դա էլ ու պրծ. այդ դեպքում միանշանակ խաղն ավարտված էր համարվելու, իսկ վարագույրը՝ իջած:

Անցնում է մոտ կես տարի: Պատրիկի ու Կլաուդիի պատկերացումները ընտանեկան կյանքի մասին հետզհետե ավելի էին տարամիտվում: Սկսել էին հաճախ վիճել: Նման բան նախկինում երբեք չէր եղել: Պատրիկը յուրօրինակ սթրես էր ապրում: Սիրում էր կնոջն աշխարհի չափ, բայց նաև նկատում էր, որ փոխվել է: Ի՞նչն էր պատճառը: «Գո՞ւցե ես եմ հենց պատճառը, գո՞ւցե ես եմ ինչ-որ բան սխալ արել, բայց ի՞նչ, խելքս չի կտրում: Ես միշտ շատ ուշադիր եմ եղել նրա հանդեպ, շրջահայաց իմ քայլերում». տանջվում էր հոգու խորքում նա: Արամի հետ այնքան էր մտերմացել, որ կիսվում էր նրա հետ անգամ այս թեմաներով՝ վստահ լինելով, որ Արամը զուսպ տղա է և, օրինակ,

Իզաբելի հետ հանդիպման ժամանակ դժվար բերանից ինչ-որ բան թռցնի: Իսկ նա ստիպված հանդիպում էր Իզաբելին, չնայած, որ մի հազար անգամ այդ հանդիպումների ժամանակ ասել էր, որ իրենց միջև ոչ մի բան չի կարող լինել, առավելագույնը ընկերներ: Այնպես է, որ եթե Արամին մնար, նա կնախընտրեր, որ դա էլ չլիներ: Ամեն դեպքում աղջկա աղաչանքներին մեկ-մեկ տեղի էր տալիս, և հանդիպում էին:

– Լավ եղանակ է, չէ՞,– կիսաթռչկոտող քայլվածքով ուրախ-ուրախ ասաց Իզաբելը՝ ցերեկվա միապաղաղ արևի շողերից արձակվող լույսի կարևորությունը անհարկի չափազանցնելով:

Իդեալական սկիզբ կամ ինչպես ասում են «классика жанра»: Դե իհարկե, այս արտահայտությունից են սկսում երկու հոգի իրենց խոսակցությունը, երբ խոսելու բան չի լինում, սակայն նրանցից մեկը վառվում է հաճելի խոսակցություն ունենալու պատրանք ստեղծելու ներքին դրդումից: Արամը բացարձակ խանդավառված չէր, որ առաջիկա մի քանի ժամերը պիտի նվիրի Իզաբելի հետ զբոսանքին: Այնուամենայնիվ, փորձեց ինչ-որ հետաքրքրություն մտցնել զրույցին.

– Դու նպատակ ունե՞ս կյանքում:

– Այո՛, ուզում եմ հաջողել ամեն ինչում,– տափակ պատասխան տվեց Իզաբելը:

– Դա չեղավ նպատակ: Դա եղավ այն, որ ուզում ես հաջողել,– մարած դեմքի արտահայտությամբ պարզաբանեց Արամը:

– Է՜, հա՛,– համաձայնեց նրա հետ Իզաբելը:

– Հետո՞: Ինչո՞ւմ հաջողել, դա քեզ բացարձակապես չի՞ հետաքրքրում, չե՞ս ուզում իմանալ՝ ինչում ես այդպես վստահ հաջողելու:

Իզաբելը, չնկատելով երիտասարդի ձայնի տոնայնության մեջ զգացվող գրգռվածությունը, շարունակեց միամիտ պատասխանների շարքը.

– Չէ՛, կյանքը ամեն ինչ իր հունով կտանի:

– Եթե կյանքին թողնես, չի տանի: Շարժիչը ինքն իրենով գործի չի դրվում:

– Կյանքի շարժիչը ո՞րն է:

– Դու ես, եթե չխառնվես գործին, կյանքի մեքենան ինքն իրենով տեղից չի պոկվի:

– Իսկ ի՞նչ է քեզ համար սերը,– խոսակցությունը անակնկալ կերպով ուրիշ հուն տեղափոխեց Իզաբելը՝ աչքերը բաց կապույտ երկնքին հառած:

– Հաստատ այն չէ, ինչ քեզ համար:

– Ինչո՞ւ ես այդպես կարծում, չէ՞ որ դեռ չեմ ասել, թե ինձ համար այն ինչ է:

– Քո հաջողության մասին կազմած տեսլականից կարելի էր կռահել:

– Այդ ի՞նչ ես կռահել, կարո՞ղ է կիսվես ինձ հետ:

Արամը բնավ ցանկություն չուներ դասախոսություն կարդալու աղջկա գլխին, բայց քանի որ արդեն շատ էր զզվացնում, ստիպված էր մի բան ասել.

– Ըստ ինձ՝ սերը քեզ համար անդեմ երևույթ պիտի որ լինի: Այսինքն՝ կապ չունի, թե ում կսիրես, կարևորը երբ ուզենաս, սիրես, ու լինի այն մեկը, ում կուզենաս սիրել:

– Սխալվում ես: Ես այդպիսին չեմ,– նեղացկոտ դեմքը շրջեց դեպի այլ կողմ Իզաբելը:

– Ապա՛, ապա՛, ուղղի՛ր ինձ, ինչպիսի՞ն ես:

Իզաբելը երազկոտ աչքերը հառեց դեպի երկինք և ասաց.

– Ես ուզում եմ սիրել մեկին, ում կողքին ինձ երջանիկ կզգամ, և նա միակը կլինի: Չեմ պատրաստվում զույգ կոշիկի նման սեզոնը մեկ փոխել:

– Դու ուզում ես, որ այդպես լինի, սակայն ցանկանալը և այդպես վարվելը տարբեր բաներ են: Ցանկանալը հեշտ է, դրա համար ընդհանրապես ջանք չես թափում, իսկ իսկապես ապրելն այդ վարքագծով, հավատա՛, ծանր բան է, երբ այն քո էությանը դեմ է:

– Ճիշտ չես: Այն, ինչ ես ասում եմ, իմ էությանը դեմ չէ,– ընդդիմացավ Իզաբելը:

– Լավ, անիմաստ է քեզ հետ վիճաբանելը, արի՛ թեման փոխենք կամ ավելի լավ առաջարկ ունեմ՝ ցրվենք տներով:

– Ո՛չ, հեչ էլ լավ առաջարկ չէ: Եվ երկրորդ՝ ոչ մի տուն, իսկ թեման փոխելուն համաձայն եմ: Տեսնո՞ւմ ես՝ ես էլ զիջել գիտեմ:

– Ընտիր զիջում ես,– կիսաձաղրական տոնով արձագանքեց Արամը:

– Էլ մի՛ հեգնիր: Քեզ հետ ինձ շատ լավ եմ զգում:

Արամը զարմացավ, թավ հոնքերը վերև բարձրացրեց՝ ասելով.

– Անգամ անվերջ վեճերի ու անհամաձայնությունների մթնոլորտո՞ւմ:

– Այո՛, անգամ այդպես,– անկեղծացավ Իզաբելը.– Ինձ դուր են գալիս նույնիսկ այս վեճերը, ամեն ինչ, ինչ քեզ հետ է կապված:

– Դու սիրո՞ւմ ես, թե՞ սիրահարվել ես ինձ:

– Սիրում եմ,– վստահ պատասխան տվեց Իզաբելը:

– Սխալ պատասխան:

– «Ո՞վ է ուզում դառնալ միլիոնատեր» չենք խաղում, դո՛ւրս արի դերիցդ:

– Լավ, դուրս եկա, բայց միևնույն է սխալ պատասխան:

– Ծաղրո՞ւմ ես, գի՛ժ,– վրդովված գոռաց վրան Իզաբելը:

– Լավ է, որ հումորով ես վերաբերվում անհեթեթ կատակներիս:

– Դրանք էլ եմ սիրում,– հանդարտվեց նորից աղջիկը:

– Այս ի՜նչ ինքնամոռաց սեր է պարուրել քեզ, որ ամենահաճախ կրակող զենքդ՝ նկատի ունեմ կամակորություններդ, երբեմն վայր ես դնում,– բարձրաձայն խորհեց Արամը:

– Արի՛ խաղաղության պայմանագիր կնքենք,– ասաց Իզաբելը:

– Իսկ ես հաղթողը կլինե՞մ այդ պայմանագրով, թե՞ պարտվող կողմը:

– Դա ի՞նչ կարևոր է:

– Ինձ համար կարևոր է: Ասեմ՝ ես էլ ամբիցիաներ սիրող տղա եմ, դա միայն քեզ չէ բնորոշ:

Արամն այնպիսի գոհունակությամբ արտասանեց այս բառերը, կարծես Իզաբելը չգիտեր նրա բնավորության այդ գծի մասին: Իհարկե գիտեր: Նա մեղմ ժպտաց՝ ասելով.

– Ուրեմն երկուսս էլ հաղթող ենք հա՞ ուզում լինել:

– Այո՛, հենց այդ պատճառով քո ասած այդ խաղաղության պայմանագիրը երբեք չի կնքվելու:

Իզաբելը մի պահ լռեց, որպեսզի մի փոքր մտածի, այնուհետև առաջարկեց.

– Իսկ կոմպրոմիս հնարավոր չէ՞:

– Բարդ բան ես ասում: Դրա համար իսկապես սիրող սրտեր պիտի միավորվեն,– ճերմակ վերնաշապիկի թևքերը թեթևակի վերև քաշելով՝ ասաց Արամը:

– Իսկ ի՞նչ է, մենք սիրող սրտեր չե՞նք,– քայլերը մի պահ դադարեցրեց Իզաբելը և զարմացած հայացքով նայեց տղային:

Արամը ձեռքերով բռնել էր գլուխը, աջուձախ թափահարում էր այն, խառնշտում մազերը, ուզում էր լռել, էլ ոչինչ չասել, մեկ անգամ ամեն ինչ ձայնագրել ու երբ Իզաբելը նորից հայտնվի, այդ ձայնագրությունը միացնել, որպեսզի նույն բանը 6725 անգամ ստիպված չլինի տանջված բերանով նորից ու նորից ասել: Մի կերպ հավաքեց իրեն, փորձեց շատ չափը չանցնել, բայց չստացվեց. բարկացած էր: Ու այդ հոգեվիճակից դուրս գալ չկարողանալով՝ սկսեց գոռալ աղջկա վրա.

– Ես քեզ քանի անգամ ասեմ, որ քեզ չեմ սիրում, իսկ դու դեռ քանի անգամ ես ձևացնելու, թե իբր չես լսել, որ ես նման բան եմ ասել քեզ:

– Վե՛րջ տուր, ամեն ինչ դեռ առջևում է, դու դեռ կհասցնես ինձ նկատել:

– Նկատելը նկատում եմ. ամբողջ օրը դիմացս ֆոֆռում ես, բայց դա բան չի փոխում, սերը նկատելով չի, այն զգալով է: Դա էլ չեն ստիպում, ուղղակի այդպիսի հնարք չկա, որ ստիպես մարդուն քեզ սիրել, հասկացի՛ր վերջապես: Ես քեզ հետ միշտ անկեղծ եմ, իսկ դո՞ւ: Քեզ հիմարի տեղ դնելով՝ հույս ես տածում, որ մի օր կհոգնեմ քեզ նույն բանն ասելուց ու կսկսեմ ուրիշ բան ասել: Դա երբեք չի լինի, հավատա՛:

– Լա՛վ, ուզածիդ չափ կյանքս կերար, իսկ հիմա իմ հերթն է: Հիմա դու խոսիր քո նպատակներից,– նորից թեման շեղեց Իզաբելը:

– Բնականաբար ես էլ ունեմ իմ նպատակները: Ես գիտեմ, թե ինչ եմ ուզում և ինչու եմ դա ուզում ու ինչն

ամենակարևորն է՝ քայլեր եմ ձեռնարկում նպատակիս հասնելու համար: Ես ինքնավստահ մարդ եմ, գիտեմ, որ ինձ մոտ ստացվելու է:

– Հա՛, ամեն ինչ ասացիր, բացի բուն նպատակիցդ:

– Ինձ չի թվում, որ արժե դրա մասին ընդհանրապես որևէ մեկին պատմել, այնպես որ բավարարվիր իմ խորհրդավոր պատասխանով,– Արամը հպարտորեն ձեռքերը խաչեց կրծքին, մի փոքր ձգվեց և առանց Իզաբելի դեմքին նայելու ավելացրեց.– Ես այն չեմ բարձրաձայնի:

– Ի՜, արդար չի՛,– նեղսրտեց Իզաբելը մանկական ջղայնությամբ:

– Ես մեղավո՞ր եմ, որ դու չֆայմեցիր այսպես փակել խոսակցությունը, ինչպես ես արեցի:

– Խորամա՛նկ շուն:

Արամն իր հասցեին հնչած վերջին «հաճոյախոսությունից» ոգևորված՝ որոշեց զարգացնել այն և, հայկական հպարտ քիթը վերև ցցելով, հայտարարեց.

– Ես կասեի ամեն դեպքում ինտելեկտուալ, հմայիչ, գերող, ինքնավստահ «խորամանկ շուն»:

– Նաև ինքնասիրահարված,– ավելացրեց Իզաբելը ու այնպիսի խանդոտ հայացքով նայեց նրան, որ կարելի էր կարծել, թե մի հատ սուր, ծակող, կտրող գործիք ունի թաքուն պահած մոտը և ուր որ է քերելու է դրանով իր սիրեցյալի սիրտը:

– Այդ մի հարցում նման ենք – դեպի երկինք ցցած իր հայկական քիթը նորից ներքև իջեցնելով՝ «համեստորեն» եզրափակեց Արամը՝ ավարտելով իրենց հանդիպումների, ավելի ճիշտ դիմակայությունների հերթական ռաունդը, իսկ Իզաբելի կարծիքով՝ հաճելի զրույցը:

Արամի և Իզաբելի հարաբերությունները շատ տարօրինակ էին: Նրանք կարծես միմյանց հետ պատերազմելիս լինեին՝ երբեք դրա մասին չխոստովանելու խոստում տված լինելով: Դժվար էր նրանց համար հասկանալ միմյանց, բայց Իզաբելի համար դա խնդիր չէր, նա չէր էլ փորձում Արամին հասկանալ: Դա նրան պետք չէր: Ի՞նչ իմաստ ունի հասկանալ մեկին, ում ուղղակի ուզում ես տիրանալ, էլ հասկանալս ո՞րն է: Ուզում ես շրջապատիդ ցույց տալ, որ ուզեցել ես ու տիրացել, ա՛յ, այդպիսի թույն դեմք ես՝ ինչին ուզում ես հասնել, հասնում ես: Իսկ վաղը կարող է մտափոխվես և ուրիշ բան ուզես, մոռանաս այսօրվա ուզածը ու այդպես շարունակ: Դժվար է նման մարդու հետ, երբ ամենօրյա սուրճի իր starbucks բաժակը և մարդ արարածին իրարից չի տարբերում: Կարծում է, որ նույն բանն են, եթե ցանկանում ես, ուրեմն կունենաս: Բայց, ա՛խր, դիմացինն էլ մի ուրիշ տեսակ է, ենթարկվել-մենթարկվել չունի, հայ է՝ համապատասխան բնավորությամբ: Արդեն բացեիբաց պարզ էր դառնում, որ նման հարաբերությունների շարունակությունը չդադարող հակամարտությունն է լինելու մարդկային տարբեր կերպարների միջև: Արամը չէր ցանկանալու իրերի դասավորության որևէ բեկման հնարավորություն այդ պատերազմում, քանի որ այդպես էր որոշել, իսկ Իզաբելը անշեղորեն իրենն էր պնդելու, քանի որ նա էլ այդպես էր որոշել: Այդպես սեր չեն կառուցում, այդպես միայն պատերազմում են, սակայն ո՞վ գիտի պատերազմի մեջ ևս հնարավոր է՝ սեր ծագի, շատ անսպասելիորեն, երբ թվում է թե դրա ժամանակը հնարավոր չէ գտնել:

Իզաբելը նյարդային կեցվածքով արդեն պահանջներ էր ներկայացնում, որ ավելի ուշադիր և սիրալիր գտնվի իր «ապագա ամուսինը» իր հանդեպ, այդպես էր նա կոչում Արամին: Փաստորեն արդեն վճռել էր, որ ամուսնանալու է այդ երիտասարդի հետ: Արամը կրկին փորձում էր քաղաքավարի բացատրել, որ դա Իզաբելի ուզելով չէ: Վերջնարդյունքում վիճում են շատ խիստ և հանդիպումը ավարտվում է շատ տհաճ վերջաբանով: Իզաբելը ապտակում է Արամին և արտասվելով հեռանում, սպառնում, որ կյանքին վերջ կտա, եթե չհամաձայնվի իրենը լինել: Հիմա ի՞նչ անի Արամը: Կյանքը խորտակի հանուն նրա, որ այս աղջիկը ինքն իրեն վնաս չտա՞: Չսիրելով ամուսնանա՞, թե ինչ է երջանկացնի դիմացինին կամ ավելի ճիշտ բավարարի նրա կամակորության հերթական պոռթկո՞ւմը, իսկ ի՞ր երջանկությունը: Իր երջանկությունն ո՞ւր մնաց, չէ՞ որ նա նույնպես երազանքներ ունի, անձնական կյանքի մասին իր ուրույն պատկերացումներն ունի, որոնք չեն համապատասխանում դիմացինի աշխարհընկալման հետ: «Չէ՛, սա իմ կյանքն է, վերջիվերջո, ոչ թե նրա, իմ կյանքի տերը ես եմ, ոչ թե նա». զայրանում էր մտքում նա և չէր ուզում նահանջել իր դիրքերից:

Իզաբելը գնաց կտրուկ քայլերի: Նա իր զգացմունքների գագաթնակետում էր, նյարդայնանում էր այն փաստից, որ չի կարողանում սեր արթնացնել այն անձի սրտում, ում ինքն ընտրել է իրեն որպես զուգընկեր և քանի ամիս է արդեն պոկ չի գալիս նրանից, չի նահանջում և պնդում է, որ կյանքը նրա հետ է կապելու: Այդ նյարդայնությունը հասել էր ծայրահեղության, իսկ Արամին թակարդը գցելու և անելանելի

վիճակում դնելու վերջին ծայրահեղ փորձը՝ սպառնալիքով ամուսնանալ ստիպելու նրա ծրագիրը՝ անընդունելի: Նա զանգահարել էր Արամին և շտապ կանչել հանդիպման գիշերվա կեսին Փարիզի կամուրջներից մեկի մոտ: Մոտակայքում մարդ չկար: Ուշ գիշեր էր, մութ, անցորդներ չկային, նա մենակ էր: Հատուկ կանչել էր տղային, որ նա ականատեսը լինի, թե ինչպես է ինքը փորձ անում ցած նետվել կամրջից: Ի դեպ, հենց այնպես չեմ ասում «փորձ անում»: Գալով հանդիպման վայր՝ Արամը շատ արագ հասկացավ, թե ինչ է կատարվում, և առանց ծանրութեթև անելու միանգամից վազեց դեպի նա: Գրկեց և ցած իջեցրեց նրան այդ վտանգավոր դիրքից: Մի լավ գոռգոռաց կամակոր աղջկա վրա, տարավ իր բնակարան, որ փորձեն զրուցել: Բնակարանը հարմարավետ էր՝ ոչ այնքան մեծ, բավականին լուսավոր, սակայն Իզաբելի համար մռայլ ու անհրապույր, որովհետև գժված էր այդ տանը բնակվողի վրա, իսկ նման դեպքերում Լուվրն անգամ աչքին չէր երևա: Իզաբելը նստեց փափուկ ու ընդարձակ երկու բազկաթոռներից մեկի վրա, իսկ Արամը հյուրասենյակով մեկ զայրացած քայլում էր:

– Եթե ես չգայի, այդ փորձը կանեի՞ր:

– Այո՛,– հանդուգն պատասխան տվեց Իզաբելը՝ ինքն իր ասածի իմաստը լրիվ չընկալելով:

– Ստում ես: Դու ինձ ցույց տալու, ինչ-որ բան ապացուցելու համար ես դա արել:

– Ասենք, թե այո,– նորից վստահ և խրոխտ ձայնով պատասխանում է Իզաբելը:

– Իսկ դու ինձ հարցրե՞լ ես՝ ես դա ուզո՞ւմ եմ,– ձայնը նորից գլուխը գցեց տղան:

Իր զարհուրելի արարքի փորձից մի կաթիլ անգամ չփոշմանած՝ Իզաբելը շարունակում էր իր վրա բղավող երիտասարդից սպանիչ անտարբերությամբ պարզաբանում պահանջել.

– Այսի՞նքն... ի՞նչը:

– Քեզ հետ ապրելը:

– Բայց ինչո՞ւ պիտի հարցնեի:

– Այսինքն, քեզ համար միևնո՞ւյն է, թե ինչ եմ ես զգում: Այս փորձը բեմադրելով՝ դու մտածում էիր՝ պիտի ոտքերդ ընկնեմ, աղաչեմ, պաղատեմ, որ հետ քաշվես, իսկ ես ուզածիդ պես չեմ վարվել, հիմա մանթրա՞շ ես:

Իզաբելը շրթունքը կծեծ, լարված էր, բազկաթոռին նստած ոտքերը միմյանց էր սեղմել, որ չնկատվի՝ դրանք դողում են:

– Ո՛չ: Ես ուզում եմ՝ դու հավատաս, որ քեզ սիրում եմ ու առանց քեզ չեմ ապրի,– կմկմաց Իզաբելը:

– Ենթադրենք հավատացի ու ասացի՝ խոստանում եմ, որ միասին կլինենք: Դա քեզ կգոհացնի՞: Երջանիկ կլինե՞ս այդ դեպքում:

– Միանշանակ, և ես այլևս չեմ մտածի ինքնասպանություն գործելու մասին,– միանգամից երջանկությամբ փայլեցին Իզաբելի աչքերը: Նրա կծկված մարմինը ասես երկրորդ շնչառություն ստացավ և ազատվեց չերևացող կապանքներից:

– Իսկ մտքովդ չի՞ անցնում, որ այն անձը, ում դու իբր աշխարհի չափ սիրում ես, ինքը երջանիկ չի լինի, որովհետև դու ստիպեցիր նրան անել մի բան, ինչն ինքը չէր ուզում: Այն էլ ինչպիսի՜ բան՝ ճակատագրական,– ձեռքերը գլխավերևում թափահարեց Արամը՝ հուսահատ փորձ անելով բացատրել իր տեսակետի կարևորությունը:

– Դա կարևոր չէ: Կարևորը, որ միասին լինենք, և դու կտեսնես, թե ես ինչպես կփոխեմ քո կյանքը: Ես այն նոր խենթություններով ու խայտաբղետ գույներով կլցնեմ: Կյանքի քաղցրության այնպիսի՛ զգացողություն կպարգևեմ, որ դու ուրիշի հետ չես զգա:

Իզաբելը նորից սկսեց հիանալ իր անձով, ասես չկա այս աշխարհում որևէ մեկը, ով կկարողանար նրան համոզել, որ ինքն այս աշխարհի միակ վարդը չէ, միակ ներշնչանքի աղբյուրը չէ, և ընդհանրապես միակը չէ: Թևերը լայն բացեց, զվարթություն էր իջել նրա պարզ այտերին, ժպտում էր նուրբ մանկամիտ ժպիտով, այնքան անմեղ էր նրա հայացքը այդ պահին, որ թվում էր, թե պիտի մեղմացներ նաև Արամի խռովահույզ ապրումները, բայց ոչ:

– Իսկ դու ի՞նչ գիտես, թե ես ուրիշի հետ ինչ կզգամ,– բարկացավ նորից Արամը,– դա ես անգամ չգիտեմ:

– Դե՛.....

Արամն աղջկան իր հնարամիտ փաստարկներով ծուղակը գցելու մոլուցքով տարվեց: Նրան այս դաժան խաղը սկսել էր դուր գալ: Երբ զգաց իր ինտելեկտուալ գերակայությունը, պնդումներով դիմացինին պատին դեմ տալու իր առավելությունը, էլ ավելի ոգևորվեց.

– Տեսնո՞ւմ ես... Դու տարված ես ոչ թե ինձնով, այլ քեզնով: Դու քեզ ես ուզում ինչ-որ բան ապացուցել, որ կարող ես ուզածդ տղամարդուն կողքիդ պահել, առանց մտածելու, որ նմանատիպ քայլերով, ինչպիսին ինքնասպանության դրվագ կազմակերպելն է, էժանացնում ես քեզ իմ աչքին: Քեզ նման փառամոլ աղջկան դժվար թե դա դուր գա: Ի՞նչ կասես:

– Ո՛չ, ես չեմ էժանանում, ես ապացուցում եմ իմ սերը,– իրենն էր պնդում Իզաբելը՝ վստահ իր խոսքերի ճշմարտացիության վրա:

– Լո՞ւրջ, ուրիշ ապացուցելու մեթոդներ չգտա՞ր, միանգամից անցար ամենակացին մեթոդի՞ն:

– Իսկ դու ի՞նչ ես ուզում, որ անեմ,– հարցրեց Իզաբելը:

– Ահա՛, արդեն առաջընթաց է: Սկսեցիր ինձ հարցնել, թե ինչ եմ ուզում: Ապրես, լավ աշակերտ ես:

– Քի՛չ ծաղրիր, ոնց որ թե չես գիտակցում, որ հենց նոր ինձ հետ պահեցիր կամրջից ցած նետվելուց:

– Այո՛, ճիշտ ես, չեմ գիտակցում,– արհամարհանքով ասաց երիտասարդը՝ շրջվելով դեմքով դեպի լուսամուտը:

– Գժվել է այս տղան, իսկ որ մի ուրիշ անգամ նորից փորձեմ, ու այդ ժամանակ դու կողքիս չլինե՞ս:

– Չես փորձի, եթե այդ պահին մոտակայքում չլինեմ, չես փորձի:

Արամը նորից թեքեց գլուխը դեպի Իզաբելի ճնշված մարմինը, որն արտահայտում էր հուսահատ, լուռ ու դատարկ ճչոց: Այն չէր լսվում, բայց զգացվում էր նրա չորացած ու անկենդան շուրթերի խամրած գույնից, աղջիկն անկարող էր դուրս հանել հոգում ծվարած ողջ թախիծը:

– Դու սադիստ ես,– հառաչեց Իզաբելը:

– Ո՛չ, ես ռեալիստ եմ: Դու կամրջից ցած ընկնելու համար չէիր եկել այնտեղ: Հավատա՝ եթե դրա համար լինեիր այնտեղ, իմ խոսակցության առարկան և տոնը լրիվ ուրիշ կլինեին, իսկ հիմա ես փորձում եմ զրույց գցել քո ու «քո» միջև, այն «քո»-ի, որ ներսումդ է: Երբ, որ դու քո ներսի «քո»-ին հարց տաս՝ ինչու ես դու դա

անում, ձեզ մոտ բանավեճ կսկսվի, և դուք՝ երկուսդ, կհանգեք այն մտքին, որ անիմաստ ու անարժեք բանով եք հիմա զբաղված: Պետք է վերջ տալ, ոչ թե կյանքին, այլ այս խեղկատակությանը:

– Դու սխալ ես:

– Օկ, դե սկսի՛ր:

– Ի՞նչը սկսեմ,– տարակուսեց Իզաբելը:

– Փաստարկներ բեր, որ սխալ եմ:

– Այս նեղ վիճակում ի՞նչ փաստարկների մասին ես խոսում, ցնդել ե՞ս, չե՞ս տեսնում հոգեվիճակս:

– Էլի դու անցար էմոցիաների խաղարկմանը, ասեմ, շատ սթափ եմ և խաղերիդ չեմ տրվի: Այնպես, որ մի՛ փախչիր ստանձնածդ պարտավորություններից, այսինքն՝ ապացույցներ դեմ տուր, որ ես սխալ եմ ասում:

– Է՜, գնա գրողի ծոցը:

– Շատ բարի, գնացի:

Արդեն քայլերն ուզում էր ուղղել դեպի դուռը, երբ Իզաբելը նորից բղավեց.

– Ո՞ւր:

– Չասացի՞ր՝ գնա գրողի ծոցը, դե ես էլ գնում եմ: Ճիշտ է՝ դեռ չգիտեմ, թե որ գրողի և կոնկրետ որ ծոցը, բայց դե գնում եմ էլի: Հավանաբար Պարսիցը ի նկատի ունեիր:

– Բա ե՞ս,– բացականչեց Իզաբելը:

– Դու էլ ե՞ս ուզում գալ:

– Որտե՞ղ,– ուսերը թոթվելով՝ հարցրեց աղջիկը:

– Ուղարկածդ գրողի ծոցը:

– Է՜... ո՛չ... Ուզում եմ դադարեցնես նյարդերիս հետ խաղալ:

– Որ պահից սկսած դու կդադարեցնես իմ էմոցիաների հետ խաղալ, այդ պահից սկսած էլ ես

կդադարեցնեմ նյարդերիդ հետ խաղալ: Եթե մտնեմ այն խաղի մեջ, որ դու ես առաջարկում, հաստատ պարտվող եմ, քանի որ ի սկզբանե իմ խաղաքարտերը պարտվողի դիրքում ես շարել: Իսկ եթե դու սիրեիր ինձ, պարտվողի դերում չէիր ուզենա տեսնել, այդպես չէ՞,– թևերը լայն պարզած ու մի քիչ էլ կռացած մեջքով դիմեց նրան Արամը՝ ասես ցանկանալով, որ իր հետ անպայմանորեն համաձայնվեն:

– Ի՞նչ ես անկապ փիլիսոփայում: Հիմա ասա՝ սիրո՞ւմ ես ինձ, թե՞ ոչ,– կտրուկ վրա պրծավ Իզաբելը:

– Ուրեմն մի ժամ առաջ կանգնել էր կամրջի պռնկին, մեռնելու սպառնալիքը դրել վզիս, հիմա էլ հարցնում է՝ սիրում ես ինձ, թե ոչ: Չե՞ս զգում, որ անարդար է:

– Ո՛չ, չեմ զգում, արագ պատասխանի՛ր, ես ժամանակ չունեմ:

– Իսկ քեզ ի՞նչ է պետք, որ սիրեմ, թե ուղղակի հիմա պատասխանեմ, որ սիրում եմ: Հետո կանցնի մի որոշ ժամանակ, էլի կզգաս, որ դիրքերդ թուլացել են, նորից կդիմես այսպիսի շանտաժի, ու էլի այդ ժամանակ պարտադրանքի տակ կասեմ, որ սիրում եմ քեզ ու այդպես շարունակ: Դա՞ է քո պատկերացրած մեր համատեղ կյանքը: Դա՞ է քո ասած «խայտաբղետ գույնը կյանքի», որ պիտի հրամցնես ինձ, ես էլ իբր երջանկանալու չափ ուրախ պիտի լինեմ դրանից:

– Ո՛չ:

– Ապա ի՞նչը:

– Որ ապրես ինձ հետ, կտեսնես,– տխուր ու ցածրաձայն ասաց Իզաբելը՝ գլուխը ցած իջեցնելով, որ աչքերը նկատեն միայն հյուրասենյակի հատակին փռած գորգի սպիտակ ու մուգ կապույտ զարդանախշերով պատկերները:

– Էլ ո՞ւր ապրեմ, ամեն ինչ տեսա: Մնում է դու քեզ տեսնես, ցանկալի է՝ կողքից,– վշտալից ձայնով ասաց տղան:

Հանկարծ Իզաբելը սկսեց բարձրաձայն հեկեկալ: Նրա լացի ձայնն այնքան տհաճ ու կոպիտ էր թվում Արամին, որ խղճահարություն առաջացնելու փոխարեն զզվանք էր պատճառում: Վերջապես նա հավաքեց իրեն և արցունքների մեջ խեղդվող աչքերը նորից բարձրացրեց, որ տեսնի Արամի աննահանջ ու անսիրտ կերպարանքը: Նորից խոսեց.

– Ատում եմ քեզ: Ինքնասպանություն գործելուն ընդունակ մարդուն նման բաներ չեն ասում: Ձեռք մեկնելու փոխարեն ավելի ես հուսալքում:

– Իսկ քեզ հաստա՞տ պետք է անհույս հույսը: Հույսեր տամ, որոնց մեջը սին է, դատարկ, թեթև տուփ ուղղակի, բայց այն ձեռքերումդ պահելու ժամանակ այնպես ես ձևացնելու, թե ահավոր ծանր է և հազիվ ես քարշ տալիս քեզ հետ, այդքան շատ բան կա մեջը: Դա լա՞վ է, պատասխանի՛ր:

– Չոր ես,– գլուխը դեպի ուսը թեքեց աղջիկը՝ աչքերը տխրությամբ փակելով:

– Թացն էլ մի բան չի...– Արամն արդեն հույսը կտրել էր, որ ինչ-որ ընդհանուր հայտարարի կարող են գալ, սակայն չէր ուզում հանձնվել, շարունակեց.– Ես քեզ չեմ ուզում ցավ պատճառել, դրա համար չեմ կարող ասել, թե սիրում եմ, որովհետև խաբած կլինեմ: Բայց ես չեմ ուզում քեզ խաբել, ա՛յ, հենց այդքանով սիրում եմ, իսկ դու ուզում ես խաբված լինել: Դրանով դու ցույց ես տալիս, որ ինքդ քեզ չես սիրում: Սկսիր ինքդ քեզ սիրելուց: Կտեսնես, որ քեզ էլ կսիրեն: Ու ճշմարիտ սերը կգտնի քեզ, դու էլ նրան: Երջանկությունը

միակողմանի չի լինում: Եթե միակողմանի է, ապա դա էգոիզմ է:

Արամը խոսակցության վերջում բավականին մեղմացրել էր խոսելու տոնը ի նշան այն բանի, որ ընդունում էր՝ չափազանց կոպիտ էր մինչ այդ խոսում, նաև ի նշան այն հույսի, որ հնարավոր է այս անգամ ինչ-որ բեկում լինի: Միգուցե Իզաբելը սկսի ընկալե՞լ իրականությունը, որը չափազանց անհաջող ու վատն է նրա համար, դառն ու ատելի, երբեմն խելագարության հասցնող, բայց այնուամենայնիվ իրականությունն է: Արամը բացեց հյուրասենյակի մեծ պահարանը, հանեց բաժակները: Դրեց Իզաբելի դիմացը դրված փոքրիկ սեղանիկի վրա, թունդ մի բան բերեց խմելու, հյուրասիրեց աղջկան: Նրանց երկուսին էլ այդ պահին ալկոհոլը չէր խանգարի. հույզերը կխաղաղեցներ, կսթափեցներ: Ալկոհոլը երբեմն սթափեցնում է, երբ շատ չէ:

Գլուխ 3

Փախչել, փախչել ինքդ քեզնից, դա է ամենամեծ փախուստը, ամենահեշտ փախուստը: Խնդիրները շպրտել հեռու և չվազել այդ հեռվի ետևից, իսկ հեռուն տանում է քո խնդիրները, բայց դու չես նկատում, որ տանում է հենց քեզ, որովհետև քո խնդիրները դու ես, որովհետև քո խնդիրներով դու «դու»-ն ես: Քո խնդիրները քեզ են փնտրելու, քո խնդիրները ավելի կատաղած են քեզ փնտրելու ու գտնելու են, որովհետև ինչքան ուզում ես վազիր, քո խնդիրներով դու «դու»-ն ես:

Ուշ երեկո էր, լիքը գործ կար, թղթեր, նկարներ, սխեմաներ, նախագծեր, պայմանագրեր և այդ ամենին միշտ ուղեկցող ատրիբուտիկա: Հայր և որդի նստած էին հոր աշխատասենյակում: Միայն թե հայրը չէր կռահում, որ իր որդու հետ է նույն սենյակում: Հոգնած էին, Պատրիկն առաջարկեց ընդմիջել, ցրվել մի քիչ այդ գժանոցից: Մի բան պատվիրեցին ուտելու և խմելու: Շուտով պատվերը տեղում էր: Ուշոտ էր նման շատ ուտելիքով ստամոքսը ծանրաբեռնելու համար, սակայն նրանց օրվա բնականոն ընթացքը մի քանի շաբաթ է, ինչ խախտված էր, ուստի այդ վիճակը կամաց-կամաց դառնում էր նորմա: Բայց հիմնական պատճառը ուրիշ էր, ամեն դեպքում Պատրիկի

համար, որ հաստատ ուրիշ էր: Նա նախընտրում էր ուշ տուն գնալ, մի տեսակ խուսափում էր ընտանիքի հետ շատ շփումից: Հարաբերությունները կնոջ հետ ծայրահեղ լարված էին. մեկ կինն էր իրեն մեղադրում դավաճանության մեջ, մեկ նա՝ կնոջը: Տիպիկ իրավիճակ, երբ սերը սպառվում է, իսկ տակը դատարկ է. հարգանք ու երկուստեք հասկացվածություն չկա:

– Ես ի՞նչ անեմ, որ լավ լինի, ընտանիքիս պահով եմ ասում, հասկացար արդեն,– հանկարծակի լռությունը խախտեց Պատրիկը:

– Ամեն դեպքում թաքնվել շատ գործ ունենալու շղարշի տակ պետք չէ,– խորհուրդ տվեց Արամը՝ գլուխը մտցրած տարատեսակ թղթերի կույտի մեջ:

– Իսկ ի՞նչ է պետք:

– Խոսել:

– Չի ստացվում:

– Որ անկեղծ լինեք, կստացվի,– ասաց Արամը:

– Ես անկեղծ եմ, ինքը՝ ոչ,– արդարացավ Պատրիկը:

– Իսկ Դուք վստա՞հ եք, որ նա անկեղծ չէ կամ որ Դուք անկեղծ եք:

– Ի՞նչ տարօրինակ հարց ես տալիս,– զարմացավ Պատրիկը:

– Ոչ թե տարօրինակ, այլ անհարմար,– ճշտում մտցրեց հոր խոսքի մեջ Արամը՝ գլուխը սեղանին դրված թղթերից վերջապես բարձրացնելով:

– Հա՛, ասենք թող լինի անհարմար, հետո՞:

– Հետո այն, որ եթե այստեղ ինձ հետ աշխատասենյակում նստած փախչում եք անհարմար հարցերից, պատկերացնում եմ՝ Ձեր կնոջ հետ ունեցած զրույցի ժամանակ ինչերից կփախչեք:

– Գուցե ճիշտ ես: Ուղղակի ինչ-որ բան ինչ-որ տեղից սկսեց սխալ գնալ, ու ես չնկատեցի ու չկանխեցի, բայց նա էլ իր հերթին ջանք չթափեց կանխելու,– ասաց հայրը:

– Հիմա Դուք ո՞ւմ եք ավելի շատ նախատում՝ Ձեզ, թե՞ Ձեր տիկնոջը:

– Չգիտեմ, չգիտեմ, ոչինչ չգիտեմ: Միայն գիտեմ, որ պետք է ինչ-որ կերպ հարթել այս անկապ վիճակը, բայց ո՞նց: Ուղեղս ո՞ր կողմ շարժեմ, որ գտնեմ պատասխանը:

– Հարցը դեռ չեք ձևակերպել, պատասխանը որտեղի՞ց գտնեք:

– Ո՞նց թե չեմ ձևակերպել,– մի պահ շփոթվեց հայրը:

– Հա՛, չեք ձևակերպել: Ինչպես նախկինում, այնպես էլ հիմա, ինչքան խոսք է բացվել այս թեմայի շուրջ, ես այդպես էլ չկարողացա ընկալել՝ Ձեր խնդիրը որն է, ինչ հարց եք Դուք Ձեր առաջ դրել, որ մի հատ էլ վիատված ասում եք՝ պատասխանը չեք գտնում:

– Հարցն այն է, թե ինչու է այսպես մեր միջև:

– Իսկ ինչպե՞ս է,– հետաքրքրական հայացքով հոնքերը կիտեց Արամը՝ նայելով ուղիղ նրա դեմքին, ասես այդ ծամծմված թեմայի մասին առաջին անգամն է լսում, իրականում արդեն հոգնեցրել էին նրան հոր երկարաշունչ տրտնջանքները:

– Սկսել ենք չհասկանալ իրար, կոպտել, կասկածել մեկմեկու, մի խոսքով՝ սառել ենք:

– Կասկածում եք, որ դավաճանո՞ւմ է:

– Այո՛, կա այդպիսի կասկած, նույնն իր մոտ է, բայց երդվում եմ՝ ես նրան չեմ դավաճանում:

– Ինձ պետք չի երդվել, նրան երդվեք, եթե կարող եք:

– Օգուտ չի տալիս, նա ինձ չի հավատում, ես էլ իմ հերթին սկսել եմ կասկածել նրան, ու... Մի խոսքով՝ այդպիսի տխուր բաներ: Ցայտնոտ է ուղղակի: Վատն այն է, որ նման լարված ընտանեկան հարաբերությունների շրջանում գործով լիարժեք չեմ կարողանում զբաղվել: Կենտրոնացումս ու ճիշտ որոշումներ կայացնելու ունակությունս կամաց-կամաց լքում են ինձ:

– Մի հարց կարելի՞ է:

– Ապա:

– Նախկինո՞ւմ ևս չեք դավաճանել Ձեր կնոջը:

Պատրիկի դեմքն այլայլվեց, տհաճ հարց էր ու անսպասելի:

– Ո՛չ,– հնչեց կարճ պատասխանը:

– Երբեք, երբե՞ք,– մեկ անգամ ևս ճշտող հարց տվեց Արամը՝ ակնհայտ նյարդայնացնելով իր զրուցակցին:

– Դե ասում եմ չէ էլի, էլ ինչքան ասեմ: Ասես կինս լինի դիմացս նստած, հետաքննողի աչքերը հառում է վրաս ու կասկածում իմ ամեն մի ասածի վրա, ինչպես որ դու հիմա:

Արամը հասկանում էր, որ եթե իրեն է այդպես անհաջող խաբում, կնոջն ինչպես «հմտորեն» կխաբի, այն էլ այնպիսի խորամանկ կնոջ, ինչպիսին Կլաուդին է: Անգլերեն մի լավ բառ կա՝ «realy?»: Այս բառը, եթե զարմանալու արտահայտություն դեմքին պատկերող անձանց մրցույթում հաղթողին արժանի դեմքով ես արտասանում, ապա լավագույնս է նկարագրում Արամին այդ պահին: «Դե արի ու մի ասա, որ անցյալիդ խաղերի արդյունքը հիմա դիմացդ նստած է».

ներքուստ զայրույթից քիչ էր մնում պայթեր: «Չէ՛, Արա՛մ, հավաքի՛ր քեզ: Հիմա դրա ժամանակը չէ, ուղղակի լուռ լսի՛ր ու ձևացրու, թե ոչինչ չգիտես». մտքում խրատում էր ինքն իրեն Արամը: Նստած, անտրտունջ լսում էր նա հոր արդարացումները, թե ինչքան լավ հայր է եղել Կլաուդիի երեխաների համար, ինչքան լավ ամուսին հենց Կլաուդիի համար, իսկ նա անշնորհակալի մեկը դուրս եկավ: Բայց Պատրիկը կարծես թե անկեղծ էր ներկայի հարցում: Արամը ամեն դեպքում զգաց, որ հիմա նա սիրուհի չունի: Հայրը ակնհայտ տանջվում էր, ինչպե՞ս կարող էր օգնել նրան: Ա՛խր, դեռ մի հատ էլ նա ունի իր հոր խորհուրդների կարիքը, թե ինչպես կյանքն ապրել: Բայց արի ու տես, որ հիմա տեղերով փոխվել են՝ աշխա՛րհ, աշխա՛րհ... տարօրինակության ծով ես: «Մտածի՛ր, Արամ, մտածի՛ր: Կարելի է կարծել, թե սիրո մասնագետն էլ ես եմ հա՞, իրոք, ինչո՞ւ հոգեբանի մոտ չի գնում: Ձրի ծառայություն մատուցո՞ղ է գտել ի դեմս ինձ: Լավ, հիմա ռեստարտ, ուղե՛ղ, աշխատի՛ր, ի՞նչ խորհուրդ տամ սիրասուն հայրիկիս». ահա այսպիսի մտքեր էին պտտվում Արամի գլխում, երբ վերջապես խոսեց.

– Վստահության վերականգնման լավագույն միջոցը ճշմարտությունն է, այն անկեղծորեն արտաբերելը առանց դերի մեջ մտնելու՝ նայելով ուղիղ նրա աչքերի մեջ և միաժամանակ ստիպելով, որ նա էլ անպայման նայի Ձեր աչքերին:

– Բայց ի՞նչ ճշմարտություն:

– Դա Դուք կիմանաք, ես որտեղից իմանամ, էս Դուք, էս Ձեր կյանքը: Ձեզանից բացի ո՞վ կիմանա՝ ինչ թաքնված բաներ կան նրանում:

– Ես ոչինչ չեմ թաքցնում,– ասաց հայրը:

– Այդ դեպքում ինչո՞ւ եք տանջվում, եթե ոչ մի բանում մեղավոր չեք,– նորից թակարդը գցեց նրան Արամը:

– Ուզում եմ, որ նախկին Կլաուդին վերադառնա:

– Վստա՞հ եք, որ դա եք ուզում:

– Չեմ հասկանում քեզ:

– Իսկ դուք կարո՞ղ եք ժամանակը ետ տալ,– հարցրեց Արամը:

– Ո՛չ, իհարկե:

– Այդ դեպքում ինչպե՞ս եք պատրաստվում նախկին Կլաուդիին հետ բերել: Նա հիմա այն է, ինչ կա:

– Բայց այսպես էլ հնարավոր չի:

– Դիցուք Ձեր ասածն է, և նա կտրուկ փոխվել է: Այստեղ մի քանի տարբերակ կա՝ կամ միշտ է այդպիսին եղել, ուղղակի Դուք դա չեք նկատել կամ Դուք ինչ-որ լուրջ սխալ եք արել, և դրա պատճառով նա սկսել է ուրիշ կերպ Ձեզ վերաբերվել կամ Դուք ոչ մի սխալ բան էլ չեք արել, այդ նա է պարզապես իր կյանքի համար այլ ընթացք փնտրում՝ ինչ-ինչ անձնական պահանջմունքներից ելնելով, կամ գուցե արդեն գտել է: Իսկ Դուք այդ գտածի մեջ ուղղակի այլևս չեք տեղավորվում կամ նա չի ուզում տեղավորել: Հիմա սկսեք խորհել, թե այս մի քանի տարբերակներից որն է ավելի մոտ ճշմարտությանը:

Պատրիկի դեմքը մի քանի ակնթարթ սառել էր, հետո մռայլվեց: Նրան դուր չէր գալիս այս ամենը: Արդեն ջղաձգվում էր խոսակցությունից: Թեթևություն զգալու փոխարեն Արամի անորոշ, երբեմն կիսամեղադրական հարցադրումներից էլ ավելի կատաղեց, փոշմանեց, որ սկսել է այս խոսակցությունը: Արդյունքը՝ կոպիտ պատասխանն էր.

– Ոչ մեկը: Խառը բաներ ես ասում:

– Կյանքն է ինքնին խառը, բայց երբ փորձ եք անում այն հասկանալ, պարզվում է, որ իրականում խառը չէր: Ուղղակի հեշտ է միշտ հեշտի հետևից վազել, չխորանալ ու չցանկանալ կյանքի բարդ կծիկները քանդել,– փիլիսոփայեց նորից Արամը:

– Դու պատահաբար անցյալ կյանքում հոգեբան չե՞ս աշխատել,– կիսահեգնական տոնով հարցրեց հայրը:

– Դժվար,– լուրջ մտորողի կեցվածք ընդունելով՝ պատասխանեց տղան, ապա հավելեց.– Ինչ-որ այդպիսի բան չեմ հիշում:

– Պարզ է, որ չէիր հիշի:

– Չէ՛, ես կհիշեի, հավատացե՛ք,– անկեղծ ծիծաղեց մի քանի վայրկյան տղան,– Ինչևէ, իրավիճակից ելք փնտրելուց առաջ, մի՛ զլացեք մի քիչ շատ ժամանակ հատկացնել իրավիճակը հասկանալու վրա: Վերադառնամ սկզբի ասածիս: Դուք արագ լուծում եք ուզում գտնել, բայց խնդիրն անգամ կարգին չեք կարդացել: Ձեզ ես, մյուսները պետք է մենակ թողնենք: Դուք պետք է մնաք ինքներդ Ձեզ հետ և սկսեք հանգիստ, առանց շտապելու մտածել՝ ինչ է եղել և ինչ անել: Ձեզ համար այդ մենակությունը, մի քանի ժամով թեկուզ, իրոք անհրաժեշտ է: Վերջում ևս մեկ խորհուրդ՝ եթե մտորումների արդյունքում գաք այն եզրահանգման, որ Դուք ոչ մի բանում մեղավորություն չունեք, պետք է թեթևություն ապրեք այդ մտքից, քանի որ եթե իրար կորցնեք, վերջին հաշվով դա Ձեր մեղքով չի լինի, իսկ հետագա ամբողջ պատասխանատվությունը կընկնի Ձեր կնոջ վրա: Եթե պիտի զղջա ինչ-որ մեկը, ապա դա նա է լինելու, իսկ եթե ինքը մինչև վերջ կարծի,

որ ճիշտ է վարվել, ուրեմն պիտի ուրախ լինեք, որ նա երջանիկ է: Չէ՞ որ Դուք սիրում եք նրան ու հաստատ վատը չեք ցանկանա:

Վերջին խոսքերը շատ էին ազդել Պատրիկի վրա: Նա գնաց տուն: Հստակ որոշել էր հետևել Արամի խորհրդին ու մի լավ ծանրութեթև անել անձնական կյանքը, բայց, ցավոք, ուշ էր: Կլաուդին հենց այդ նույն օրը լքել էր նրան: Նամակ էր թողել հյուրասենյակի սեղանին, իրերը հավաքել ու հեռացել էր: Բնականաբար աղջիկները հետևել էին մոր օրինակին. նրանց այդ տանը այլևս ոչ մի պահող բան չկար: Պատրիկը սրտի ցավով կարդում էր նամակը ու արտասվում: Ոչ մի մեղադրական բառ չկար այնտեղ, ոչ մի վիրավորանք, ոչ մի նեղացվածություն: Կլաուդին պարզապես նշում էր, որ ուրիշ սեր է հայտնվել նրա կյանքում, և այժմ որոշել է իր հետագա կյանքն ապրել այլ տղամարդու հետ: Բայց Պատրիկը ավելի մեծ եռանդով սկսեց մեղադրել ինքն իրեն կատարվածի համար, կարծես ինչ-որ բան կարող էր փոխել: Իրականում չէր կարող, բայց մի բան կար, որ կարող էր անել: Սկսեց խմել: Չէ՛, հաստատ այս մի բանը պետք չէր անել, սակայն տղամարդկանց մի մասը նման իրավիճակում կարծում է, թե դա միակ բանն է, որ կարող են անել: Ժամանակավոր սփոփանք հաղորդող արբած վիճակը լավն է թվում՝ հարազատ, լավագույն ընկերակցող միջավայր հոգուդ հույզերի համար: Ընտիր հասկանում է քեզ խմիչքը, չի խանգարում, չի խոսում, չի բարկանում վրադ, թողնում է, որ մնաս ինքդ քեզ հետ: Անմիտ ցնորքների մեջ ընկնելով՝ հանգստացնես քեզ, բայց միայն քո աչքերում: Շրջապատողները, եթե քեզ նայեն, ապա կտեսնեն ուղեղն անջատած, քայլելու

ճիշտ կանոնակարգը լրիվ մոռացած, դես ու դեն ոլորվող մի խղճուկ կերպար: Այդպես հարբած դուրս էր եկել փողոց, որ ավելի շատ մարդ տեսնի իր վիատված հոգին ու նողկալի կեցվածքը: Տեսնողների ցանկում Արամը երջանիկ պատահականությամբ նույնպես կար: Նստարանին անհույս լքվածի նման փռվել էր հայրը, ու իրեն այդ վիճակը ահավոր «դզում էր».

– Մի՛ խանգարեք, ժողովո՛ւրդ, ինձ այսպես լավ է,– բղավում էր Պատրիկը իրեն շրջապատած անծանոթների վրա,– հինգաստղանի հյուրանոցում լյուքս համարի անկողնում պառկած վիճակից էլ լավ է: Հե՜յ, այդ ի՞նչ ես անում, երիտասա՛րդ, լրիվ չափդ անցնում ես: Քեզ ո՞վ է թույլ տվել կպնել ինձ, մի՛ րոպե, հեռու գնա՛, ո՞ւր ես ինձ տանում: Աաա՜, այդ դու ես,– վերջապես տեղը բերեց Արամին հայրը,– էս վերջերս մի տեսակ շատ չե՞նք շփվում իրար հետ, «պարո՛ն»,– ծամածռված բերանով ու կիսաանջատված հալով ասաց մինչև ականջների ծայրը ալկոհոլի ազդեցության տակ գտնվող Պատրիկը:– Ա՜յ, որ այդքան իմ կնոջ հետ շփված լինեի, կարող է ինձ չլքեր... Վե՛րջ, դու ես մեղավոր մեր բաժանման մեջ, հա՛, հաստատ դա դու արեցիր:

– Այդ ես չէի փախչում իմ կնոջ հետ անկեղծ զրույց ունենալուց: Այդ ես չէի փախչում տնից ուր, որ պատահի, միայն թե իմ ու իմ կնոջ հայացքները չհանդիպեին միմյանց: Այնպես, որ դա Ձեր ընտրությունն էր, Ձեր պահվածքը, Դուք էիք ընտրել խնդիրներից փախչելու մեթոդը: Ես Ձեզ հակառակն էի անընդհատ ասում «պարո՛ն»:– նույն հեգնական շեշտադրումը «պարոն» բառի վրա դրեց Արամը:

– Ուշ ես ասել, շատ ուշ, պիտի շուտ ասեիր: Ա՜յ որ շուտ ասեիր, ես նրան չէի կորցնի...– Պատրիկը ձախ

թևը վերև էր պարզել և ցուցամատը վերև տնգած անընդհատ թափահարում էր օդում՝ անհայտ ուղղությամբ: Այնքան ծիծաղելի ձայն ու պահվածք ուներ այդ պահին, որ եթե Արամը որդին չլիներ, միանշանակ մի լավ զվարճանալու առիթ կունենար, իսկ հորը նման դերը ոնց որ թե դուր էր եկել, նա շարունակում էր բղավել.– Վերջ, դու ես մեղավոր... Կորի՛ր աչքիցս, անպիտա՛ն որդի:

«Որդի՞, մի րոպե, նա ինձ ասաց որդի, բայց ես նրան չեմ ասել, թե ես ով եմ: Այս մարդը լրիվ ցնդել է, ալկոհոլը գլուխը կերել, գցել է մի կողմ: Սա ի՞նչ էր, գրո՛ղը տանի, գժվելու բան է: Ինչպե՞ս թե որդի, ուրեմն այնքան հարազատ է համարում, որ միամիտ հարբած ժամանակ բերանից թռցրե՞ց: Բայց նա չզգաց, թե ինչպես այդ բառը թռցրեց: Ուրեմն իր ենթագիտակցության մեջ թաքուն, կոծկված ցանկալին դրեց իրականության տեղ ու ասաց դա բարձրաձայն, ինչն իրականում սթափ վիճակում հաստատ չէր ասի կամ գոնե այսպես ուղիղ չէր ասի: Օոոո՜, Աստվա՛ծ իմ, ի՞նչ է անում այս խմիչքը: Այսպես է լինում, երբ մարդ սովորաբար խմող չի լինում ու մեկ էլ միանգամից մի երկու շիշ քաշում է գլխին սուր զգացողություններ ունենալու համար». մտքում մտածում էր Արամը՝ հորը տանջվելով մի կերպ տուն հասցնելու ընթացքում: Չթաքցնեմ, նա ծանր էր: Մի պատմություն էր նրան տաքսու մեջ այդպես ջնջխված տեսքով նստեցնելը, մեկ ուրիշ պատմություն էր այդ կցկված, բայց աժդահա մարմինը հետո այդ նույն տաքսիից հանելն ու դեպի տուն «առաջնորդելը»՝ համարյա թե կիսագրկած: Տաքսիստը ևս հայ էր, ճանապարհին հասցրել էին մի երկու բառ փոխանակել, ու Արամը

ասել էր, որ Հայաստանից է: Տաքսիստը նկատեց, որ նիհար կազմվածքով երիտասարդ տղան մենակ գլուխ չի հանի, միացավ գործին: Արամը պառկեցրեց անկողնում հորը ու նստեց կողքին, իսկ նա դեռ զառանցում էր, ինչ-որ ապուշ բաներ էր ասում, հիմնականում անհասկանալի, մտովի կռիվ էր տալիս ինչ-որ չար ուժերի դեմ, մի խոսքով՝ լրիվ հիասթափվելու տեսարան: Արամը չափազանց ծանր էր տանում հոր այս վիճակը: Ամբողջ գիշեր կողքը նստեց ու կարոտած երեխայի նման հայացքը չէր թեքում նրանից:

Անցավ մի քանի օր: Արամը հիշում էր մորը տված խոստումը, որ ընտանիք չի քանդի: Հաստատ մորը տված խոստումը չէր դրժի: Հիմնականում դա էր պատճառը, որ այսքան ժամանակ չի ասել հորը ճշմարտությունը: Բայց հիմա Պատրիկն այլևս իր կնոջ հետ չէ, և դրանում մեղավորը, փաստորեն, Արամը չէ: Հետևաբար նա մաքուր է թե՛ իր հոր առջև, թե՛ իր մոր: Հանգամանքները փոխվել էին: Հայրը միայնակ էր, մայրը՝ ևս: Հիմա իսկական ժամանակն է մտածել, թե ինչպես միավորել նրանց: Դրա համար պետք է հանդիպեցնել նրանց, որի համար նախ պետք է հիշեցնել տալ իրար մասին, գոնե նրանցից մեկին, շոշափելու համար տրամադրվածությունը: Դժվար չէ կռահել, որ ավելի տրամաբանական է որպես թիրախ ընտրել հորը: Այդպես էլ արեց, և գնաց «ուղեղի ռեստարտ» օպերացիան: Նշյալ օպերացիան գլուխ բերելու համար Արամին անհրաժեշտ էր «աջակից», չշփոթեք՝ «աջարակից» չէ, այլ «աջակից», այն էլ «աջակից Երևանում»: Նա դրա համար ընտրեց Դինային՝ Տաթևի ընկերուհուն, ում հետ մտերիմ էր, և խնդրեց օգնել: Դինան Տաթևից տարիքով փոքր

էր մոտ 10 տարի և հավասարապես ընկերություն էր անում և՛ մոր, և՛ որդու հետ: Դինան համաձայնեց մաս կազմել Արամի գլխի փայլատակումներին: Նա գնաց հյուր Տաթևին այն ժամանակ, երբ Փարիզի ժամանակով Արամը պայմանավորվել էր հոր հետ կամ ավելի ճիշտ ասել էր, որ կգա օֆիս: Հայրը միայնակ նստած էր հանգստի սենյակի բազմոցին, մտքերով չգիտեմ՝ ուր էր, բայց ինչ-որ կարևոր տեղ էր: Արամը եկավ, նստեց ու զգաց, որ հայրը կամ երկնքում է կամ երկինքն է ուզում իջեցնել իր մոտ, մի խոսքով՝ տեղում չէ, բայց տարածքում է: Տղան սկսեց դեսից-դենից խոսել, սկզբից դեսից, հետո դենից ու կամաց-կամաց Պատրիկին իջեցրեց երկրի մակերևույթ: Մի պահ Արամը առանձնացավ և Դինային գրեց, որ 15 րոպեից Տաթևի հեռախոսից զանգի իրեն: Դինան այդ ժամանակ Տաթևի տանն էր, մեկ էլ շատ հանկարծակի ասաց Տաթևին, որ պետք է արագ հեռանա: Կարևոր գործ կա, պետք է շտապի ու, առանց նորմալ բացատրելու ինչ-ոնց, թռավ տնից: Ընկերուհին թաքուն թոցրել էր Տաթևի հեռախոսը, որով, ինչպես պայմանավորվել էին, պիտի զանգեր Արամին: Այդ նույն ժամանակ Արամը իբր պատահականորեն դնում է իր հեռախոսը ուղիղ Պատրիկի դիմաց, և նախանշված ժամին ասում, որ մի քանի րոպեով դուրս է գալիս, բայց իրականում դռան մյուս կողմում կանգնած մի քանի սանտիմետր բացված դռնից հետևելու էր հորը: Դինան զանգում է, և Արամի հեռախոսի վրա խոշոր պլանով երևում է Տաթևի նկարը: Պատրիկը նայում է նկարին, ռեակցիա չի տալիս: Արամը նկատում է, որ նա նայում է հեռախոսի վրա, ու ոչինչ տարօրինակ նրա դեմքի հետ տեղի չի ունենում: «Ա՛յ քեզ բան...

Լավ, այսքան անջատված կլինի մարդ: Չէ՜, հայրի՛կ, աչքիս քո կյանքում լիքը Տաթևներ են եղել, որ տեղը չես բերում: Խե՛ղճ մամ, այս ո՞ւմ ես սիրել, ավել բան չասեմ, վերջիվերջո երկուսիդ գենից էլ ունեմ». ցածրաձայն խոստովանեց Արամը: Ներս մտավ նորից:

– Քեզ ինչ-որ մեկը անընդհատ զանգում էր:

– Ո՞վ,– այնպիսի դեմքի արտահայտություն ընդունեց տղան, ասես խորը զարմանք էր ապրում, այդ ինչպե՞ս, այդ ո՞վ կարող էր նման «սովորական» պահի նրան զանգել:

– Որտեղի՞ց իմանամ: Մի հատ սևահեր կին էր կամ աղջիկ, մի խոսքով... չգիտեմ: Միայն սիրուն ժպտում էր հեռախոսիդ էկրանից: Զանգի՛ր, տե՛ս՝ ինչ է ասում, վեց անգամ զանգեց:

– Իսկ ի՞նչ էր գրված անունը:

– Ա՛յ քեզ բան, տղա՛, էս դու, էս քո հեռախոսը, ինքդ չե՞ս կարող նայել, որ ինձ ես հարցնում:

– Ուշադրությունդ եմ ստուգում:

– Իմ ուշադրությունը վաղուց իր տեղում չէ,– ասաց Պատրիկը,– հազիվ եմ նորից առօրյա ռիթմիկ կյանքիս վերադարձել ապրածս սթրեսից հետո, դու ինձնից չափից դուրս շատ բան ես պահանջում:

– Լա՜վ, լա՜վ, մի՛ բորբոքվիր, էլ բան չեմ ասում: Գնամ, տեսնեմ՝ ինչ է ասում ինձ այդ սիրուն աղջիկը կամ կինը, ինչպես դու նրան բնութագրեցիր:

– Գնա՛, գնա՛, նայիր՝ չուշանաս, շատ գործ ունենք անելու:

«Չէ՜, սա ծանր դեպք է: Այս տարբերակը չաշխատեց: Փաստորեն չի էլ հիշում: Միգո՞ւցե խոսակցություն բացեմ հարմար, չգիտեմ... Լավ, դա հետո, մի

քիչ ուղեղս մարզեմ, որ նման էշություն նորից չանեմ». խորհում էր իր հետագա քայլերի մասին որդին:

Դինան Արամին մի քանի զանգ թողնելուց հետո, նորից բարձրացավ Տաթևի բնակարան և, իբր թե վազելով էր եկել, շնչակտուր ետ տվեց նրան հեռախոսը՝ ասելով, թե պարզապես պատահականորեն էր սեփականի փոխարեն Տաթևինը պայուսակը գցել: Վերցրեց այնտեղ թողած իր հեռախոսը և նորից արագ դուրս թռավ տնից, իր կեղծ շտապողականությունն ավելի համոզիչ դարձնելու համար:

Փողոցների մայթերը չափչփելով՝ Արամը քայլում էր անշտապ, մտազբաղ ու նաև տխուր: Տրամադրություն չուներ, կյանքը առաջին անգամ իմաստազուրկ թվաց նրան: Իր խաղը «կանգնած» կարգավիճակում էր, իսկ ինքը՝ այդ խաղում խճճված: «Հիմա ո՞նց անեմ, որ չսխալվեմ, ա՛խր, ճակատագրական պահ է: Մի բան այնպես չանեմ, ամեն ինչ հակառակ հունով կարող է գնալ: Ուղեղս համառորեն արձակուրդի է մեկնել առանց զգուշացնելու, առանց իմ համաձայնությունը ստանալու, և հիմա, նրա տեղում չլինելու պարագայում, ես ժամանակն անիմաստ վատնում եմ, մինչդեռ պետք է ծնողներիս միավորման մասին մտածեի: Իսկ ես ի՞նչ եմ անում՝ անկապ, աննպատակ քայլում եմ փողոցներով արդեն մի քանի օր է: Այս փողոցներն էլ են երևի ինձնից հոգնել». մտածում էր նա:

Մշուշոտ աշնանային երեկո էր Երևանում: Պատուհանից նայում և ոչինչ չէր տեսնում Տաթևը, չէր փորձում տեսնել, մտքերն ուրիշ տեղ էին, ինքը՝ պատուհանի մոտ: Կարոտում էր որդուն, սակայն չէր ուզում դա խոստովանել, քանի որ միշտ ռեալ է դատել. «Եթե ուզում եմ, որ որդուս համար լավ լինի, պիտի մտածեմ,

որտեղ է իր համար լավ, ոչ թե, կողքիս պահելով, համոզեմ, որ իրեն ինձ մոտ է լավ»: Եթե սիրում ես ինչ-որ մեկին՝ կլինի հարազատ ծնողդ, զավակդ, թե սիրելիդ, այդ սերն ապացուցում են նաև փոքրիկ զոհողություններով՝ առաջնահերթ համարելով դիմացինի ինքնազգացողությունը, երջանկություն պարգևելու հնարավորություն ունենալու դեպքում պարգևում են այն՝ ինչ-որ ժամանակով սեփական «ես»-ը երկրորդ պլան տանելով:

Տաթևը մի քանի օր անընդմեջ փորձում էր կապ հաստատել որդու հետ, սակայն հեռախոսը չէր պատասխանում: Անհանգստացավ, սիրտը վախ ընկավ. «Իսկ կարո՞ղ է այդ իմ լավությունը մի փորձանքի հանգեցնի նրան օտար ափերում, բայց չէ՞ որ արդեն մի քանի տարի է, ինչ այնտեղ է, և որևէ անախորժություն չի պատահել: Աստվա՛ծ իմ, մի բան եղած չլինի»: Ընդհանրապես, փորձանքը երբ գալիս է, չի հարցնում՝ այսօր գամ, թե վաղը կամ եթե հարմար չի՝ չգամ: Ո՛չ, նա գալիս է այն պահին, երբ իրեն է հարմար և կպնում նրան, ում ուզում է կպնել: Հեռախոսը ձեռքին, աչքերն էլ հեռախոսի էկրանից չկտրելով՝ սպասում էր որդու հետզանգին, բայց հեռախոսը այդպես էլ չէր արձագանքում նրա մտահոգություններին: Ավելի ճիշտ հեռախոսն ի՞նչ մեղավոր էր, որ Արամը չէր արձագանքում հեռավոր անկյուններից: Այնքան անջատված էր դարձել, որ մոռացել էր հետևել իր բջջայինին: Խեղճն անարդարացիորեն մի տեղ լքված-ընկած էր, հաճախ՝ անջատված: Մի՞թե աշխատանքի բերումով էլ պետք չէր գալիս: Իհարկե պետք էր գալիս, բայց Արամն այդ շրջանում իրեն կորցրել էր, գործերին նորմալ չէր հետևում: Ո՞վ գիտի՝ հեռախոսն անջատված, մի

տեղ գցված վիճակում թողնելով, մորից բացի էլ քանի կարևոր զանգ է արհամարհել ու բաց թողել գուցե կարևոր գործնական հանդիպումներ: Նրան այդ ամենը քիչ էր հետաքրքրում ու անգամ Պատրիկի կշտամբանքները չէր լսում: Իսկ Պատրիկը, այ՛ո, զայրանում էր: Պնդում էր, թե շատ է փոխվել, պատասխանատվության զգացումը կորցրել է, նյարդային է դարձել, բայց ինչո՞ւ: Ոչ ոք չգիտեր:

Տաթևը շարունակում էր չկտրել աչքը հեռախոսից, երբ, ըհը՛, լսվեց զանգի ձայն, բայց ուրիշ հեռախոսահամար էր: Հիասթափության մի քանի ակնթարթներ, և, այնուամենայնիվ, պետք էր պատասխանել: Գործընկերուհին էր: Զանգել էր շտապ գործով: Վարդուհու համար բոլոր գործերը շտապ էին: Եթե նրան ինչ-որ բան էր անհրաժեշտ, մեջտեղից ճղվեիր, պետք է գտնեիր, տայիր նրան: Ահա այդպիսին էր այդ եռանդուն աղջիկը, խմբագրության «մատոռը», «շենքի ատոմային ռեակտորը», «փողոցի զարդն ու պսակը», «քաղաքի եռուն կետը» «երկրի...»... լավ, ոնց-որ շատ խորացա, մի խոսքով՝ ահավոր անհանգիստ անձնավորություն մը, լիքը բաներից բան չհասկացող, բայց երբեք դրա մասին չխոստովանող տեսակ մը, կրակի կտոր մը, կտոր մը երկինք մը.... աաաա՜, կներեք, ժողովո՛ւրդ, աչքիս էլի խորացա... Եվ այսպես՝ ինչո՞ւ էր մեր թիթիզ Վարդուհին զանգել:

– Տա՛թ, լսի՛ր, շուտ մտի՛ր էլ. հասցեդ, բան ունես ման գալու ու ինձ ուղարկելու, արագացրո՛ւ, շտապ է:

– Իսկ քո կյանքում ինչ-որ բան կա՞, որ շտապ չի,– հեգնեց Տաթևը:

– Ո՜ւֆ, է՜, կատակներիդ հավեսը չունեմ: Հա՛, ճիշտ ես, այդպիսի անշտապ բան չկա, բոլորը շտապ են,

ու ի՞նչ, դա վա՞տ է: Ավելի լավ է ինձ նման ռեակտիվ, քան ձեզ նման դանդալոշ: Դրա համար էլ ձեր մեկը երկուս չի դառնում, իսկ իմը միանգամից թռնում է ո աստիճան, ո-ը մեծ է մեկից և ձգտում է պլյուս անսահմանության:

– Լավ, մաթեմատիկայիդ լեկցիան դի՛ր մի կողմ, ինչն է քեզ շտապ պետք ասո՞ւմ ես,– հարցրեց Տաթևը:

– Դե՛ ասացի, վա՛յ, որ գնաս էլ. հասցեդ բացես, ֆայլ եմ խնդրում գտնես, ուղարկենք Սամսոնին, երևի հիշեցիր նրան: Մենք մի շաբաթ առաջ խոսել ենք նրա հետ, հիշո՞ւմ ես՝ խմբագրություն էր եկել, դու էլ կողքս էիր, խոստացանք, որ կօգնենք:

– Աաաաա՜, հաաաա՜:

– Է՜ հա ու ջան: Բա մարդուն բան ենք խոստացել ու չենք արել: Այսօր զանգեց, հիշեցրեց, գետինն էի մտնում արդեն: Չե՜ս պատկերացնում նման խայտառակությունները ինչքան ծանր եմ տանում: Դու էլ մի բերան չասացիր դրա մասին այս քանի օրը: Աչքիս դու ինձանից առավել մոռացկոտն ես,– իրեն բնորոշ թեթևակի վրդովված տոնով նշեց Վարդուհին և ավելացրեց,– անկապ, անիմաստ պատճառաբանություններ մեջտեղ բերեցի, չգիտեմ որքանով էի համոզիչ, բայց դե փորձում էի, ի՞նչ ասեմ:

– Լավ, լավ, մի՛ խենթացիր, շուտ կգտնենք: Կհիշեցնե՞ս, թե այդ փաստաթուղթը ոնց էր կոչվում:

Մի փոքր մտորելուց հետո, Վարդուհին պատասխանեց.

– «The Paris Agreement»-ով էր սկսում կարծեմ:

– Օկ, հիմա նայում եմ, սպասի՛ր:

– Դե սպասում եմ էլի, սպասելը էլ ո՞նց է լինում, համբերատար սպասում եմ:

– Համբերատար և Վարդուհի Սամվելյան արտահայտությունները անհամատեղելի պատահույթներ են,– կիսակատակ տոնով հայտարարեց Տաթևը:

– Դե՛, էլ մի՛:

– Ի՞նչ է, քեզ կարելի է մաթեմատիկայի լեկցիա կարդալ գլխիս, ինձ ո՞չ:

– Նայո՞ւմ ես,– նորից հարցրեց Վարդուհին:

– Հա՛, հա՛, մի՛ շեղիր... բայց լսի՛ր, չեմ գտնում ոնց որ, գիտե՞ս... չկա:

– Մեղա քեզ, տե՛ր Աստված, միայն սա էր մեզ պակաս, խայտառակություն 2.0 կամ խայտառակություն «լայթ»: Հիմա ի՞նչ պատասխանեմ այդ մարդուն: Գիտես՝ ես պատասխանատու մարդ եմ, այսպիսի բաներ չեմ սիրում: Մի ֆայլի եղածն ի՞նչ է, որ չենք կարողանում գտնել, մի հատ լավ փորփրիր: Հաստատ գիտեմ, որ ունես, ուղղակի ալարում ես, թե տնտղես, ջնջածները նայե՞լ ես, «սպամը» նայե՞լ ես,– շարունակեց վրա տալ Վարդուհին:

– Հա՜, մի րոպե՛, հիշեցի, սխալմամբ որդուս մեյլին եմ ուղարկել իմի փոխարեն, հիմա նրանը կնայեմ:

– Գաղտնաբառը գիտե՞ս,– թեթև զարմանք իջավ Վարդուհու դեմքին:

– Ինձ մի աչքո՞վ ես նայում,– ծիծաղելով պատասխանեց Տաթևը:

– Մի աչքով չեմ նայում, բայց դա ամեն դեպքում սխալ է,– սկզբունքներին հավատարիմ՝ ասաց Վարդուհին:

– Մի ընտանիք ենք, տնաշե՛ն:

– Դա կապ չունի, անձնական տիրույթ է, Տաթև՛ ջան:

– Մեր մեջ անձնական-մանձնական, տիրույթ-միրույթ չկա, մայր և որդի իրարից գաղտնիքներ չունենք:

– Հաստա՞տ:

– Քեզ հաստատ բան եմ ասում, իհարկե: Հիմա փնտրեմ նրա էլ. հասցեում, չնայած վաղուց չի օգտագործում, կարծեմ փոխել է այժմ, բայց չի փակել այս մեկը.– մեկ-երկու րոպե անհանգիստ լռություն և...– Ահա՛, գտա այն:

– Օ՜հ, ապրես դու: Ի՜նչ լավ է, սիրտս տեղն ընկավ, դե ուղարկի՛ր արագ,– ուրախացավ Վարդուհին:

– Մի րոպե՛, սա ի՞նչ է:

– Ի՞նչն է ինչ:

– Այս ի՞նչ «սքրին-շոթ» է:

– Ի՞նչ ես խոսում, չեմ հասկանում:

– Երևան-Փարիզ չվերթս ո՞րն է: Ես իմ որդուն Գերմանիա եմ ուղարկել:

– Դե ուրեմն սխալ ես ուղարկել, մարդը Փարիզ էր ուզում, դու Գերմանիա ես ուղարկել, որ ասում եմ անուշադիր ես, չես հավատում,– ծիծաղելով հայտարարեց Վարդուհին:

– Լսի՛ր հիմա էլ ես կատակի տրամադրություն չունեմ, սպասիր խելքս գլուխս գա, Տե՛ր Աստված, այս ի՞նչ չար կատակ ես խաղում գլխիս:

– Դա Տեր Աստված չի խաղում, տղադ է խաղում: Հարցեր ունես, զանգի՛ր նրան, բայց մինչ այդ ֆայլս ուղարկի՛ր, գժվեցի արդեն,– Վարդուհին արդեն գոռգոռում էր:

– Ի՞նչ ֆայլ է՜, մի՛ րոպե, հասկանամ՝ սա ինչ է:

– Ո՜ւֆ, այդպես էլ գիտեի, մի ուղարկիր հա՛, կգամ ձեր տուն աշխատանքից հետո, կմտնես որդուդ էլ. հասցեն, ես այնտեղից ինչ պետք է՝ կուղարկեմ, թե չէ ձեռքդ կոտրվում է մի երկու կոճակ ավել սեղմես, հիմա հարցս լուծես, հետո ինչքան ուզում ես Երևան-Փարիզ չվերթդ ուսումնասիրիր այդտեղ:

– Մի՛ արի, հիմա կուղարկեմ, հո՞ դրա համար չե՞ս հասնելու մեր տուն:

– Բայց ահավոր հյուրասերն ես գիտե՞ս,– ծիծաղելով հեգնեց Վարդուհին, ապա մի ակնթարթ դադար վերցնելով՝ ավելացրեց,– ի՞նչ լավ է՝ սկեսուրիդ հետ չես ապրում:

– Սկեսուր պիտի ունենամ, որ ապրեմ:

– Դե հենց դա էլ ակնարկում էի:

Տաթևն այլայլվեց, հեռախոսն ականջին պահած լռել էր, չէր կարողանում խոսել: Սիրտը նորից ճմլվեց: Վերհիշեց այն, ինչը միշտ ջանում էր մոռացության տալ: Սուր ծակոց զգաց սրտի շրջանում, երևի նյարդերից էր: Ժամանակ էր լինում, որ մտածմունքներին տուրք չտալու համար հանգստացնող հաբեր էր խմում, որ չխելագարվի միայնությունից, սիրո պակասից, որ ոչ ոք նրան արտասվելիս չտեսնի, որ ոչ ոք նրան թույլ ու վհատված չտեսնի, որ միշտ ուժեղ լինի, ուժեղ միայնակ մայր: Հաբերը չէ, որ ինչ-որ բան պիտի փոխեին: Մեզնից լավ մեր հոգին ոչ ոք չգիտի, մեզնից լավ մեր հոգին ոչ մեկը չի բուժի:

– Կարիք չկար ակնարկելու ու ընդհանրապես այդ թեման բացելու: Ցավոտ կողմիս խփելու համար մի հատ ես չէ՞, ի՞նչ է չգիտես՝ ինչու չունեմ,– հանկարծակի կոպտեց ընկերուհուն Տաթևը:

– Ներիր, մտածում էի՝ ինչքան ժամանակ է անցել, պետք է, որ այդքան ծանր չտանես անցյալի մասին հիշողությունները, պարզվում է՝ ոչ: Կներես, չմտածեցի, որ կնեղվես:

– Ինչքան էլ ժամանակ անցնի, ոչինչ չի ջնջվի հիշողությունիցս, ավաղ:

– Հիմա ի՞նչ է ստացվում, որդիդ ո՞ւր է,– նորից հետաքրքրվեց Վարդուհին:

– Չգիտեմ, բայց հասկանալ է պետք, թե ինչ է կատարվում:

– Դե դու հասկացիր, ֆայլն էլ ստացա, շնորհակալ եմ: Ես գնամ իմ գործին, դու էլ որդուդ շատ չճնշես: Մեծ տղա է, ինքը գիտի՝ ինչ է անում: Դու նրան լավ դաստիարակություն ես տվել: Նա սխալ ճանապարհով գնացած չէր լինի, ինչ էլ արած լինի, հաստատ հիմնավորում ունի իր արարքին:

– Դա դեռ կպարզենք:

Գլուխ 4

Կյանքի վայրիվերումների մեջ շատերս ուզում ենք մի կետում կանգնել, քանի որ այդպես հարմար է, ո՛չ աջ ենք ուզում գնալ, ո՛չ ձախ, ո՛չ ետ նայել, ո՛չ առաջ, ուղղակի կանգնել: Կանգնել մեր վախերից դիզած մի բլրակի գագաթին և նայել երկնքին: Այդպես միայն երկինքը կերևա, բլրակ կազմած վախերը չեն երևա: Երկինքը սին է թվում, ոչինչ, թող թվա: Ավելի լավ է մի բան փուչ թվա, քան պրոբլեմներով լի: Հանդարտ վիճակ է, այդ հանդարտությունը բաց չենք ուզում թողնել: Այն փուչ թվացող տարողազուրկ երկնային ամպերի նման կարող է չքանալ մի թեթև քամուց, և մենք իջնում ենք ցած, որտեղ մեր ոտքերի տակ բլրակը դարձել է սար... Մենք ենք դարձրել:

Արամը լավ կատաղած էր, երկրորդ փորձն էր ձախողել այս ընթացքում: Հորը կանչել էր իր վարձով բնակարան ինչ-որ պատրվակով և սենյակի երևացող տեղերից մեկում նորից մոր նկարն էր դրել (իր մոտ եղած նկարների մեջ չէր գտել իրենց երկուսի ներկայությամբ գեթ մի նկար: Հետո խնդրել էր Տաթևին այդպիսի որևէ նկար ուղարկել, սակայն տեսնելով, որ Տաթևը տարօրինակ հարցուփորձեր սկսեց, խոսակցության կեսից հետ կանգնեց այդ մտքից և բավարարվեց իր մոտ եղածով, որոնցում մայրը միայնակ էր

պատկերված): Նպատակը պարզ էր՝ գրավել Պատրիկի ուշադրությունը, սակայն ձայն բարբառո անապատի, ոչ մի արձագանք: «Խելագարվել կարելի է: Լավ այսպես ի՞նչքան, ախր ո՞նց կարող է չհիշել». տանջվում էր տղան: Վե՛րջ, նյարդերը տեղի տվեցին: Մի օր զայրացած ներխուժեց Պատրիկի աշխատասենյակ, այնտեղ ժողով էր: Բոլորին դուրս վռնդեց ու սկսեց ահավոր բարձր գոռալ.

– Չէ՛, դու ինձ ձեռ ես առնում:

– Քեզ ի՞նչ պատահեց, տղա՛, պահվածքիդ հետևի՛ր, այս ի՞նչ շնորհք է: Այս վերջերս հերիք չի քեզ տարօրինակ ես պահում, հիմա էլ այս խայտառակ վիճակը, հավաքի՛ր քեզ:

– Իսկ դու ե՞րբ ես քեզ հավաքելու:

– Չհասկացա,– աչքերը կկոցելով՝ նայեց նրա վրա Պատրիկը:

– Ի՞նչը չհասկացար, մի քանի օր է, ինչ տարբեր պատրվակներով քեզ այս կնոջ նկարն եմ ցույց տալիս,– վրա պրծավ որդին՝ մոր նկարը ծոցագրպանից հանելով:– Դու էլ, քեզ ջայլամի տեղ դրած, նայում, անցնում ես, անտարբեր ու ոչ մի բան չասող հայացքդ դակում դեմքիդ, կարծես չես նկատում, որ ամեն կերպ փորձում եմ քեզ բան հասկացնել:

– Կոնկրետ ի՞նչ,– նորից իրեն չհասկացողի տեղ դրեց Պատրիկը:

– Չէ՛, սա վերջն է, մի հատ ուշադիր նայի՛ր, հաստա՞տ դու նրան չես հիշում,– մոր նկարը նորից դեմ տվեց Արամը:

– Հա հետո, ենթադրենք հիշեցի, հետո՞:

– Ենթադրենքով չի, ասա ո՞վ է, գիտե՞ս նրան,– նորից ձայնը գլուխը գցեց Արամը:

– Հա քեզ համար ի՞նչ:

– Չե՞մ հասկանում: Հիմա, որ իբր թե հիշեցիր՝ ով է, քեզ մոտ հարց չի՞ առաջանում՝ իմ տանն ինչ գործ ուներ այս նկարը, հեռախոսիս վրա ինչ գործ ուներ այս նկարը, վերջապես հիմա իմ ձեռքում ինչ գործ ունի այս նկարը, գրո՛ղը տանի:

– Եվ ի՞նչ գործ ունի,– նորից անտարբեր կեցվածքով հարցրեց Պատրիկը:

– Որ ես հարցը չհուշեի, դու դժվար էլ այն բարձրաձայնեիր չէ՞:

– Ես ուղղակի քո այս հուզական պոռթկումների իմաստը չեմ հասկանում, կասե՞ս վերջապես՝ ինչ է կատարվում:

Արամը նախընտրեց լռել: Գլուխը հուսահատ աջուձախ էր տարուբերում, հեգնող հայացքով նայում Պատրիկին ու չէր հասկանում. «սա ի՞նչ պատիժ է... լավ, ինչո՞ւ այսքան բարդ»: Հարցեր էին, որոնք հանգիստ չէին տալիս նրան: Նյարդայնանում էր ու անկանոն շարժվում սենյակով մեկ աջ, մեկ ձախ: Անթաքույց վիրավորանքը մաղում էր սիրտը, բայց դիմացինն իրեն վատ չէր զգում: «Իսկ միգուցե պարզապես կարողանում է ցույց չտա՞լ». մտածեց տղան:

– Իսկ գո՞ւցե դու խոսես,– հոգոց հանելուց հետո հուսահատ ձայնով դիմեց նրան Արամը:

– Ի՞նչ խոսեմ:

– Ո՞վ է նա քեզ համար:

– Անհարմար հարցեր ես տալիս: Ես ցանկություն չունեմ այս պահին պատասխանելու դրանց և վերջիվերջո հարցաքննության չեմ հիմա, սա ի՞նչ տոնայնություն է,– Պատրիկը երիտասարդին փորձեց կարգի հրավիրել, բայց դա նրա մոտ չստացվեց.

չափազանց թույլ խաղաքարտեր ուներ: Ինքը ևս հասկանում էր, որ իր անվրդով և անտարբեր պահվածքը կսպաներ ցանկացած մեկին՝ լիներ դա Արամը, թե Ջոն Քենեդին:

– Շատ տեղին տոնայնություն է՝ քեզ արժանի:

– Ինչո՞ւ ես այսքան կոպիտ:

– Իսկ ի՞նչ լինեմ: Մարդ էլ այս աստիճան անջատված լինի, որ չփորձի այսքան հուշումներից հետո կռահել՝ ով է դիմացը կանգնած:

Հայրը չէր ցանկանում շատ բան խոստովանել. նա դեռ իր անվստահ էությունը չէր հաղթահարել: Նա փախչում էր, փախչում ինքն իրենից: Բայց հասկանալով, որ ոչ միայն փախել է, այլ նաև կորել, ամոթահար ու կուլ գնացած աչքերը բարձրացնում է վեր, նայում ուղիղ երիտասարդի աչքերի մեջ, քնքուշ ու ցածր ձայնով ասում նրան.

– Արա՛մ, ես... ըըըմմմմ... ես...

Հենց այդ պահին մայրն է զանգում:

– Մա՛մ. կզանգեմ, հիմա հարմար չի,– վայր է դնում հեռախոսը, մի քանի վայրկյան մտքերն է ուզում հավաքել, որ շարունակի խոսակցությունը Պատրիկի հետ, նորից զանգ.

– Մա՛մ, ասացի՝ կզանգեմ, վա՛յ:

– Գերմանիայի կանցլերն ո՞վ է,– հարցրեց Տաթևը:

– Հիմա դրա ժամանա՞կն է, ի՞նչ Գերմանիայի կանցլեր, ես Գերմանիայի կանցլերի հետ ի՞նչ գործ ունեմ:

– Հա՛, դե իհարկե, ի՞նչ գործ ունես, դու հո՞ Գերմանիայում չես ապրում:

– Տեսնո՞ւմ ես, դու քո հարցին միանգամայն ճիշտ պատասխանեցիր:

– Գիտեմ, գիտեմ,– հեգնելով արագ-արագ համաձայնվեց որդու հետ Տաթևը:

– Թե էլ հարցնելու բան չունես, հետո կխոսենք լա՞վ, խնդրում եմ: Հեչ հարմար ժամանակ չես զանգել, խառն եմ:

– Ասա՝ կոնկրետ որտեղ ես խառը, գամ քեզ օգնության,– առաջարկեց մայրը:

– Չհասկացա:

– Հիմա, որ ասեմ՝ ես դռանդ առջև եմ, այդպես կհասկանա՞ս,– հարցրեց Տաթևը:

– Ի՞նչ դուռ:

– Դու տանդ շեմին քանի՞ դուռ ունես:

– Ի՞նչ տուն:

– Վարձով բնակարանիդ մասին եմ խոսում:

– Ո՞ր վարձով բնակարանի:

– Տղա՛, դու Գերմանիայում քանի վարձով բնակարան ունես:

– Ե՞ս, Գերմանիայո՞ւմ:

– Հա՛, դու Գերմանիայում, այն Գերմանիայում, որի հետ ի՞նչ գործ պիտի ունենայիր որ, դու հո՞ այնտեղ չես ապրում,– նորից խայթեց Տաթևը:

– Ես... ըըը՛.... Մա՛մ, հիմա դու որտե՞ղ ես:

– Ֆրանկֆուրտ, այն հասցեում, որը դու ինձ տվել էիր և ասել, որ այս հասցեով ես բնակարան վարձել: Բայց դու չկաս, ես ի՞նչ անեմ, ի՞նչ խորհուրդ կտաս:

– Ես ուշ կլինեմ կամ ավելի ճիշտ՝ այսօր չեմ լինի:

– Իսկ կարո՞ղ է ես գամ ֆրանս-գերմանական սահման, այդպես ավելի շուտ իրար գտնենք, հը՞ն,– անսպասելի ակնարկեց Տաթևը՝ հասկացնել տալով, որ ամեն ինչ գիտի:

– Ի՞նչ...

– Ինչ, որ լսեցիր: Կարծում եմ ընկալեցիր, որ գերմանական հեքիաթներդ ավարտված կարելի է համարել, ստերդ էլ հետը:

– Հիմա ի՞նչ ենք անելու,– հուսահատ ձայնով խոսեց Արամը:

– Դու ասա՛, հյուրընկալող կողմը դու ես, դու էլ տեղում չես, ավելին ասեմ տարածքում էլ չես: Ուրիշ երկրում ես, իսկ այս երկրում չգիտեմ էլ՝ եղել ես, թե ոչ:

– Որտեղի՞ց ես իմացել, որ խաբել եմ,– ցածրաձայն ու նեղսրտած նորից դիմեց նրան Արամը:

– Դա հիմա կարևոր չէ,– սիրտ մաշող հոգոց հանեց Տաթևը, մի պահ լռեց, ծանրություն էր զգացվում նրա շնչառության մեջ, բայց այնուամենայնիվ շարունակեց.– Լա՛վ, այսպես կանենք, ես այստեղ մի հյուրանոց կգտնեմ մոտակայքում, կգիշերեմ: Վաղը կհասնեմ Փարիզ, կկապվեմ քեզ հետ այս ռոումինգով համարին հայկական ինչպես, որ միշտ շփվել ենք, կտեսնվենք, կխոսենք: Հիմա բան չունեմ քեզ ասելու:

Արամի ջախջախված դեմքն ի զորու չէր այլևս նկատել որևէ բան: Նրա թախծոտ աչքերը նայում էին դիմացի պատուհանի ուղիղ կենտրոնին: Հայացքը սառել էր, չնայած երբեմն անհոժար թարթում էր աչքերը: Նա ձախողեց: Ամեն դեպքում այդպես էր կարծում նա: Թևաթափ էր եղել, այդ որտե՞ղ սխալվեց, այդ որտե՞ղ ուշացավ, այդ որտե՞ղ լարվածությունից ինքն իրեն չտիրապետեց: «Ինչո՞ւ այս ամենը այսքան անհամ ընթացք պիտի ունենար, չէ՞ որ իմ նպատակները բարի էին: Երևի ես լավ սցենարիստ չեմ, Աստված հասկացնել տվեց, որ հաստատ իրենից լավ սցենարիստ չեմ». Շշուկով ինքն իր հետ խոսեց Արամը՝ վիատության նշույլ արցունքներն աչքերից

գլորվելուն զուգընթաց: Ամեն ինչ խառնվել էր իրար: Ամեն բան նորից հավաքել էր պետք, իսկ Պատրիկին կարծես թե ապուշի դերը դուր էր եկել, բայց այդ պահին հասկացավ, որ վիճակը լուրջ է, և մեղմ ձայնով դիմեց Արամին.

– Ո՞վ էր, որ այդպես վշտացար:

– Ա՛յ, այս նկարում պատկերված կինը՝ մայրս,– մկանների մեջ ասես վերջին ուժերն իմի բերելով՝ մի կերպ բարձրացրեց թուլացած թևը որդին՝ ձեռքում Տաթևի նկարը:

– Նա քո մա՞յրն է,– լսածին չէր ուզում հավատալ Պատրիկը: Մտքում կասկածներ շատ ուներ, սակայն վախենում էր ճիշտ դուրս գալ և դրա համար անընդհատ վանում էր իրեն ուղիղ խոսակցությունից: Այդ օրը ակնհայտ դարձավ, որ սեփական կյանքի հետ առերեսվելու ժամանակն է: Պատասխանատվություն կոչվածը վաղ թե ուշ գտնելու էր նրան և ահա գտավ:

– Այո՛, մայրս է: Քանի ժամ է՝ դա եմ փորձում ուղեղդ մտցնել,– նորից զայրացած նշեց որդին:

Պատրիկը հասկանում էր, որ սեփական վարքից գարշանք կապրեր ցանկացած մեկը, հասկանում էր, որ իրեն չափազանց սխալ է պահում: Եթե անգամ կասկածներ ուներ և վախենում էր դրանց ուղիղ բախվելուց, դրանք չպետք է կոծկեր նման անփառունակ վարվելաձևով: Մի քանի ակնթարթ շունչը պահել ու սեղմել էր շուրթերը: Հետդարձ չկար, նա պիտի խոսեր.

– Իսկ հայրդ ո՞վ է:

– Էլ ո՞վ պիտի լինի, դիմացս կանգնած, շվարած ինձ է նայում:

– Ե՞ս,– թուքը դժվարությամբ կուլ տալով՝ ասաց Պատրիկը:

– Դիմացս քեզնից բացի ուրիշ մարդ կա՞ կանգնած, որ նրան ևս նման պատվի արժանանալու հավակնորդ համարեմ:

– Ո՛չ, չկա,– Պատրիկի պատասխանը հազիվ լսվեց:

– Ուրեմն դու ես չէ՞:

– Գժվել կարելի է:

– Ինչի՞, վայելքներիդ տրվելու ժամանակ լավ էր, չէիր գժվում, հիմա գժվո՞ւմ ես,– նորից հոր սիրտը «սուր մխրճեց» որդին:

– Ես մորդ սիրել եմ, անկեղծ եմ ասում,– կմկմաց Պատրիկը՝ մեղավոր աչքերով նայելով որդու վրա:

– Լո՞ւրջ, այդ դեպքում ինչո՞ւ հիշեցումներիս չէիր արձագանքում՝ ցույց տալով, թե չես էլ ճանաչում նրան,– նորից իրեն տանջող հարցի պատասխանն էր ուզում հորից կորզել Արամը:

– Ճանաչել եմ, ուղղակի չեմ ասել... վախեցել եմ... ցանկացել եմ մոռանալ, ուղեղիցս հանել:

– Իսկ այն փաստը, որ ես էի քեզ հիշեցնում, դա քեզ ոչինչ չէ՞ր ասում, ոչ մի հարց կամ կասկած չէ՞ր առաջացնում:

– Առաջացնում էր,– դողացող ու անվստահ ձայնով ասաց Պատրիկը:

– Այդ դեպքում ինչո՞ւ էիր նման կրավորական կեցվածք դրսևորում:

– Փախչում էի ինքս ինձնից:

– Ինչպես միշտ,– դժկամորեն հաստատեց որդին:

– Ավա՜ղ, այո՛, ես այդպիսին եմ,– Պատրիկի աչքերն անակնկալ արցունքոտվեցին.– Այդպես էլ չկարողացա ինձ փոխել:

– Նաև որովհետև չուզեցիր:

– Նաև դա, հեշտ, անվրդով կյանքն ավելի լավն էր թվում, բայց փաստորեն կեղծ էր, կեղծ էր ամեն ինչ, ես ինքս էի կեղծ: Կներես ինձ, որդի՛ս, կներես ինձ, խնդրում եմ:

Արամը լուռ էր: Գլուխը թեքել էր մի կողմ, ծանր էր շնչում: Նստեց բազկաթոռին, որ ինքնատիրապետումը չկորցնի, խռոված էր: Բոլորից խռոված էր, անգամ նրանցից, ում չէր տեսել, ում չէր ճանաչում, բայց որ ճանաչեր էլ, մեկ է անիմաստ խռովելու էր, որովհետև արդեն մեկ էր, թե ումից կխռովեր... ինքն իրենից էր խռոված: Հայրը չէր խոսում: Երևի ֆայմել էր, որ էլի մի ապուշ բան է դուրս տալու ու ավելի բարդացնի առանց այդ էլ բարդ վիճակը, որոշեց չխոսել: Դա նրա եզակի ճիշտ որոշումներից էր ընտանեկան հարցերում: Նա նույնպես լավ չէր կամ դեռ լիարժեք չէր գիտակցում՝ ինչ լսեց, ինչ իմացավ: Նրանց անխախտ լռությունը խամրեցրեց սենյակը, և կիսաբաց պատուհանից լուսարձակող արևի շողերն էին միայն թարմություն բերում ներս: Հանկարծ Արամի անթարթ հայացքը նորից ուղղվեց դեպի Պատրիկը. որդին որոշեց խոսել: Նա, մի քանի րոպե ինքն իր հետ կռիվ տալով, դուրս եկավ հաղթանակած, խոհեմությունը հաղթեց.

– Ներում եմ, որովհետև ինձ իմ մայրը վրեժի փոխարեն ներել է սովորեցրել: Դրա համար նրան շնորհակալ եղիր: Իմ տեսակը նրա շնորհիվ է այսպիսին: Նրա դաստիարակությունն է, որ իմ մեջ գերակա է, որով սեփական «ես»-ս եմ կառուցել: Այո, այն իմ սեփականն է, որովհետև մայրս ինձ դաստիարակելու ընթացքում թույլ է տվել ինքնուրույն քայլել, ինքնուրույն ընկնել, ինքնուրույն վեր կենալ, ինքնուրույն

հասկանալ, թե ինչու ընկա, և ինքնուրույն որոշել, թե վեր կենալուց հետո դեպի ուր պետք է քայլել: Ահա այդպիսին է իմ մայրը, կին, որին ժամանակին արժանի չհամարեցիր քեզ: Նա գնաց քո կյանքից, չքացավ առանց հետքի, բայց հետք կար: Այդ հետքը առանց նրա կամքի նորից հայտնվեց քո դիմաց, քո կյանքում, բայց փորձեց չխանգարել, փորձեց չքանդել, փորձեց ճանաչել հեռվից՝ իրականում շատ մոտիկ լինելով: Այդ հետքը ես եմ: Սովորական տղա եմ ես, ում դու սիրեցիր բնազդորեն՝ զգալով, որ ինչ-որ կապող բան կա իմ ու քո միջև: Դու չհասկացար, թե ինչ, ու քո բնավորության համաձայն չփորձեցիր գեթ մեկ անգամ քեզ հարց տալ՝ քեզ ծանոթ այդ կնոջ նկարը ինչ առնչություն ունի այս երիտասարդի հետ: Ա՛յ դա է ինձ սպանում: Ես այդ չափազանց տարօրինակ անտարբերությունը չեմ հասկանում:

– Ես իրականում ինձ այդ հարցը տվել եմ, ու ոչ մեկ անգամ: Տվել եմ, ինչպես շատ հարցեր կապված իմ կյանքի հետ ինքնս ինձ տալիս եմ, սակայն միայն տալիս եմ: Հետո շպրտում եմ ուղեղիցս դրանք, որ հանգիստ ապրեմ, չխորանամ բարդ հարցերի մեջ, բայց արդյունքում ամեն ինչ ավելի եմ բարդացնում: Սա իմ ամենամեծ ու աններելի թերությունն է, խոստովանում եմ:

– Լավ է, որ գոնե ընդունում ես քո թերությունները, ու վերջապես այսօր անկեղծացար: Ես դա գնահատում եմ: Չէ՛, չկարծես, թե ես սա իռոնիայով եմ ասում: Ես շատ լուրջ եմ հիմա: Առավել ևս քեզ հեգնելու մտադրություն չունեմ, քանի որ իմ երազանքն է եղել քեզ մոտ գտնվելը, քեզ ճանաչելը, քեզ հայր չկոչելու գնով թեկուզ լուռ ու մունջ այդ զգացողությունը իմ ներսում

թաքուն պահելը, ամեն անգամ պապա գոռալու ցանկությունն իմ մեջ խեղդելը: Հեշտ չէր իրականում:

– Իսկ ինչո՞ւ այսքան երկար ժամանակ չէիր ասում, թե ով ես դու,– վերջապես իրեն տանջող հարցը բարձրաձայնեց Պատրիկը՝ գլուխը հատակից վեր բարձրացնելով:

– Որովհետև խոստացել էի:

– Ո՞ւմ էիր խոստացել:

– Մորս,– խորը հոգոց հանեց Արամը,– խոստացել էի, որ չեմ քանդի:

– Ի՞նչը:

– Ընտանիքդ:

– Ընտանի՞քս,– զարմացած կրկնեց Պատրիկը:

– Այո՛, ընտանիքդ: Դու նրա պատիվը գետնով տվեցիր, Հայաստանում դա այդպես ենք անվանում, ամուսնացած չլինելով՝ նրան կուսությունից զրկեցիր, իսկ հետո... հետո ոչինչ, իսկ դա լուրջ բան էր այն ժամանակ հայաստանյան իրականության մեջ, կյանքը խորտակելու նման մի բան, դե դու դժվար էլ խորանայիր նման հարցերի մեջ: Պատկերացրու այն աղջիկը կամ ավելի ճիշտ այդ պահից սկսած արդեն կինը, ով ինձ ունեցել է ու անցել է միայնակ երեխա մեծացնելու և շրջապատի թուքումուրը ուտելու ծանր շրջանը, ստիպել է ինձ խոստանալ, որ քեզ վատություն չեմ անի, որ ընտանիքիդ ամրությանը իմ պատճառով ոչինչ չի պատահի: Դրա համար ես լռել եմ, որովհետև, ինչպես ասացի, խոստացել էի նրան: Այն նույն կնոջը, ում դու իբր սիրել էիր և թողել, թողել, որ գնա, իսկ թե ուր, դա արդեն քեզ չէր հետաքրքրում:

Այս խոսքերը այնպես խոցեցին հորը, որ նա այլևս անկարող էր մանևրել, էլ տեղ չկար, արդեն բոլոր

տեղերը փախել էր, բոլոր անկյուններում՝ պատսպարվել: Կյանքից փախչել այլևս չէր ստացվի. կյանքը նրա փախուստի բոլոր տեղերը գիտեր: Պատրիկի ապաշխարհանք խնդրող աչքերից արցունքները սահուն գլորվեցին ցած: Տղամարդ է, բայց որդին չոքացրեց նրան ու ստիպեց արտասվել, զգալ, թե սեփական ոչնչությունն ինչպիսին է լինում, երբ փառքդ իրականում տեղն է, շրջապատդ՝ նույնպես, քարտերիդ հաշիվներին փողը հորդում է, բայց դու ոչինչ ես: Հանկարծ որդին վեր բարձրացրեց գլուխն ու տեսավ, թե ինչպես է իր աժդահա հայրը սեփական ճլորած մարմինը ծանր, բայց աննկատ քայլերով մոտեցնում իրեն ու մեծ դժվարությամբ, համարյա կիսախուլ ձայնով ասում հետևյալ խոսքերը.

– Կարող եմ գրկել քեզ:

– Կարող ես,– ասաց Արամը,– եթե դա քեզ հիմա այդքան պետք է:

– Այո՛, պետք է, պետք է, որդի՛ս:

Նրանք ամուր փաթաթվեցին միմյանց, արտասվում էին երեխաների պես: Մի որոշ ժամանակ չխոսեցին: Նրանցից ամեն մեկն ինքն իր հետ էր խոսում մտքում, ասես երկուսն էլ իրենց կյանքը վերաիմաստավորելու կարիք ունեին, հատկապես խառն էին Պատրիկի գլխում կատարվող պատերազմները: Նա, մի քանի րոպե լռելուց հետո, վերջապես խոսեց.

– Փաստորեն, նա դեռ սիրում է ինձ:

– Չեմ կարող ասել:

– Եթե քեզ չի չարացրել իմ հանդեպ, ապա...

Արամը չհամբերեց մինչև հայրը մտքերը դասավորի, քանզի այդ մտքերը նրանից շուտ էր կարդացել և ընդհատեց.

– Նա ուղղակի մարդ է, ի տարբերություն շատ մարդկանց, այդ թվում նաև քեզ:

– Քեզ համար ես մարդ չե՞մ:

– Դու հայրս ես, դրանով իմ վերաբերմունքը կանխորոշված է:

– Այսի՞նքն, ինչպիսի՞ վերաբերմունքը:

– Ես պարտավոր եմ հարգել քեզ, դու իմ ծնողն ես: Հայաստանում ծնողներին հարգել են սովորեցնում դեռ օրորոցից, այստեղ չգիտեմ՝ ոնց է:

– Երևի մի օր կուզենայի գալ Հայաստան: Այնքան հետաքրքիր բաներ եմ լսել այդ երկրի մասին, որ ես ցանկություն ունեմ այն տեսնելու:

– Դու Հայաստանը ճանաչում ես:

– Այդ ինչպե՞ս,– զարմացավ Պատրիկը:

– Դու ճանաչում ես ինձ և իմ մորը: Դա բավարար է, որ ճանաչես Հայաստանը: Ամեն երկիր ունի մարդիկ, մարդիկ տերն են այդ երկրի, մարդիկ են այն կառուցում, ուրեմն մարդիկ են երկիրը:

– Ի՜նչ յուրօրինակ ձևով ես դատում: Ի՜նչ խորն ես,– հուզված նայեց որդուն Պատրիկը՝ հպարտությունը սրտում:

– Այնպես ես խոսում, կարծես առաջին օրն ինձ ճանաչելիս լինես,– արդարացի ծիծաղը դեմքին՝ հիշեցրեց Արամը, թե ինչքան երկար են իրար հետ աշխատել:

– Առաջին օրը չէ, բայց... ի՛մ որդի, ի՛մ արյուն, ի՛մ պարծանք, ե՛կ նորից գրկեմ քեզ:

Հայր լինելու զգացումը նոր էր բույն դնում Պատրիկի սրտում: Նա չգիտեր, թե ինչպես վարվել այդ բաղձալի զգացումի հետ, բայց անչափ երջանիկ էր, որ զգում է այն: Միշտ երազել էր սեփական երեխայի

մասին, սակայն Կլաուդին անընդհատ հետաձգում էր՝ ամենատարբեր պատճառաբանություններ մեջտեղ բերելով: Իսկ Պատրիկը չէր ցանկանում պարտադրել նրան որևէ բան, ուստի խոսակցությունների կեսից նահանջում էր՝ որպես սփոփանք «մեկ ուրիշ անգամ հնարավոր է, որ մտափոխվի» արտահայտությունը մտքում ասելով: Իսկ ինչո՞ւ նա չհամարձակվեց իր կասկածների մասին ուղիղ խոսել Արամի հետ, մանավանդ, որ տղան անընդհատ նորանոր առիթներ էր տալիս դրա համար: Հարց, որի պատասխանը այդպես էլ չիմացանք, հավանաբար այն իսկապես չկար:

Արամը անխոս նայում էր հորը, ժպտում էր: Նրա բարի ժպիտի մեջ վերջապես թեթևություն զգացվեց, երբ դերերի կարիք այլևս չկար: Ցանկալի մի վիճակ, որին անտրտունջ ու փոքրիկ քայլերով հասավ, իսկ հասնելուն պես երջանկություն զգաց:

– Վերջապես քարը սրտիցս գցեցի: Այլևս ստիպված չեմ լինի թաքնվել քո «աջ ձեռք» անվան տակ, երբ իրականում ավելին եմ քեզ համար, քան այդ «աջ ձեռք»-ը: Ես ուղղակի որդիդ եմ, ով չհամակերպվեց քեզնից հեռու լինելու մտքի հետ ու որոշեց, որ պիտի գտնի քեզ ու կողքիդ լինելու տարատեսակ ձևեր փնտրի: Չնայած ասեմ, որ ամեն ինչ հալած յուղի պես գնաց. տարօրինակորեն շատ չեմ չարչարվել աչքդ մտնելու ու Արամ անունով հավատարիմ օգնականի հաստիքի տակ ձևակերպվելու համար:

Պատրիկն ամաչում էր հարցնել, բայց և պայթում էր ավելին իմանալու ցանկությունից:

– Նա գալո՞ւ է վաղը Փարիզ:

– Ո՞վ:

– Նա:

– Ո՞վ նա:

– Հիմա էլ դու ես քեզ ինձ նման պահում:

– Լավ, խոստանում եմ, որ այլևս հոգուդ հետ չեմ խաղա,– ծիծաղեց Արամը,– իհարկե, գիտեմ, թե ում մասին ես ասում: Այո՛, մայրս գալու է վաղը, ճիշտ է՝ ահավոր կատաղած է լինելու վրաս, բայց դա ինձ հիմա շատ չի հուզում: Մի տեսակ, չգիտեմ՝ ինչու, բայց ինձ ահավոր թեթևացած եմ զգում:

– Ես նույնպես, տղա՛ս,– ժպտաց հայրը. - Ես ուզում եմ տեսնել նրան:

– Իրո՞ք ուզում ես:

– Դեմքիցս չի՞ երևում, որ ձևեր չեմ թափում: Այո՛, ուզում եմ տեսնել նրան: Գիտեմ, որ դժվար է լինելու: Չգիտեմ, թե այդ խոսակցությունը ինչ ընթացք կունենա ինձ համար՝ լավ թե վատ, բայց ես պետք է հաղթահարեմ իմ միջի այդ անիծյալ «վախկոտին» և առերեսվեմ իմ անցյալի ու նաև իմ ապագայի հետ:

– Ապագադ ինչո՞ւ մեջտեղ բերեցիր, դու դեռ ներկայիդ հետ չես կանոնակարգել հարաբերություններդ:

– Իմ ապագան նա է, քո մայրը, ես որոշել եմ հստակ իմ անելիքը, մնում է կարողանամ հաջողել, իսկ անձնական հարաբերություններում, ինչպես արդեն բազմիցս ականատեսն ես եղել, սովորաբար լավ չեն գործերս գնում, բայց ես պիտի փորձեմ: Ես պիտի սովորեմ կարդալ իմ ներսի խրթին զգացմունքների շտեմարանը, որ դրանից դուրս, այսինքն՝ առօրյա կյանքում, կարողանամ քննությունս լավ հանձնել, թե չէ գերազանցի մասին չեմ էլ մտածում, դա ինձ մոտ հաստատ չի ստացվի:

– Ի՞նչ գիտես, որ չի ստացվի:

– Գիտեմ էլի ինձ, դու էլ գիտես ինձ, ո՞ւմ ես խաբում:

– Այո՛, գիտեմ, ու գիտեմ նաև, որ ճիշտ ես ասում, բայց արի ես քեզ հետ պարապեմ: Կարող է մի բան դուրս գա, հը՞ն, ի՞նչ կասես:

– Ի՞նչ նկատի ունես,– հարցրեց հայրը:

– Օրինակ՝ մի քիչ պատմեմ մորս բնավորության առանձնահատկությունների մասին: Ինչքան գիտեմ այդքան երկար շփված չեք եղել տարիներ առաջ: Հետևաբար դու, միգուցե, նրան այդքան լավ չես ճանաչում, իսկ նման բարդ փուլում պետք է ճիշտ բառեր գտնես խոսակցությունը հնարավորինս անվնաս առաջ տանելու համար և ամենակարևորը՝ առանց զոհերի:

Պատրիկը ծիծաղից թուլացավ ու հազիվ կարգի գալով՝ ասաց.

– Առանց զոհերին լավն էր, հասկացա արդեն՝ ում ի նկատի ունես պոտենցիալ զոհի կարգավիճակում:

– Չեմ թաքցնի՝ նրա հետ բարդ է: Այսքան տարի է անցել, հնարավոր չէ, որ սրտում ցավ կուտակված չլինի: Ասացինք մարդ է, բայց հո՞ Մայր Թերեզան չէ: Բնականաբար նա էլ նեղանալ գիտի, նա ևս տանջվում է, չնայած դրա մասին սովորություն չունի խոսել:

– Հիմա ի՞նչ ենք անում:

– Որոշված է: Վաղն իմ փոխարեն դու ես գնալու նրա հետ հանդիպման:

– Ե՞ս... վա՞ղը... Այդպես միանգամից,– խառնվեց իրար Պատրիկը:

– Էլի փախա՞ր,– ջղայն դեմք դակեց իր վրա Արամը:

– Չէ՛ լավ, չեմ փախչում ոչ մի տեղ, այստեղ եմ: Ինչ ասես, կհամաձայնեմ քեզ հետ, միայն թե օգնես, որ վերադարձնեմ նրան:

– Ձեզ միասին տեսնելը իմ կյանքի ամենամեծ երազանքն է:

– Նոր եմ զգում՝ ինչքան պակաս բան կար իմ կյանքում: Ինչքան եմ քեզ սիրում, որդի՛ս,– նորից գրկեց Արամին նա:

Հաջորդ առավոտ Պատրիկը իր առանձնատանը, հյուրասենյակի հայելու առաջ Տաթևի հետ հանդիպմանը նախապատրաստվելու համար բազում փորձերից հետո, հոգնած փռվել էր բազմոցին, երբ Արամը ներս մտավ տուն, մեկնեց մի թղթի կտոր դեպի հայրը և հայտնեց, որ երեք ժամից պիտի լինի թղթի վրա նշված վայրում:

Փարիզի Լատինական թաղամասի Լյուքսեմբուրգյան այգին մարդաշատ էր: Երեխաները անարգել վազվզում էին, խաղեր խաղում: Ծառերի ճյուղերն անվրդով օրորվում էին մեղմ քամու ուղեկցությամբ: Շուրջն ամբողջությամբ պատված էր կանաչով: Պայծառ արևը շողում էր, բայց չէր այրում, տրամադրություն հաղորդող եղանակ էր, բայց անհանգիստ մեկը կար այնտեղ:

– Գրողը տանի, անգամ քննություններիս այսպես չէի լարվում,– դժգոհեց Պատրիկը:

Սկզբում Պատրիկը ներքին լարվածությունը ուզում էր բարդել որդու վրա՝ կարծես նախատելով նրան նման անհարմար վայր ընտրելու կապակցությամբ, սակայն շուտով զգաց, որ այգու մեծության մեջ նրա բազմամարդությունը կորչում է, և ամենևին դժվար չէ կենտրոնանալ բարդագույն զրույցին ընդառաջ: Վերջապես հայտնվեց Նա: Իր սքանչելի ու հանելուկային կերպարով կարծես փակել էր ողջ հորիզոնը: Այդ պահին առանց դադարի անվերջ այս ու այն կողմ վազվզող

մանուկների բարձր ճիչերի հանդեպ Պատրիկի դժգոհությունը ակնթարթորեն անհետացավ, և նա ամբողջությամբ կլանվեց միայն մի կերպարով: Նրա առջև նորից բացվեց այն հեքիաթը, որն ինքն էր տարիներ առաջ փակել: Սակայն այդ հեքիաթը նույնը չէր, ցավը փոխել էր նրան: Նա տեսավ մի կնոջ, ով պարփակվել էր իր մեջ, սակայն ինքնավստահ դիցուհու կերպար էր հագել հատուկ Պատրիկի համար, երբ ջղային դեմքը ֆիքսեց նրան իր որդու փոխարեն: Կինը ուրիշ չէր, նույն էր իրականում, սակայն ուզում էր ուրիշ թվալ: Դա էր թելադրում լքվածության դառը համը զգացած նրա սիրտը: Մոտենալուն զուգահեռ Պատրիկը քայլերը դանդաղեցրեց, զարմանքն ակնհայտ էր: Անգամ այսքան տարի անց նրա գեղեցկությունը չէր խամրել, ավելի էր ընդգծվում, ընդգծվում էր նաև նրա հասունությունը: Նրա հստակ քայլվածքը խոսում էր բազում փորձությունների միջով անցած լինելու և դրանցից էլ ավելի կոփված դուրս գալու մասին: Նրանք մոտեցան միմյանց: Տաթևը չալարեց դժգոհ դեմքը ցույց տալ, հոնքերը կիտել էր ու զայրացած նայում էր ուղիղ Պատրիկի աչքերի մեջ. նրան չէ, որ սպասում էր տեսնել:

– Տղաս ո՞ւր է:

– Բարև:

– Ասում եմ՝ տղաս ուր է:

– Ասում եմ՝ բարև:

– Հաջո՛ղ:

Տաթևը շրջվեց, որ գնա: Ոտքերն իրենից արագ էին ուզում փախչել, բայց...

– Սպասի՛ր մի րոպե: Ինչո՞ւ ես այսքան կոպիտ:

– Իսկ ինչի՞ համար սիրալիր լինեմ:

– Ամեն դեպքում թշնամի չենք իրար:

– Ընկերներ էլ չենք,– ուղղեց նրան Տաթևը:

– Բա ի՞նչ ենք:

– Ծնող:

– Դա քիչ բա՞ն է:

– Արամի համար քիչ բան չէ, բայց իրար համար քիչ բան է:

– Դու էլի խորհրդավոր ես խոսում, բան չի փոխվել:

– Քեզ մոտ ևս:

– Ի՞նչ իմացար, որ ինձ մոտ բան չի փոխվել,– հարցրեց Պատրիկը:

– Եթե փոխված լիներ, չէիր սպասի Արամի պարսավանքին, դրանից շատ ավելի շուտ ինձ կփորձեիր գտնել:

– Ուրեմն նա պատմել է քեզ ամեն ինչ: Նա ինձ չասաց, որ նորից խոսել է քեզ հետ,– զարմացավ Պատրիկը:

– Այո՛, խոսել է: Ես եմ զանգել նրան: Զգաց, որ այլևս չեմ բարկանում վրան, ավելի անկեղծացավ, պատմեց ամեն ինչ, ամբողջ եղելությունը, ամենայն մանրամասնությամբ: Ես ինքս էի զարմացած, ճիշտն ասած, նա երբեք այդքան հակված չէր լինում երկար զրուցելու ինձ հետ, իսկ այժմ բավականին բան էր փոխվել մոտը, հավանաբար այս մի քանի տարիների ընթացքում հասցրել է կյանքը յուրովի վերաիմաստավորել:

– Փաստորեն,– դադար տիրեց, երկուսով լռեցին, Պատրիկը ցած իջեցրած գլուխը դանդաղ վեր բարձրացրեց՝ ասելով. - Տաթև՛, մենք որդի ունենք, մենք համատեղ երեխա ունենք, հասկանո՞ւմ ես:

– Լավ է ասացիր, գիտե՞ս, չէի նկատել:

– Իրոք մի քիչ հիմար բան ստացվեց:

– Մի քիչ չէ, լավ էլ լեն ու բոլ հիմարություն էր, իսկ կարո՞ղ է չշարունակենք, եթե պիտի այսպիսի «հնարամիտ» նախադասություններ արտահայտեն շուրթերդ:

– Շուրթերս հիմա ոչ մի բան էլ չեն ուզում արտահայտել: Նրանք միայն մի բան են ուզում:

Տաթևը հոնքերը կրկին կիտեց, ասես պահանջեր պարզաբանում, իր կարծիքով, հերթական անհեթեթ մտքի համար, մեկ էլ... Ուշ էր արդեն: Պատրիկի գրկում էր նա: Շուրթերը նորից այրվում էին նրա համբույրից, բայց արագ վանեց նրան իր մարմնից և մի լավ տաք-տաք ապտակ հասցրեց դեմքին: Պատրիկը մի պահ ետ քաշվեց՝ թոթոլ հարվածից ցնցված: Մի քանի վայրկյան իրար էին նայում անորոշ հայացքներով, ու նորից մոտեցավ նա գրկելու Տաթևին: Այս անգամ արդեն դիմակայության չարժանացավ. Տաթևը հանձնվել էր: Իսկական սիրո ուժը ժամանակը չի թուլացնում: Այն ուղղակի տաքուկ թաքնվում է ներսումդ՝ իր աստեղային ժամին սպասելով ու վստահ լինելով, որ նորից հաղթելու է քեզ: Նրանք խոսելու շատ բան ունեին: Բնականաբար, շատ հարցեր կային չպատասխանված: Տաթևը հրաժարվում էր նրա հետ սրճարան գնալ, ցանկանում էր հեռանալ, իմի բերել հենց նոր կատարվածը, սակայն Պատրիկը համառեց: Նրանք նստեցին մոտակա սրճարանում: Առաջին անգամ Պատրիկը տղամարդկային վճռականություն ցուցաբերեց և չխուսափեց խոսակցությունից:

– Ես իմ որդուն էի սպասում:

– Նրան էլ կտեսնես, մի՛ նեղվիր, չփախավ: Մենք իրար հետ խոսելու շատ բան ունենք:

– Ժամանակին, փաստորեն, չունեինք, որ թողեցիր՝ գնամ, իսկ հիմա ունե՞նք,– ձայնը բարձրացրեց Տաթևը:

– Ես հակասական զգացմունքների մեջ էի, դու էլ այնքան արագ հագնվեցիր ու դուրս թռար... Ես չհասկացա՝ ինչ կատարվեց:

– Իսկ հիմա՞... Հիմա հասկանո՞ւմ ես,– թույլ արցունքոտված աչքերով նայեց նրան Տաթևը:

– Փորձում եմ:

– Պարզ է:

– Կներես,– գլուխը ցած իջեցրեց Պատրիկը. ամաչում էր:

– Դա հիմա ասում ես ինձ, որ ի՞նչ լինի:

– Ոչինչ, ուղղակի ասում եմ, պիտի ասեմ:

– Ըստ քեզ՝ դա ի՞նչ կփոխի, իմ ներքին խռովքը կհանի՞ իմ ներսից:

– Չգիտեմ, դու կիմանաս, բայց ամեն դեպքում ներողությունը լավ բառ է, մանավանդ, երբ իսկապես հասկանում եմ, թե ինչ եմ արել և զղջում եմ... շատ:

– Իսկ ի՞նչ ես հասկացել:

– Որ ես ստոր սրիկա եմ:

– Ճիշտ ես հասկացել,– ժպտացին Տաթևի աչքերը, նրա դեմքին գոհունակություն նկարվեց:

– Գիտեմ: Լավ է ուշ, քան ավելի ուշ, իսկ ավելի ուշն ավելի լավ է, քան երբեք, չնայած վստահ չեմ, որ չես մերժի:

– Ի՞նչը չեմ մերժի: Ի՞նչը պիտի չմերժեմ, եթե դեռ չես ասել...

– Կամուսնանա՞ս ինձ հետ,– ընդհատեց նրան Պատրիկը.– Ես անչափ երջանիկ կլինեմ, եթե փորձես ներել ինձ ու մի հնարավորություն էլ տաս:

– Չե՞ս կարծում, որ շատ կտրուկ ես: Դու նորից շտապում ես:

– Այո՛, կա նման բան, շտապում եմ ու նորից սխալներ թույլ տալիս: Ես չպիտի քեզ ճնշեմ հիմա կամ կտրուկ հարցադրումներ անեմ, երբ տեսնում եմ, թե ինչքան անորոշ ես ինձ նայում: Դու այսքան կարճ ժամանակում չէիր կարող որոշել՝ ինչ անել հետո, երբ հանգամանքները այս կերպ դասավորվեցին:

Պատրիկի խոսքերը սկսում էին համոզիչ թվալ Տաթևին կամ գուցե ուղղակի ուզում էր այդպես կարծել: Այնքան մեծ էր կյանքը փոխելու ցանկությունը, որ նա փորձում էր ինքն իրեն հավատացնել, որ հնարավոր է... Ինչ-որ բան հնարավոր է: Անգամ այսքան տարիներ անց նա թաքուն երազում էր իր կյանքի՝ միօրինակության մեջ ճզմված ընթացքը որևէ կերպ փոխել:

– Սկսեցի նկատել փոփոխություն քո պահվածքում, խոսքում, պահելաձևում, ինչ-որ բան ինձ սկսում է ուրիշ թվալ քո մեջ: Դու կարծես թե փոխվել ես,– Տաթևը մի քանի վայրկյան գլխիկոր լռեց, ասես ամաչեր հենց նոր իր արտաբերած մտքերից, այնուհետև նրա ցածր ու ամաչկոտ ձայնը դողաց,– մի քիչ,– հետո ավելի խճճվեց իր վարքում ու տարակուսած հայտարարեց,– Չգիտեմ, չգիտեմ... Միգուցե սխալվում եմ:

– Չես սխալվում: Դա Արամի շնորհքն է: Ու շնորհակալ եմ նման հրաշք որդի ինձ պարգևելու համար: Անչափ շնորհակալ եմ, չեմ կարող բառերով բացատրել, թե ինչ եմ զգում հիմա:

– Կարող ես չտանջվել, արդեն պատկերացրի,– Տաթևը քմծիծաղ տվեց, որին մի պահ հաջորդեց երկուսի ժպտացող հայացքների ներքո քար լռությունը:

– Բայց իրոք երջանիկ է այն մարդը, ով ճանաչում է նրան: Ազնիվ, օգնող, ամեն դժվար պահի հասնող մարդ է նա: Ես ուղղակի զարմանում եմ՝ ինչպես ես կարողացել միայնակ այսքան խոհեմ, հասուն ու խելացի տղա դաստիարակել: Արամը ինձ պատմել է ամեն ինչ: Ես կողքիդ չէի, գրո՛ղը տանի... Զզվում եմ ինձնից:

Տաթևի դեմքի մկանները սեղմվել էին, երևի հույզերից էր: Ճակատին թույլ, բայց ամեն դեպքում երևացող կնճիռներ նկատվեցին, աչքերը փոքրացել էին: Նա սուր հայացքով նայում էր գլուխը երկու ձեռքերի ափերի մեջ տեղավորած և ինչ-որ բան զառանցող նախկին սիրեցյալին: Ինչքան խղճուկ էր նա այդ պահին թվում և անօգնական: Դիմացինի կողմից նման պահվածքը եկավ ապացուցելու նրան, որ ինքն իրապես ուժեղ է, ավելի ուժեղ, քան դիմացը նստած տղամարդը, քանի որ Տաթևն ինքն իրեն երբեք չէր բռնացնի նման վիճակում: Այդպիսի վիճակ չի եղել: Ամեն ինչ ներսում էր կատարվում, դրսից ոչ մի թևաթափ տեսարան՝ միշտ ամուր, միշտ սթափ ու հաստատակամ: Միայն աչքերն էին տխուր, միայն աչքերն էին ծածուկ պատմում, որ զվարթությունը կորել է այս կնոջ կյանքից, մի բան այն չէ: Ու հիմա նա պարզապես այլևս չի ուզում, որ այդ մի բանը այն չլինի:

Խղճահարությո՞ւն: Ոչ, ուրիշ բան էր զգում Տաթևի սիրտը: Այդ սիրտն ուղղակի այլևս չէր ուզում միայնակ ապրել, խելագարվում էր այդ միայնության մեջ իրեն անընդհատ այցի եկող տարաբնույթ մտքերից: Դրանք հանգիստ չէին տալիս, պարզապես հոգնել էր: Տաթևը հոգնել էր այն վիճակից, որ իր սիրտը հաճախ է ուզում լաց լինել, իսկ ինքը դիմադրում է,

կատաղի դիմադրում: Դա էներգիա է խլում, չափազանց մեծ էներգիա, իսկ նա այդուհետ ուզում էր այդ էներգիան պահել իր ներսում կամ օգտագործել ինչ-որ մի օգտակար բանի համար և ոչ սեփական հույզերը կառավարելու գործի մեջ փոշիացնել անվերադարձ: Տաթևը թույլ հոգոց հանեց, երբ տեսավ, որ Պատրիկը նորից իրեն է նայում: Նրա աչքերը սեր էին մուրում, գունատ այտերը փքվել էին: Անվրեպ սևեռվել էր Տաթևի դեմքին, կարծես անհամբեր սպասում էր նրա խոսքին: Տաթևն իրականում շատ էր ազդվել այդ տեսարանից, ձայնը սկսեց հնչել շատ կցկտուր, ներփակված, բայց ինչպես իրեն է հարիր, միշտ խորիմաստ.

– Մարդ ենք բոլորս էլ, սխալվում ենք երբեմն: Երբեմն էլ շատ ենք սխալվում: Սա է կյանքը, այն թույլ է տալիս սխալվել, մենք էլ գայթակղվում ենք:

– Ի՞նչ պիտի անեմ, որ արժանանամ քո ներմանը, և գուցե նորից սիրվեմ քո կողմից:

– Մի քանի քայլ միանգամից մի՛ թռիր: Նորից շտապում ես:

– Այո՛, ընդունում եմ, ես այդպիսին եմ: Ես ինձ երբեմն լուռ նախատում եմ դրա համար: Ինչ ասես, որ չեմ ասում ինքս ինձ, բայց նույն շտապողականությունը մեկ ուրիշ անգամ նորից գլուխ է բարձրացնում: Չեմ կարողանում ուղղվել... չի ստացվում:

– Կստացվի, օգնող է պետք:

– Կօգնե՞ս,– Պատրիկի մարմինը անշտապ ձգվեց դեպի իր սիրելին:

– Կփորձեմ:

– Շնորհակալ եմ,– դողաց նորից Պատրիկի ձայնը:

– Հիմա ինչի՞ համար:

– Որ դիմացս նստած հանգիստ խոսում ես հետս, չես բղավում, խայտառակ չես անում այստեղ գտնվող անծանոթ մարդկանց մոտ, ուղղակի հանդարտ զրուցում ես հետս: Գիտեմ՝ ինչքան մեծ ջանք է պահանջվում, որ ներսիդ զայրույթը հաղթահարես այս պահին ու հանգիստ խոսես ինձ հետ: Ես դա շատ գնահատում եմ... Ափսոս, որ մեր՝ երկուսիս կյանքը այսպես դասավորվեց, այսպես հեռու իրարից, այսպես տարբեր: Շատ կուզեի, որ միանայինք, շատ կուզեի, որ չարածս լրացնեի որդուս համար: Կարողանայի երջանկությամբ լցնել կյանքդ, նորովի այն փոխեի: Այնպես փոխեի, որ աչքերդ փայլեն, շողան ու արցունքներ երևան միայն ուրախությունից և ոչ երբեք տխրությունից կամ մենակությունից:

– Ես մենակ չէի, որդիս կողքս էր:

Տաթևը, իրականում համաձայն լինելով Պատրիկի հետ, հակադրվում էր նրան՝ չցանկանալով մինչև վերջ ի ցույց դնել իր ներսի ցավը, ասես այն այդքան էլ խոցող ցավ չէր, տանելի էր: Բայց Պատրիկը հասկանում էր, որ դրանք տարբեր սերեր են:

– Տղամարդու սերն ուրիշ է, զավակինը՝ ուրիշ: Ես էլ մինչև վերջերս հակառակն եմ զգացել՝ կնոջ սեր զգացել եմ, իսկ սեփական զավակինը՝ ոչ: Չնայած նա մի քանի տարի է՝ կողքիս է եղել, ինձ այդքան մոտ, ու ես չեմ իմացել: Ինչ-որ տարօրինակ ձգողականություն էի զգում նրա հանդեպ, բայց ինչպես միշտ չէի խորացել՝ ինչու է այդպես: Անգամ երբ նկարներդ էր խեղճ տղան անընդհատ դեմ տալիս, որ մի բան մեջս շարժի, ես էլի փախչում էի հարցերից, պատկերացնո՞ւմ ես ոչ միայն պատասխաններից, այլ նաև հարցերից: Չէ՛, ես իրոք բուժվելու

կարիք ունեմ: Ճիշտ է նա ասում, որ ինքս ինձնից փախչելու չեմպիոն եմ:

– Ոչինչ, կփոխվես... կփոխեմ:

– Ասածիցդ ենթադրում եմ, որ գոնե շփման հարցում եկանք համաձայնության հա՞ այս փուլում:

– Այո՛, դրան եկանք: Լավ սկիզբ է փուլային ձևով նպատակին հասնելու համար: Առաջին արձանագրումն արեցինք, արդեն հուսադրում է աշակերտս:

– Միշտ պատրաստ, Սենսե՛յ:

– Բայց նույն գիժն ես մնացել,– ծիծաղելով ասաց Տաթևը:

Ծիծաղեցին երկուսով:

Գլուխ 5

Ինչքա՜ն դժվար է համերաշխ լինել սեփական հոգու հետ: Ինչքա՜ն դժվար է այդ համերաշխությունը կառուցել առօրյա բարդ կյանքի պայմաններում: Մարդկանց կյանքը բարդ է, բարդ է հոգեբանորեն, բարդ է ֆիզիկապես: Բայց այն պիտի բարդ լինի, որպեսզի զարգանա: Կյանքը սովորեցնում է ապրել, իսկ երբ սովորես ապրել, այդ ժամանակ կյանքը կզարգանա: Պարզ շղթա է մարդկության վզին փաթաթված: Մարդիկ կամա թե ակամա այդ շղթայի մեջ են, այդ շղթայի մեջ են գլորվում ցած, բարձրանում վեր, սիրում, սիրվում, ատում, հիասթափվում, ոգևորվում, չջրված վարդի նման թոշնում, արևի լույսի պես պայծառանում: Ինչքա՜ն դժվար է համերաշխ լինել սեփական «ես»-իդ հետ, երբ կողքից այդ «ես»-իդ թվում է, թե իր ամուր պատերին անընդհատ հարվածում են դրսից... ներսիդ դրսից: Բայց դու մարդ ես մնում, բայց դու ներել ես իմանում: Քո ներումով դու ստիպում ես խաղաղվել նաև մյուսներին, քո շրջապատին: Նրանց էլ ես շանս տալիս համերաշխություն գտնելու իրենց մեջ: Քո ներսում կճուճում ես ամբողջ չար էմոցիաները, որ գալիս հպվում են հոգուդ, ջանք ես թափում դրանք վերափոխելու ու փոխարենը բարի էներգիա աշխարհին հաղորդելու համար: Դա չարչարանք է

իրականում, բայց դու դա անում ես խաղաղություն բերելու համար: Բարի մարդիկ են խաղաղություն բերում, չարը խաղաղության մասին չի խոսի: Բարին ուժեղ է, իսկ չարը՝ թույլ, թույլ մարդիկ խաղաղություն կվախենան բերել:

– Սիրում եմ քեզ:

– Սիրում եմ քեզ:

Երկուսով էին: Վառ արևի փայլող շողերի ջերմացնող շվաքի ներքո Պատրիկն ու Տաթևիկը խոստովանեցին՝ սիրում են միմյանց: Համոզեց... Վերջապես համոզեց, որ մի կողմ դնի նախկին նեղացվածությունը, կյանքը միասին ապրեն, բաց թողնված տարիների պակասը լրացնեն՝ միմյանց ավելի ուժգին սեր տալով: Իսկ նրանց միջև իրոք սեր էր: Այն նորովի էր ծնվել, ավելի ուժգին էր, ավելի հասուն: Պատրիկը համառելով հասավ նրան, որ Տաթևի սրտում նորից վառվի մոխրացած սիրո կրակը, կարողացավ այնպես անել, որ նորից վստահի իրեն: Դա թվում էր անիրականանալի ցանկություն, բայց Պատրիկի մոտ ստացվեց: Նա անսահման երջանիկ էր: Երբեք չէր մտածի, որ կարող է ավելի երջանիկ զգալ իրեն մեկ ուրիշի հետ, բացի Կլաուդիից, կարծես այդ թմրեցնող կախվածությունից դուրս եկած լիներ: Կյանքին ավելի ազատ շնչով էր նայում, քանի որ Տաթևը բնավորություն չուներ անընդհատ նրան կապված շան նման իր շուրջը պահել, ստիպել կատարել իր ցանկացած քմահաճույք, ինչպես դա սովոր էր անել Կլաուդին: Պատրիկին թվում էր, թե դա նորմալ է, քանի որ նա միայն այդ կյանքն էր տեսել Կլաուդիի հետ և չէր պատկերացնում, թե ինչպես կարող է տղամարդը ամուսնացած լինել, կին ունենալ, և միևնույն ժամանակ չլինել նրա

աներևույթ, անտեսանելի կապանքների մեջ, ունենալ մեծ ազատություն, ունենալ սեփական անկախ տարածք սեփական հոգում: Պարզվում է կին կա, որ չի ցանկանում մտնել այդտեղ, դրա կարիքը չի զգում: Պարտադիր չէ մխրճվել այդքան խորը զուգընկերոջ հոգու մեջ որպես դրա տիրակալ, կարևորը վստահելն է ու խանդոտ տեսարաններ սարքելու մեջ թաքուն հրճվելու սովորություն չունենալը:

Պարզվում է՝ հանդարտ սեր էլ կա՝ առանց ինտրիգների: Ինտրիգը կարող է երկու սիրող սրտերից մեկի համար կյանքում հետաքրքրություն մտցնելու պարտադիր պայման համարվել, իսկ մյուսի համար լինի տանջալից, լինի անտանելի, սակայն սիրուց դրդված չարտահայտվի խոսքերի տեսքով, չարտահայտվի ընդհանրապես, բայց աննկատ կերպով հոգին քերի, իսկ ինքը դիմանա, դիմանա, քանի որ սիրում է: Փակ շղթա է սերը, հարաբերությունների ուրույն փունջ իր առանձնահատուկ հոգեբանությամբ: Կարելի է անվերջ ուսումնասիրել սեր կոչվածը և նորից չհասկանալ այդ հասկացության խորությունը: Այն հատակ չունի, խորն է ու անհուն: Այն խարսխվում է յուրաքանչյուր մարդու հոգեկերտվածքի հետ և բացահայտվում նորովի, ասես մարդուն ստիպի ծնվել նորից կամ մտնել ուրիշ աշխարհ: Այդ աշխարհում Դու և Նա եք, դուք եք Թագավորն ու Թագուհին, Երկինքն ու Երկիրը, Օդն ու Ջուրը: Մարդիկ կան, բայց նրանք, մոտիկ լինելով, հեռու են, դուք նրանց չեք նկատում: Սակայն միշտ մնալ միայն այդ աշխարհում չի ստացվում, և պետք էլ չի: Ուստի այդ երազելի աշխարհը պետք է հավասարակշռել իրական աշխարհի հետ, իրական միջավայրի, բարքերի, հասարակության

ուշադրության, կյանքում իրար խաչվող այլ հանգամանքների հետ՝ երեխաներ, հոգսեր, աշխատանք, ընկերներ, ծանոթներ, բարեկամություն: Այդ ամենը ներդաշնակելու բարդ գործընթացը մեծ ջանքեր է պահանջում, պետք է կարողանալ այդ ընթացքում սերը չփշրել, չվերածել կրկնվող վեճերի, մթնոլորտի աղավաղման, և վերջում ատելության, բաժանման: Դրա համար է կարևոր այն էմոցիաներից դուրս ևս դիտարկելը, գտնել նրա տարածվածության սահմանը, որը սփռվում է նաև հարգանքի մեջ, հասկացված լինելու մեջ, երկկողմանի հավասար զիջումների մեջ: Այդ ամենում սերը նկատել է պետք, գիտակցել, գնահատել, որ իր փխրունության մեջ այն կանգուն մնա:

Նրանք ամուսնացան: Տաթևը տեղափոխվեց Ֆրանսիա: Մինչ այդ Պատրիկը իր փաստաբանի միջոցով կապ էր հաստատել Կլաուդիի փաստաբանի հետ և ծանուցել, որ նա ապահարզան է պահանջում: Կլաուդին համաձայնել էր. նա այդ ժամանակ կրքոտ սիրավեպի ամենաթունդ շրջանն էր ապրում, և նման «մանրուքները» նրա աչքին չէին երևում խիստ կարևոր կամ գոնե մտածելու տեղիք տվող:

Փետրվարի կեսերն էր: Տաթևը երկրորդ երեխային էր սպասում: Այդ մասին լուրը Պատրիկին հայտնելուց հետո, վերջինս անսահման երջանիկ էր իրեն զգում: Նույն օրը նման լավ լուրը տոնելու համար որոշեց անակնկալ մատուցել իր սիրելիին, անմասն չմնաց նաև Արամը: Հաճելի անակնկալների տարափը եզրափակվեց երեկոյան ընթրիքով: Առանձնացված սենյակ էին վերցրել իրենց սիրած ռեստորանի երկրորդ հարկում, ուր միայն իրենք կլինեին ընտանիքով, և ուրիշ խանգարող չէր լինի: Ջերմ, ընտանեկան

մթնոլորտ էր, ամեն ինչ հրաշալի էր: Արամը ընկերության գործերի մեջ ավելի էր խրվել, հիանալի գլուխ էր հանում: Իսկ Պատրիկը տարիների կուտակած խնայողությունները, հաջող ներդնելով տարբեր կազմակերպություններում, որոնք շատ արագ զարգացան և սկսեցին լրացուցիչ եկամուտներ բերել ընտանիքին, մտադրվել էր կտակել որդուն:

Կլաուդիի կյանքում բարդ շրջան էր սկսվել: Նա նորից մենակ էր: Նրա հերթական սիրավեպը իրենից բավականին երիտասարդ տղայի հետ ևս անհաջող ավարտ ունեցավ: Այս անգամ այն անհամեմատ կարճ տևեց և առանց ամուսնության, ուղղակի զվարճացան, հոգնեցին իրարից, վիճեցին բազում անգամներ, հասկացան, որ էլ իրար տանել չեն կարողանում, և վերջ: Նրանցից յուրաքանչյուրը գնաց իր ճամփով: Դե մեզ բնականաբար Կլաուդիի ճամփան էր միայն հետաքրքրելու, որը ոնց էլ ֆռար, շուռ գար, գլորվեր, մագլցեր, մի խոսքով՝ ինչ երթուղով էլ գնար, բերելու էր նորից Փարիզ՝ Պատրիկի մոտ: Հա բայց բան էր փոխվել: Լավ հաշվարկող մեր Կլաուդիի մտքով, չգիտես՝ ինչու, նման հեռանկար չէր դիտարկվել: Խոսքն այն մասին է, որ իր հեռանալուց և առավել ևս ամուսնուն ապահարզան տալուց հետո Պատրիկին ո՞վ պետք է կանգնեցներ նորից որևէ այլ կնոջ հետ հարաբերություններ դասավորելու կամ անգամ ընտանիք կազմելու ճանապարհին: Նա անակնկալի եկավ, երբ իմացավ իրերի նման դասավորության մասին: Փարիզ վերադառնալուց հետո նա պարզեց ամեն ինչ: Արդեն գիտեր, թե ով է Արամը, ով է Տաթևը, ինչ էր եղել տարիներ առաջ: Ամեն ինչ պարզել էր զարտուղի ճանապարհներով, բերել-կպցրել բոլոր փաստերն

իրար ու եկել այն եզրահանգման, որ իր այդ դժբախտ վիճակի գլխավոր պատճառն ու, չզարմանաք, մեղավորը Արամն է: Հա՛, հա՛, հենց այն նույն Արամը, ով կարող էր միանգամից իր հայտնվելու պահից սկսած սեպ խրել իր և Պատրիկի հարաբերությունների մեջ, ընդհուպ մինչև իրենց կայծակնային բաժանում, բայց նա դա չէր արել: Տարիներով իրենց ընտանիքի հետ մոտիկ էր եղել, բայց չէր արել: Մեղավոր է, բա ո՞նց մեղավոր չէ, պիտի հենց սկզբից բացահայտեր իր ով լինելը: Այդպես Կլաուդին թվում է, թե ավելի կհարգեր նրան, քան հիմա, երբ ամբողջ մեղքն իր և իր նախկին ամուսնու չստացված հարաբերությունների համար ուզում է բարդել այդ անչափ գթասիրտ ու բարի տղայի վրա: Չարացած էր:

Նա փորձել էր հանդիպում փնտրել Պատրիկի հետ: Նրան այդ փորձը հաջողվել էր, սակայն Պատրիկի մեջ անսպասելիորեն այնպիսի սառնություն էր զգացել դեպի իր անձը, որ շոկային էր իր համար: Իրադարձությունների նման ընթացքը չափազանց ցավոտ էր: Կլաուդին միայն նկատում էր իր ներկայիս տառապանքը, իր ներքին ցավը, չստացված կամ ավելի ճիշտ ընդհատված կանացի երջանկությունը: Նա ցանկանում էր հեռացնել իր ճանապարհից բոլոր նրանց, ովքեր խոչընդոտում էին նրա միացմանը Պատրիկի հետ: Համարում էր, որ դա է պատճառը, որ Պատրիկն այլևս նախկինը չէ, և եթե չքանան նրա կյանքից Տաթևն ու Արամը, ապա ամեն ինչ նախկինի պես է լինելու: Նման մտածելակերպը կարելի է բնութագրել որպես էգոյիզմի և միամտության խառնուրդ, ուրիշ ոչինչ: Բայց նա վստահ էր իր տեսակետի վրա, երկար չէր մտածել: Զգացմունքային պոռթկումներին

տեղի տալով՝ նա ունակ չէր կշռադատելու իր արարքները: Տաթևի հետ չէր խոսացել, բայց ատում էր նրան: Տաթևը գիտեր, որ նա հայտնվել է. Պատրիկը պատմել էր նրան իրենց հանդիպման մասին, սակայն նրանք որևէ կերպ չէին ենթադրում, որ Կլաուդին հնարավոր է այդքան վտանգավոր լինի:

Շքեղ ռեստորանի երկրորդ հարկի առանձնացված սենյակում, որի լուսամուտները քողարկվել էին հրեգույն վարագույրներով, իսկ սեղանը զարդարում էին արծաթեպատ մոմակալներ, շարունակում էին իրենց հաճելի երեկոն Պատրիկն ու Տաթևը: Նրանց հետ էր նաև Արամը, ի դեպ ամենակտիվն էր: Պատմում էր այս ընկերոջ արկածի մասին, մյուս ընկերոջ արկածի մասին, հետո զգաց, որ ամբողջ երեկոն իրենով է արել, և քիչ էր մնում մոռացնել տար, թե ինչ առիթով էին հավաքվել: Տղան մի պահ տեղը բերեց, որ պետք չէ երեկոն վերածել իր բենեֆիսի, և վերջի-վերջո խելքին հասավ՝ ծնողներին կարելի է նաև մենակ թողնել: Ասաց, որ ընկերոջն է խոստացել հանդիպել մի կանգառ ներքև: Դուրս եկավ, որ մի քիչ քայլի, մինչև կհասնի պայմանավորված վայրը: Շատ ժամանակ կար մինչև նախանշված հանդիպման ժամը, շտապելու բան չկար, ուստի որոշեց մի քիչ ճեմել փողոցով, այդպես ավելորդ ժամանակը կսպանի: Մաքուր օդն էլ դեռ ոչ մեկին վնաս չի տվել, չնայած եղանակը ցրտոտ էր:

Կանգնել էր փողոցի պռնկին, պիտի անցներ ճանապարհը: Ասել, թե անուշադիր էր, ո՛չ, չի կարելի, լավ էլ ուշքը տեղն էր: Հանկարծակի կարմիր գույնի մի ավտոմեքենա մեծ արագությամբ ուղիղ ընթացավ դեպի նա, հատուկ, քանի որ ճանապարհը Արամինն էր,

և ավտոմեքենան պետք է կանգ առներ: Սակայն ինչ կանգ առնել, երբ ղեկին Կլաուդին էր՝ ատելությամբ լցված, դժբախտության ծովից ազատվելու մոլուցքով տարված և այդ ազատումը կոնկրետ երկու հոգու վնասելու մեջ տեսնող Կլաուդին:

Խփեց... ընկավ... Բայց ո՞վ...

– Իզաբե՛լ, Իզաբե՛լ,– գոռում էր մայրը,– ո՛չ...

Շփոթված դուրս թռավ ավտոմեքենայից: Աղջկան էր վրաերթի ենթարկել: Իզաբելը վերջին պահին ակնթարթորեն հայտնվել և հրել էր տղային մի կողմ՝ փոխարենն ինքն ընկել հարվածի տակ: Նա գիտեր մոր մտադրության մասին, չէր կարողացել հակառակում համոզել նրան, բայց չէր էլ կարող համակերպվել նրա չարամիտ մտադրության հետ: Կլաուդին կիսախելագար գոռում էր անցորդների վրա, շտապօգնություն կանչելու աղերսանք անում, գրկել էր աղջկան ու հառաչում էր: Արամն ընկած տեղից մի կերպ վեր կացավ, ապշած էր կատարվածով, չէր հասկանում՝ ինչ անել: Ընկճված գլուխն էր բռնել ու լաց էր լինում. «Մի՞թե նա արեց դա, մի՞թե այս ամենը իրական է, ooooo՛, ո՛չ, Աստված եմ կանչում, միայն ոչ սա: Հիմա մեղքի զգացումից կմեռնեմ, ի՞նչ է լինելու նրա հետ»:

Մի փոքր ուշ շտապօգնությունը տեղ հասավ, տարան հիվանդանոց: Արամը տաքսիով ընթացավ նրանց հետևից: Հիվանդանոցում մնալը գիտեր, թե ինչ հետևանքներով էր հղի, սակայն միևնույն է նա չէր պատրաստվում հեռանալ: Պարզ էր, որ Կլաուդիի հետ բախումն անխուսափելի էր լինելու, իսկ նա այնպիսի վիճակում էր, որ կարող էր հարձակվել անգամ անծանոթների վրա, էլ ուր մնաց, եթե Արամը դիմացը հայտնվեր, կուտեր նրան պարզապես:

– Դու դա արեցիր, լսո՞ւմ ես, դու ես մեղավոր, հրե՛շ: Ո՞վ եք դուք ընտանիքով հանդերձ, ընտանիք եք քանդում ու հրճվում դրանից, թքած ունենում մնացածի զգացմունքների վրա: Իմ աղջկան եթե կորցնեմ, քեզ էլ հավետ կկորցնեմ այս աշխարհից, լսո՞ւմ ես: Հեռացի՛ր, գնա՛:

Արամը լուռ էր, լուռ արտասվում էր, դեմքը անխոս աջ ու ձախ շարժելով, փորձում էր գոնե միմիկայով դիմադրել իրեն հասցվող վերբալ մեղադրանքներին: Ներքուստ նա էլ էր նույն հոգեվիճակում. իրեն էր մեղադրում, չնայած հասկանում էր, որ այս պատմության գլխավոր նախաձեռնողը հենց Կլաուդին է, սակայն դա այդ պահին ամենաքիչն էր հուզում նրան: Ի՞նչ է լինելու Իզաբելի հետ, կհաջողվի՞ կյանքը փրկել, թե՞.....: Այդ թե-ի մասին ավելի լավ է չմտածեր, թե չէ կխելագարվեր, բայց մտածում էր, հենց դա էր մտածում ու սարսափում: Ինքն իրեն պարզապես չէր ների: Աղոթում էր Աստծուն, որ փրկի նրան, չթողնի ամբողջ կյանքում մեղքի խարանը հոգում կրելու ծանրության տակ: Մնացած ամեն ինչ հարթվող է, Կլաուդիի հետ հարաբերությունները ևս հարթվող են, այդ պահին կարևորն աղջկա կյանքն էր: Արամը արտասվելով քայլում էր հիվանդանոցում, ինքն էլ չգիտեր՝ ուր է գնում, որ հարկում է, որ բաժանմունքում, միայն թե հեռու չլինի Իզաբելից և միևնույն ժամանակ Կլաուդիի հետ նույն վայրում չլինի, այլապես սրտի չափ լաց լինել չի ստացվի: Իզուր կռիվ էր ստացվելու, իսկ հիվանդանոցում աղմուկ-աղաղակի առաջացման սցենարին մասնակիցը բնավ չէր ուզում լինել: Վշտացած հոգին էր ուզում ամոքել, բայց ինչպես, երբ այն ցավում էր, շատ էր ցավում: «...Ամեն ինչ լավ էր,

ինչո՞ւ մի վայրկյանում փլուզվեց, ինչո՞ւ պիտի այսպես լիներ: Թող ես ընկնեի ավտոմեքենայի տակ, թող ես դառնայի Կլաուդիի չարամտության զոհը, բայց միայն ոչ նա, միայն ոչ Իզաբելը, ներսս ամեն ինչ խառնվել է իրար: Իզաբելը... Այն նույն Իզաբելը, ում ես հազար անգամ մերժել, կոպտել, հակառակվել եմ, հիմա նա կյանքի ու մահվան կռիվ է տալիս իմ փոխարեն: Գիտակցե՞լ է, վստահ եմ, որ գիտակցել է՝ ինչ է անում, բայց արել է հանուն ինձ: Այս վիճակն ավելի ծանր է, քան եթե ես պառկած լինեի վիրահատական սեղանին»:

Գիշերը հիվանդանոցի պատերի տակ անցկացնելով՝ լուսադեմին մի կերպ աչքը կպցրել էր մի քանի րոպեով, որից հետո վեր թռավ ինչ-որ անդուր ձայնից, գլուխը բարձրացրեց, Կլաուրդին էր գլխավերևում: Սառնասիրտ ու ատելությամբ լի աչքերը ուղղել էր Արամի վրա և թույն էր թափում.

– Դու դեռ այստեղ ես: Ի՞նչ ես անմեղ գառնուկի նման խեղճացած աչքերդ վրաս չռել: Չե՞ս հասկանում, որ չեմ ուզում քեզ տեսնել: Չքվի՛ր աչքիցս, գնա՛ այստեղից: Սիրտս պատռվում է, իսկ դո՞ւ, պատերի տակ վեր ընկնելով, անընդհատ աչքիս դիմաց ես հայտնվում: Գոնե այս հիվանդանոցում թող հանգիստ իմ դժբախտության հետ:

– Բայց տիկին, չէ՞ որ Դուք եք եղել ղեկին:

– Լռի՛ր, չխոսե՛ս, չքվի՛ր ասում եմ:

– Չիմանա՞մ՝ ինչպես է Իզաբելը, չիմանա՞մ՝ ինչ եղավ: Նրա համար եմ այստեղ վերջիվերջո, ոչ թե՝ Ձեր:

– Ի՞նչ իմանաս... ինչի՞ համար իմանաս: Աղջկաս զգացմունքների հետ խաղացիր, հետո ի՞նչ... ոչի՛նչ:

Ես տեսնում էի այս ամբողջ ընթացքում, թե ինչպես է նա տանջվում քեզ համար, կարոտում, ցավ ապրում, որ ձեզ մոտ ոչինչ չստացվեց, ու հիմա մնացել ես այստեղ, որ ի՞նչ: Ուզում ես ցույց տալ, որ անհանգստանո՞ւմ ես նրա համար: Երանի չգար այն օրը, երբ հայտնվեցիր նրա կյանքում, մեր կյանքում: Այդ պահից իրականում սկսվեց ամեն ինչ սխալ գնալ: Սկզբից չէի նկատում, հիմա հասկանում եմ, թե ինչ չարիք եք դու և մայրդ:

– Մորս ինչո՞ւ խառնեցիք: Ձեզ ի՞նչ ենք արել մենք: Ինչ վերաբերվում է Իզաբելին, ասեմ, որ չգիտեմ՝ Դուք ում մասին եք խոսում, երբ ասում եք զգացմունքների հետ խաղացել է, բայց դա հաստատ ես չեմ եղել, քանի որ ես նրա զգացմունքների հետ չեմ խաղացել, միշտ պարզ ու անկեղծ ասել եմ այն ինչ կա, բայց...

– Ինձ քո բայցերը չեն հետաքրքրում, փաստն այն է, որ հիմա ես և իմ աղջիկը դժբախտ ենք, իսկ դուք՝ սիրուն ընտանիք: Կյանքը հիասքանչ է ձեր եռյակի համար... Ի՜նչ ընտիր է չէ՞, իսկ մե՞նք, մենք չկանք: Ու փաստորեն ի՞նչ է ստացվում, այդպես սովորական վերջացա՞վ ամեն ինչ:

– Տիկի՛ն, ես Ձեզ չեմ հասկանում: Նախ ասեք, թե ոնց է Իզաբելը, ես պայթում եմ անհանգստությունից, իսկ Դուք անընդհատ շեղում եք ինձ Ձեր հարցերով:

– Պայթում ես հա՞, այն էլ անհանգստությունից: Տղա՛, նա էլ քո հանդեպ սիրուց էր պայթում, խելագարության հասնելու չափ տենչում էր քեզ, բայց... Ես չեմ հասկանում, թե ինչու հենց քեզ ընտրեց նրա սիրտը, որ այսքան երկար տանջվի՞: Նրա աչքերում փայլը կորել էր, ուզում էր ետ գալ Փարիզ, գտնել քեզ, չէր հանձնվում, չէր համակերպվում, որ դու չկաս գոնե

մոտակայքում: Ես սկզբից ընդդիմանում էի, հետո զգացի, որ ավելի եմ վնասում նրան իմ այդ դիրքորոշմամբ, ուստի թույլ տվեցի գալ այստեղ, բայց այդ ժամանակ էլ նա հրաժարվեց: Չգիտեմ՝ ինչ կատարվեց հետը, սակայն նա փոխվել էր, սաստիկ փոխվել: Հիմա անգամ ես եմ դժվարանում նրան հասկանալ, նրա հույզերը պատկերացնել, իսկ այս դեպքից հետո չգիտեմ՝ ինչ է լինելու:

– Դուք ինձ այդպես էլ չասացիք, թե ինչպես է անցել վիրահատությունը:

– Թե քեզ իրո՞ք պետք է, թե քեզ իրո՞ք հետաքրքրում է նրա որպիսությունը, գնա՛ և ինքդ ճշտի՛ր բժիշկներից: Ես քեզ ասելու բան չունեմ:

Տիկինը հեռացավ, ձեռքի արհամարհական ժեստով նշան արեց հեռանալուց առաջ, որ հասկացնի Արամին՝ «Դու մեզ պետք չես, դու դժբախտություն ես բերում»: Սակայն Արամը գնալ չէր կարող: Նա պիտի տեսներ Իզաբելին: Երբեք այդքան մեծ ցանկություն չէր ունեցել տեսնելու նրան, բայց հիմա կա, ու պիտի տեսնի: Նրան վիրահատարանից բերել էին հիվանդասենյակ: Սրտի խորքում հանգիստ էր. գիտեր, որ քնած է դեռ (բուժքույրը նրան տեղեկացրեց դրա մասին), հետևաբար չէր վախենում մոտը մտնել, չէր վախենում խոսելուց, քանի որ գիտեր՝ կարող է չխոսել, կարող է միայն նայել, և դա բավարար էր սիրտն այդ պահին հովացնելու համար:

Հիվանդասենյակի ներսում օդը չէր խեղդում, օդը չէր ճնշում. օդը չկար, և այն պետք չէր: Արամը թթվածին շնչում էր ուրիշ կերպ՝ աչքերով... նայելով...

Մի քանի րոպե լռություն... Այդ լռությունից ստացվող հանգստություն, որն այդքան անհրաժեշտ էր

Արամի ալեկոծված սրտին: Մի քանի րոպե, և լռելն արդեն հետաքրքիր չէր, և նայելն արդեն բավարար չէր. Իզաբելի քնքուշ այտերը համբուրել ուզեց ու համբուրեց... համարձակվեց: Ոչինչ չփոխվեց համբույրից, աղջիկն անգամ չշարժվեց, սակայն շարժվեց երիտասարդի սիրտը: Այնպես շարժվեց, որ հետ շարժել չէր ստացվի, գնաց ու մեխվեց մի կետում, որտեղ աշխարհը փոխվում է, սերն է փոխում: Բայց ինչպե՞ս, ի՞նչ եղավ, Արա՛մ, քեզ ի՞նչ եղավ, նոր լավ էիր, ավելի ճիշտ լավ չէիր, բայց գոնե Արամն էիր, իսկ հիմա՞...

Իզաբելի փակ աչքերը խոսում էին ակամայից, գրավում էին ինքնաբերաբար, անում էին այն, ինչ արել են միշտ, բայց մնացել էին աննկատ և հուսահատ էին: Հուսահատության պահին է հաղթանակը գալիս, երբ թվում է, թե հաստատ պարտվել ես: Այդ փակ աչքերը հաղթեցին, չնայած նրան, որ բաց ժամանակ էին հաղթանակ տենչում, բայց ստացվեց այսպես, այսպես հասարակ, այսպես անսպասելի, այսպես աննկատ: Արամը սիրահարվեց... Իսկ ի՞նչ անել սիրո հետ, որտե՞ղ այն թողնել, եթե չի ստացվում թողնել, ապա որտե՞ղ այն պահել, պահելու տեղ չկար, բայց գտավ իր ներսում մի փոքրիկ անկյուն: Շատ արագ գտավ նա այդ անկյունը, շատ արագ նա այնտեղ պահեց իր սերը, որտեղից շատ արագ հնարավոր չէ հանել այդ սերը, ընդհանրապես հնարավոր չէ հանել այդ սերը: Այդպիսին է այդ անկյունը, սիրո անկյունն է դա: Եթե այդ անկյունը լցրեցիր, այլևս դատարկ չէ, ուրեմն փոխվում է աշխարհը քեզ համար, ուրեմն փոխում ես աշխարհը դու:

– Մի՛ բաց աչքերդ, թե չէ պիտի խոսեմ, և դրախտը կավարտվի, որովհետև պիտի խոսեմ... որովհետև

պիտի խոսես...– ասաց Արամը կիսաձայն՝ արցունքոտ աչքերը չհեռացնելով նրա դեմքից, նրա անմեղ ու հրեշտակային հայացքից:

«Լավ, ո՞ւր էր այդ հայացքը այսքան ժամանակ: Ինչո՞ւ էր այդքան խենթ այդ հայացքը ամեն անգամ, երբ հանդիպում էինք, երբ ես խենթություն չէի սիրում: Հիմա էլ չեմ սիրում փաստացի, բայց հիմա նրան եմ սիրում, իսկ կարո՞ղ է դրա արդյունքում խենթությունն էլ սիրեմ... նրա խենթությունը». մտածում էր տղան:

Մտածմունքներն ավարտվեցին, աչքերը բացվեցին, սակայն լռությունը չխախտվեց. ասելիքն էր շատ: Երբ այն շատ է, խոսքերը չեն գալիս, լռությունն է խոսում: Արցունքներ գլորվեցին նաև Իզաբելի աչքերից, բայց նա լուռ էր: Դրախտն ավարտվեց, որովհետև ինչ-որ մեկը պիտի խոսի: Ինչ-որ մեկն իր խոսքով պիտի փչացնի այն, ինչն արդեն փչացած էր, իսկ սարքելու հույսը՝ քիչ, մանավանդ երբ սարքելու գործիքը միակն է ու բարդ: Այդ գործիքը խոսելն է, անթիվ-անհամար խոսքերից ընտրել ճիշտը, ընտրել չխոցողը, ընտրել ամոքողը, և միևնույն ժամանակ իրականը, որովհետև կեղծը սխալ է, որովհետև ուզում ես ընտրել ճիշտը, քանի որ ճիշտը սխալ չի դառնում, քանի որ սխալը կեղծ է:

– Լաց մի՛ եղիր, քեզ չի սազում,– Արամը գրեթե անձայն կմկմաց՝ ուղիղ նայելով Իզաբելի գունատ ու վտիտ դեմքին:

– Լաց չեմ լինում, ուղղակի արցունքներն են թափվում ցած... Այդպես են ուզում...

– Իսկ ո՞նց անենք, որ այդպես էլ չուզեն:

– Պետք չի անել ինչ-որ բան, թող թափվեն... Պիտի թափվեն:

– Իսկ ո՞նց անենք, որ ժպտան... Աչքերդ ժպտան:

– Իսկ որ ասում ես՝ ոնց անենք, դուք այդտեղ քանի՞ հոգով եք: Չլինի՞, թե հիվանդասենյակից դուրս՝ դռան հետևում, էլի մարդիկ կան հերթ կանգնած նույն ցանկությամբ:

– Ո՞ւմ ի նկատի ունես,– մեղավորի իր կարգավիճակից ուշքի չեկած՝ ցածրաձայն հարցրեց Արամը:

– Օրինակ մորս:

– Ես չգիտեմ, թե որտեղ է նա, հնարավոր է, որ այստեղ է, ուղղակի ես չգիտեմ: Երևի պատկերացնում ես, որ տհաճ խոսակցություն ունեցած կլինեմ մորդ հետ, և չես սխալվում:

– Իսկ ինձ հետ:

– Քեզ հետ ի՞նչ:

– Ինձ հետ ի՞նչ խոսակցություն ես ուզում տանել և ինչո՞ւ,– հանդարտ ու արհամարհական տոնով հարցրեց Իզաբելը:

– Որ հասկանաս... Որ հասկանանք:

– Ո՞ւմ:

– Իրար,– հայացքը գետնից դանդաղ բարձրացնելով՝ ասաց Արամը:

– Դա հեշտ չէ:

– Գիտեմ, բայց արի փորձենք,– լցված աչքերով խնդրեց Արամն Իզաբելին՝ մարմնով ձգվելով դեպի նա:

Հայացքը երկար ժամանակ հիվանդասենյակի դատարկ կենտրոնից չկտրելով՝ մի հոնքը բարձրացրեց Իզաբելն ու վհատված ձայնով ասաց.

– Ես լիքը փորձել եմ, բան դուրս չի գալիս:

– Արի մեկ անգամ էլ փորձենք, սիրտս հուշում է, որ այս անգամ ստացվելու է: Չգիտեմ՝ ինչու, բայց համոզված եմ, որ ստացվելու է:

– Չգիտե՞ս՝ ինչու,– շրջվեց նրա կողմ Իզաբելը և խայթող քմծիծաղ իջավ նրա դեմքին, ասես վերևից նայեր դիմացը կուչ եկած երիտասարդին ու հրճվեր նրա ողորմելի կերպարանքով:

– Խաբեցի, հավանաբար գիտեմ:

– Հավանաբա՞ր,– զարմանքով կրկնեց Իզաբելը:

Մի քանի վայրկյան լռություն, և Արամը վերջապես հավաքեց իրեն ու ավելի լսելի ձայնով խոսեց.

– Չէ՛, հաստատ գիտեմ, որ ստացվելու է:

– Ես էլ գիտեմ, որ քեզ մոտ ստացվելու է, բայց այս անգամ էլ ինձ մոտ ցանկություն չկա, որ ստացվի, հետևաբար մի՛ տանջվիր: Հաստատ ոչինչ չկա այս կյանքում, երբ այդ «հաստատ»-ը երկու հոգուց է կախված, իսկ նրանցից մեկն այդ «հաստատ»-ից արդեն զզվել է:

– Ուզում ես, որ գնա՞մ:

– Հա:

– Հաստա՞տ ուզում ես, որ գնամ:

– Հա, հաստատ ուզում եմ,– մի պահ լռություն տիրեց, հազիվ էր Արամը թուքը կուլ տվել Իզաբելի այս հաստատակամ պատասխանից, երբ նա նորից շարունակեց խոսել, ավելի ճիշտ խոցել.– Վատ է չէ՞, երբ դու ուզում ես մնալ, իսկ քեզ ասում են՝ գնա:

– Վրե՞ժ ես լուծում:

– Չէ՛,– կարճ պատասխան տվեց Իզաբելը,– հետաքրքիր չես:

– Եթե հետաքրքիր չլինեի, իմ կյանքը կփրկեի՞ր:

– Սկսեցի՞ր փիլիսոփայություններդ նորից, բայց դրանք այլևս արդիական չեն, դրանք այլևս տհաճ են, դու ես տհաճ:

– Ուղղակի բարկացած ես,– ինքն իրեն անհույս սփոփում էր Արամը:

– Թող այդպես լինի, դու այդպես կարծիր: Թող քո ճիշտը հանկարծ չսասանվի, չէ՞ որ դու միշտ ճիշտ ես,– հերթական քամահրանքը ի ցույց դրեց նրա նկատմամբ Իզաբելը:

– Հեգնո՞ւմ ես:

– Քեզնից եմ սովորել, ընտիր ուսուցիչ ես:

– Բայց տանջվում ես, ինձ վանելով՝ չես թեթևանալու:

– Իսկ քեզ ինչո՞ւ է միշտ թվում, թե դու գիտես՝ ուրիշների համար ինչն է լավ, ինչը՝ վատ, ուրիշներն ինչ են զգում ցանկացած պահին ու ինչ են ուզում այս կյանքից ընդհանրապես: Դա հաստա՞տ միայն քեզ է հայտնի, ո՛վ «աշխարհի տիրակալ»:

– Լավ ես հարվածում... իմ պես:

– Այդ խոսքերովդ զգացի՞ր, որ քեզ մատնեցիր,– փոքր-ինչ թունոտ ուրախություն հայտնվեց Իզաբելի դեմքին:

– Զգացի և ընդունեցի, որ այդպիսին եմ եղել:

– Եղե՞լ, թե՞ կաս:

– Այլևս չկամ:

– Նախկինում էլ ես չկայի, իսկ հիմա ես կամ, որովհետև դու չկաս:

– Նորից վրեժ... Այն լավ բան չէ գիտե՞ս,– ասաց Արամը:

– Գիտեմ,– խոստովանեց Իզաբելը նույն սառնասրտությամբ, ինչպես ողջ խոսակցության ընթացքում էր իրեն պահում:

– Այդ դեպքում ինչո՞ւ ես անում:

– Իսկ ի՞նչ եմ անում որ:

– Ինչ, որ անում ես,– նորից դժվարությամբ թուքը կուլ տալով՝ պատասխան տվեց Արամը,– ցավեցնում ես:

– Ցավը լավ բան չէ, բայց դա էլ դու զգա:

Արամը չէր ուզում հավատալ, որ սա հնարավոր է՝ զգալ այն, ինչ զգացնել է տվել նախկինում մեկ ուրիշին: Բումերանգի նման ամեն ինչ ետ է գալիս: Նրա մտքերը խառն էին. «Աստվա՛ծ իմ, անտանելի է այս ցավը: Ասես ոսկորներս մեկը փշրում է հենց հիմա, հենց այս վայրկյանին: Հոգիս է փշրողը, հոգիս՝ հուսահատ: Ոսկորներս տեղում են, ես տեղում եմ: Հոգիս չքացել է, թողել մեն-մենակ, քանի որ նա այլևս չի ուզում ընկեր լինել ինձ: Ես սարսափելի եմ նույնիսկ նրա համար»: Ձեռքերն իրար մեջ սեղմել էր: Հանկարծ կուչ եկած մարմինն ուղղեց: Վեր կացավ աթոռից: Մի քանի քայլ ետ քայլեց, դռան կողքի պատին հենվեց, մի քանի քայլ... և նա կարող էր սենյակից դուրս լինել, մի քանի քայլ... և նա կարող էր ազատվել, դուրս գալ և շնչել, բայց չէ. սենյակից դուրս էլի օդ չէր լինելու: Նույն վիճակն էր լինելու, քանի որ օդն իր ներսում էր սպառվել, ուր էլ վազեր, խեղդոց էր լինելու: Քրտինքի աննշան կաթիլները ծորում էին ճակատն ի վար, բայց ոչինչ, դրանք մաքրելու ժամանակը չէր: Նա շուռ եկավ, որ նայի նորից Իզաբելին: Նորից մոտեցավ նրան, չփախավ, դուռն արդեն աչքին չէր երևում, դուռը փախուստի սիմվոլն էր: Նա գունատ դեմքը սևեռեց աղջկա վրա ու կրկին խոսեց.

– Ուզում ես, որ տառապե՞մ:

– Ես ոչինչ էլ չեմ ուզում, հավատա, իրոք, ոչինչ չեմ ուզում, ամեն ինչ մեկ է: Դու էլ ես այդ ամեն ինչի մեջ մտնում:

– Ես դարձա սովորական մե՞կը քեզ համար:

– Այո՛, այնքա՛ն լավ է այդպես, չես պատկերացնում:

– Հայացքիդ մեջ անտարբերություն կա,– անթարթ նայելով Իզաբելին՝ ասաց Արամը:

– Այո՛, կա, և այն փրկություն ասես լինի ինձ համար, այն շատ հաճելի է:

– Այդ անտարբերությունը ուղղակի քողարկում է քո ներքին վերքերը, բայց սպի է թողնելու:

– Թող թողնի, ես դեմ չեմ, ես այլևս ոչնչին դեմ չեմ, մանավանդ երբ այդ ոչինչը դու ես:

Վերջին նախադասությունն այնքան խորը ծակեց Արամի սիրտը, որ ուզում էր անհետանալ ամենքից, ամեն մի շնչավոր էակից ու անշունչ առարկայից, ինչը շրջապատում էր նրան կամ կարող էր շրջապատել որևէ օր:

– Ի՞նչ եղավ, մեծամտությանդ կպա՞, կներես, ինչպես դու արձանագրեցիր, ուղղակի բարկացած եմ, իսկ դու երբեք սխալ չես լինում չէ՞,– խայթեց նորից Իզաբելը, ապա շարունակեց,– դե՛ շարունակիր մտածել, որ բարկացած եմ: Շարունակիր ճանապարհդ, որտեղ միայն դու ես, և քեզ այդպես էլ լավ:

Դանդաղ, ոչ կանոնավոր քայլերով, ապշահար դեմքը ներքև կախած, արցունքներն աչքերին՝ Արամը հեռացավ: Առաջին անգամ կյանքում զգաց, որ սխալներ արել է, կատարյալ չէ ամենևին, ինչպես ինքն էր կարծում, ու հիմա այդ սխալների հորձանուտում խճճվել է, ելքի ճամփան է որոնում:

Մի քանի օրից պարզ դարձավ, որ Իզաբելը չի կարողանալու քայլել: «Ի՞նչ է զգում հիմա նա, ինչպե՞ս է անիծում ինձ». սարսափում էր այդ մտքից Արամը, իսկ ինքը հիմա անչափ շատ էր ուզում նրա կողքին գտնվել, բայց ավաղ չէր կարող: Նստած էր լուռ ու ինքնամփոփ իրենց տան հյուրասենյակի փափուկ

բազկաթոռներից մեկին (Պատրիկի տունը վաղուց շատ հարազատ էր դարձել նրա համար): Ձեռքերի մատներն իրար մեջ խաչած մոտեցրել էր դնչին, իսկ արմունկները ծնկներին էր հենել: Անճարությունից փակել էր աչքերը...Մտածում էր, բայց մտածելն անգամ դժվար էր: Քրտինքը դանդաղ սահում էր ճակատն ի վար, երբ մտածում էր կատարվածի մասին, մռայլվում էր դեմքը, աչքերի կոպերը գունատվում էին: Խոսքեր էին հնչում օդում, բայց հնչում էին լռության մեջ, այն լռության, որ չխախտվեց այդ խոսքերից, քանզի նրա մտքերն էին պարզապես սավառնում, սավառնում՝ լռության մեջ. «Աստվա՛ծ, դու, մեր ճակատագրի քողը հագած, բոլորիս մեր տեղն ես ցույց տալիս: Ստիպում իջնել երկնքից, քայլել թաց ու ցեխոտ հողի վրա, ինքներս մեզ խոստովանել, որ ոչ մեկս դատավոր չենք, անգամ դատավորները դատավոր չեն, որովհետև նրանց էլ կարող ես դատել Դու: Դու բոլորին դատում ես, անխնա դատում... Բո-լո-րին...»:

Մի քանի փորձ ևս ձեռնարկեց Իզաբելի մոտ մտնելու, սակայն հենց դռան շեմից աղջկա բղավոցները սկսում էին անտանելի թվալ, ուստի Արամը դադարեց այլևս փորձել: Սերը հոգի է, սերը տանջանք, այն նվիրում է սիրում և ոչ կարեկցանք, բայց ինչպե՞ս դիմացինին բացատրել, որ սեր ես զգում, այլ ոչ կարեկցանք, երբ նա չի ուզում լսել՝ զգալով տառապանք:

Արամի սրտում նման ծանր հույզեր չէին եղել երբևէ, նա տապալված էր ներքուստ. «Ես ուզում եմ նորից գնալ նրա մոտ, բայց չեմ համարձակվում: Ես սիրում եմ նրան: Ես ուզում եմ հիմա գնալ ու նրան ասել դա, բայց աչքերս փախչելու են, չեն կարողանալու նայել նրան: Այդ դեպքում ինչպե՞ս են այդ խոսքերն ասելու

իմ շուրթերը, ինչպե՞ս: Հավանաբար ոչ մի պես էլ չեն ասելու, քանի որ վտարված են նրա հոգուց դուրս: Նա ինձ վտարել է, սիրում է, բայց վտարել է: Հիմա այստեղ՝ իմ տանը նստած, մտովի խոսում եմ նրա հետ, բայց նա ինձ չի լսում, ես եմ ինքս ինձ լսում: Լսում ու հասկանում, թե ինչքան փոքր ենք մենք՝ մարդիկ, որ մեզ մեծ զգանք»:

Երեկոյան Փարիզում անձրևաջրերը անհաշտ կռվի էին բռնվել նրանց միջով հնարավորինս անվնաս անցնել փորձող յուրաքանչյուր անցորդի հետ: Եղանակը սարսափելի կատաղած էր: Այդպես երբեմն կատաղում է եղանակը, չգիտի կոնկրետ ում վրա, դրա համար էլ որոշում է ցանկացածի վրա կատաղել: Անձրևը գնալով ավելի հորդառատ էր դառնում: Ամպրոպը որոնում էր՝ ստիպելով բոլորին, իրենց առօրյա հոգսերը մի կողմ թողած, իրենից դժգոհել: Դրսում կատարյալ փախուստի տեսարան: Մարդիկ խառնիխուռն, արագ այս ու այն կողմ էին վազվզում, հարմար շքամուտքեր փնտրում թաքնվելու համար: Միայն մի հոգի կար անտարբեր, միայն մի հոգու չէին մտահոգում կայծակի խրոխտ զարկերը: Միայն մի հոգու չէր հետաքրքրում, որ եթե նրա հագուստը հանեին վրայից ու մի լավ ճզմեին, հավաքված ջրով սակավաջուր Աֆրիկան քեֆ էր անելու: Արամի վրա անձրևի կաթիլներն անվրեպ կրակվում էին, իսկ նա չէր դադարում անշարժ կանգնած մնալ մայթեզրին: Աչքերը ևս սառել էին ու նայում էին դիմացի անկենդան սրճարանին: Այնուհետև գլուխը վեր բարձրացրեց, և աչքերը նկատեցին մի փոքրիկ բալիկի: Նա դիմացի հինգ հարկանի շենքի (որի առաջին հարկում սրճարանն էր) երկրորդ հարկի պատուհանից նայում էր դուրս՝ ուղիղ Արամին: Հետո

իր փոքրիկ, կլորիկ գլուխը թեքեց դեպի ձախ ուսը ու էլ ավելի բարի ու լայն ժպիտով Արամի վրա սևեռեց իր կանաչավուն ու կլորիկ աչուկները: Արամը ակամայից ևս սկսեց ժպտալ փոքրիկին: Նա ներքևում էր, փոքրիկը՝ վերևում: Վերևից՝ իր տաքուկ ննջասենյակից, նայում էր երկնային ցնցուղի տաք թրջվող այդ խելառի վրա, ով փոխանակ նրա ննջասենյակի նման մի տաքուկ տեղ որոներ, ինչպես բոլորը, անշարժ կանգնած ժպտում էր իրեն: Անձրևի ջրաշաղախ ընկերակցության ներքո Արամի մտքին չէր գալիս հետագայում թոքաբորբով հիվանդանալու հավանականությունը, ինչը գոնե մի փոքր կսթափեցներ մոլորված երիտասարդին: Բայց նրա դեմքին նայողը չէր ասի, թե նա մոլորյալ է: Ո՛չ, նա մոլորյալ չէ: Նա գիտեր՝ որտեղ է: Նա այդ պահին այն նույն սրճարանի դիմաց էր, որտեղ տարիներ առաջ առաջին անգամ հանդիպել էր հորը: Ավելի ճիշտ՝ եկել չամռվել էր իր նախագծով հանդերձ՝ վստահ լինելով, որ հոր հետ հանդիպումը վերջինը չէր լինելու: Այո՛, նա այն ժամանակ վստահ էր, չափազանց վստահ իր ամեն մի քայլի վրա: Իսկ հիմա՞, հիմա ո՞ւր է կորել այդ ինքնավստահությունը. «.....Ինչո՞ւ չեմ կարողանում ձերբազատվել այս ընկճվածությունից: Ա՛խ, Իզաբել այդ ի՞նչ արեցիր դու ինձ հետ, այս ինչպե՞ս փոխեցիր: Ես տհաճ եմ քեզ, ես տհաճ եմ ավելի շատ ինձ: Մի՞թե ես այդքան վատն եմ, մի՞թե ես այդքան նողկալի եմ, որ չես ուզում ինձ տեսնել»: Հայացքը նորից մի անորոշ կետ էր գտել իր համար, և այդպես թմրած նայում էր, մինչև այդ հայացքի տիրոջ ուղեղը նորից միացավ, ու շարժեց գլուխը դեպի վերև: Նորից նայեց դիմացը հառնող շենքի երկրորդ հարկի այն նույն պատուհանին, որից ներս

պուճուր բալիկին էր տեսել: Նա չկար այնտեղ արդեն, միայն սենյակի առաստաղից կախված ջահի լույսերն էին վառ առկայծում: Անձրևը դադարեց, Արամը դեռ ժպտում էր, երեխան այլևս այնտեղ չէր, բայց նա հավանաբար ևս ժպտում էր:

Իզաբելը ոչ միայն Արամին տեսնել չէր ուզում, այլ նաև իր մորը, ում երեսին ոչ պակաս մեղադրանքներ շփացրեց իրենց վերջին հանդիպման ժամանակ: Անգամ չթողեց, որ մոտը մնա, ոչ մեկին չթողեց մոտ գան, միայն բժիշկներին էր սուս ու փուս ենթարկվում ու վստահում: Նա, ցանկանալով մենակ մնալ, դատապարտեց իրեն միայնակ հաղթահարելու նախ հոգեբանական ընկճվածությունը, հետո նոր ֆիզիկականը: Զարմանալի էր, սակայն մի քանի օրից իր հիվանդասենյակ թողեց մտնել Պատրիկին, ում հետ բավականին երկար զրույցի բռնվեց: Փաստորեն Իզաբելը չարացած չէր միայն Պատրիկի վրա, մնացածը նյարդերին ազդում էին: Իսկ Պատրիկը, ամենևին չփայլելով խիստ զգացմունքային իրավիճակներում ճիշտ խոսքեր ընտրելու հմտությամբ, բնական է, որ չկարողացավ նրան համոզել հիվանդանոցից դուրս գրվելուց հետո անմիջապես զբաղվել ստորին վերջույթների վերականգնողական թերապիայով: Ամեն ինչ կանեն, միայն թե Իզաբելը ինքը պիտի ցանկանա ոտքի կանգնել, պայքարել լիարժեք կյանք վերադառնալու համար: Բժիշկները վստահ էին, որ արդյունք լինելու է ընդհուպ մինչև վերջույթների աշխատանքի լիարժեք վերականգնում:

– Փառք տանք Աստծուն, որ այսքան բարեգութ է գտնվել մեր հանդեպ: Կարող էր այս ամենը շատ վատ վերջանալ, բայց լսո՞ւմ ես՝ ինչ են ասում բժիշկները:

Վերականգնվել հնարավոր է, այսինքն դու ստիպված չես լինի մինչև կյանքիդ վերջ անցկացնել անվասայլակի վրա: Դու սրա վրա կենտրոնացի՛ր ու դուրս հանի՛ր միջիցդ քեզ վիատեցնող մտքերը: Լուծում կա այս ամենին, և դու անպայման պետք է գնաս այդ լուծման ճանապարհով: Մենք հետդ ենք, մենք քեզ կօգնենք:

– Ինձ այնպես հետաքրքի՞ր է՝ այդ մենքը ով է, չլինի՞, թե մայրս ուզում է մասնակիցը դառնալ իր իսկ չարամիտ վրեժխնդրության հետևանքով դստեր կյանքում կատարված դժբախտության հաղթահարման պատվելի գործին,– հեգնական տոնով հռետորական հարց տվեց Իզաբելը:

– Ամեն դեպքում պետք չէ ծաղրել, ոչ մի մայր իր զավակի վատը չի ուզում:

– Ինձ այնքան մեկ է ամեն ինչ, պա՛պ:

Պատրիկը հուզմունքը չկարողացավ զսպել, քնքշորեն համբուրեց նրա ճակատը՝ կուլ գնացող ձայնով արտաբերելով այս խոսքերը.

– Դու դեռ ինձ պապա ես ասում:

– Ես միայն քո մեջ եմ պարզություն տեսնում, մյուսների մեջ այն չկա: Ես պարզության եմ կարոտ, ես դա եմ փնտրում:

Պատրիկը զարմանալիորեն բացահայտեց իր համար, որ Իզաբելը փոխվել է: Նրա աչքերի մեջ խորություն կար, անսահման թախիծ, նախկին կենսախնդությունն իսպառ վերացել էր: Դա կապված չէր միայն իր հաշմանդամ դառնալու տխուր փաստի հետ, դա նրա մեջ վաղուց էր բույն դրել, ուղղակի դեպքերի նման անսպասելի ընթացքի հետ մեկտեղ՝ բոլորը նոր սկսեցին այն նկատել: Այս ամենը ստիպեց Պատրիկին պապանձվել, կարծես ավելի խելացի խոսքեր չէր

կարողանում գտնել, որպեսզի գար, հասներ նրա ապրումների բացահայտման գագաթնակետին ու սփոփեր, ինչ-որ կերպ սփոփեր, բայց լռել էլ չէր կարող.

– Այդ երբվանի՞ց ես դու պարզություն ման գալիս մարդկանց մեջ, աղջի՛կս:

– Այն պահից, երբ զգացի, որ իմ մեջ այն կորել է:

– Իսկ ինչո՞ւ է կորել կամ տեղն ի՞նչ է հիմա:

– Կորել է կյանքի հարվածներից, չի դիմացել, փախել է: Հիմա դրա տեղում խռովքն է, այն ինձ վնասում է, բայց ես դրանից ձերբազատվել չեմ կարողանում, ձևը չգիտեմ, ա՛յ, այդքանով պարզ եմ մնացել:

Պատրիկին թվում էր, որ նման հոգեբանական հարցերում ինքն ամենևին գիտակ չի կարող համարվել, այդ հարցում Արամն է անգերազանցելի, բայց դե նա էլ...

Պատրիկը ժպտաց, Իզաբելի անկողնու վրա նստած տեղից մարմնով ձգվեց դեպի նա ու համբուրեց ճակատը: Մի պահ նրանք երկուսն էլ լուռ էին, անձայն նայում էին մեկը մյուսի աչքերի մեջ՝ անթարթ, միայն բիբերը շարժելով, հետո Պատրիկը կամացուկ շշնջաց նրա ականջին.

– Մենք միասին կռիվ ենք տալու ու մենք միասին հաղթելու ենք:

Մթնշաղի ճիրաններում Սենա գետի թույլ ալեկոծումների արծաթագույն փայլը մթի մեջ անգամ երևում էր շատ հստակ: Կարուզել կամրջով քայլում էր Կլաուդին: Քամին ուժեղ չէր, բայց նկատելի էր, շարժում էր աչքերով Սենային քրոջ պես կանչող այդ շիկահեր կնոջ միջին երկարության վարսերը, որոնք թափվում էին նրա երեսին, փակում տեսադաշտը: Նա ետ էր տանում մազերը, դրանք նորից ընկնում

էին դեմքին, նա նորից աջ ձեռքի շարժումով դրանք գցում էր հետ: Հայացքը անխախտ էր, կեցվածքը ձիգ ու ինքնավստահ, ասես չէր կարող լինել այս աշխարհում մի բան, որն ինքը սխալ աներ: Նա կարիք չուներ որևէ գովասանքի խոսքի: Դա չկար էլ, նա փառաբանում էր ինքն իրեն, իսկ դա իր համար բավարար էր՝ սիրել սեփական «ես»-ին, եթե այլ սիրող չլինի, հպարտանալ սեփական «ես»-ով, եթե այլ հպարտացող չգտնվի: Սենային պատմում էր իր դժբախտ կյանքի մասին: Նա համարում էր այն չստացված, հավանաբար երևի նրա համար, որ իսկապես չստացված կյանքեր չէր տեսել շրջապատում: Ի՞նչն էր չստացված, այն որ փո՞ղ ունի, հարուստ գործունյա կի՞ն է, կախված չէ որևէ մեկի՞ց, անձնական կյանքն էլ դասավորել կարող է շատ հասարակ, թեկնածուներ վստահ եմ՝ կգտնվեն, սակայն նա տառապում էր Պատրիկի բացակայությունից: Ինչո՞ւ նա զգաց Պատրիկի կարիքը հենց այն ժամանակ, երբ մնաց մենակ, իսկ ինչո՞ւ էր լքել նրան՝ ձանձրացե՞լ էր կամ միգուցե նոր արկածնե՞ր էր փնտրում: Ստացավ այդ արկածները նա, գնաց այդ արկածների հետևից, բայց դրանք կարճ տևեցին, իսկ վերադարձի ճամփան փակ էր: Այդ ինչքա՞ն կարճամիտ պիտի լինի մարդ, որ ընկնի իր լարած թակարդի մեջ, փորձի դուրս գալ, չկարողանա և կյանքը համարի չստացված: Այդ որտե՞ղ չստացվեց, այդ ո՞ր կետում սկսեց չստացվել: Պատասխանեմ՝ ուղեղի ծալքերում ինչ-որ բան չկպավ իրար, ինչ-որ բան ինչ-որ տեղ չհատվեց, բայց պիտի հատվեր... Լավ կլիներ, որ հատվեր: Թեթևաբարո կանայք գրավիչ են, նրանք գրավում են ժամանակավոր, և գրավողն ու գրավվողը՝ երկուսն էլ գիտեն, որ ժամանակավոր է, ու խնդիր

չի դա երկուսից ոչ մեկի համար, բայց արդյոք որոշ ժամանակ հետո, նայելով ետ, հասկանալի է դառնալու, որ ետևում չկա գեթ մի կարևոր բան, որը կլցներ ներկան:

Հեռվից սկսեցին լսվել ծանրաքարշ մի տղամարդու ոտնաձայներ: Կլաուդին սպասում էր նրան՝ վստահ լինելով, որ հակադրության այս ռաունդը իր օգտին պիտի ավարտի: Պատրիկը, տհաճությունը չթաքցնելով, դանդաղ մոտենում էր, սակայն գետի՝ ականջ շոյող ընթացքի ձայնը նրան գերել էր՝ միակ հաճելի բանն այդտեղ:

– Դու քեզ դուր ես գալի՞ս այս ամենից հետո,– հարցրեց Պատրիկը:

– Իսկ ի՞նչ է եղել:

– Շարունակելո՞ւ ես քեզ հիմարի տեղ դնել, ասեմ՝ արդեն նողկալի է այս ամենը:

– Ի՞նչը:

– Ներսիդ թույնը:

– Ես թունավոր չեմ,– հակադրվեց Կլաուդին:

– Բայց ուզում ես այդպիսին երևալ:

– Ես միայն քեզ եմ ուզում, քո կողքին գտնվել եմ ուզում, ցնդվում եմ, երբ տեսնում եմ դրան կողքովդ քայլելուց ու ձեր սիրառատ գրկախառնություններն այլ մարդկանց ներկայությամբ:

– Ի՞նչ է՝ մենք այդպես չէի՞նք անում: Ի՞նչն է տարօրինակ աչքիդ թվում:

– Այն, որ առաջ ես էի դա անում, հիմա՝ նա:

– Ինչո՞ւ, չի՞ կարելի,– կիսատ ժպտացին Պատրիկի շուրթերը, ու աչքերը խանդավառությամբ հառեց Կլաուդիի ուղղությամբ:

– Կարելի է, բայց ինձ ու միայն ինձ:

– Աշխարհում միայն դո՞ւ ես ու միայն դո՞ւ,– սկսեց ծիծաղել Պատրիկը:

– Ո՛չ, բայց նա չպիտի քո կողքին լիներ:

– Քո խնդիրը ո՞րն է, Կլաուդի՛, ես լուրջ եմ հարցնում: Կներես, հնարավոր է հիմար եմ կամ դժվար հասկացող...

– Այո՛, ճիշտ ես, հիմար ես ու դժվար հասկացող, որ ինձ փոխել ես այդ խեղկատակի հետ:

– Նախ՝ կարգին արտահայտվի՛ր ու հետևի՛ր հնչեցրածդ արտահայտություններին, արդեն չափն անցնում ես: Երկրորդ՝ այդ դու չես որոշելու, թե ես ինչպես ապրեմ, և վերջինը՝ կարծես թե մոռացել ես՝ ով ում ումով է փոխարինել: Ես չեմ լքել քեզ, այլ դու ինձ: Այդ դեպքում քո արարքին ի՞նչ անուն տամ:

Կլաուդին լռում էր, աչքերը չէին դադարում նայել գետի՝ հանդարտ շարժի մեջ գտնվող ալիքներին: Նրա դեմքն արտահայտում էր մի բան, որ նա դժգոհ է, իսկ երբ նա դժգոհ է ու մռայլված, ապա դրա մեղավորը հաստատ ինքը չէ: Պատրիկը նորից խոսեց.

– Դե՛ մի բան ասա, ինչո՞ւ պապանձվեցիր, դեմքիդ իրական տեսակդ շփացրի կտրուկ, ու դու խառնվեցիր իրա՞ր: Բա դու խառնվող կի՞ն ես, քո ինքնավստահությունից ունենայի հիմա Մարս էի թռել, հետո Յուպիտեր, մի քանի պտույտ էլ Սատուռնի շուրջն էի տվել ու ետ վերադարձել Երկիր:

– Իմ ինքնավստահությունից չէ, բայց լավ առաջ ես գնացել քո սեփական ինքնավստահության սանդղակում:

– Դա նրա շնորհքն է: Նա այնպես արեց, որ ես լրիվ ուրիշ կերպ սկսեմ մտածել: Նա փոխեց ինձ, փոխեց դեպի լավը, բացեց իմ մեջ իմ արժանիքները, որոնք

անգամ ինքս շատ հաճախ չէի նկատում: Քեզ հետ ես դրանք չէի նկատում, քեզ հետ դու այնպես էիր անում, որ միայն քեզ նկատեմ, իսկ նա այնպես արեց, որ ես ինձ նկատեմ: Իրապես սիրող մարդը այդպես կվարվի: Դրա համար ես քեզ հիմա հստակ ասում եմ՝ ես նրան եմ ընտրել, ես նրան երբեք չեմ լքի, ով էլ դիմացս կանգնի, ով էլ փորձի գայթակղել, միևնույն է՝ իմ սիրտը հավերժ նրան է պատկանելու: Նա է իմ կյանքի կինը, ում պաշտելու եմ մինչև կյանքիս վերջ, որովհետև նրա հոգին ուրիշ է, որովհետև նա լույս է: Փորձիր այդ լույսից քո մեջ փնտրել, միգուցե գտնվի, բայց ուրիշի համար պիտի լինի այդ լույսը, հաստատ ոչ իմ. իմ ընտրությունն այլևս անբեկանելի է:

– Դա դեռ կտեսնենք,– պայուսակը կտրուկ թևի տակ դնելով ու հեռանալ պատրաստվելով՝ հայտարարեց Կլաուդին:

– Գոնե մեղավոր զգայիր քեզ աղջկադ հետ կատարվածի համար,– խղճահարություն ներշնչող ձայնով հետևից գոռաց Պատրիկը:

– Աղջկաս հետ գործ չունես,– կանգնեց մի պահ ու կանգնած տեղից նորից ետ շրջվեց Կլաուդին՝ թունոտ հայացքով նայելով վրան:

– Գործ չունեմ, բայց չգիտես, թե ինչու՝ եթե նրան հարցնեն՝ «ո՞ւմ հետ ես ուզում ապրել», հաստատ քո անունը չի տա և եթե երկուսիս միջև պիտի ընտրություն կատարի, ապա կընտրի ինձ: Չե՞ս զգում, որ ներսիդ թույնը բոլորին վանում է քեզնից: Դե՛ վե՛րջ տուր էլի, գիտակցի՛ր վերջապես, աշխարհը քո շուրջը չի պտտվում: Նախևառաջ արժանի եղիր լավ վերաբերմունքին, հետո նոր բողոքիր դրա բացակայությունից, եթե այդ պարագայում այն իրոք բացակայի:

Կլաուդին ոչինչ չասաց: Նա անձայն հեռացավ, բայց իրականում ձայն կար: Նրա ինքնավստահ ու կտրուկ քայլվածքը, բարձրակրունկների՝ երկրաշարժ առաջացնող կտկտոցը վերացականորեն վերադարձան նորից Պատրիկի մոտ հայտարարելու, որ ոչինչ չփոխվեց: Նա ճիշտ է, իսկ դու սխալ: Սա որպես վերջին խոսք կարծես հնչեր, չնայած փաստացի չասված էին այդ խոսքերը, սակայն վերջին խոսքը ասվում է վերջում, իսկ ո՞րն է այդ վերջը: Ոչ մեկը չգիտի ու չի կարող ասել՝ «գիտեմ»:

Գլուխ 6

Հանգստությո՞ւն: Մենք անդադար հանգստություն ենք փնտրում, իսկ երբ այն գալիս է, սկսում ենք մտածել, թե ինչպես մի կողմ շպրտենք այդ գրողի տարած հանգստությունը (ժո՛ղ ջան, լուրջ եմ ասում՝ այդ գրողը ես չեմ, ես չեմ տարել, շառ չանեք) և մի նոր պատմություն բերենք գլխներիս: Այդպես է, մենք անընդհատ մթնոլորտի փոփոխություն ենք ուզում: Մենք շարժ ենք ուզում: Հանգստությունը միայն ընդմիջումի նման գալիս ու արագ անցնում է: Չես էլ հասցնում վայելել, անգամ եթե այդ ընդմիջման կարիքը իրոք շատ ունեիր և ավելի երկար ժամանակով էիր նախատեսում ունենալ: Կյանքը թույլ չի տալիս, բայց այդ կյանքը մարդկությունն ինքն է այդպիսին սարքել, անվերջանալի թափքի մեջ խճճված լաբիրինթոս, որտեղ ոչինչ հնարավոր չէ մինչև վերջ բացահայտել, մինչև վերջ ուսումնասիրել, մինչև վերջ հասկանալ, բայց մարդիկ միևնույն է չեն հանձնվում և այդ լաբիրինթոսի մեջ անվերջ պտույտներ տալով՝ փորձում են կյանքի տարբեր բնագավառներ հասցնել մաքսիմալ բացահայտված վիճակի: Դրանով էլ կյանքը դառնում է բազմերանգ, որտեղ և՛ սևը կա, և՛ սպիտակը, և՛ դրանց արանքում համեստորեն ծվարած մնացյալ երանգները, որոնք հաստատ 50-ից շատ են:

Լոգասենյակից դուրս գալով՝ մի գավաթ կապուչինո խնդրեց պատրաստել իր համար Պատրիկը՝ նայելով Տաթևի՝ նրա այդ ցանկությունն արդենիսկ կռահած մեղմ ժպտացող դեմքին: Նա իրար ետևից կոկիկ դասավորում էր իր ամուսնու արդուկված անդրավարտիքներն ու վերնաշապիկները և գլխում մի միտք էր պտտվում. «ինչ-որ կարևոր բան կա, որ ես պիտի անեմ, բայց համառորեն չեմ անում: Դա աններելի է»: Հանկարծ խախտվեց հաճելի լռությունը.

– Ես պիտի գնամ նրա մոտ:

– Ի՞նչ,– պատուհանագոգին դրված ծաղիկները ջրելը մի պահ դադարեցրեց Պատրիկը և շրջվեց դեպի իր սիրելիի կողմը:

– Ասում եմ՝ ես պիտի տեսնեմ նրան:

– Տաթև՛, ինձ չի թվում, թե դա լավ գաղափար է, գիտես՝ ինչքան ջղաձգված վիճակում է նա հիմա:

– Չէ՛, դու ուղղակի չես ուզում քո մենաշնորհը զիջել:

– Ի՞նչ մենաշնորհ:

– Այն մենաշնորհը, որ Իզաբելը միայն քեզ է ընդունում: Մյուսներին ուղարկում է գրողի ծոցը, սակայն ես դեռ չեմ փորձել, միգուցե ինձ ևս հաջողվի նրա համար լավ ընկեր դառնալ: Ես ուզում եմ օգնել նրան դուրս գալու այս վիճակից, մանավանդ, երբ մոր հետ այդպես ուժգին գժտված է:

– Դե՛, փորձի՛ր, ի՞նչ ասեմ, ամեն դեպքում ռիսկային է: Լավ մտածի՛ր, վերջիվերջո ինքը քեզ վրա նայելու է նախևառաջ որպես Արամի մայր, ոչ թե որպես իմ կին:

– Գիտեմ, բայց ես ռիսկի գնալուց շատ լավ եմ, մի տեսակ վաղուց ռիսկի չեմ գնացել, կուզեի նման մի ադրենալինի դոզա ստանալ:

– Խելառ:

– Կարևորը դու ինձ այսպիսին էլ ես սիրում, չէ՞,– մոտեցավ և ջերմ համբուրեց Պատրիկի՝ լոգանքից թարմացած շագանակագույն մազերը, փարվեց նրա ուսերին:

– Անխոս, կարևորը, որ ռիսկի գնալուց առաջ և հետո հանգիստ ես: Ինձ քո ներքին հանգստությունն է գրավել միշտ, ի նկատի ունեմ այն, որ հավասարակշռությունդ միշտ պահում ես, մի միլիմետր անգամ չես շեղվում:

– Դա բնավորություն է, իմ մեջ ծնվել է, իմ մեջ էլ կմեռնի,– եզրափակեց Տաթևիկը:

Հաջորդ օրը վաղ առավոտյան եղանակը սառն էր, ձմեռը դեռ չէր սպառել ցրտահարելու իր հնարավորությունները, չնայած սովորել էր դրանք ավելի հաճախ զուգակցել գարնանային թարմ շնչի հետ. մարտի սկիզբն էր: Հիվանդասենյակի դուռը կամացուկ բաց արեց Տաթևը՝ մեծ հույս ունենալով, որ կհաղթահարի այս դժվար զրույցի առաջին խանգարող պատնեշը՝ իր վախը: Հույս ուներ, որ Իզաբելը դեռ քնած է, ինչը թույլ կտար հարմարվել սենյակում տիրող մթնոլորտին, որը միգուցե օգներ հավաքել մտքերը նախքան նրա արթնանալը: Սենյակի պատերի՝ դեպի առաստաղ հարող մասը սպիտակ էր ներկված, իսկ մնացած մասը մինչ հատակը՝ բաց փիրուզագույն: Կար փոքրիկ սառնարան դրված մահճակալից մի քիչ հեռու՝ ձախ անկյունում, իսկ աջ հատվածում կիսաբաց պատուհանն էր ճոճվում թեթև քամուց ու տարուբերում բաց մարմնագույն վարագույրները: Իզաբելը քնած չէր, բայց ուզում էր քնած ձևանալ: Չէր նկատում, որ հիվանդասենյակում իրենից բացի էլի մարդ կար.

ամուր փաթաթվել էր վերմակով, գլուխը անհյուրընկալ կերպով շրջել էր ու «թաղել բարձի մեջ»: Տաթևը չհամարձակվեց մոտենալ: Այդպես մտել էր ներս ու կանգնել, անձայն փակել էր դուռը ներսից ու մի կերպ փորձում էր սանձել մարմնի դողը: Այդպես մի քանի վայրկյան և.

– Միայն Դուք էիք պակաս, Դուք ինչո՞ւ եք եկել:

– Թույլ տուր մոտ գալ:

– Եվ դա ի՞նչ կփոխի:

– Կփորձեմ փոխել,– անհանգստությունն աչքերում պատասխանեց Տաթևը՝ թուքը հնարավորինս աննկատ կուլ տալով:

– Ի՞նչը:

– Քո ներսը:

– Այդ ինչպե՞ս:

– Խոսքով:

– Ի՞նչ կտա ինձ Ձեր այդ խոսքը:

– Հնարավոր է նորից ուզենաս պայքարել, երբ պատկերացնես հաղթանակդ,– ասաց Տաթևը:

– Էլ հաղթանակ չկա, բոլորը պարտություններ են, այդպիսի հիթ-շքերթ է ինձ մոտ սկսել՝ պարտությունների հիթ-շքերթ:

– Ալիքը փոխի՛ր, քո առջև մեկ այլ շքերթ կզարնի:

Իզաբելը վերմակի կապանքներից (որի մեջ ինքն իր կամքով էր հայտնվել) ազատեց թևերն ու կրծքավանդակը, հագին սպիտակ ատլասե ներքնազգեստ էր՝ «ազատագրման» համար նույնչափ «ուրախ»: Աղջիկը ձեռքը տարավ դեպի մահճակալի հետևի մասում տեղադրված կարգավորումների սեղմակը և մի քանի վայրկյան չարչարվելով՝ փոքր-ինչ բարձրացրեց մահճակալի վերին մասը, որ հարմար լինի լսել

զրուցակցին: Նա չէր կարողանում ըմբռնել Տաթևի շարժառիթը իրեն այցելության գալու առումով, ուստի հետաքրքրական աչքերը գամեց նրա վրա.

– Դուք ինչո՞ւ եք իմ մասին անհանգստանում, ես ո՞վ եմ Ձեզ համար: Այնպես չի, որ Պատրիկի դուստրն եմ, ինձնով իմ կենսաբանական հայրն անգամ վաղուց չի հետաքրքրվում, իսկ մորս չեմ ուզում տեսնել: Նրա ագահությունն ու վրեժխնդրությունն են պատճառը, որ ես այս վիճակում եմ հիմա, չնայած այնպես չէ, որ նախկինում ամեն ինչ լավ էր ինձ մոտ: Դրանում էլ Ձեր որդին է մեղավոր:

– Արի մեղավորներ չփնտրենք, լա՞վ:

– Ինչո՞ւ, ձեռք չի՞ տալիս:

– Ո՛չ, պարզապես անօգուտ է անընդհատ ետ նայել: Դա օգտակար է, երբ սեփական սխալներիդ ուղղումն ես ուզում անել, մնացած պարագաներում այն քեզ ավելի հետ է շպրտում, մինչդեռ դու պետք է առաջ գնաս,– մի պահ դադար առնելով՝ ասաց Տաթևը:

– Ա՛յ, այդ առաջ գնալը չպիտի ասեիք, մանավանդ, որ լավ գիտեք, որ չեմ կարող ոչ մի տեղ էլ գնալ:

– Կարող ես: Դու շատ լավ գիտես, որ բժիշկները նշում են՝ անհույս դեպք չէ, և հնարավոր է տքնաջան աշխատանքի ու իհարկե քո համառության շնորհիվ հասնել շատ լավ արդյունքի: Իսկ դու, այդ ամենը լավ իմանալով, հանձնվել ես: Դա անթույլատրելի է:

– Ցավոք, մարդ չի մնացել կողքիս, որ անթույլատրելին չթույլատրի: Ես եմ ու իմ մտքերը, ես եմ ու իմ ավարտված երազը, որը երևի այդպես էլ կարգին չտեսա, որ չկարողացա գնալ դրա ետևից կամ միգուցե սխալ մարդու մեջ տեսա ես այդ երազը:

Տաթևն ամեն ինչ անում էր, որ ցույց չտա մի ցավալի զգացողություն, որ զգում էր իր ներսում՝ խղճահարություն: Հիմա դա անթույլատրելի էր ցուցադրել, դա ուղղակի կփշրեր ամեն ջանք: Իզաբելը պետք է իր և Պատրիկի մեջ չգտներ կարեկցանք: Նա պետք է գտներ միայն քնքշանք ու հոգատարություն, բայց ոչ երբեք խղճահարություն: Դա մահացու է հիվանդի համար: Նա պետք է զգար ուրիշների միջի ուժը, որ նրանցից ուժ ստանար: Դժվար էր, բայց նա պետք է խոսեր: Տաթևը աչքերը մի պահ թույլ փակել էր, թարթիչները համարյա կպել էին իրար, սակայն չէին հասցրել դիպչել միմյանց, երբ նա աչքերը նորից բացեց, դողացող շուրթերը տարտամորեն համարձակվեցին շարունակել միտք արտահայտել.

– Երազը քո մեջ տե՛ս: Քե՛զ տես այդ երազում, քեզնով այդ երազը կառուցի՛ր: Այդ երազի կենտրոնում դու եղի՛ր, քո համառությամբ ապացուցի՛ր, որ բարդագույն երազը իրականություն դարձնող խիզախի մեկն ես: Վերագտի՛ր քո էգոիզմը, դու այն ունեիր, ես գիտեմ: Սա որպես վիրավորանք մի՛ ընդունիր: Երբեմն պահեր են գալիս, որ այդ էգոիզմը փրկություն է: Սա այդ պահն է: Դու պետք է անես դա քո համար, քեզ նորից լիարժեք կյանքի ռիթմին վերադարձնելու համար: Չի կարելի տրվել հուսահատության, այն մահացնում է մարդու մեջ շատ բան: Մահը միշտ էլ կա: Մահից չենք կարող փախչել, այն մեկ է մի օր առանց հրավերի գալու է, սակայն այսօրվա կյանքը պետք չէ բաց թողնել. նա հետ գալու սովորություն չունի:

Տաթևը մոտ եկավ, քայլերը փորձում էր հնարավորինս անաղմուկ անել, կարծես քնած մարդ կար սենյակում: Իրականում նա դեռ վախենում էր, իր դեռևս

չարտաբերած բառերից էր վախենում: Վախենում էր սխալվել այդ բառերում: Տաթևը նստեց նրա մոտ, բռնեց նրա ձեռքը և արցունքներով լցված աչքերը հառեց շփոթված Իզաբելին.

– Ես գիտեմ, որ անպատասխան սերը դժոխքի է նման: Ես ապրել եմ այդ դժոխքը, ես հաղթահարելանցել եմ այն: Ես հիմա դրախտում եմ, իսկ գիտե՞ս՝ ինչու:

Իզաբելը քարացած նայեց նրան, շրթունքները թույլ սեղմել էր իրար: Թուքը ծանր էր կուլ գնում, բայց նա ուզում էր շարունակել լսել Տաթևին: Նրան Տաթևի բերած մթնոլորտը սկսել էր դուր գալ, քանի որ Կլաուդիի հետ անգամ ամենամտերմիկ մայր ու աղջկա զրույցների մեջ նման խորություն չէր կարողացել գտնել:

– Որովհետև այդ ընթացքում չչարացա: Չչարացա ոչ մեկի հանդեպ: Կյանքին դժկամորեն, բայց գիտակցաբար նորից ասացի «բարև», և գիտե՞ս՝ ինչ կատարվեց:

– Ի՞նչ,– անհամբեր հարցրեց Իզաբելը՝ փոքր-ինչ ձգվելով դեպի Տաթևը:

– Նա նույնպես ինձ ասաց «բարև», իսկ հետո ես ժպտացի, և գիտե՞ս՝ ինչ եղավ,– ցածրաձայն գրեթե շշուկով խոսեց Տաթևը,– նա էլ ինձ ժպտաց:

Նա նայեց Իզաբելի արցունքակալած աչքերին և շարունակեց վստահ ձայնով՝ հավանաբար գիտակցելով, որ իր խոսքերը կամաց-կամաց տեղ են հասնում.

– Թույլ մի՛ տուր կյանքին դառնալ քո տիրակալը: Այդ դու ես նրա տիրակալը: Դու ծնվել ես, որ տնօրինես այդ ընծան: Դու նրանից կարող ես ստեղծել ամեն ինչ: Դու այն կարող ես նույնիսկ նետել աղբարկղը:

Արի որոշենք, որ դու քո կյանքը աղբարկղը չես նետելու: Արի միասին ստեղծենք նրանից այն, ինչ դու կուզես, բայց որը պակաս չի լինի մինչև այդ չարաբաստիկ միջադեպը կյանքումդ տեղի ունեցած հաճելի պահերից. - Մի պահ լռություն տիրեց: Տաթևը խորը հոգոց հանեց, գլուխն իջեցրեց ներքև: Ուզում էր նորից խորհել գոնե մի քանի վայրկյան մինչև խոսակցությունն ավարտելը: Այնուհետև գլուխը վեր բարձրացրեց, մեղմ ու բարի ժպիտ էր հայտնվել դեմքին, նա հավելեց.- Մտածիր ասածներիս մասին:

Իզաբելը ժպտաց, և հենց այդ վայրկյանին ներս մտավ Կլաուդին: Ապշահար կանգնել էր, չէր հավատում աչքի տեսածին. Տաթևը քնքշորեն բռնել էր նրա աղջկա ձեռքը, նստած էր Իզաբելին շատ մոտ, և նրանց ջերմ զրույցին թեպետ ականատեսը չէր եղել, բայց արդեն ամեն ինչ պարզ էր նրա համար: Կլաուդին անվրեպ սևեռվել էր նրանց երկուսի վրա ու այնպիսի չարությամբ էր նայում, որ Տաթևը վախեցավ, քանի որ գիտեր՝ ինչերի է ընդունակ այդ կինը: Կլաուդին դեռ երկար քարացած կանգնած մնաց դռան մոտ: Երևի նրա համար դա մի հավերժություն տևեց: Դեմքը մռայլվել էր, շրթունքները սկզբից ուզում էին բացվել, որ մի բան ասեին, բայց տեսածից հետո նրանք ևս քարացած մնացին իրենց տեղում, աչքերը դժկամությամբ մերթընդմերթ կկոցում էր: Կլաուդիի շունչը խորքից լսվում էր, կրծքավանդակը վերուվար էր շարժվում՝ ծանրացած շնչառությանը համահունչ: Վերջապես շրթունքները որոշեցին սեղմվել միմյանց: Թուքը մի կերպ կուլ տալով՝ թունոտ ժպտաց, ասես ծաղրում էր հիվանդասենյակում գտնվողներին, հետո դուրս թռավ սենյակից: Բաց մնացած դռնից ներս նրա

կրունկների բիրտ կտկտոցը դեռ երկար ժամանակ շարունակում էր լսվել Տաթևի ու Իզաբելի ականջներում: Նրանք ոչինչ չասացին իրար տեղի ունեցածի վերաբերյալ, միայն այլայլված նայեցին միմյանց:

Մեկ ամիս անցել էր այն պատահարից, որը փոխեց Իզաբելի կյանքը: Իզաբելին պիտի դուրս գրեին: Անվասայլակը մոտեցրին, նա տհաճություն էր զգում այդ անվասայլակից՝ դեռ վրան չնստած: Անվասայլակը վերջին սերնդի էր, էլեկտրոնային կառավարման հնարավորությամբ, նաև բազմաթիվ ֆունկցիաներ ուներ, իսկական գազան, բայց Իզաբելի աչքին այդ գազանը մրջյուն էր, քանի որ անվասայլակ էր վերջին հաշվով ու ամեն վայրկյան իր դժբախտության մասին հիշեցնողը: Ո՛չ ուզում էր նստել, ո՛չ ուզում էր մնալ հիվանդանոցում, ուղղակի ոչինչ չէր ուզում: Ուղղակի ուզում էր ամեն ինչ առաջվանը լիներ, բայց ժամանակն անգութ է, հետ շրջվել չի սիրում, ինչքան էլ աղաչես նրան դրա մասին:

Իզաբելը որոշել էր, որ Պատրիկի ու Տաթևի տրամադրությունները չփչացնելու համար ուժեղ պիտի իրեն պահի, զսպի արցունքները: Նա տարօրինակորեն միայն այդ երկու անձանցից էր ջերմություն ստանում: Միայն նրանց հետ էր իրեն լավ զգում, բայց ինչպե՞ս պիտի ընդունի Պատրիկի առաջարկը, որ եթե չի ցանկանում մոր հետ ապրել, տեղափոխվի իրենց տուն, եթե այնտեղ Արամն է: Տունը անծանոթ չէր, բնականաբար, երկար ժամանակ ապրել էր այնտեղ, բայց հիմա տան անդամները փոխվել են, նրանցից մեկին էլ տանել չի կարողանում, ապա ինչպե՞ս է այդ ամենը լինելու: Նա չհասցրեց դրա մասին բավականաչափ խորհել. նստեցրին անվասայլակին:

Առանձնատան դարպասները բացվեցին. ժամանել էին տուն: Իզաբելը փոքր-ինչ կծկվել էր անվասայլակի մեջ, հասկանալի էր՝ իր նոր կարգավիճակն էր դրա պատճառը: Մի տեսակ ամաչկոտ էր դարձել, ասես ուրիշ մարդ լիներ, ընկճված, խեղճացած: Նրանք բոլորով ներս մտան տուն: Հյուրասենյակը պաղ էր, անկենդան: Հանկարծ լսվեցին աստիճաններով դանդաղ դեպի վար իջնող ոտնաձայներ: Արամն էր: Նա այդ մեկ ամսվա ընթացքում շատ ժամանակ էր ունեցել մտածելու ամեն ինչի մասին, բայց որպես հետևանք ավելի էր խճճվել. չէր հասկանում՝ որն է ճիշտ, որն է սխալ: «Մի՞թե ես այդքան մեղավոր եմ, որ պիտի ինձ ամեն վայրկյան ջարդված զգամ ներքուստ». անընդհատ պտտվում էր Արամի գլխում այդ միտքը: Այդպես կռիվ էր տալիս իր Էգոն, որը պակաս ընկճված չէր այն մտքից, որ իրեն, չգիտես՝ ինչու, մի ամիս է, ինչ Էգոյի տեր Արամը մեղադրում ու նվաստացնում էր: «Ես այդքան էլ ընկած չեմ, որքան ուզում եք ինձ տեսնել: Ես ի՞նչ անեմ, որ ստացվել է այնպես, ինչպես, որ ստացվել է». արդարանում էր Էգոն: Նմանատիպ հոգեվիճակ էր Արամի մոտ, նրա Էգոյին թողնեիր, հա կխոսեր, ահավոր նեղված էր այն: Չնայած Արամը շատ կոշտ որոշել էր, որ ինքը չի խոսելու, սակայն աչքերին ինչպե՞ս ստիպել լռել, երբ նրանց միջից սեփական Էգոդ քիչ է մնում դուրս թռչի կատաղությունից: Ոտքերի անկանոն քայլվածքի ձայները գնալով ավելի հստակ էին լսվում: Արամը ոտքը երբեմն օդում մի քանի վայրկյան ցուցադրաբար կախ էր գցում, հետո նոր հպում փայտե աստիճաններին: Այդպես անշտապ իջնում էր ներքև: Գիտեր, որ գալու է: Մտածում էր՝ ինչ պահվածք ընդունի:

Այդպես էլ հաշտ չեղավ ինքն իր հետ, արդյունքում ոչ մի պահվածք էլ չընդունեց: Սառն էին ու անորոշ նրա դիմագծերը: Ձեռքերը խաչել էր կրծքավանդակին ու կարծես մեղադրող հայացք էր ուզում ընդունել, սակայն այնպիսի մեղադրող հայացք, որ եթե հարցնեիր՝ «մեղադրանքդ ո՞րն է, տղա՛ ջան», պատասխան չէր ունենա: Իզաբելը ևս ուրախ չէր, որ տեսնելու է նրան: Ամեն ինչ կտար, միայն թե աչքերը կարողանային խուսափել Արամին նկատելուց: Երկուսն էլ չգիտեին՝ ինչպես վարվել իրենց անցյալի, ներկայի, ընդհանրապես այս պահի հետ: Արամը հարցը լուծեց յուրովի, միայն իր համար, ուղղակի մարդկանց տրամադրությունը չփչացնելու համար անխոս դուրս եկավ տնից:

Ցերեկային լույսի շողերը ներթափանցում էին լուսամուտից ներս: Իզաբելը, մտածմունքների մեջ ընկղմված, լուռ նայում էր այդ լուսամուտից դուրս: Մայրուղով մեքենաների շարժը քիչ էր այդ օրը, իսկ տանը հարակից պարտեզը խաղաղություն էր շնչում: Նա չէր նկատում, որ իրեն հետևող կար: Արամը ասես պահմտոցի էր խաղում տան մեջ: Նպատակը այն էր, որ հնարավորինս քիչ երևա Իզաբելի աչքին: Գիտեր, թե ինչքան է նողկում իրենից, ավելորդ կռիվ ու լարվածություն ստեղծելու կարիքը բնավ չկար: Ընդհանրապես նա աշխատում էր քիչ լինել հայրական տանը: Ծնողները շատ բնակարաններ ունեին, և Արամը նախընտրում էր հաճախ գիշերել դրանցից որևէ մեկում, բայց ոչ ընտանիքի հիմնական առանձնատանը: Նա հասկանում էր, որ Իզաբելի մոտ հիմա այնպիսի շրջան է, որ լավ է իրեն գրգռող որևէ քայլի չդիմել: Եթե չի ուզում խոսել, ուրեմն պետք է հանգիստ թողնել նրան: Եթե նա իրեն հանգիստ է զգում

Պատրիկի և Տաթևի ընկերակցության ներքո, ուրեմն ինքը՝ Արամը, ավելի լավ է տեսադաշտից չքանա, որպեսզի իր ներկայությամբ չփչացնի առկա դրական մթնոլորտը: Պատրիկն ու Տաթևը իսկական ծնողների պես այնքան ուշադիր ու հոգատար էին Իզաբելի հանդեպ, որ նա չէր հիշում իր իսկական ծնողների մասին: Նրանք կարողացան մեծ ջանքերի գնով համոզել Իզաբելին սկսել ինտենսիվ աշխատել մասնագետների հետ նորից քայլել կարողանալու համար: Օրական մի քանի ժամը միայն այդպիսի թերապիաների վրա էր գնում: Շատ հոգնեցուցիչ էր, երբեմն նյարդերը տեղի էին տալիս: Դա բնական էր: Արդենիսկ հոգեպես ընկճված լինելով՝ այս պարապմունքները հոգեմաշ էին անում աղջկան: Մանավանդ, որ սկզբից արդյունքը չէր երևում, և նա հիասթափված էր: Ժամանակ առ ժամանակ խորշում էր այդ պարապմունքներից: Լինում էին դեպքեր, որ Պատրիկը խիստ հրահանգում էր տուրք չտալ Իզաբելի կամակորություններին և անել այն, ինչ պետք է: Նման պարագայում համառությունը գործի կեսն է: Մի ամիս փնթփնթաց, նվնվաց, բայց տեսնելով, որ իր փնթփնթոցներին ոչ ոք բանի տեղ չի դնում, ստիպված հարմարվեց կյանքի այդ ռիթմին: Միակ հուսադրող հանգամանքը այն էր, որ դա ժամանակավոր էր, և հույս էր տածում, որ շուտով կկարողանա ազատվել սայլակին գամված լինելու այդ սիրտ մաշեցնող վիճակից:

Հունիսի վերջն էր, բայց երեկոն զով էր: Դուռը բացվեց և հոգնած ներս մտավ Տաթևը: Թափանցիկ ու գույնզգույն մետաքսե շարֆից ազատեց պարանոցը և այն ցուցադրաբար մի կողմ նետեց, նույն կերպ վարվեց նաև մանուշակագույն կոշիկների հետ:

Երկար հոգոց հանեց, խորը շունչ էր քաշում անընդհատ, չէր կարողանում հանգստանալ: Նա ձեռքերով հենվել էր հյուրասենյակի բազմոցին, պատրաստվում էր նստել:

– Այս եղանակի համար բավականին տաք չե՞ք հագնվել,– ասաց սենյակի կենտրոնում սայլակի անիվները աջուձախ շուռումուռ տվող Իզաբելը:

– Իզաբե՛լ, ի սեր Աստծո, բազմիցս նշել եմ, որ իմ հետ Դուք-ով չխոսես, իսկ դու նորից քաղաքավարություն ես խաղացնում, ա՛խր ես օտար չեմ քեզ: Գիտես՝ ինչքան եմ քեզ սիրում:

– Գիտեմ, բայց ինձ համար դեռևս անսովոր է, կներեք, եթե նյարդայնացնում եմ Ձեզ դրանով,– արդարանում էր Իզաբելը, իսկ Տաթևը դեռ շարունակում էր ծանր շնչել,– բայց ոնց որ լավ չեք, ջուր բերե՞մ:

– Չէ՛, նորմալ է, հիմա կանցնի: Երևի ճիշտ ես, հունիսյան տապի հետ հաշվի նստել էր պետք... ասա՜խ – հանկարծ գոռած Տաթևը՝ սուր ծակոց զգալով որովայնի շրջանում:

– Ի՞նչ եղավ,– խառնվեց իրար Իզաբելը:

Տաթևը բղավում էր ցավից, օգնություն խնդրում, բայց տանը իրենցից բացի մարդ չկար. սպասավորների աշխատանքային ժամն ավարտվել էր, նրանք գնացել էին տուն: Տաթևը, ցավից կծկվելով, փորձեց վեր կենալ նստած տեղից, բայց չկարողացավ, չհանձնվեց, շարունակեց ջանքերը վեր կենալու համար: Հանկարծ այնպես ուժգին բղավեց, որ Իզաբելի սիրտը տեղից քիչ էր մնում դուրս թռչեր: Նա անճարությունից սկսեց արտասվել: Բայց փորձեց արագ խելքի գալ, սայլակով մոտեցավ հեռախոսին ու մատները դողացնելով՝ հավաքեց Պատրիկի բջջային համարը:

Մինչ նա Պատրիկին շփոթված ներկայացնում էր եղելությունը, հանկարծ գլուխը թեքեց և գտավ Տաթևին անգիտակից վիճակում գետնին ընկած, ավելի սարսափեց: Պատրիկը նրան հրահանգեց, մինչ իր հասնելը, շտապօգնություն կանչել: Իզաբելն այդպես էլ վարվեց: Հասցրին հիվանդանոց...

Հաջորդ օրը՝ կեսօրին, հիվանդասենյակի դուռը կամացուկ բացվում է, և ներս է մտնում Պատրիկը վշտացած, սպառված: Նայեց Տաթևի կողմը, իր սիրելին անուշ քնած էր: Արևի լույսն ընկնում էր նրա դեմքին և սքանչելի փայլ տալիս նրա դյութիչ ու ցանկալի այտերին: Պատրիկը անձայն մոտեցավ և նուրբ համբուրեց նրա ձախ այտը:

– Ի՞նչ պիտի ասեմ նրան, որ արթնանա, իսկ եթե չդիմանա՞,– շշուկով ինքն իր հետ վեճի էր բռնվել Պատրիկը:

Տաթևը փխրուն էր դարձել հոգով: Նախկին ամուր կամքի տեր, ուժեղ Տաթևից քիչ բան էր մնացել, քանի որ Պատրիկի կողքին իրեն պաշտպանված էր զգում: Զգում էր տղամարդու թիկունքը որպես պաշտպանություն և կարող էր նախկին ամուր կեցվածքն այլևս թուլացնել: Այդպիսի դինամիկա նկատվում էր նրա վարքում, և դա բնական է, քանի որ սիրած տղամարդու կողքին ցանկացած կին կարող է իրեն այդքան ուժեղ ու ձիգ չպահել, քան եթե մենակ լիներ:

Պատրիկը աչքերը սևեռած նայում էր իր չքնաղ գեղեցկուհուն: Անգամ այդ հասուն տարիքում նա գեղեցկուհի էր: Նրա հոգին փայլում էր մաքրությամբ՝ յուրահատուկ կանացի նրբություն հաղորդելով արտաքինին: 43 Տարեկան էր, սակայն հազիվ 35

կտային նրան տեսնողները: Տաթևիկը չափազանց դրական առուռա ուներ, դա ևս երիտասարդացնում էր նրան՝ չհաշված խնամված մարմինը: Պատրիկը, մկանուտ ձեռքի մատների դանդաղ շարժումները անանկատ տարածելով մինչև աջ ձեռքի նախադաստակը, վայելում էր կնոջ նրբությունը: Հանկարծ մատները հետ քաշեց՝ մտածելով, որ հնարավոր է արթնացնի, բայց արդեն երկար էր քնած մնացել, և բժիշկները խորհուրդ էին տվել որևէ հարմար առիթի դեպքում արթնացնել նրան. ամուսինը այդպես էլ վարվեց: Ձեռքերի ափերի մեջ առավ նրա գունատ ու սառը ձեռքը՝ ցանկանալով իր մարմնի ջերմությունից մի մասնիկ հաղորդել սիրելիին: Տաթևը փոքր-ինչ տարուբերեց գլուխը, անհանգիստ շարժումներ անելով մի քանի վայրկյան, և վերջապես բացեց աչքերը: Հուզվեց, արցունքոտ աչքերով նայեց Պատրիկին, ու նրա դողացող շուրթերը արտաբերեցին մի բառ միայն.

– Երեխաս...

Տաթևիկն ամեն ինչ հասկացել էր և արդեն չէր զսպում լացը, չէր էլ ակնկալում ինչ-որ բան լսել ամուսնուց. Պատրիկի վշտահար դեմքին նայելով՝ արդեն ամեն ինչ պարզ էր դառնում: Արցունքները հոսում էին թույլ հևոցի հետ զուգահեռ: Հոգին կարծես անհույս մի ճիչ արձակեց իր ներսում, սակայն այն դուրս չհորդեց, Տաթևիկը կանգնեցրեց այն: Նա դեռ այդքան թույլ չէր, որ չտիրապետեր իրեն: Նա ունակ եղավ սաստել ինքն իրեն, ասես իր նախկին ներքին ուժը եկած լիներ նորից այցի և ականջին շշնջար՝ «հիշի՛ր, դու ուժեղ ես», և այդ պահին հանկարծ հնչեց մեկ ուրիշ հարց՝ լրիվ անսպասելի՝

– Դու լա՞վ ես,– հարցրեց Տաթևը:

Պատրիկը սպասում էր ցանկացած այլ հարցի, բայց ոչ սա: Անուշ ժպիտը տղամարդու դեմքին ծածկում էր ոչ պակաս արտասվել ցանկացող աչքերի թախիծը: Մի պահ շփոթվեց տարօրինակ հարցից, բայց թուքը դժվարությամբ կուլ տալով՝ պատասխանեց.

– Լավ եմ, ի՛մ կյանք... Ես լավ եմ:

Նրանք այդ պահին այլևս ոչինչ չխոսեցին, ամուր փաթաթվեցին միմյանց, որ իրար ուժ տային հաղթահարելու եղածը: Թե չէ խոսելու ի՞նչ կար, երբ լռությունն ավելի բուժիչ էր թվում: Ճակատագրից նրա ներկայությամբ չեն խոսում, ճակատագիրը ուղղակի ընդունում են ի գիտություն ու կոփվում դրա տված փորձություններով:

Բժիշկները նշեցին, որ շատ ռիսկային կլինի նորից հղիանալը, ցանկալի է այդուհետ խուսափել նման զարգացումներից: Նրանք տեղի ունեցածը բացատրում էին Տաթևի տարիքի հետ կապված բարդ հղիության հանգամանքով:

Տաթևիկը դեռ մի երկու օր պիտի պառկած մնար հիվանդանոցում: Այդ ընթացքում Պատրիկը տուն վերադարձավ, քանի որ Իզաբելին խնամող կինը չէր կարող ևս մեկ գիշեր մնալ նրա հետ:

– Դու տեղյա՞կ ես՝ այդ օրը նա ուր էր գնացել:

– Տաթևն ասել էր, որ ինչ-որ կնոջ հետ է պատահական ծանոթացել, ով իրեն աշխատանքի առաջարկ է արել շատ հարմար պայմաններով, որ կարող էր նաև տնից աշխատել: Գնացել էր սրճարան, որպեսզի նրա հետ հանդիպի:

– Այ քեզ բան, նա ինձ դրա մասին բան չի ասել, ուրեմն աշխատել հա՞: Լավ, ես չեմ հասկանում՝ ինչ

աշխատանքի կարիք ուներ նա: Մի՞թե ես ձեզ ամեն ինչով չեմ ապահովում:

– Ապահովում ես, պա՛պ:

– Այդ դեպքում այդ կապիկությունը ո՞ւմ էր պետք: Ինչո՞ւ է նա ինձ հետ այդպես վարվում: Ես ամեն ինչ անում եմ, որ դուք ոչ մի բանի կարիք չունենաք: Մենք աղքատ ընտանիքներից չենք, ովքեր հազիվհազ հասցնում են իրենց հոգսերը հոգալ, որ նա էլ վազել է աշխատանքի ետևից: Մենք հարուստ ենք, անսահման փող ու ունեցվածք ունենք, իսկ նա ի՞նչ է անում:

– Լա՛վ, հայրի՛կ, մի՛ զայրացիր,– Իզաբելը փորձեց հանգստացնել Պատրիկին, ապա հոնքերը կիտեց ու զարմանքով լի աչքերը ուղղեց դեպի նա,– բայց դա ի՞նչ կապ ունի տեղի ունեցածի հետ:

– Չգիտեմ, Իզաբե՛լ, չգիտեմ: Ավելի ճիշտ, չէ՛, գիտեմ: Ես էլ գիտեմ, որ կապ չունի, ուղղակի զայրացած եմ, բարկությունս ինչի վրա ասես, որ չեմ թափում: Ճիշտ ես՝ այդ հանդիպմանը գնալ-չգնալը ուրիշ թեմա է, եղածի հետ կապ չունի, բայց ամեն դեպքում ես նրա միտքը չեմ հասկանում: Ուղղակի հիմա նրա հետ այդ թեմայով խոսելու հեչ ժամանակը չէ: Հիմա նա չափազանց փխրուն է, հազիվ եմ բառեր ընտրում հետը խոսելիս:

– Ես քեզ ինչ գիտեի, պատմեցի: Ավել ոչինչ չգիտեմ:

– Գիտեմ, շնորհակալ եմ քեզ դրա համար: Ես, քո վիճակը մոռացած, ձայնս անտեղի բարձրացնում եմ քեզ վրա, կներես, աղջի՛կս:

– Այնքան քնքուշ է հնչում, երբ ասում ես «աղջիկս»: Անգամ այն ժամանակ, երբ ո՛չ Արամը կար մեր կյանքում, ո՛չ Տաթևը, քո ձայնն այսքան հարազատ չէր հնչում ականջիս:

– Փոխվել ենք, Իզաբե՛լ, բոլորս փոխվել ենք... Մենք իրար ենք փոխել:

Առավոտյան Պատրիկը նորից Տաթևի մոտ էր՝ հիվանդանոցում: Նրան այդ օրը պիտի դուրս գրեին: Բժիշկները հավաստիացրել էին, որ նրա հետ ամեն ինչ կարգին է, և կարող են դուրս գրել: Ճիշտ է՝ մի փոքր թուլություն դեռ նկատվում էր, սակայն շուտ անցողիկ բան է, արագ կվերականգնվի: Տաթևը թախծոտ աչքերով նայում էր արևի կողմը: Լուսամուտից այն հոժարակամ ներս էր խուժում: Այնքա՜ն հաճելի էր զգալ արևի համը, այնքա՜ն տաք էր այն, ջերմացնող ու թարմություն բերող, սեր էր արևը: Ժպիտ էր բերում Տաթևի դեմքին, բայց հոգու ցավը չէր ամոքում, աչքերը չէին պայծառանում: Երեխաներ պաշտող Տաթևի համար հարվածը չափից դուրս ուժգին էր, հաղթահարելը՝ բարդ:

– Մի շաբաթը բավարար է չէ՞, որ ուժերդ տեղը գան,– հարցրեց Պատրիկը:

– Դե երևի, իսկ ինչի՞ համար ես հարցնում:

– Որ մեկնենք:

– Ո՞ւր:

– Հայաստան:

– Հը՞:

– Ասում եմ Հայաստան: Այդպիսի երկիր կա աշխարհում, գիտեի՞ր:

– Վա՛յ, հերիք է հոգուս հետ խաղաս:

– Հա բայց չեմ խաղում,– Պատրիկը լուրջ դեմք ընդունեց և ցույց տվեց նրան գնված տոմսերը,– սա էլ տոմսերը, ահա ձեռքիս են, նայի՛ր, որ կատակ թեմա չէ: Լիքը փող եմ տվել, մերժում չեմ ընդունելու:

– Լավ, վերջացրո՛ւ: Ինքնաթիռի տոմսի գումարն ի՞նչ է քեզ համար:

– Ճիշտ ես: Մի քանի կոպեկն ի՞նչ է, որ դու դրա համար աշխատանքի էիր ուզում ընդունվել այն դեպքում, երբ փողը մեզ համար երբեք խնդիր չի եղել,– ասաց Պատրիկը, բայց հասկանալով, որ էլի ապուշ բան դուրս տվեց, թեթև արհեստական հազով արագ թեման փոխեց, բայց դա այնքան արհեստական ստացվեց, որ Տաթևի դեմքի ժպիտից դատելով, կարելի էր անվրեպ եզրակացնել՝ խուսանավելու անհաջող փորձ էր:

– Հասկացա քեզ: Եթե կուզես, էլ մտքիս նման բաներ չեմ դնի, իսկ այդ դեպքը շատ պատահական էր ստացվել: Ես կոնկրետ չեմ փնտրել:

«Սիրելիին նեղացնելը այս պահին հակացուցված է»՝ մոտավորապես նման բովանդակությամբ մտքով Պատրիկի գլխին մի մեծ մուրճով տվեց ոմն ենթագիտակցություն, և նա արդարացիորեն վճռեց փակել տհաճ թեման, նորից բացված բերանը՝ ևս:

Գլուխ 7

Վստահ թափ հավաքելով՝ թռիչքուղով դեպի վեր պատրաստվում էր սլանալ աժդահա թռչնակը՝ Էյր Ֆրանսի օդանավը: Բիզնես կլասում հարմարավետորեն իրար դեմ-դիմաց նստած մարդ ու կին, տաք կապուչինոյի բույրը վայելելիս, ինչ-որ բան էին փսփսում: Հետո հենց գավաթները մոտեցնում էին իրար, կեսից հիշում էին, որ կապուչինոն չի ների այդ սիրահար զույգին իրեն ալկոհոլիկ ըմպելիքի տեղ դնելու համար, ու ժպտալով անմիջապես հետ էին տանում դրանք ամեն մեկը դեպի իր կողմը: Տաթևիկը շատ էր ուրախացել, որ Հայաստանի ճամփան են բռնել, նորից իրեն տանն է զգալու: Այն տանը, որը չեն լքում, որին քեզ հետ տանում ես, որ չկարոտես, բայց որին միևնույն ժամանակ թողնում ես, որ անընդհատ հետ գալու առիթ ման գաս:

– Ես վստահ եմ՝ քեզ Հայաստանը դուր կգա:

– Դուր գա, դուր չգա, պիտի ասեմ, որ դուր է գալիս: Ես ուրիշ տարբերակ ունե՞մ,– ուսերը թափահարեց Պատրիկը:

– Ունես, այստեղից այս պահին դուրս թռչելն է, եթե փոշմանել ես իհարկե:

– Փոշմանելու պահով չգիտեմ, բայց այս նեղլիկ անցքից ես դժվար կարողանամ դուրս թռչել:

– Այնպես ես խոսում, կարծես այդ ես եմ քեզ ստիպել գալ Երևան:

– Ստո՛պ, մենակ Երևան չէ: Մենք լիքը տեղեր պիտի միասին գնանք, հատկապես ես անհամբեր սպասում եմ այն մեկին, ի՞նչ էին ասում դրան,– մատներով գլուխը քորեց Պատրիկը և բացականչեց,– հա՜ հիշեցի՝ Տաթևեր ճոպանուղի և Տաթևի վանական համալիր: Ահավոր հետաքրքիր է իմանալ, թե դու այնտեղ այդ ինչ վանական համալիր ես բացել:

– Ես չեմ բացել, գի՛ժ: Դա դեռ 4-րդ դարից կար, իսկ 9-րդ դարում մեծածավալ շինարարություն էր ընթանում, որի արդյունքում վանական համալիրը ամբողջական տեսք ստացավ, ճոպանուղին էլ բացվել է կարծեմ 2010 թվականին, բայց ես դրա բացման հետ նույնպես կապ չունեմ: Անվանս մի՛ խաբվիր, Հայաստանում լիքը Տաթևներ կան, բայց նրանց հետ էլ սա կապ չունի:

– Էլ մի համեստություն արա:

– Համեստություն չեմ անում, սա է ճշմարտությունը:

– Բայց դու... Հենց դու ես իմ թագուհին:

– Լավ, օկ, թագավո՛ր ջան, քո ասածն է: Դու հազիվ էլ մի Տաթևի դիմանաս: Այնպես որ ուրիշների վրա աչքդ չտնգես, նայի՛ր հա՜: Ես քեզ ֆրանսուհիների միջավայրում չեմ խանդում, բայց այստեղ քեզ խելոք կպահես:

– Իսկ ինչո՞ւ այդպես կտրուկ:

– Հավատա՝ մի բան գիտեմ, որ ասում եմ, մերոնցից զգույշ:

– Հա դե քո նման գերող են երևի:

– Երևի,– ծիծաղեց Տաթևը:

Օդանավակայանից հյուրանոց տանող ճանապարհին Պատրիկը ուշադիր զննում էր ամեն ինչ, ամեն ինչից հարցուփորձ էր անում, այնքան, որ հոգնեցրեց: Տաթևը դժկամ դեմքը հառել էր Պատրիկի միամիտ ձևացող հայացքին, որն ասես ասում էր՝ «ի՞նչ պատահեց, ես ընդամենը հարցնում եմ», ինչին ի պատասխան Տաթևի կոնտրհայացքն էլ մեկ ուրիշ բան էր լռությամբ ասում՝ «դե որ իմանաս, ինձ էլ ասա»: Մի խոսքով՝ կյանքը կերավ. ինչքան արձան տեսավ, մանրակրկիտ կենսագրություններն էր պահանջում կնոջից: Տաթևը չդիմացավ.

– Կլինի առանձին-առանձին հանգստանանք, որ իրարից էլ հանգստանանք:

– Լավ, վերջ: Էլ բան չեմ հարցնում, քանի չես թռել վրայիցս, տեսնում եմ՝ ինչքան հմայիչ տղամարդիկ են քայլում փողոցներով, ինչու չէ՝ նաև կանայք:

– Հերիք է գովես, մեզ գովել չի կարելի:

– Ինչո՞ւ,– Պատրիկի հարցական հայացքը պատրաստ էր:

– Առանց այդ էլ մենք մեզ շատ ենք գովում, կողքից համալրում պետք չէ:

– Արդար չես:

– Թող այդպես համարվի, ես իմ կարծիքին եմ:

Հասան Տաթևենց շենքի մուտքի մոտ: Տաթևն իր բնակարանը ժամանակ առ ժամանակ աղքատ ընտանիքներին էր տալիս ժամանակավոր բնակության համար: Սակայն վերջին շրջանում բնակարանը մնացել էր ազատ, և հիմա այն նույնպես անհամբերությամբ սպասում էր տան իրական տերերին, ճիշտ է՝ 7 ամիս դատարկ մնալու արդյունքում փոշու կույտի տակից էր սպասում, բայց այնուամենայնիվ սպասում էր:

Բակում նրանց դիմավորեցին հարևանները՝ ուշադրությունը ամբողջությամբ Պատրիկի վրա: Այնպիսի հետաքրքրասիրությամբ էին նրան զննում, որ ուզում էին հասկանալ՝ սա Սյոման է, Կամոն, թե Վալոդը: Կռահելով հարևանուհիների մտքերը՝ Տաթևը նրանց գործը հեշտացրեց.

– Այո՛, ճիշտ եք: Դուք՝ բոլորդ, ճիշտ եք: Նա է Սյոման, Կամոն և Վալոդը, երեքը մեկում: Տարիների ձեզ տանջող հարցի պատասխանը հիմա ձեր առջև է, վուալյա՛,– ձեռքերով կիսապարային շարժում արեց դեպի Պատրիկը, ասես պաշտոնական ձևով ներկայացներ նրան: Իսկ Պատրիկը հոնքերը կիտած, խոժոռված նայում էր իր շուրջը տեղի ունեցող աժիոտաժին: Կծկվել էր ակնհայտ դիսկոմֆորտ միջավայրից: Նա այնքան իրեն անհարմար էր զգում, որ քաշեց ջրիկացած Տաթևի թևից՝ շշնջալով նրա ականջին.

– Այդ ի՞նչ ես ասում նրանց, որ այսպես ապշած ինձ են նայում, չեմ հասկանում: Ոնց որ կրկեսի ծաղրածու լինեմ, տա՛ր ինձ այստեղից:

– Գնում ենք, գնում,– քրքջալով ասաց կինը:

Հաջորդ օրն՝ առավոտյան, երբ արդեն պատրաստվում էին տնից դուրս գալ, հանկարծ բղավոցներ լսվեցին: Տարօրինակ աղմուկ էր շենքում: Կոնկրետ հասկանալի չէր, թե որ դռնից կամ հարկից են լսվում ձայները: Դրանք ժամանակ առ ժամանակ նորից լսվում, այնուհետև կորչում էին օդում: Պատրիկը սկսեց անհանգստանալ, մի փոքր նաև վախենալ: Տաթևը հանգստացրեց նրան, թե ընտանեկան վեճեր են, սովորական բան է, երբ բանը բանից անցնում է, մեկ-մեկ պայթյուն է տեղի ունենում: Այնուհետև հանդարտվում

են բոլորը ու առօրյան իր նույն հունով շարունակվում է այնպես, կարծես ոչինչ չի եղել:

– Հա բայց եղել է չէ՞,– ասում է Պատրիկը:

– Հա բայց անցավ չէ՞,– պատասխանում է Տաթևը:

– Հա բայց սա լուծում չէ, չէ՞:

– Արի գոնե դու լուծումներից մի խոսա, լա՞վ,– դուռը կողպելուց հետո անմիջապես շրջվեց դեպի ամուսինը Տաթևը և անհաղորդ դեմքի արտահայտությամբ, փոքր-ինչ մռայլված պատասխան տվեց նրան: Տաթևի նուրբ դիմագծերը ասես այդ անախորժության անուղղակի ազդեցությունը սկսեցին կրել իրենց վրա: Թույլ կնճռոտվեց ճակատը, դեմքը սփրթնել էր, նա տխրությամբ նայեց նորից ամուսնուն և շարունակեց խոսել.– Երբ մեջդ ես պահում շատ բան, մի օր պայթելու ես, հետո նորից նույնը, ու նորից պայթելու ես: Սա մի օր դառնում է սովորական, մի օր դառնում է նորմա, առօրեական մի բան, հաճախ կրկնվող մի բան: Մարդիկ տարբեր են, ճակատագրերը ևս, ու դժվար է ձուլվող ճակատագրերի մեջ գտնել 100 տոկոսանոց համապատասխան համընկնումներ, երբ ամեն ինչ իդեալական է դասավորվել՝ բոլորի սրտով: Այդպես չի լինում, բայց հայերիս մեջ միշտ անհագ ձգտում կա, որ պարտադիր այդպես լինի, ինչը և խանգարում է հենց այդպես լինելուն:

Հաջորդ օրերին աղմուկ այլևս չլսվեց, հանդարտ էր շենքում, բակում ընդհանրապես: Խաղաղություն էր կամ դրա պատրանքը, երբ ստիպված ես համակերպվել, որ խաղաղություն լինի կամ դրա պատրանքը, բոլորի համար՝ խաղաղություն, իսկ քեզ համար՝ պատրանք: Դու տեսնում ես, որ այն պատրանք է, ցավոք միայն դու ես դա տեսնում, քանի որ միայն դու ես

ապրում քո կյանքը, միայն հոգիդ է զգում, թե ինչպիսին է կյանքդ: Հոգիդ է հավերժ ընկերդ, որովհետև նա ցավեցնել չգիտի: Շատ ենք վազում մենք ձևի հետևից, մոռանում բովանդակությունը, մոռանում պատճառները, ինչի արդյունքում ձևի մեջ դնում՝ բովանդակություն, արդարացնում՝ պատճառները: Այս ամենի մեջ գտել են, չգիտեմ ո՞նց, բայց գտել են ինչոր տրամաբանություն, ու գտել են դրանք հայերը: Այդ տրամաբանությունը հայերը պաշտում են: Հպարտ բացականչելով իրենց յուրօրինակության մասին՝ մեխել են այդ յուրօրինակությունը հենց այդ կեղծ տրամաբանության մեջ՝ այն դարձնելով հայերեն ու կապել ավանդապաշտ ինքնությանը, ասես այդ ավանդապաշտությունից այն կողմ ոչինչ չկա և չի կարող լինել:

Ի՞նչ է հայ կնոջ համար ընտանեկան հարաբերություն ասվածը: Դրա հիմքում շատ հաճախ սերն է կամ դրա նման մի բան, բայց մաշվող բան: Եթե այնպես է ստացվում, որ պարզում ես քեզ համար, որ սեր չէր դա, այլ դրա նման մի բան, սկսվում են խնդիրները, ոչ բոլորի մոտ իհարկե, բայց եթե քեզ մոտ սկսվում են դրանք, ուրեմն պայքարը նախ սկսելու է սրվել քո ներսում ու այդ պայքարի արդյունքից է կախված՝ ինչ պայքար դու կտանես դրսում՝ ընտանիքիցդ ներս: Մի խոսքով՝ տարբեր են, շատ տարբեր են այդ հարաբերությունները, տարբեր են դառնում... Տարբեր ենք դարձնում: Բայց դրանք մերն են, մենք ենք ծնել, մենք ենք տանում, տանում ամեն ինչ հանուն ընտանիքի, հանուն երեխաների, բայց ոչ երբեք հանուն մեզ: Մենք՝ կանայքս, երբեք չենք ասում, որ տանում ենք ամեն մի դժվարություն ընտանեկան հարաբերությունների մեջ հանուն մեզ, որովհետև այդ

ընտանիքը միայն երեխաներին չէ, որ պետք է: Այդ ընտանիքը մեզ էլ է պետք, իսկ եթե պետք չէր, ինչո՞ւ ենք կազմել, ուրեմն գիտակցված զոհել ենք ինչ-որ բան, որ ստանանք ուրիշ բան: Հետո այդ ուրիշ բանը հնարավոր է այդքան էլ մեր պատկերացրածի պես դուրս չի եկել, արդյունքում հիասթափվել ենք, արդյունքում սթրես, արդյունքում կռիվ, դրան հետևող տուրուդմփոց, ըմբոստություն, բղավոցներ, երեխաների լացի ճիչեր, մոր լացող աչքեր, տան տղամարդու կատաղած շարժուձև և... Ժպիտ, լայն ժպիտ: Ո՞նց թե ժպիտ, մի րոպե՛, ի՞նչ ժպիտ, բայց գործը ընդհանրապես ժպիտին հասնելու միտք չուներ, ո՞նց թե չուներ, բա հարևաննե՞րը, որոնք տուրուդմփոցի կուլմինացիայի ժամանակ միամիտ անցնում էին, ուրեմն պետք է ժպիտ... լայն ժպիտ: Եվ այդպես տարիներ, և այդպես տանջվել... Եվ այդպես տանջվել միայն մենք գիտենք, և այդպես տանջանքով հպարտանալ միայն մենք գիտենք հանուն երեխաների, հանուն ծնողների պատվի, հանուն հայու գենի անբիծության, հանուն այդ գենի կոսմետիկ տեսքի պահպանման, հանուն ամեն հնարավոր ու անհնարինի, մեզ հետ կապված ու չկապված թեմաների, բայց ընդդեմ մեզ, ընդդեմ մեր «ես»-ի, ընդդեմ մեր ներսի, որը խռովում է մեզնից: Արդյունքում խռովում ես ամուսնուցդ, ծնողներիցդ, հարևաններիցդ, աշխարհից, բայց ոչ երբեք երեխաներիցդ, որովհետև նրանք են այդ բոլոր հանուններից ամենահանունը: Նրանց ես դու ստացել որպես ընծա, որպես այդ հանունների մասին անվերջ մտորումների տեղապտույտում լող տվող բախտավոր անբախտի: Սա մեզ մոտ, իսկ այնտեղ... Այնտեղ մի քիչ ուրիշ է, այնտեղ մի քիչ շատ

ուրիշ է: Այնտեղ անհասկանալի է, այնտեղ հասկանալիորեն անհասկանալի է: Այնտեղ հանունները քիչ են, այնտեղ դրանց սովոր չեն, այնտեղ հանունների առաջին հորիզոնականում մեր մոտի այն խեղճ ու խռոված «ես»-ն է, այնտեղ այն խռոված չէ... Այնտեղ Եվրոպան է, որտեղ հանունները քիչ են...

Վառ երևանյան երեկո էր: Հիմա կհարցնեք՝ վառ երեկոն որն է: Վառ արևը կարող է լինել, իսկ երեկոյան արև չկա: Կա, ժողովո՛ւրդ, արև կա: Այն մեր մեջ է: Մեր ազգի կյանքով լի տեսակի մեջ է, ով հուզվել գիտի, ով հուզել գիտի, ով երգել գիտի, ով պարել գիտի, ով ուղղակի գիտի: Գիտի, թե ինչպես կարելի է լացի մեջ խնդալ, ատելության մեջ սիրել և ապրել, պարտադիր ապրել, ինչ էլ որ լինի, մեկ է ապրել: Սա չգիտեին ու չգիտեն մեր թշնամիները: Նրանք սա չեն հասկանում, դրա համար մենք դեռ կանք, և դրա համար նրանք դեռ չեն հասկանում, թե այդ ոնց մենք դեռ կանք: Մեր թերություններով հանդերձ մեր տոկունությանը շատ նախանձողներ կգտնվեն:

Երեկոն վառ էր հիմնականում նրա համար, որ Երևանի ուղիղ սրտում, այն է՝ Կասկադում, մարդկանց բազմություն էր հավաքվել: Բացօթյա համերգ էր, չնկատվող, բայց բազմավոլտ էներգիա, ամենաուժեղ էներգիան, դարերի փորձություն հաղթահարած մշակույթի կատաղած էներգիան, որը հիասթափության միջից ուզում էր ուժ գտնել ու նորից վեր հառնել, գոռալ իր վեհության մասին, գոռալ որ կա, չի մեռել ու չի մեռնի: Ոչ մի ազգի չի հաջողվի տապալել այն, երբ ուժը ներսից է... սրտից:

– Այնքան խաղաղություն կա այստեղ: Այստեղ կարելի է ոչնչից չվախենալ,– Պատրիկը սկսեց

բարձրաձայն մտորել: Նրանք նստած էին Կասկադի աստիճաններին:

– Իսկ այդ ինչի՞ց պիտի վախենայիր,– Տաթևը ծիծաղելով մի հետաքրքրական հայացք նետեց նրա վրա:

– Մարդկանցից օրինակ:

– Ինչի՞, մարդիկ քեզ ի՞նչ են արել:

– Ոչինչ, բայց մեկ է մարդը մարդուց վախենում է այս երկրագնդում, հատկապես երբ անծանոթ է, իսկ այստեղ բոլորն անծանոթ են, բայց վախի մի կաթիլ չկա ներսումս,– անկեղծացավ Պատրիկը:

– Ի՞նչ ես անկապ փիլիսոփայում, սովորական մարդիկ են էլի, ինչպես աշխարհի բոլոր երկրներում:

– Սխալվում ես, ու զարմանալին այն է, որ այդ ես եմ քեզ սրանում համոզում, այլ ոչ թե դու ինձ: Սա քո երկիրն է, դու նրա գովքով պիտի զբաղված լինեիր, բայց չգիտեմ, թե ինչու հակառակն է:

– Միգուցե իմն է, հենց դրա համար չեմ նկատում:

– Ա՛յ, լավ ասացիր, չէի մտածել այդ տարբերակը: Թույն երաժշտություն է հնչում չէ՞, սիրելի՛ս:

– Հենց նոր քո գովասանքին արժանացած երկրում ուրիշ բա՞ն էիր սպասում,– Տաթևը գլուխը նորից թեքեց դեպի ամուսնու կողմը:

– Իհարկե ոչ:

– Բա՜ տեսնո՞ւմ ես:

Արդեն մթնել էր: Աստղերը կամաց-կամաց հայտնվում էին երկնքում: Մեզանից շատ հեռու էին դրանք, բայց մեզ շատ մոտ իրականում: Լույսը կարող ես մոտիկից էլ չտեսնել, երբ կույր է հոգիդ: Լույսը կարող ես հեռվից էլ մոտեցնել, երբ մաքուր է հոգիդ: Պատրիկի լույսն իր կողքին էր, կողքին նստած, մի

փոքր կուչ եկած, կարճաթև ճերմակ բլուզը հրաշալի համադրվում էր թուխ մաշկի հետ: Աննշան ճաքճքել էին շուրթերը: Տաքություն էին տենչում նրա փոքր, բայց բնական շուրթերը: Պատրիկը պատրաստ էր իր համբույրով տալ նրանց այդ տաքությունը, սակայն Տաթևը համաձայն չէր. ամաչում էր: Տաթևի հիացմունքով լցված աչքերը հուզվեցին երգի մեղեդիից ու բառերից, ասես իր մասին էին երգում: Պատրիկը վստահ էր՝ այո, նրա մասին էին:

Մարոն շատ խորոտ էր,
Հայելին ի՞նչ կեներ:
Ձեռքին մոմե մատներ ուներ,
Մատնիքն ի՞նչ կեներ,
.....

Երգը հնչում էր: Երգը սահում էր օդի միջով: Այն ընդունակ էր հարթել ամեն ինչ: Ցանկացած մարդկային զգացմունք երգն ունակ է կրկնօրինակել բնօրինակից լավ, բնօրինակից բնական: Երգն ավարտվեց, դրան եկավ հաջորդելու մյուսը, հետո մյուսը...

Թռչեի մտքով տուն,
Ուր իմ մայրն է արթուն:
Տեսնեի այն առուն,
Կարոտով ես անհուն,
Որ ամեն մի գարուն
ջրերով վարարուն
Կարկաչում էր սարերում:
.....
Հայրենիքն իմ սրտում,

Թե չընկնեմ ես մարտում:
Ա՜խ, իմ մայր թանկագին,
Տուն կգամ ես կրկին,
Կսփոփեմ քո հոգին
Համբույրով, սրտագի՛ն,
Կսեղմեմ քեզ իմ կրծքին:

Այստեղ էր կիթառը, այստեղ էր ջութակը: Նվագը դանդաղ մարեց: Երգողների ու նրանց ձայնակցողների գրեթե չլսվող սուլոցներով ավարտվեց Մարտիկի երգը: Սփոփանք և միևնույն ժամանակ ուժ հաղորդող այդ երգերը պետք էին, ուշքի գալ էր պետք, ընկած տեղից վեր կենալ էր պետք նախևառաջ հոգեպես:

Համերգը ավարտվեց, ծափահարություններ հնչեցին, ոգևորություն, սուլոցներ, բրավոներ... Մարդիկ ապրում էին... Մարդիկ փորձում էին ապրել:

– Վաղը Սյունիք ենք գնում,– ծափահարություններից առաջացած աղմուկի մեջ անակնկալ շշնջաց կնոջ ականջին Պատրիկը:

– Սյունի՞ք:

– Ըհը՛ն... Գնում ենք, ես այդպես եմ որոշել,– Պատրիկը նորից հաստատեց իր մտադրությունը:

– Մի քիչ էլ, ու դու կարող ես այստեղ գիդ աշխատել:

– Իսկ դու այստեղ անգամ տաքսիստ չես կարող աշխատել:

– Ես վարել գիտեմ,– ասաց Տաթևը:

– Տաքսիստը դա միայն վարելը չէ,

– Ինչպիսի՜ ծանոթ ոճ,– Տաթևը ծիծաղեց,– վերջ, որոշված է, ես այլևս մեր քաղաքական անցուդարձից քեզ չեմ պատմելու, թե չէ կրկնօրինակում ես:

Համերգն ավարտվել էր, բայց մարդիկ չէին շտապում հեռանալ: Նրանք նորից ինքնաբուխ համերգի տպավորություն ստեղծեցին, այս անգամ կազմակերպիչն ու անցկացնողը հենց նրանք էին՝ սովորական երևանցիներ:

Սկսեցին նորից երգել՝

Առաքել, Մուշեղ, լեռներից իջան,
Առաքել, Մուշեղ, լեռներից իջան,
Ավերակ ջաղաց, հոգի՛ ջան, օթևան եղավ,
Ավերակ ջաղաց, հոգի՛ ջան, օթևան եղավ,

Դե՛ զարկե՛ք զարկե՛ք,
Դե՛ զարկե՛ք քաջ-քաջ:
Դե՛ զարկե՛ք զարկե՛ք
Նշան ի ճակատ:
Տիրոջ սուրբ կամքով, հոգի՛ ջան,
Մենք կերթանք առաջ:
Տիրոջ սուրբ կամքով, հոգի՛ ջան,
Մենք կերթանք առաջ:
.....

Պատրիկը կամացուկ ձայնով ձայնակցում էր նրանց: Տաթևը նորից նայեց նրա կողմը ու նկատեց տխուր աչքերը նրա, սևեռուն հայացքը նրա, կմկմացող ձայնը նրա: Նա ուղղակի երգում էր, նա ուղղակի ուզում էր երգել, երգել մեր պես, հայ զգալ իրեն, հայի ցավը զգալ, հայի ուժը զգալ: Տաթևը նայում էր իր ամուսնուն ու սիրտը խինդով էր լցվում: Նա հասկանում էր, որ այս ճամփորդությունը Պատրիկը կազմակերպել էր միայն մի բանի համար, որ ժպիտ պարգևի

իր սիրելիին նրա հայրենիքի գրկում: Դա թեթևություն կբերի Տաթևի հոգուն, միգուցե մոռացնել տա վիշտը: Դա ամենալավը Հայաստանում հնարավոր կլիներ, որտեղ Տաթևը տանն է, որտեղ բոլոր հայերը տանն են: Այս ճամփորդության ընթացքում, սակայն, Պատրիկը իրեն ավելի մոտ զգաց հայերին, քան կարելի էր պատկերացնել: Նա միշտ էր հետաքրքրվում Հայաստանով: Իր հետաքրքրասիրությամբ պայմանավորված ստիպում էր Տաթևին ևս ուշադիր լինել այստեղի անցուդարձին և մի անգամ նա ասաց.

– Է՜հ, որ հետևում ենք ի՞նչ: Ի՞նչ ենք անում Հայաստանի համար, հետևելը ոչ մի բան է, պետք է գործել, պետք է այնտեղ գործել, անել մի բան, շարժել քարացածը, ստեղծել, առաջ տանել: Ես մի օր գործուղելու եմ որդուս Հայաստան, մասնաճյուղ հիմնելու և գործերը տնօրինելու համար, գոնե սկզբնական շրջանում, մինչ հայաստանցիների միջից խելքը գլխին ու վստահելի կառավարիչ գտնեմ:

Իզաբելի ավտովթարից հետո, դրանից բխող Արամի անկառավարելի հույզերի պատճառով, որոնք այդ շրջանից սկսած աննկատ կերպով դանդաղ խորանում էին, իսկ երբ նկատվեցին ծնողների ու շրջապատի կողմից, արդեն ուշ էր, ստիպեցին փոխել առաջնահերթությունները: Նման իրավիճակում Հայաստանի հետ կապված պլանները դարձան ոչ կարևոր, որոշ չափով նաև մոռացված, և ահա այս ճամփորդությունը ինքնատիպ կերպով կենդանացրեց դրանք: Պատրիկը որոշեց, որ եթե Արամին չի կարողանում համոզել տարվել Հայաստանով այնպես, ինչպես ինքն է տարված, ապա դա խոչընդոտ չպիտի հանդիսանա այստեղ իր պլանները իրագործելու

հարցում: Սկսեց գործել հայաստանյան հանգստին զուգահեռ: Շատ բան այդ կարճատև ուղևորության ընթացքում չէր հասցնի, բայց վճռական էր նպատակին հասնելու իր ցանկության մեջ:

Հաջորդ օրն՝ առավոտյան, Տաթևի մեքենայով ճանապարհվեցին Սյունիք: Ղեկին Պատրիկն էր, որովհետև Տաթևին վերապահված էր հետևյալ «շատ կարևոր» գործառույթը՝ բացօթյա ավտոմեքենայի իր նստատեղից պարբերաբար վեր թռչելը ու աղմուկ-աղաղակով ազդարարելը՝ «Սյունի՛ք, մենք գալիս ենք»: Թե ասա Սյունիքն այնքան դարդ ու ցավ ունի, որ ձեր գալուն ու առավել ևս բարձրացրած շուխուռին կարոտ չի ընդհանրապես, բայց դե նրանց մեկ էր: Նրանք տուրիստ էին, իսկ տուրիստներին ամեն ինչ մեկ է: Թևակերտ սյուների խրոխտ ուղեկցությամբ մուտք գործեցին Հայաստանի հարավային դարպաս՝ չքնաղագեղ Սյունիք: Ոլորապտույտ ճանապարհներից պարբերաբար Պատրիկը դժգոհում էր, բայց և փաստում՝ ախր սիրուն է, շատ է սիրուն, մանավանդ երբ գլուխդ բարձրացնում ես, և երկու իրար մոտ, բայց նաև իրարից հեռու ժայռերի պարն ես նկատում գլխավերևումդ, իսկ անամպ ու պարզ երկինքն այդ ժամանակ նրանց միջև անէական միակ պատնեշն ասես լինի: Գեղեցիկ էր երկինքը, այն նրբագեղ պարուհու մարմնի օձագալար շարժումների նման կոտրատվում և ձուլվում էր անփայլ ոսկի հագած ժայռերի արանքում: Ժայռերն ասես արտաքին աշխարհից պաշտպանեն նրանց արանքով անցնող նեղլիկ ասֆալտապատ ճանապարհը: Այդժամ հասկանում ես՝ Սյունիքն իր թևերն էր փռել: Տաթևի վանական համալիրում եղան, Պատրիկը ահավոր տպավորված էր:

Ընթացքում էլ չէր խորշում մի քամի անգամ իր կնոջ նյարդերն ուտել՝ ասելով, որ ինքը համոզված է՝ Տաթևի վանական համալիրի անվանումը իր համեստ ու խելացի կնոջ պատվին է դրված, այլ տարբերակներ չեն ընդունվում: Դե արի ու այս հաստակող ֆրանսիացուն հակառակում համոզիր, պարզապես չի լսում, ինքն իր համար որոշել է և վերջ, ուզում եք մեջտեղից ճղվեք:

Կանգ առան ճանապարհին մի քիչ հանգստանալու, նստեցին խոտերի վրա, նայում էին հայաստանյան հրաշքին՝ բնությանը: Ինչքա՜ն բախտավոր ենք մենք, որ հենց այս հողն է Աստված մեր տունը դարձրել, և ինչքա՜ն անխելք ենք մենք, որ այն մեր ընդհանուրը չենք համարում, այլ սկսում ենք մեջ-մեջ անել, արդյունքում կորցնում ենք, արդյունքում կորցրել ենք շատ բան, որ այս օրին ենք հասել: Գոնե հիմա խելքի գանք, գոնե հիմա ընկալենք՝ հողը մերն է, մենք՝ հողինը: Հողը պահում են ժամանակի պահանջներին համահունչ: Եթե ժամանակին հողը պահում էին կռվով, ապա հիմա հողը պահում են տնտեսությամբ, որ կռիվ չլինի: Ինչո՞ւ մենք մեր ժամանակի հրամայականը չենք ընկալում: Ինչո՞ւ ենք ուզում, որ աշխարհը կանգնի ու սպասի մեզ: Ա՜խր, նա չի կանգնելու, մենք պետք է շարժվենք տեղներիցս ու ձև գտնենք հասնելու նրան, անելանելի մի ձև, պատահական մի ձև, ցնորամիտ մի ձև, որ թռչենք: Տանք թևեր ինքներս մեզ ու մեր կողքինին, ու թռչենք բոլորով: Մնալով մեր տեղում՝ թռչենք ինչպես Տաթևն է, ամուր գամված լինելով հողին, նա միևնույն է թռչում է: Այդ վանքը ճախրում է, ինչո՞ւ չենք կարող մենք էլ ամեն մեկս մեր տեղում նրա նման ճախրել, որ Հայաստանը ճախրի:

– Ինչո՞ւ տխրեցիր, մտքերդ չի ստացվում կարդալ: Դրանք կարծես շատ խորն ես պահել այս անգամ,– հարցրեց Պատրիկը:

– Խորը չեմ պահել, դրանք ինքնաբերաբար են թաքնվել: Ցավալի շատ բան կա սրտումս:

– Ասում եմ չէ՝ տխուր ես: Ի՞նչ է եղել, անո՛ւշս:

Վերջին փաղաքշական բառից հաճելիորեն թեթև դող անցավ Տաթևի մարմնով: Հավանաբար այնքան քնքուշ լսվեց այդ վերջին բառը նրա ականջին, որ այտերը շիկնել էին (դրանք սովորաբար ոչ մի պարագայում չեն շիկնում): Վաղուց չէր զգացել Պատրիկի ձայնի նման փափկությունը: Ամուսինը ձեռքի մատների նուրբ շարժումներով շոյում էր Տաթևի գլուխը՝ այն հենած իր ուսին, հետո թեքեց իր գլուխը նույնպես դեպի ներքև, որ իրենց շշուկով խոսակցությանը ոչ ոք ականջ չդնի, բայց ես դրել էի: Այդպիսի անշնորհք բաներ մեկ-մեկ անում եմ, ժողովո՛ւրդ, չնեղանաք:

– Քեզ այս վերջերս չեմ ասել, որ սիրում եմ:

– Այդ քո ասած «այս վերջերս»-ը մոտ մի երկու օր է:

– Դա էլ է վերջերս, ինձ համար դա վերջերս է, քանի որ ես անդադար պետք է ասեմ, որ սիրում եմ քեզ, իմ անգի՛ն,– լսվեց Պատրիկի մեղմ ձայնը՝ աչքերը պարզ երկնքին ուղղած, թևերով փարվել էր կնոջը:

– Իսկ ինչո՞ւ, ի՞նչ պարտադիր է այդ «անդադարը», ես ոչ մի տեղ չեմ պատրաստվում փախչել քեզանից, որ դու էլ ջանաս ինձ կողքիդ պահել,– նայեց ամուսնուն, թեթև զարմանք կար Տաթևի կլորացած աչքերում:

– Քեզ կողքիս պահելու համար չէ, որ ասում եմ՝ սիրում եմ, ես քեզ ուղղակի սիրում եմ... շատ:– Պատրիկի մուգ դարչնագույն աչքերը լցվեցին արցունքներով,

որոնք սակայն չթափվեցին, նա իրեն զսպեց: Նույնը կատարվեց նաև Տաթևի հետ, բայց նա իրեն չզսպեց: Պետք էլ չէր. սիրած տղամարդու գրկում կարիք չկա ուժեղ ձևանալ, սիրած տղամարդու գրկում ձևերը չքանում են:

– Այդպես էլ չասացիր՝ ինչն է տխրությանդ պատճառը:

– Ես մի պահ կարոտեցի Հայաստանս:

– Կարոտեցի՞ր,– զարմանքից հոնքերը կիտեց Պատրիկը ու հայացքը երկնքից իջեցրեց,– բայց մենք այստեղ ենք, ինչո՞ւ պիտի կարոտեիր:

– Կարոտեցի այն Հայաստանս, որի ժամանակ այստեղ չէի, բոլորին կարոտեցի, անգամ անծանոթներին ու նախանձեցի, որովհետև նրանք այստեղ էին, ես՝ ոչ:

– Դու էլ իմ կողքին էիր, իմ կողքին լավ չէ՞,– Պատրիկը դեմքը մոտեցրեց Տաթևի դեմքին շատ մոտ, ասես ուզեց համբուրել նրան ու թույլ հպվեց նրա շուրթերին:

– Շատ լավ է քո կողքին, անասելի լավ, երջանկություն է քո կողքին լինելը:

– Բա էլ ի՞նչ կա, կարոտում էիր, ես էլ բերել եմ, որ կարոտդ առնես:

– Քիչ է, շատ քիչ է, կարոտս անհուն է, Հայաստանս՝ մեծ,– Տաթևը մի պահ դուրս հանեց իրեն Պատրիկի գրկից, կրծքավանդակը լայնացավ, թևերը պարզել էր վեր, հագեցնող խորը շունչ քաշեց, ուզում էր ձեռքերով ցույց տալ, թե ինչքա՜ն է մեծ Հայաստանը: Բայց Պատրիկը նորից նրան առավ իր գիրկը՝ ասելով.

– Դե լա՜վ, այդ մեկը չափազանցրիր: Ֆրանսիայի քարտեզը ցույց տա՞մ, չնայած Ֆրանսիան էլ այնպես

չի, որ շատ մեծ է: Ա՛յ, ձեր «դաշնակից» Ռուսաստանի քարտեզը արի ցույց տամ, տեսնես՝ մեծը որն է:

– Մեծությունը չափը չէ, մեծությունը սահմանների երկարությունը չէ: Մեծությունը սիրտն է: Այն մեզ մոտ մեծ է, միամիտ է ու հավատացող, տեղի-անտեղի հավատում է, տեղի-անտեղի հույս է փայփայում այդ սիրտը, շատ հաճախ լքվում, շատ հաճախ մենակ է մնում իր հույսերի հետ միասին:

– Ոչ ոք այս կյանքում մենակ չէ, Աստված կա: Նա բոլոր մարդկանց ու ազգերի հետ է, մեզ բոլորիս պաշտպանում է, բայց այնպես է պաշտպանում, որ չենք նկատում, և մեզ թվում է, թե լքել է: Բայց Նա մեզ չի լքել, Նա պարզապես վերջում է խոսում, իսկ երբ Նա խոսում է, լռում են բոլորը,– ասաց Պատրիկը:

– Այս վերջին պատերազմը (2020 թ.) եկավ ապացուցելու՝ մարդը թանկ է: Այնքան թանկ է, որ մարդկանց հասու չէ հասկանալու, թե որքան թանկ է մարդը: Իմաստությունը այն քիչ բաներից մեկն է, որ Աստված մեկնում է քեզ ձեռքի ափի մեջ խնամքով պահած, որ վերցնես, բայց պիտի այնքան իմաստություն ունենաս, որ քեզ մեկնած իմաստությունը ֆայմես վերցնել: Ամեն տեղ իմաստության պակաս կա՝ մեզանում, աշխարհում, մեր թշնամիների մեջ: Մենք մեղավոր էինք, որ չէինք գոռում, աշխարհը մեղավոր էր, որ միայն գոռացողին էր լսում:

Տաթևի աչքերից երկու արցունքի կաթիլ գլորվեցին ցած, մեկը շտապում էր, մյուսը՝ ոչ: Սկսեց երգել, նրա ձայնը շտապում էր, արտասանվող բառերը՝ ոչ: Արտասանվող բառերն ասում էին՝ «կա՛նգ առ, երգո՛ղ, որ հասնենք քեզ, որ հասցնենք քեզ այն, ինչ ասում

ենք, չնայած եթե որոշեցիր երգել, ուրեմն արդեն հասկացել ես, երանի մյուսներն էլ հասկանան»:

Յորենի հասկերի արտն ես դու, ի՛մ
Երկիր,
Ծիրանի կարոտի կյանքն ես դու, իմ
պի՛նդ երկիր,
Տա թևեր հավատքիդ խաչով հույսի
Երկիր,
Նարեկյան սուրբ գրչով դաջված հավետ
լո՛ւյս երկիր:

Տաթևի ձայնը հնչում էր թախծոտ, բայց վեհ: Հետո անբիծ լռություն, մտածել էր պետք կորստի ու հավերժի մասին: Նրանք երկուսն էլ անընդհատ են մեր պարագայում: Կորուստն այնքան անընդհատ է, որ թվում է՝ օրինաչափ է, բայց, ա՛խր, այդպես չէ: Մյուս ազգերի համար այդպես չէ, այդ դեպքում մեզ համար ինչո՞ւ է այդպես: Հավերժը մեր կողքով քայլում է և ասում. «Կորուստդ վերջինը չի լինի, բայց դու վերջինը կլինես, ով ողջ կմնա հզորների ոտքի տակ ընկած, հզորներից տրորված, հզորներից տառապած, որովհետև դու ես նրանց վերջը լինելու: Չարը հաղթում է, բայց ոչ մինչև վերջ, և նրա վերջը սկսվում է, երբ դեմ է առնում քեզ, նույն է այսօր, նույն է հիմա: Այն հիմայում, որ հասկանալ է պետք և՛ քեզ, և՛ չարին, բայց չարը չի հասկանում, որ քոնը չի մարսելու: Թվում է, թե երբ հարցը հասնում է քեզ, աշխարհն ինչ-որ տեղ գործուղման է լինում: Քեզ դաղելու համար երբեք պատահական պահ չի ընտրվում. աշխարհն ինչ-որ տեղ գործուղման է լինում»:

Տաթևի մարմնով մեկ սարսուռ անցավ, կուչ էր եկել: Նա մտքերով ուրիշ տեղ էր, շատ մոռացված մի տեղ, տխուր մի տեղ: Նա կարծես անզգայացել էր: Աչքերով փնտրում էր քամին: Աչքերով գնում էր քամու ետևից: Քամին սահմաններ չի ճանաչում, քամին թեթև է, մարդիկ՝ ծանր: Քամին ունակ է ցրել ծանրությունը, դրա համար էլ մարդիկ փնտրում են նրան, կանչում, փորձում վազել հետևից, բայց չեն հասնում, որովհետև քամին թեթև է, մարդիկ՝ ծանր:

– Երբ հորեղբայրներս զոհվեցին արցախյան առաջին պատերազմում,– նորից լռությունը խախտեց Տաթևը,– ես 13 տարեկան էի: Մայրս լաց էր լինում, ամենածանր շրջանն էր: Արցախի մոտ 45 տոկոսն էր մեր վերահսկողության տակ, ու ես պատահաբար գիշերն արթնանում եմ ուշ ժամին: Ականջիս հասնում է մորս հեծկլտոցի ձայնը: Նա վախենում էր, որ հայրս նույնպես չի վերադառնա, և կզոհվի հորեղբայրներիս պես. նրանց մարմիններն արդեն բերել էին: Նա հեկեկում էր պատշգամբի պատին հենված, վիատված: Մայրս չգիտեր, որ ես իմ ննջասենյակից հետևում եմ իրեն: Հայրս բարեբախտաբար ողջ վերադարձավ պատերազմից, բայց մեր կյանքը այլևս առաջվանը չէր լինի երբեք: Մայրս հաճախ ասում էր՝ «Երազում եմ մի օր Մարս թռչել, միգուցե այնտե՞ղ մարդկություն գտնեմ»: Այդ խոսքերը միշտ ականջիս են:– Տաթևը նորից լռեց, սրբեց արցունքներն աչքերից, հավաքեց մտքերը, որ շարունակի խոսել.– 11 տարի առաջ, երբ ծնողներս ավտովթարից մահացան, ես մտածում էի չեմ դիմանա, չեմ կարողանա, աշխարհն աչքիս վերջացած թվաց: Բայց Արամի գոյությունն ինձ սթափեցրեց, օգնեց հասկանալ՝ հանձնվելու իրավունք չունեմ:

Ծնողներս ինձ միշտ ուժ էին տալիս: Նրանք ինձնից երես չթեքեցին, երբ իմացան, որ հղիացել եմ քեզանից: Ուղղակի ընկեր էին... ուղղակի մարդ... Մարդ էին ծնողներս, իսկական մարդ: Եթե նրանց վերաբերմունքը իմ հանդեպ այն չլիներ, ինչպիսին, որ եղավ՝ հոգատար, հասկացող, չկոպտող, ես երևի չհասնեի այսօրվան ու կողքիդ նստած չլինեի... Ես երևի չլինեի...

Ամուսինը խորը շունչ քաշեց, մտորելու շատ բան կար, թրթռուն ձայնով ասաց.

– Շարժվե՞նք կամաց-կամաց:

Վերադարձան Երևան, նորից Պատրիկն էր ավտոմեքենայի ղեկին: Կանգնեցրել էին մեքենան ու ինչ-որ բան էին փնտրում մեքենայի մեջ, հավանաբար կարևոր փաստաթղթեր: Տաթևիկը մի պահ գլուխը վեր բարձրացրեց և ավտոմեքենայի բացված պատուհանից նկատեց ուղիղ իրեն նայող և, ավելին ասեմ, նաև ուրախությամբ հեռախոսով տեսանկարահանող մի տղա երեխայի: Տաթևիկն այդ պահին գլխի ընկավ, որ ոչ ճիշտ տեղ էին ավտոմեքենան կայանել: Նա սիրալիր տոնով կանչեց փոքրիկ բալիկին իր մոտ: Պուճուրը, թևերը ուրախ-զվարթ թափահարելով ու ցատկոտելով, եկավ մոտիկ ու փոքրիկ դիպուկահարի զվարճալի հայացքով նորից դեմ տվեց հեռախոսը ուղիղ Տաթևի դեմքին, չնայած Տաթևի դեմքը չէ, որ պիտի ցույց տար՝ խախտում եղել է, թե ոչ: Տաթևը, այդ հանկարծակիությունից ցնցված, մի պահ ետ քաշեց դեմքը: Ճուտին թողնեիր, հեռախոսով կկրակեր, կարելի էր կարծել հեռախոսի նշանակությունը բալիկը խառնել էր և համարում էր այն ամենազոր գործիք, չնայած ի՞նչ սխալ բան էր համարում նա. աշխարհը սահուն կերպով գործը տանում է դրան: Դե մեզ ի՞նչ,

թող տանի, իսկ մենք կիլոմետրերով հերթ կկանգնենք հերթական նորությունը մեր հարևանից 5 վայրկյան առաջ ունենալու հաղթական, բայց պահային բերկրանքին ընդառաջ: Տաթևն ասաց.

– Բալի՛կ ջան, այդ հեռախոսը լավ չի նկարում, գնա՛, ուրիշը բե՛ր:

– Բայց ես ուրիշը չունեմ:

– Պապա՞ն էլ չունի:

– Ինքը ունի:

– Դե բա գնա՛, պապայինդ բե՛ր:

– Հա՞:

– Հա:

– Հա լավ, դե ես գնացի: Տեղ չգնաք հա՜, հեսա գալիս եմ,– կիտած հոնքերով ու պուճուրիկ մատիկը զղայն դասատուի նման վերև տնգած՝ բլբլաց ճուտոն ու արագ վազեց, մեկ էլ կարծես բան էր մոռացել, մի քանի քայլ հետ եկավ ու մի քիչ հեռվից ամբողջ ուժով բղավեց,– պապան հեռու չի, գնամ, վերցնեմ, շուտ գամ:

– Բայց Այֆոնը ի՞նչն է վատ նկարում, Տաթև՛,– նայեց կնոջ վրա Պատրիկը:

– Քշի՜ր,– գոռաց Տաթևը՝ նայելով ամուսնու՝ հենց նոր տեռորի ենթարկված դեմքին: Պատրիկը վախից բերանը փակեց, ու վայրկյանական ոտքը դրեց գազին:

Գլուխ 8

Փարիզին չէին հասցրել կարոտել, որովհետև 10 օր էր ընդամենը տևել հայաստանյան ճամփորդությունը: Անգամ Փարիզը ունակ չէ այդ կարճ ժամանակահատվածում որևէ ցցուն փոփոխություն արձանագրել իր կյանքում: Ցույցեր, բողոքներ դրանք անընդհատ են, դրանք օր ու ժամ չունեն: Դրանք սովորական են, դրանք Ֆրանսիայի առօրյան են, նրա կյանքի ռիթմին հարմարված մի բան, կամ էլ Ֆրանսիան էր ստիպված հարմարվել այդ ռիթմին, հավանաբար երկրորդը: Պատրիկենց առանձնատունը հեռու էր քաղաքի կենտրոնի թոհուբոհից, գողտրիկ մի անկյուն, բոլոր հարմարությունները կային, կարևոր ճանապարհային կապուղու ճամփեզրին էր տունը, բայց զարմանալիորեն երթևեկությունը խլացնելու չափ անտանելի չէր այդտեղ: Պատրիկը կարողանում էր արագ տանից հասնել աշխատավայր. մոտիկ էր քաղաքի տվյալ հատվածին: Մի խոսքով՝ անփոխարինելի տուն էր թե՛ իր հուշերով, թե՛ ներքին կահավորանքի՝ հանգստություն հաղորդող գույներով, թե՛ տեղադիրքով: Պատրիկն ու Տաթևը ճամփորդական ծանր ճամպրուկները դեռ նոր էին հանում ավտոմեքենայի միջից, երբ լսվեցին բղավոցներ: Դրանք իրենց առանձնատան պարտեզից էին լսվում: Պատրիկը արագ վայր դրեց

ճամպրուկները գետնին ու շտապեց բացել դարպասները: Ամուսիններով արագ ներս վազեցին:

Վիճում էին... Երկու կատաղած ու համառ տպեր վիճում էին: Դե էլ ո՞վ պիտի վիճեր՝ ըստ ձեզ:

– Հետաքրքիր է՝ այդ ինչպես հաջողացրիք իրար միս ուտել, ընդամենը 10 օրով էինք բացակայել, և հիմա այս համերգը: Հը՛ն, գլխավո՛ր դիրիժոր, քե՛զ եմ լսում,– Պատրիկը բարկացած հայացքը հառեց որդու վրա:

– Իսկ ինչի՞ց վերցրիր, որ գլխավոր դիրիժորը ես եմ,– հարցին հարցով պատասխանեց Արամը:

– Որովհետև նա առաջին ջութակն է:

– Դա որտեղի՞ց որոշեցիր,– նորից հարց առաջացավ Արամի մոտ:

– Ձեզ՝ երկուսիդ, որ կողքից նայես, կհասկանաս:

– Դե՛ սպանեցիք էլի իսկականից, թե որ ես սայլակին գամված չեմ, ուրեմն կյանքս շոկոլա՞դ է, ու ամեն ինչում կարելի է առանց հետաքննության ի՞նձ մեղադրել:

– Ձեր երկուսին վերաբերող հարցերում՝ այո, քանի որ դու, իրավիճակից ելնելով, պիտի հանդուրժող լինես: Հասկանում ես չէ՞, թե քեզ ինչ եմ ասում:

Արամը մի արհամարհական ու սուր հայացք նետեց հոր վրա, քթի տակ մրթմռթաց ու դժգոհ դեմքով վազեց տան դարպասներից դուրս:

– Որդի՛ս, կանգնի՛ր,– մայրը գոռաց նրա ետևից:

– Հանգի՛ստ թող նրան, կհանդարտվի, ամեն ինչ տեղը կընկնի: Մյուս անգամ թող չափը ճանաչի:

– Կոպիտ էիր, հո՞ ռոբոտ չի, սիրտ ունի: Դու անգամ չհետաքրքրվեցիր, թե ինչ է եղել: Այդպես ո՞նց կարելի է, տղա է չէ՞... Վերջիվերջո մեր տղան է:

Տաթևի այս վերջին խոսքը մեծ տարակուսանք առաջացրեց ներկաների մոտ: Առաջին հերթին իրեն վատ զգաց Իզաբելը, կծկվեց իր անվասայլակի մեջ, նրա առանց այդ էլ փոքր մարմինը ավելի փոքրացավ: Նա ամաչում էր կատարվածի համար: Իզաբելը չէր ցանկանում վիճաբանության պատճառ դառնալ հոր և որդու, ինչու չէ նաև Պատրիկի և Տաթևի միջև, քանի որ գժտվել որդու հետ, դա նշանակում էր, որ որոշ չափով հնարավոր է սառեին հարաբերությունները նաև ամուսինների միջև: Պատրիկը մի սառը և կծու հայացք նետեց Տաթևի ուղղությամբ, որը վկայում էր լիովին Իզաբելի կողմը բռնելու մասին և Տաթևին լուռ մեղադրելու մասին այն բանի համար, որ վերջինս որոշեց տարբերություն դնել Արամի և Իզաբելի միջև:

– Նրանք երկուսն էլ իմ զավակներն են, կապ չունի, որ իրականում այդպես չէ: Ես այդպես եմ համարում, և այս հարցն այսուհետ փակված է, խնդրում եմ զգույշ լինել արտահայտություններիդ մեջ,– հանդիմանող ու խիստ կեցվածք ընդունեց Պատրիկը՝ ուղիղ նայելով Տաթևի տարակուսանքով լի աչքերին:

Մի պահ քար լռություն տիրեց, լարվածությունը թևածում էր օդում, դժվար էր ճիշտ խոսքեր գտնել, ավելի ճիշտ՝ բոլորը սպասում էին Տաթևի արձագանքին: Տաթևի փարթամ կուրծքը վերուվար էր շարժվում անհանգիստ շնչառությունից, ձեռքով բռնել էր պարանոցը, որ շունչը մի կերպ կառավարեր: Նա ջախջախված էր, բայց ցանկանում էր՝ վերջին ջախջախողը ինքը լիներ:

– Եթե վիճաբանողները երկուսն էլ քո զավակներն են, ինչպես դու ես պնդում, ուրեմն կա՛մ երկուսի վրա գոռում են, կա՛մ չեն գոռում ոչ մեկի վրա,– ասաց

Տաթևը և ներս վազեց տուն՝ արցունքոտ աչքերը չթաքցնելով:

Արամը հորական առանձնատնից քայլերն ուղղեց սկզբում դեպի Փարիզի կենտրոն, սակայն բնավ ցանկություն չունենալով մտնել մարդաշատ հայտնի զբոսավայրեր կամ ճեմել ոչ պակաս մարդաշատ Մոնտեն պողոտայով, ճանապարհին խորթությամբ շրջանցելով մի շարք թաղամասեր՝ նա իրեն գտավ համեմատաբար քիչ աղմկոտ ու խուլ փողոցներում, որոնք, սակայն, իրենց պարզության մեջ նույնպես գեղեցիկ էին: Արամը վշտացած էր: Նման վիճակում երբեք չէր եղել: Կյանքում ունեցել էր բազմաթիվ դրվագներ, որոնք ցավ ու հուսախաբություն են պատճառել նրան, սակայն այս հոգեվիճակն ուրիշ էր, այն ավելի ցայտուն էր: Պորթկումը դժվար էր զսպել, դժվար էր զսպել նաև արցունքները, որոնք երբեմն-երբեմն խորը վրդովմունքով լի ծանր շնչառության հետ միասին դուրս էին հորդում արտաքին աշխարհ՝ անցնող-գնացողին պարզ ցույց տալով, որ այս տղային օգնություն է պետք, այս տղային խոսել է պետք: Նա չգիտեր, թե կոնկրետ ուր է գնում, ինչու է գնում, նա պարզապես գնում էր: Նա անծանոթ մարդկանց մեջ իր խնդիրների լուծումն էր որոնում: Այդ լուծումը կարող էր հայտնվել շատ անսպասելիորեն, ինչ-որ անկանխատեսելի տեղից: Արամի ոտքերը ինքնըստինքյան նրան տանում էին որևէ սրճարան, հետո մեկ այլ սրճարան: Դրանցից յուրաքանչյուրում ինչ-որ մեկին էր փնտրում, բայց նա տեղյակ չէր, թե ում է փնտրում կամ ինչու: Ասես այդ անծանոթը հաստատ կար ինչ-որ տեղ մոտակայքում, ով կթեթևացներ նրա սիրտը, դրա ներսը կրծող վիրավորանքը: Հանկարծ քայլերը

նրան ինքնաբերաբար տարան դեպի մոտակա գրադարան: Նա ներս մտավ: Գրադարանին բնորոշ լռություն էր, խոսող լռություն: Գրադարանը շատ այցելուներ չուներ: Չգիտես, թե ինչու Արամին թվաց, որ շատ ճիշտ տեղ է մտել. այստեղ մի բան կա: Նա մոտեցավ գրադարանավարուհուն ու խնդրեց որևէ գիրք խորհուրդ տալ տեղում կարդալու: Գրադարանավարուհին բարետես արտաքինով, կարմիր, գանգուր մազերով, մոտ 20 տարեկան, երիտասարդ, համեստ կեցվածքով և էլ ավելի համեստ հագուկապով, հմայիչ աղջիկ էր: Նա նայեց Արամի տխուր աչքերին, հասկացավ որ մի բան այն չէ, քանի որ արցունքի կաթիլները մաքրելուց հետո անգամ, տղայի աչքերը գոռում էին այն մասին, որ դրանք քիչ առաջ թափվելիս էին եղել: Գրադարանավարուհին հասկացավ, որ ինչքան շատ հարց տա, այնքան ավելի անորոշ պատասխաններ է ստանալու, ինչի հետևանքով վանելու է այցելուին, մանավանդ պարզ էր իր համար, որ երիտասարդը ինքն էլ չգիտի, թե ինչ է փնտրում: Նա որոշեց, առանց երկար-բարակ խոսելու և զզվեցնելու, հենց ձեռքի գիրքն էլ տալ Արամին, որն այդ պահին նա կարդում էր: Ընդ որում՝ գիրքը մեկնեց տղային հենց այն էջում, որի վրա կանգնել էր իր ընթերցանությունը: Մատը պահելով կոնկրետ տողի վրա՝ գրադարանավարուհին քնքուշ ձայնով ասաց.

– Ա՛յ, հենց այստեղից շարունակեք կարդալ:

Նրա ձայնն ու կերպարն այնքան խորհրդավոր ու լուսե թվացին Արամին, որ երկար ժամանակ չէր ուզում գլուխը թեքել դեպի գիրքը: Նա ցանկանում էր որքան հնարավոր է երկար զմայլվել կարմրահեր աղջնակով: Բերանը բացած, մի քանի ակնթարթ սառած նայում

էր աղջկան, իսկ աղջիկը, նկատելով դա, որոշեց ինքը թոթափել անհարմար մթնոլորտը: Նա քաղաքավարի տոնով ասաց.

– Ա՛յ, այնտեղ կարող եք նստել: Ազատ տեղերը շատ են, սակայն այնտեղ ավելի լուսավոր է և տրամադրող:

Գրադարանավարուհին ձեռքի համապատասխան ժեստով ցույց տվեց աջ անկյունում գտնվող փայտե փոքրիկ սեղանիկը և աթոռը: Բայց Արամը շարունակում էր նայել ուղիղ նրա դեմքին: Արամին պարզվեց՝ հետաքրքիր չէր ո՛չ աջ անկյունի սեղանիկը, ո՛չ դրա կողքը դրված աթոռը, ո՛չ էլ կողքի լուսավորն ու տրամադրողը, խոսքը սեղանիկի անմիջապես կողքին տեղադրված պատուհանի և դրանից երևացող տեսարանի մասին էր:

Գրադարանավարուհին, տեսնելով, որ իրջանքերը՝ շեղելու Արամի ուշադրությունը իրենից, ապարդյուն են, որոշեց մենակ թողնել նրան՝ իբր պատահաբար նկատելով, թե ինչպես է մի այցելու կանչում իրեն: Չնայած ոչ մեկ էլ չէր կանչում, նա պարզապես հեռանալ էր ուզում: Արամը թեքեց գլուխը, շարունակելով նայել նրան, հետո վերջապես սթափվեց, փոքր-ինչ բացված շուրթերը կպցրեց իրար և գլուխն իջեցրեց ներքև նայելու հենց այն տողի վրա, որից սկսած կարդալ էր խորհուրդ տվել գրադարանավարուհին: Տղայի շուրթերը կիսաձայն արտաբերեցին գրվածը.

– Մենք չենք ստեղծում պրոբլեմներ, մենք պարզապես նկատում ենք դրանք:

Արամի սպիտակամաշկ դեմքի մկանները թեթևակի ձգվեցին, ճակատին աննշան թվացող առաջին կնճիռները երևացին: Նրա հայացքը պայծառացավ

մի քանի վայրկյան շփոթված լինելուց հետո: Նա փակեց գիրքը, խնամքով դրեց այն գրադարանավարուհու ընդունարանի սեղանի վրա (չնայած գրադարանավարուհին այնտեղ չէր) և հեռացավ: Արամը անգամ չֆիքսեց, թե ինչ գիրք էր տվել նրան գրադարանավարուհին, ինչ վերնագիր ուներ: Նրան հետաքրքիր չէր, թե հետո ինչ էր գրված, որոնք էին հաջորդ տողերը, ընդհանրապես ինչի մասին էր գիրքը: Նրան ոչինչ այլևս հետաքրքիր չէր. նա ստացավ իր հարցի պատասխանը: Խաղաղությունը գալիս է նախևառաջ մեր գիտակցության միջոցով, մնացածը անկարևոր է, մնացածը՝ հետևանք:

Երեկոյան ժամերն էին, համարյա մթնել էր: Արամը հոգնեց անդադար զբոսնելուց, նստեց մոտակա բացօթյա գարեջրատան սեղանիկների կողքին շարված հարմարավետ աթոռներից մեկի վրա, գարեջուր էր վայելում, նայում աշխույժ անցուդարձին... Նա այլևս հանգիստ էր, իսկ հոգին՝ ժամանակավորապես խաղաղված:

Իզաբելի պարապմունքները արդյունք էին տալիս: Նա կամաց-կամաց սկսեց հրաժեշտ տալ սայլակին: Ճիշտ է՝ սկզբից շատ հոգնում էր մի քանի ժամ տան կահույքի տարբեր մասերից բռնվելուց: Ոտքերը զոռով էր աշխատացնում, բայց երբ նա զգաց այդ անիծյալ սայլակից վեր կենալու ուժը, առավել ոգևորվեց և կրկնապատկեց ջանքերը, միայն թե շուտ սկսեր ապրել լիարժեք կյանքով: Դա ստացվեց, նա նորից քայլում էր: Իզաբելը այնքան էր կապվել Պատրիկի ու Տաթևի հետ, որ չցանկացավ հեռանալ նրանցից, երբ խնամքի կարիք այլևս չուներ: նա շարունակեց ապրել Պատրիկենց տանը: Արամը նախկինի նման

փախեփախ էր անում հայրական տնից՝ չցանկանալով խախտել ստեղծված ստատուս-քվոն, և նոր անախորժության պատճառ դառնալ: Բայց այս վիճակը արդարացիորեն անհանգստացնում էր Տաթևին: Պետք էր կա՛մ հաշտեցնել նրանց, կա՛մ գոնե Արամին ինչ-որ կերպ մոտ պահել ընտանիքին: Երկուսով իրենց ննջասենյակում էին, Պատրիկը մահճակալի վրա պառկած էր, Տաթևը՝ նստած: Նա հանկարծ շրջվեց դեպի ամուսինը, ու թախծալից հայացքը հուշում էր՝ Տաթևը լավ չէ: Սկսեց խոսել.

– Մենք՝ որպես ծնող, ճիշտ չենք վարվում:

– Իսկ ի՞նչ ես առաջարկում:

– Չգիտեմ, բայց մի բան անել է պետք:

– Ասա՝ անեմ: Պատրաստ եմ անել ամենը, ինչ կախված կլինի ինձանից:

– Մենք չենք ուզում չէ՞, որ նրանցից որևէ մեկը իրեն լքված զգա մեր կողմից:

– Ո՛չ, իհարկե,– հաստատեց Պատրիկը:

– Բայց փաստացի Արամը դա է զգում հիմա: Ես նրա հետ վերջին անգամ բառ փոխանակելիս դա զգացի: Մենք սկսել ենք ահավոր քիչ շփվել: Նա օտարացել է մեզնից: Սկզբից եթե դա համարում էինք ժամանակավոր երևույթ, ապա հիմա կարծես մշտական է դարձել այս վիճակը, ու դրա պատճառը, կներես, Իզաբելն է:

– Բայց նա սիրում է չէ՞ Իզաբելին:

– Ով չի ընդունում նրան:

– Այո՛, գիտեմ, բայց մենք ի՞նչ կարող ենք անել,– ծոծրակին հենած վիճակից ձեռքերին ազատություն տալով ու դրանք օդում պարզելով՝ ասաց Պատրիկը:

– Պիտի փորձենք մի ձև գտնել, որ համատեղ ապրելակերպը ստացվի: Ես չեմ ասում ամուսնանան, հնարավոր չէ՞ գոնե մի տանելի վիճակ ստեղծել, որ Արամը մեզ առաջվա պես մոտ լինի: Այլապես, կներես, բայց ես այլևս չեմ ուզում զգալ, որ մեր որդին փախչում է մեզնից: Դա նրա կամքը չէ, ակներև բան եմ ասում: Նա ստիպված է այդպես վարվում: Ես զգում եմ, որ նա մեր կարիքն ունի, մեզ մոտ գտնվելու կարիքը: Նա փորձում է ցույց չտալ, բայց նրա տխուր աչքերում ու փայլը կորցրած հայացքի մեջ ես դա եմ տեսնում: Ուրիշ ոչինչ չկա այդ հայացքում, միայն դատարկություն ու յուրօրինակ կարոտ: Ես քանի տարի նրանից հեռու եմ եղել, բայց երբևէ հեռախոսով խոսելիս չեմ զգացել այն, ինչ հիմա եմ զգում, երբ կարճ ժամանակով հանդիպում ենք, և նա, պատրվակներ փնտրելով, արագ փախչում է ինչ-որ տեղ: Նա սթրես է տանում, ու որքան մենք չնկատելու տանք դա, ավելի է խորանալու այս բացը մեր ու իր միջև,– Տաթևը կծկվեց, գլուխը հուսահատ ցած էր իջեցրել ու ուզում էր ճչալ, բայց չարեց դա. Պատրիկը նրան առավ իր գիրկը, որից հետո կինը կամացուկ ձայնով, գրեթե շշուկով ասաց,– ես վախենում եմ:

– Մի՛ մտածիր, մի բան կանենք,– ի պատասխան՝ սփոփանք ու վստահություն հաղորդող ձայնով շշնջաց ականջին ամուսինը:

Չհասցրին... Դուռը մի քանի սանտիմետր բաց էր: Նրանք դա չէին նկատել, ետևում էլ մարդ կար, իսկ վերջին բառերից հետո մեկի ոտնաձայների դղրդյունը աստիճաններով դեպի ներքև իջնելիս լցրեց տան անվրդով լռությունը:

– Ես փախչել եմ ուզում: Ես բոլորիցդ փախչել եմ ուզում, ես... Ես մեկնում եմ...

– Սպասի՛ր, ո՞ւր ես մեկնում,– Պատրիկի դողացող ձայն էր հետևում այդ մեկին:

– Այնտեղ, որտեղ դուք չկաք, ոչ մեկդ չկաք,– բղավում էր այդ մեկը՝ Իզաբելը:

Նա կատակ չէր անում, մի քանի օր և...

Լոնդոնյան մռայլ, միապաղաղ երեկո էր: Օդն ինչպես միշտ սառն էր: Լոնդոնն ինքնին սառն է: Այն սև ու սպիտակ է, անգամ երբ պարուրված է բազմաթիվ գույներով, մեկ է՝ իր ներսում նա սև ու սպիտակ է: Ո՛չ, տարանջատված չէ սևերի ու սպիտակների: Նրա սևն ու սպիտակը միասին են, նրա սևն ու սպիտակը մի ստանդարտ է, որ կոչվում է հավերժ ձիգ կարգապահություն, թագավորական արիստոկրատիա: Այն միայն թագավորական ընտանիքում չէ, այն նաև մարդկանց բնազդի մեջ է: Նույն են ազատությունները, նույն է ժողովրդավարությունը, բայց վարքը տարբեր է, մոտեցումներն՝ ուրույն: Դրա համար էլ Բրեքզիթը, երկու ոտքը մի կոշիկի մեջ խրոխտ մտցրած, բարեհաջող իր սև գործն արեց, իսկ սպիտակը թողեց սերունդներին սեփական ճանապարհը միայնակ կառուցելու մղումով: Տարանջատվել էր Եվրաընտանիքից Անգլիան, բայց ասես միասին լինելով՝ մեկ է ուրիշ էր, Անգլիան միշտ ուրիշ էր, իսկ այժմ արդեն դե յուրե նույնպես ուրիշ է:

Իզաբելն օտար քաղաքում իրեն լավ էր զգում: Օդանավակայանից սկսած շունչը թեթևացած էր բավականին: Նա զգում էր ազատության բերկրանքը, երբ այդ ազատությունը այդքան անհրաժեշտ էր նրա հոգուն: Նման իրավիճակում սիրտդ խինդով

ջնջում է նախկին սկավառակի պարունակությունը և տեղ բացում նորի համար: Այն կարող ես լցնել ինչով՝ ուզես, ու քեզ նախատող չի լինի, քանի որ կողքիդ ծանոթ մարդ չի լինի: Ազատություն, ինչքա՜ն շատ ենք ցանկանում փնտրել ու գտնել քեզ, իսկ երբ գտնում ենք, անհագ ցանկություն է առաջանում չարաշահել քեզ, քանի որ դու թթվածնի նման կարևոր ես, թթվածնի նման՝ անհրաժեշտ: Չենք ուզում բաժանվել քեզնից և ակամայից, այդ զգացողությունը կորցնելու վախով տարված, քեզ՝ ազատությո՛ւն, անխնա շահագործում ենք: Երբ չես սահմանափակում անսահմանափակ ազատությունդ, այն դառնում է վտանգավոր, քանի որ չի ենթարկվում ո՛չ ուղեղիդ, ո՛չ սրտիդ, ո՛չ հոգուդ: Այդ դու ես սկսում ենթարկվել ազատությանը, այն ազատությանը, որը սահմաններ չի ճանաչում, հենց քո հրահանգով չի ճանաչում: Ազատությունը երջանկություն է, բայց այն նաև դժբախտություն է, իսկ իրականում այն ընդամենը ընտրության հնարավորություն է ընտրելու դժբախտության և երջանկության միջև:

Շլացնող ինտերիերով հսկա ակումբի մթության մեջ լույսի կայծակնային փայլատակումները և սրնթաց դիրքափոխումները գալիս էին համոզելու տարվել ռիթմով, մթնոլորտով, խենթությամբ: Վերջինս վաղուց մոռացել էր Իզաբելի տեղը, և ահա նա հայտնվեց՝ Ձերդ գերազանցություն խենթությունը: Վաղուց չկար այն, ինչ-որ տեղ էր չքացել, մեկ էլ զգաց՝ Իզաբելը կանչում է իրեն: Սիրահոժար հայտնվեց ու մտավ նորից նրա մարմնի մեջ, էլ ուղեղն այդ պարագայում անելիք չուներ: Նա դարձավ երկրորդական, նա ստորադասվեց, ստորադասվեց

կործանարար վայելքին, խենթ լինելու մոռացված ցանկությանը:

– Դե՛ արի, քաղցրի՛կս, արի՛ պարենք: Ինչո՞ւ ես միայն խմում: Խմիչքից հետո լավ է մի քիչ լիցքաթափվել, որ զգաս խմածդ ալկոհոլի հաճույքը:

Լույսերը գալարվում էին գլխավերևում: Ինչ-որ ուժ ձգում էր նրան դեպի պարահրապարակ: Այդ ուժը խլացնում էր նրա ներսից դուրս եկող մնացած բոլոր ձայները, որպեսզի միայն ինքը հնչի, հնչի զրնգուն, կրքոտ ու ճշմարտանման, ինչպես պարահրապարակում այդ պահին հնչող երգն էր՝ կրքոտ ու ճշմարտանման. հնչում էր Art-deco-ն՝

Club queen on the downtown scene,
Prowling around at night.
You're not mean, you're just born to be seen,
Born to be wild.
A little party never hurt no one, that's why it's alright.
You want in, but you just can't win,
So you hang in the lights.

You're so Art Deco, out on the floor,
Shining like gun metal, cold and unsure.
Baby, you're so ghetto,
You're looking to score,
When they all say hello,
You try to ignore.

Cause you want more (why?),
You want more (why?),
You want more (why?),
Cause you want more.

……..
A little party never hurt no one,
So you can stay out late.
A little party never hurt no one:
That's what your friends say.

You put your life out on the line.
You're crazy all the time.
Put your life out on the line.
You're crazy all the time.
……..
A little party never hurt no one,
Not you and me.
A little party never hurt no one,
We were born to be free.

Պարահրապարակը լցվեց նրա երերուն շարժումներով: Նա զգում էր տարածությունը բոլորից լավ, լցնում էր այդ տարածությունը իր խենթ պարային շարժումներով բոլորից լավ: Նա վայելում էր պահը, խելքահան անող երաժշտությունը, խմիչքի արբեցնող համը և դրա տված հրապուրող վայելքը, որն անցողիկ է, որի արդյունքը առավոտյան պայթող գլուխն է լինելու, բայց կապ չունի, կարևորը պահն է՝ այս պահը: Նա թռչում էր, նա ուզում էր անվերջ թռչել, սակայն թևերն իրական չէին, գետինն էլ՝ ցավոտ: Նա, ավաղ, դա հետո պիտի հասկանար, ափսոս, որ ուշ հասկացավ... շատ ուշ:

– Դե՛, քաղցրի՛կ, ինչո՞ւ նստեցիր: Մի՞թե ոտքերդ հոգնել են, արի՛ քեզ մի լավ բան առաջարկեմ, որ յոթերորդ երկնքում քեզ կստիպի զգալ, իսկ ոտքերդ

այլևս չեն հոգնի, կարող ես անվերջ պարել, կարող ես անվերջ զվարճանալ,– ասաց խռպոտ ձայնով ոմն սևահեր տղամարդ՝ գերող հայացքն անսպասելիորեն ուղղելով Իզաբելի կողմը: Աչքերը կլորացրած անթարթ նայում էր իր դիմացը կանգնած և մի պահ նրա հայացքից շփոթված Իզաբելին: Նրա երկնագույն աչքերում ինչ-որ սահմռկեցուցիչ բան կար, որը վախեցնում էր Իզաբելին, սակայն նա ազատ էր, նա ցանկանում էր ճախրել: Այդ պատճառով ականջալուր չեղավ ներքին վախերին և արեց այն, ինչ սկսեցին անել իր կողքին նստած անծանոթ տղաներն ու աղջիկները, այդ թվում նրանցից ամենաակտիվն ու բոլորին քաջալերողը՝ այդ սևահեր տղամարդը:

– Լավ է չէ՞: Զգո՞ւմ ես՝ ինչ կայֆ ես ստանում: Սա թողած տանը անիմաստ դասեր պիտի սովորեիր կամ էլ անկապ գիրք կարդայիր: Դե ասա՛, որ մեզ հետ լավ է: Մեզ հետ ամեն ինչն է լավ,– այդ ակումբի թնդող ու գլխապտույտ առաջացնող աղմուկի մեջ շարունակում էր Իզաբելի խելքն ուտել սևահեր տղամարդը՝ Սթիվը, ով ասես գտել էր իր հերթական «մոլորյալ զոհին»:

Նոր շրջապատը ճահճի նման քաշում էր դեպի իր կողմը: Իրականում դա լավ մշակված տակտիկա էր՝ այնպես գրավել դիմացինին, որ չհասցնի անգամ մտածել, թե ինչ է անում և ինչի համար: Օրերն անցնում էին: Իզաբելը սկսել էր իրեն հարազատ համարել նման ապրելակերպը: Այդ ապրելակերպի մեջ զգում էր թեթևություն: Օրեցօր դուրեկան դարձած կախվածությունը տագնապ չէր առաջացնում: Նա պարզապես չէր մտածում այդ մասին: Շատ հաճախ վատանում էր, իսկ նորաթուխ ընկերներն ընդամենը ասում էին՝ «կանցնի, բանի տեղ մի՛ դիր, բոլորիս հետ

լինում է, մեզնից ո՞ր մեկն է մեռել, տե՛ս՝ ողջ-առողջ, երջանիկ դիմացդ նստած ենք»: Ողջ ու առողջը մի փոքր հարաբերական է ասված՝ կիսախելագար կեցվածքն ու գունատ դեմքերը վկա: Իզաբելի նուրբ դիմագծերը կորցրել էին իրենց հմայքը, աչքերի տակ մաշկը սկսում էր թույլ արտահայտված, բայց արդեն նկատելի մանուշակագույն երանգ ստանալ: Նա երբեմն կորցնում էր ադեկվատությունը: Փսխումներ, գլխապտույտներ, գլխացավեր, դրանք էական չէին: Էական էր այն թեթևությունը ու հոգու բռնազբոս խրախճանքը, որի մեջ ինքը կարողանում էր ընկղմվել գոնե թե մի քանի ժամով: Մի քանի ժամով կտրվում էր այն աշխարհից, որն ատում էր, հիմա ավելի շատ էր ատում, որովհետև երբ վերադառնում էր այդ աշխարհ, իրեն սկսում էր վատ զգալ: Իսկ այսպես անջատված լավ է, այսպես անհոգ է, այսպես չես հիշում անցյալդ, չես գիտակցում ներկադ, չես հետաքրքրվում ապագայովդ՝ ինչպիսին այն կլինի, կհասցնի արդյո՞ք լինել: Ոչինչ հետաքրքիր չէր, բացառությամբ այն պահից, որ հիմա է: Այդ մատնանշած պահը ժամանակից դուրս էր: Այն լուռ հետհաշվարկ էր անում: Այն լուռ գոռում էր, բայց ում վրա, որ գոռում էր, նա չէր լսում, նա ժամանակից դուրս էր:

Կեսգիշեր էր: Աստղերը հարմար տեղավորվել էին լայն երկնքի մութ հորիզոնում: Դրանք շատ էին, հազիվ էին դիրքավորվել, բայց լուսնին իր արքայավայել տեղից հանել չէին կարող. նա իր ծանր տեղը զիջողը չէր, տեղաշարժվել չէր պատրաստվում: Մի քանի հոգի ողջունում էին արդեն հարազատ դարձած գիշերային մութը՝ ցնորաբար բղավելով և այդ մթին իրենց երջանիկ կյանքի մասին բարձրաձայն պատմելով: Նրանք

կանչում էին լուսնին դեպի իրենց, ավելի ճիշտ նրանցից միայն մեկն էր կանչում: Մյուսները նայում էին այդ կանչողին և մտածում էին լրիվ ուրիշ բանի մասին:

– Դե՛, խենթո՛ւկս, հերիք է բղավես, մեկ է՝ լուսինը մեզ չի լսում. նա շատ հեռու է:

Ծիծաղում են բոլորով:

– Ոչինչ, եկեք բոլորով բղավենք, հնարավոր է՝ այդ դեպքում լսի,– Իզաբելը մանկամիտ հայացքը հառեց նորից երկնքին:

– Բայց մենք լուսինն ի՞նչ ենք անում: Դու ես մեր լուսինը, մեր ուրախությունը, երբ դու մեր կողքով քայլում ես, ամեն ինչ լուսավորվում է, չէ՞, Սթի՛վ:

– Այո՛, Փիթե՛ր, դու իրավացի ես: Դե՛, արի՛ իմ մոտ, սիրո՛ւնս, ո՞ւր ես փախչում:

– Հե՜յ, մի րոպե՛, ասացի վատ եմ, բայց ոչ այնքան, որ ինձ հետ ինչ ուզես՝ անես:

– Ինչո՞ւ, դու չե՞ս ուզում, մի հատ լավ մտածի՛ր: Ամեն մեկի հետ չէ, որ ուզում եմ...

– Բա՛ց թող աղջկան:

– Էս ի՞նչ Ռոմեո է, լսի՛ր, դու էս ջահել Ռոմեոին ճանաչում ես, որ իրենից գոհ եկել մեր ճամփեն կտրել է,– նայեց Փիթերի ուղղությամբ Սթիվը, իսկ նրանց երրորդ ընկերը՝ Վաթսոնը, պապանձվել, կանգնել էր իր տեղում: Նա կարծես արդեն ուզում էր լքել ընկերներին՝ գուշակելով գալիք անախորժությունը:

– Ասում եմ քեզ՝ հեռու մնա նրանից:

– Չէ՛, սա լրիվ գժվել է: Ջահե՛լ, գնա՛ քո գործին, ես եմ ու իմ ընկերուհին: Դու մի՛ խառնվիր մեր հարաբերությունների մեջ:

– Ո՛չ, նա իմ ընկերուհին է, և դուք՝ տղանե՛ր, կչքվեք այստեղից հիմա:

– Լո՞ւրջ, այդ ինչո՞ւ մենք և ոչ դո՞ւ: Տե՛ս՝ մենք շատ ենք՝ երեք հոգով, իսկ դու՝ մենակ:

– Դա բան չի փոխում, բա՛ց թող աղջկան ասում եմ, քանի քեզ համար վատ չի եղել:

– Այդ վատն էլ դու պիտի ապահովեի՞ր,– ծիծաղեց Սթիվը,– ա՛յ մանկապարտեզ:

Ծեծկռտուք, ծեծ ու ջարդ, երեքը մեկի դեմ և շփոթահար Իզաբելը, ով փորձում էր խանգարել այդ երեք աժդահաներին վերջնականապես չլխկել Արամին: Ոստիկանական ավտոմեքենայի ազդանշանների ձայներ հեռվից լսելուն պես այդ երեք վիթխարի անողնաշարները վայրկյանական չքացան տեսադաշտից, իսկ ոստիկանական մեքենայի ազդանշանները ոնց հեռվից հանկարծակի սկսել էին լսվել, այդպես էլ ինչ-որ մի պահից սկսած դադարեցին լսվել. ավտոմեքենան իրականում ուրիշ ուղղությամբ շարունակեց ճանապարհը: Մութ ու մռայլ փողոցում, դիմացի շքամուտքից երևացող աղոտ լույսի ներքո մնացին գետնին կիսապառկած ու գլուխը մոտակա շենքի պատին հենած արնաշաղախ Արամը և նրա կողքին չոքած Իզաբելը: Նա վախեցած էր, աչքերից արցունքները հոսում էին, նա դողում էր ու չգիտեր՝ ինչ անել: Արամը հանգիստ էր, վերջիվերջո ուղեղն անջատած չէր ու շատ սթափ էր անգամ ծեծվելուց հետո: Դժվար էր շնչում, բայց ի վիճակի եղավ բջջայինով շտապօգնություն կանչել:

Իզաբելը քայլում էր սենյակում, ձեռքերով երբեմն-երբեմն թփթփացնում իր այտերին, երբեմն անկանոն թռչկոտում, երբեմն վազում փոքրիկ սենյակի երկայնքով: Մի խոսքով՝ ինչ ասես անում էր, բացի վիրավոր տղայի կողմը նայելուց, իսկ նա քնած էր, եթե իհարկե

հնարավոր էր նման պայմաններում քնել: Իզաբելը չգիտեր՝ ինչպես համոզել Արամին չբողոքել Սթիվի ու մյուսների դեմ, որովհետև նրանք սպառնացել էին, թե կվնասեն իրեն, եթե Արամը մատնի նրանց: Իզաբելը չէր ընկալում կատարվածը: Նրա մտքով մի բարակ թելի ծայրով չէր անցնում փորձել մեղադրել ինքն իրեն և իր ընկերներին: Մի՞թե չէր գիտակցում Արամի արածը, ո՛չ, նրա ուղեղում պտտվում էր միայն մի բան՝ ինչպես համոզել Արամին բողոք չներկայացնել: Նա, մտազբաղ ու նյարդային շարժումներ անելով, անդադար քայլում էր հիվանդասենյակի մի ծայրից մյուսը: Արամը թեթևակի բացել էր աչքերը. Իզաբելի անհանգիստ ոտնաձայներից նորմալ քնել չկարողացավ: Կիսաբաց աչքերով, հոնքերը կիտած նայում էր մտատանջ Իզաբելին և հասկացավ, որ իր համար չէ ամենևին նրա անհանգստությունը: Նման կախվածության մեջ ընկած մարդը կորցնում է սթափ դատելու ունակությունը: Նա միայն մտածում է ինչպես ավելի երկար կառչած մնալ այն աշխարհից, որը նրան ուղիղ անդունդն է տանում, ընդ որում առանց խանգարելու:

– Ես ոչինչ չեմ ասի, մի՛ անհանգստացիր,– հանկարծ լսվեց Արամի վտիտ ձայնը:

– Բայց մի բան պիտի ասես չէ՞, ի՞նչ ես ասելու:

– Դա արդեն քեզ չի վերաբերվում, թե ես ինչ կասեմ, ավելի ճիշտ՝ կհորինեմ:

– Դու ո՞նց իմացար, թե ես որտեղ եմ:

– Դա կարևոր չէ:

– Ինձ համար կարևոր է:

– Ես թքած ունեմ, թե ինչն է քեզ համար կարևոր,– Արամը հանկարծ կտրուկ ձայնը բարձրացրեց:

– Չհասկացա:

– Որովհետև ես քեզ համար կարևոր չեմ: Իմ վիճակը քեզ համար կարևոր չէ: Դու անգամ չհարցրիր՝ ոնց եմ, ինչ-որ տեղս ցավում է, թե ոչ:

– Ո՞նց ես, ինչ-որ տեղդ ցավո՞ւմ է, թե՞ ոչ:

– Ինձ մոտ թութակ պետք չի աշխատել:

– Բա ի՞նչ աշխատեմ:

– Ուղղակի մարդ եղիր, սովորական մարդ, բայց անգամ դա քեզ մոտ դժվար է ստացվում, էլ ուր մնաց աշխատել: Աստծո՛ սիրուն, հեռու մնա այդ տպերից, հեռու մնա թմրամիջոցներից: Ես չեմ կարող տեսնել, թե ոնց ես կործանում քեզ:

– Թմրամիջոցների մասին որտեղի՞ց գիտես, հետևո՞ւմ ես ինձ:

– Չէ՛, դրա կարիքը չկա, դեմքիդ դաջած է այդ ճշմարտությունը, իսկ շարժուձևդ գալիս է հաստատելու դեմքիդ միմիկայի խանգարված պատկերը, աչքերիդ անկանոն կկոցումները:

– Դու ես խանգարվածը:

– Կարող ես չնկատելու տալ, ինչպես որ չնկատելու ես տալիս իմ ներկայիս վիճակն ու ցավը թե՛ ուղիղ, թե՛ փոխաբերական իմաստով,– ամբողջ ուժով բղավում էր Արամը: Թուլացած մարմնի դողդողուն շարժումներով փորձեց հարմարեցնել բարձը իր՝ համարյա կիսանստած դիրքին ու բարկությունը նորից չթաքցնելով՝ շարունակեց.– Ինչի՞ վրա ես ծախսում հորս տված գումարները, ամոթի զգացում ունե՞ս:

– Հա՜, հասկացա հիմա, թե ինչու ես եկել: Եկել ես, որ երեսով տաս:

– Ո՛չ, ես չեմ կարող անտարբեր լինել քո հանդեպ:

– Ժամանակին լավ էլ կարող էիր:

– Ժամանակին ես սխալ էի:

– Հիմա էլ թող ես սխալ լինեմ, ի՞նչ կա որ: Սխալը մարդու համար է:

– Սխալի հետևանքը ևս,– ձայնի տոնը փոքր-ինչ մեղմելով՝ եզրափակեց Արամը:

Գլուխ 9

Սենյակում, որտեղ լուսամուտներ չկան, պետք չէ փակվել ու սպասել մահվան: Մահն առանց այդ էլ կգա, մահին ի՞նչ կա որ, հենց կանչես, կգա: Կստացվի, որ դու բերեցիր ու չհասկացար, թե ինչ բերեցիր, մասնավորապես գլխիդ: Հետո, եթե ուզենաս, չես կարող փոշմանել, հենց մենակ դրա համար արժե ապրել, որ կարողանաս գոնե փոշմանել:

Նորից հիվանդանոց, նորից պետք է բուժվել: Այս անգամ ավելի ծանր են ապրումներդ՝ հոգեպես ծանր: Բոլորը կարեկցում են քեզ, բայց դու լրիվ ուրիշ վերաբերմունքի կարիք ունես: «Դու չես ծնվել ձախողելու համար»՝ սա միշտ կրկնիր մտքումդ ու կզգաս՝ ոնց ես դուրս գալիս ճահճից ու կանգնում ճիշտ ճանապարհի վրա՝ անվտանգ ու հարթ, ուղղակի այլևս երբեք մի մոռացիր ճանապարհային նշաններին հետևել: Ամեն մեկիս բժիշկը մեկն է՝ հենց ինքը: Այդ «ինք»-ի կամքից է կախված բժիշկը կբուժի՞, թե՞ բուժելու կարիք այլևս չի լինի. բուժվողը հանձնվել է: Մենք միշտ պայքարի մեջ ենք: Մենք միշտ փնտրում ենք պայքարների նորանոր կետեր, նորանոր թեմաներ՝ տեղին-անտեղին: Մեզ դուր է գալիս անընդհատ հակադրությունների մեջ մտնել արտաքին աշխարհի հետ, սակայն իրականում մենք հակադրության մեջ ենք մեր ներքին

աշխարհի հետ: Մենք մեր ներքին աշխարհը չենք ճանաչում: Շատ դեպքերում չենք էլ փորձում ճանաչել, քանի որ վստահ ենք, որ գիտենք, ինչպես մեզանից շատերը ուսման ընթացքում, երբ մի բան չեն կարողանում անել, բայց հենց փորձում են նրանց բացատրել, ընդհատելով ասում են՝ «հա՛, էդ մեկը գիտեմ», բայց մեկ է ուշադիր լսում են, որովհետև չգիտեն, էդ մեկը չգիտեն, բայց դիմացինը միշտ պիտի իմանա, որ «հա՛, էդ մեկը գիտեմ»:

Իզաբելն իրեն հասցրել էր վերականգնողական կենտրոն, չնայած եթե իրեն մնար, լրիվ ուրիշ տեղ կհասցներ, շատ վատ տեղ, որտեղից չեն վերադառնում: Պատրիկն էր խառնվել և ժամանակին միջոցներ ձեռնարկել, որ նա սկսի բուժում ստանալ (Արամը նրան ամեն ինչ ասել էր): Կլաուդին եկել էր աղջկա մոտ, բայց դա բան չփոխեց: Նրանք էլի լեզու չգտան: Իզաբելը շատ փխրուն էր. ամեն մի մանրուքի նկատմամբ վերաբերմունքը կարող էր տարբեր ժամանակ տարբեր լինել: Նույն մարդուն մի օր կարող էր կոպտել, մեկ ուրիշ օր՝ լուռ լսել: Այս վիճակը բնական էր նրա դեպքում, այս վիճակը պիտի կամաց-կամաց հաղթահարվեր: Կյանքը հունը փոխել էր, խրախճանքն՝ ավարտվել, հիմա գինն էր վճարում, գինը թանկ էր, անիմաստ թանկ: Նա սիրում էր իր սենյակի պատուհանը, դրան ամրացված պատուհանագոգը, մահճակալը մոտեցնել էր տվել պատուհանագոգին, որ, մահճակալին կիսանստած, պատուհանից տեսնի արևն առավոտյան, լուսինը՝ գիշերը: Երկուսն էլ լույս են, ամեն մեկն իր ժամանակին լուսավորում է յուրովի, այնպես, ինչպես նրանցից յուրաքանչյուրն է ընկալում, թե ինչ է լույսը: Լուսնի լույսը ճերմակ էր, պաղ

ու միատարր, արևի լույսը ոսկեշող, դեղին ու կյանքով լեցուն, կյանք տվող, կյանքի մասին հիշեցնող: Իսկ Իզաբելի համար ի՞նչ էր լույսը, նա չգիտեր: Այդ հարցի պատասխանը փնտրում էր իր մեջ և ննջեց: Արթնացավ, սենյակում էր Նա՝ պատրաստ հոշոտվելուն: Բայց չեղավ այն, ինչ Արամը սպասում էր. պոտենցիալ հոշոտողը ինքն էր հոշոտված ներքուստ:

– Հիմա դեմքիդ գույն կա, տեսքդ հուսադրող է, ամեն ինչ դեպի լավն է գնում: Մի քանի ամիս առաջ այսպիսին չէիր, դու ավելի հանգիստ ես: Ուրախ չե՞ս,– գրեթե շշուկով, երբեմն կմկմալով ասաց Արամը: Ձայնի մեջ վախ կար, նորից չհասկացված լինելու վախ:

– Ես այլևս ոչնչից ուրախ չեմ լինելու,– չէր նայում տղայի դեմքին Իզաբելը:

Արամը ցած իջեցրեց գլուխը, հոգոց հանեց, փակել էր աչքերն ու ուզում էր կենտրոնանալ: Հանկարծ նորից օդում թևածեց նրա խղճահար ձայնը.

– Այնպես կուզեի վերցնեի ինձ քո տխրությունը, վերցնեի ցավդ, հոգուդ ցավը, որ այն խաղաղվեր, միգուցե այդժամ ժպտայիր: Ես դրա համար ամեն ինչ կտայի:

– Ինչո՞ւ պոկ չես գալիս ինձնից, ինչո՞ւ հանգիստ չես ապրում քո կյանքով,– Իզաբելը շրջեց գլուխը դեպի Արամը, նրանց հայացքները հատվեցին,– ինչի՞ համար ես քեզ տանջում,– լսվեց նրա կամացուկ ձայնը, հաճելի ու պարզ, երբեք այսքան հանգիստ ու խորհրդավոր չէր եղել նրա ձայնը: Թվում է, թե պիտի գոռար, բայց ոչ: Իզաբելի արտաբերած ամեն մի բառ այնքան քնքուշ էր, բայց մի տեսակ ուժասպառ, մի տեսակ հուսահատ: Նա չէր բղավում, նա հոգնել էր, բայց չգիտեր, թե ավելի շատ ինչից:

Արամն անթարթ նայում էր նրան, թեթև ժպիտ հայտնվեց դեմքին, հետո արագ դեմքը լրջացրեց, ու հնչեց պատասխանը.

– Եթե հանգիստ ապրեմ, ավելի կտանջվեմ:

– Անկեղծ էիր: Զգացի, որ անկեղծ էիր խոսքերիդ մեջ... Առաջին անգամ դա զգացի:

– Իսկ ես քո ձայնում հանգստություն զգացի, այնքան հաճելի է այն,– նրանք իրար չէին նայում նորից, ամեն մեկը գլուխը թեքել էր մի պատի կողմ: Արամը շարունակում էր խոսել,– ասես դու ուզում ես դադարել պայքարել այն ամենի դեմ, որի դեմ պայքարն անիմաստ է, և հիմա «լոկդաուն» ես հայտարարել, որ հասկանաս, թե ինչի դեմ է պայքարն իմաստալից, իսկ ինչի դեմ՝ ոչ:

– Ճիշտ նկարագրեցիր, ես մտածում եմ, ես ուզում եմ հասկանալ...

– Իմ մասին մտածո՞ւմ ես,– Արամը հանկարծ ընդհատեց նրան:

– Չեմ ուզում պատասխանել:

Արամը նորից ժպտաց, այս անգամ ավելի լայն ժպիտով, ավելի ցայտուն: Աչքերը փայլեցին. նա հասկացել էր պատասխանը: Իզաբելը շարունակում էր չնայել նրան, բայց շարունակեց խոսքը.

– Ես ուզում եմ հասկանալ՝ ինչու այնպես եղավ, որ իմ քույր Անտուանետն ամուսնացավ, երեխա ունեցավ, հանգիստ կյանքը դասավորեց, սիրող ամուսին ունի, սիրած գործով է զբաղվում, թարգմանչուհի է, երջանիկ է ու հարգված, իսկ ես հայտնվեցի այստեղ, մինչ այդ էլ՝ անվասայլակին,– արցունքի կաթիլները թափվեցին ցած՝ այտերն ի վար, նա կիսատ ժպտաց ու շարունակեց,– Չէ՛, ես չեմ նախանձում, քավ լիցի:

Ես պարզապես ուզում եմ հասկանալ՝ ես որտեղ սխալվեցի, ինչ պիտի անեի, որ չարեցի:

– Իսկ ի՞նչ էիր ուզում անել:

– Չգիտեմ,– պատասխանեց Իզաբելը:

– Սխալդ այդտեղ փնտրիր:

Իզաբելը թունոտ ժպտած, բայց իր վիճակին հարմարված մարդու անմեղ, սպառված ժպիտ էր դա: Նա դանդաղ թարթում էր աչքերը, հետո նայեց մի անորոշ կետի ու անտարբերությամբ լի հայացքով ասաց.

– Նորից ուսուցիչ ես խաղում, նորից վերևից ես նայում, նորից խրատում, նորից ցուցադրաբար դիմացինին տապալում գետնին քո մտավոր առավելություններով, քո խարիզմայով, քո տեսակի վեհությամբ,– դադար տիրեց մի պահ, Իզաբելը այնուհետև անզգայացած դեմքը հառեց դեպի նա ու հոնքերը կիտած հարցրեց,– դու կատարյա՞լ ես:

– Ո՛չ, ամենևին:

– Բայց խոստովանի՛ր, որ կար ժամանակ, որ այդպես էիր կարծում:

– Տարբեր ժամանակներ եղան, կամ ավելի ճիշտ՝ տարբեր ժամանակներում մենք տարբեր եղանք:

– Բա հիմա ի՞նչ եղավ:

– Հիմա ոչինչ, պարզապես դու փոխեցիր ինձ, ես փոխեցի քեզ: Երկուսս էլ վերևում էինք: Հիմա իջել ենք, հպվել հողին ու հասկացել, որ անտեղի ամեն մեկս կարծում էր, որ իր տեղը վերևում է, այն վերևում, որն աննկատ կուրացնում է, իսկ ներքևում ամեն ինչ հողեղեն է, ամեն ինչ հասկանալի ու պարզ, ինչպես մենք ինքներս ենք իրականում պարզ որպես տեսակ:

Իզաբելը հանդարտ լսում էր: Նրա հոգում ևս այդ պահին հանդարտություն էր թևածում: Վերջին

շրջանում լավ առաջընթաց էր գրանցվել: Նա վերականգնվում էր ավելի արագ, քան հնարավոր էր կանխատեսել: Երբեմն հույզերը տեղի էին տալիս: Դա նորմալ էր: Դրա բացակայությունն աննորմալ կլիներ, բայց այդ օրը, այդ պահին նա լիակատար տիրապետում էր իրեն, անգամ արցունքների միջից աչքերը վկայում էին՝ «ես դուրս եմ գալիս ճահճից, ինձ մոտ ստացվում է»: Մերթընդմերթ իրեն առաջին պլան բերող հուզվածությունը խեղդվում էր նրա մտքի խորության մեջ: Տառապանքի միջով անցած մարդու մտքերի խորքը ոսկի է, յուրօրինակ ընծա, որ մարդու ներսում է ծնվում որպես պաշտպանիչ շերտ հետագա փորձությունները ճիշտ ու խոհեմ դիմավորելու համար: Իզաբելը նորից չէր թարթում, մեկ կիսաժպտադեմ հայացքն ուղղում էր դեպի Արամը, մեկ փախցնում այն ու նորից նայում մի անորոշ կետի: Այդպես լռության մեջ ուզում էր չարտասանված բառերով միտք շարադրել, ջանք չթափելով՝ հասկացված լինել, ոչ մի բառ չասելով՝ պատմել հոգում կատարվողը: Բայց ինչպե՞ս, երբ դիմացինին ներս հրավիրելու համար, պիտի խոսես, որ մոտավորապես պարզ լինի նրա համար, թե ուր է մտնում: Իզաբելն ի վերջո նորից անկեղծացավ.

– Ես խճճվել եմ: Ես լացել եմ ուզում անընդհատ: Ես ուզում եմ շուռ տալ ամեն ինչ, առաջին հերթին ժամանակը, այն անիծյալ ժամանակը, որ գնաց ու չսպասեց, որն ինձ ուղղեց, բայց իր գնալով ուղղեց, անդադար առաջ գնալով՝ ստիպեց գնահատել իրեն: Հիմա հասկանում եմ, թե ինչքան թանկ էր այդ ժամանակը ու ինչքան իմաստազուրկ ամեն մի ծիծաղ ու ուրախություն, որ ապրեցի այն ժամանակ, երբ կյանքը չէի

հասկանում: Մտածում էի՝ այն իմ պես թեթև է, իմ պես անմիտ ու անմեղ: Այդ անմտության մեջ կորցրեցի նաև անմեղությունս, տեսակս գնահատեցի առավել, քան այն կար, և խելագարվում էի այն մտքից, որ դու գնահատում էիր իմ տեսակը ավելի քիչ, քան այն կար: Հիմա շատ բան է փոխվել, ես ժամանակ ունեմ մտածելու ու պարզվեց շատ օգտակար բան է դա՝ խորհելը: Պետք է խորհել, վերլուծել ապրածդ ու չխորշել ինքդ քեզ տհաճ հարցեր տալուց, նաև դրանց պատասխանները գտնելուց:

Արամը ժպտաց, երկար սպասված խինդը զգուշավորությամբ եկավ համակելու տղայի դեմքը: Նա զգաց, թե ինչքան կիսատ խոսակցություններ կան դեռ, որ Իզաբելն ինքն իր հետ պիտի տանի: Որոշեց թողնել նրան մենակ, որ այդ խոսակցությունները կայանան վերջապես, իսկ իրեն մնում էր միայն մի բան ասել, ամենակարևոր բանը.

– Դու հենց այսպիսին ես սիրուն, այսպիսի Իզաբելն է ինձ գերել, երբ անկեղծ է, երբ իրականում չի ցանկանում գերել:

Արամը ցույց տվեց նրան մի արծաթյա վզնոց՝ վրան արծաթյա խաչ: Նա վզնոցով խաչը մեկնեց Իզաբելին, դրեց նրա ձեռքի ափի մեջ և ասաց.

– Այն պահին, երբ այս խաչը նորից հայտնվի իմ ձեռքում, կնշանակի մի բան՝ դու ուզում ես կյանքդ կապել ինձ հետ:

Իզաբելի հայացքից անորոշություն էր հորդում, շփոթվեց, բայց նախընտրեց ոչինչ չասել: Նա պարզապես ամուր սեղմեց խաչը ափի մեջ: Արամը դուրս եկավ սենյակից՝ այլևս ոչ մի խոսք չասելով: Այդ ժամանակ Իզաբելին զարմանալի թեթևություն էր

պարուրել: Նա վերմակը քաշեց գլխին, կուչ եկավ մարմնով անկողնու մեջ, պարփակվեց իր մեջ, բայց ժպտում էր: Պիտի դեռ հասկանար, թե այդ գոհ ժպիտը որտեղից հայտնվեց իր դեմքին, իսկ նա շտապեց թաքցնել այն բոլորից, այն բոլորից, որոնք չկային... Սենյակում էլ մարդ չկար: Բայց մեկ է՝ նա թաքնվում էր վերմակի տակ, վախենում՝ երևալ ուրախ: Այդքան բաղձալի էր իմաստալից ուրախությունը:

Մի քանի օր անց Իզաբելը մատներով խաղ էր անում իր հիվանդասենյակի մահճակալին պառկած, երբ հանկարծակի վեր թռավ դաշնամուրի նվագից: Ծանոթ ու սիրելի մեղեդի էր, հանգստություն բերող: Իզաբելը ձգվեց դեպի պատուհանը, նայեց դուրս, և նրա աչքերը տեսան Արամին նստած այդ դաշնամուրի դիմաց, ում՝ հուզմունքից դողացող մատները շարժվում էին անվստահ, երկյուղած: Աչքերը վեր պահած տղան փնտրում էր երրորդ հարկի այն միակին, ում ժպիտ պարգևելու համար ոչ մի ջանք չէր խնայի. սիրում էր, ամբողջ հոգով էր սիրում: Սկսեց երգել: Ձայնը բարակել էր, հուզվում էր սկզբում, հետո հուզմունքը հաղթահարեց, ձուլվեց իր իսկ կատարմանը, փորձեց զգալ, որ զգացնել տա:

You've been on my mind,
I grow fonder every day,
Lose myself in time
Just thinking of your face.
God only knows
Why it's taken me so long
To let my doubts go
You're the only one that I want.

I don't know why I'm scared,
I've been here before,
Every feeling every word, I've imagined it all.
You'll never know, if you never try
To forgive your past and simple be mine.
I dare you to let me be your one and only.
I promise I'm worth it to hold in your arms.
So come on, and give me a chance
To prove I am the one who can
Walk that mile until the end starts.
……

Հիվանդանոցի աշխատողները շտապեցին դուրս, շրջապատեցին նրան: Նոր էր հասցրել ավարտել կատարումը, երբ անմիջապես վրա պրծան՝ բղավելով, որ այստեղ նման բաներ չեն անում, դաշնամուրը ոնց բերել հասցրել է այդտեղ, նույն ձև պետք է արագ անհետացնի, այլապես անվտանգության աշխատողներին կկանչեն: Ծառերի հետևից դուրս պրծան երեք հոգի դասական հագուստով ու շտապեցին դեպի դաշնամուրը, որը նրանք էին բերել, տեղավորել այդտեղ ու վախից, որ կարող է թանկարժեք դաշնամուրը վնասեն, սկսեցին քարշ տալ դեպի քիչ հեռու գտնվող բեռնատարը:

Մոտ կես ժամ անց Իզաբելի հիվանդասենյակի դուռը թխկթխկացրին: Ներս մտավ բուժքույրը՝ ձեռքին մի փունջ կարմիր վարդեր և մի տուփ: Նա ծիծաղելով ասաց.

– Այդ քո Արամը ոչ միայն քեզ, այլ նաև մեզ հանգիստ չի տալիս: Ամեն անգամ մի գժական բան մոգոնում է: Այս անգամ սա է՝ ընդունի՛ր:

Խնամքով տեղավորեց թարմ բուրող վարդերը ծաղկամանի մեջ՝ հենց Իզաբելի մահճակալի կողքի պահարանի վրա, իսկ տուփը հանձնեց տիրոջը՝ ասելով.

– Ա՛յ, թե այստեղ ի՞նչ անակնկալ է պատրաստել սիրեցյալդ, չգիտեմ, բայց հաստատ մի խելառ բան կլինի:

Տուփի մեջ միջին գրքի չափով, ուղղանկյունաձև մի իր էր, ասես նկար լիներ, բայց նկարը դատարկ էր, ավելի ճիշտ՝ սպիտակ. վրան ոչ մի բան չկար նկարված: Այդ սպիտակ թաղանթի վրա քաշած էր ապակեպատ շերտ, այն շրջապատող ոսկեզօծ, փայտե շրջանակի ներքևում փայլող, բաց մոխրագույն ավազե հատիկների կույտ էր, իսկ վերևի մասում երեք կոճակ կար՝ կարծես կարևոր գործողության համար նախատեսված, թե չէ այդպիսի անշուք նկար չէր լինի. մի հետաքրքիր բան պետք է պարունակեր մեջը, եթե իհարկե դա նկար էր:

Մի նամակ կար դրված տուփի մեջ՝ «Իզաբելին Արամից» նշումով: Նամակում գրված էր.

«Երբ ուզենաս քեզ տեսնել, կսեղմես առաջին կոճակի վրա: Այն ավազի հատիկները դատարկ, սպիտակ թաղանթի վրա կշարի ճիշտ քո դիմապատկերի նման: Դու կտեսնես քեզ նայող «քեզ»-ին, ում դու կուզենաս ճանաչել, քանի որ դա դու ես, բայց դու քեզ չես ընդունում: Դու հրամայում ես քեզ լինել ուրիշ, ոչ այն, ինչ կաս իրականում: Երբ դադարես հրամայել և հանգիստ թողնես քո ներքին «ես»-ին, դու կգտնես երջանկություն, քանի որ կապանքներից կազատես ինքդ քեզ, ազատության կապանքներից: Մի՛ զարմացիր, ազատությունն էլ է կապանքներ ունենում: Դա այն

մտայնությունն է, երբ մտածում ես, որ ազատությունդ մաքսիմալ վայելելով՝ դու երջանիկ ես: Դու այդ մաքսիմալ վայելքը չես ուզում սահմանափակել, համարում ես դա դավաճանություն և ետքայլ դեպի դժբախտություն: Այնինչ երջանկությունը ազատության մթնոլորտում գտնված համերաշխության մեջ է և ոչ ինքնին ազատության մեջ, ուղղակի դա անհրաժեշտ պայմանն է, բայց չի երաշխավորում դրական արդյունք: Ընդամենը ուղի հարթելու միջոց է, ուղին հարթվում է գիտակցությամբ, այն երբեք պետք չէ անջատել:

Երբ շատ միամիտ ուզենաս տեսնել ինձ, ինչի վրա ես, իհարկե, շատ խիստ կասկածում եմ, բայց ամեն դեպքում, կսեղմես երկրորդ կոճակը: Կհայտվեմ ես նորից ավազահատիկների կարգավորված շարժով: Ես կնայեմ քեզ: Ես լուռ կխոսեմ քեզ հետ, ինչպես այս նամակի միջոցով: Ընդ որում կասեմ այն, ինչ դու կուզենաս լսել, որովհետև տեքստի հեղինակը դու ես լինելու: Ես ուզում եմ խոսել քեզ հետ քո բառերով, որ այլևս չնյարդայնացնեմ, որ այլևս չվանես ինձ, թեկուզ իմ պատկերը... գոնե իմ պատկերը: Ես ուզում եմ, որ դու բուժվես: Ես այս կյանքից ուրիշ ոչինչ չեմ ուզում: Խնդրում եմ, եթե չես ուզում դա անել քեզ համար, արա դա գոնե ինձ համար: Ապրիր, որ ես ապրեմ: Դու դա կարող ես, դու կարող ես բուժվել: Դու պիտի բուժվես, որովհետև կյանքը սպասում է քեզ, որովհետև ես սպասում եմ քեզ, որովհետև անիվը ետ էլ են պտտում, ձևը գտնել է պետք: Ձևը կա, ձևին հավատացող է պետք, ուղղակի հավատա քեզ... ուղղակի հավատա:

Եվ վերջապես, երբ սեղմես երրորդ կոճակը, կհայտնվենք մենք՝ երկուսով, մեկմեկու նայելիս: Մենք իրար կասենք այն, ինչն այդ պահին դու կկամենաս, որ

մենք իրար ասենք, և ես հավատում եմ, որ մի օր դու կկամենաս, որ մենք իրար ասենք՝ «ես քեզ սիրում եմ»»:

Արամը վերադարձավ Փարիզ, վերադարձավ իր նախկին ռիթմին: Փոքր-ինչ դժվար էր ձևացնել, թե ամեն ինչ նորմալ է, երբ նորմալ չէ ոչինչ, բայց պետք էր փորձել: Կյանքը հարգում է հոգով տոկուններին: Վերադարձից անցել էր մոտ չորս ամիս: Ուշ գիշեր էր, մթության մեջ զբոսայգու դատարկությունը նախանձելի էր: Թվում է՝ զգում ես, որ կարող ես գրեթե միայնակ թագավորել երկրագնդի մասշտաբով այդ չնչին հողակտորին, բայց սիրուն հողակտորին՝ կանաչապատ ու թարմ շնչով լի, շենքերի քարերի ճնշող պրիզմայի ու տրանսպորտի խլացնող աղմուկից հեռու:

«Ի՜նչ լավ է, որ իմ պես շատ մարդ չի փնտրում խաղաղություն այստեղ գիշերվա կեսին, թե չէ շատ քանակի պատճառով մենք միմյանց էլ հանգիստ չէինք տա: Մենք իրար կխանգարեինք, քանի որ մտքերը չեն սիրում ուրիշների ներկայությամբ գալ: Նրանք էգոիստ են, նրանք ուզում են ամբողջ ուշադրությունդ միայն իրենք գրավեն, այս պահին իմ գլխում ծագած մտքերին է տրված իշխել ինձ». մտածում էր Արամը:

Հեռվում մի քանի հոգու սիլուետ նշմարեց՝ երկու չափահաս կանանց և մեկ թռչկոտող բալիկի: Արամը ուշադրությունը ընդամենը մի պահ շեղեց դեպի նրանց, այնուհետև նորից մտավ իր մտքերի աշխարհ, բայց երկար չդիմացավ: Նրանք դանդաղ մոտենում էին՝ զբաղված ինչ-որ կարևոր խոսակցությամբ: Քայլում էին այգու լճի կողքով: Բացի նրանցից ուրիշ մարդ չկար տարածքում: Նրանց հուզական զրույցի բարձր ձայները սղոցում էին Արամի ականջը, քանի որ միայն այդ ձայներն էին խախտում նրա անդորրը: Երբ մի քիչ

էլ մոտեցան, Արամն աչքերը սրեց ու հեռվից նայելով բարձր խոսացող այդ կանանց՝ կարողացավ ճանաչել նրանցից մեկին: Տհաճորեն զարմացավ, բայց չմոտեցավ: Նա որոշել էր արդեն հեռանալ, մեկ այլ հանգիստ տեղ փնտրել մոտակայքում, երբ կայտառ բալիկը, տարված լճի պոնկին թռվռացող աղավնուն մոտ գնալու գայթակղությամբ, բաց թողեց մոր ձեռքը և վազեց ուղիղ այդ աղավնուն ընդառաջ: Աղավնին իհարկե անհետացավ՝ վայրկյանական բացելով իր թևերը և թռչելով հեռու, սակայն փոքրիկը անուշադիր սայթաքեց և ընկավ ջուրը: Կանայք սարսափահար վազեցին դեպի դեպքի վայր, բարձր գոռում էին՝ Ժան, Ժան: Հավանաբար երեխայի անուն էր: Արամը, առանց մի վայրկյան մտածելու (իսկ ինքը բավականին մոտ էր երեխայի ընկնելու վայրին), թռավ ջուրը: Մի քանի ակնթարթ անց Արամը դուրս պրծավ ջրից՝ մոտ 5 տարեկան բալիկին իր գիրկն առած: Երբ խելքի եկավ հասկանալու համար, թե ինչ կատարվեց և ինչ արեց հենց նոր ինքը, նայեց փոքրիկի դեմքին և ի՞նչ տեսնի: Դա այն նույն երեխան էր, ում ինքը տեսել էր «Café de Paris» սրճարանի երկրորդ հարկի բնակելի տան պատուհանից մոտ երեք տարի առաջ: «Հա՛, հաստատ նա է». ցածրաձայն ասաց Արամը՝ նայելով բալիկի նույն կանաչավուն ու կլորիկ աչուկներին: Ճուտոն նույն բարի ժպիտով ժպտաց նրան, Արամն ի պատասխան՝ ևս ժպտաց: Երբ երկուսով գլուխները վեր բարձրացրին և տեսան երկու տիկիններին իրենց գլխավերևում կանգնած, նրանցից մեկը արագ իրեն գցեց դեպի երեխան: Խլեց Արամի գրկից, ինքը գրկեց փոքրիկին ու հուզված անդադար համբուրում էր՝ անսահման երախտագիտություն հայտնելով Արամին

իր երեխային փրկելու համար: Մյուս կինը ապշահար կանգնած էր նրա դիմաց: Արամը չայլայլվեց. նա ճանաչել էր նրան դեռ մի քանի րոպե առաջ՝ մինչ ջուրը ցատկելը: Կլաուդին էր, քրոջ ու քրոջ երեխայի հետ էր զբոսայգում: Կլաուդիի քույրը մեկ նայում էր Արամին, մեկ գլուխը թեքում Կլաուդիի կողմը, չվարանեց և հարցրեց.

– Դուք ծանո՞թ եք:

Կլաուդին ոչինչ չասաց, մարմինը դողում էր, բայց ջանում էր թաքցնել իր հուզվածությունը:

Փոխարենը Արամը շատ հանգիստ էր, չնայած դողալու ավելի շատ իրավունք ուներ, վերջիվերջո այդ նա էր թրջվածը: Արամը տեսնելով, որ քար լռություն է տիրում, իսկ Կլաուդիի քույրն ավելի անհամբեր էր դառնում իր հարցի պատասխանը ստանալու առումով, որոշեց խոսել.

– Այո՛, ծանոթ ենք,– հետո դադար տվեց ու էլ ավելի հանդարտ տոնով ավելացրեց.– Լավ մնացեք ու զգույշ եղեք, խնդրում եմ: Չի կարելի երեխային աչքաթող անել:

Նա այդ բառերն արտասանում էր՝ մի վայրկյան անգամ չթեքելով հայացքը Կլաուդիից: Այդ հայացքը ուրիշ բան էր ասում: Նրանց երկուսի հայացքներում լրիվ ուրիշ խոսակցություն էր ընթանում: Զարմանալիորեն Կլաուդին ավելի շատ Արամի հայացքից բխող խոսքերն էր ընկալում, քան վերբալ նրա ասածը, որը մի տեսակ ստացված թատրոնի էր նման, իսկ հանդիսատեսը մեկը՝ Կլաուդիի քույրը:

Արամը հեռացավ: Նրա անշտապ քայլվածքից, որին դեռ երկար ակնապիշ հետևելու էր Կլաուդին, պարզ երևում էր, որ տղան արդեն պատասխանը

տվել է, ամեն ինչի պատասխանը տվել է: Այդպես են պատասխան տալիս խոհեմները: Երբ չարությանը բարությամբ ես պատասխանում, չարությունն այդ պահից սկսած տապալված է: Ոչինչ նրան այդպես սուր չի կարող խոցել, քան սեփական ոչնչությունը մատնացույց անելը: Դա կլինի հենց չարի վերջը: Իսկ չարությանը չարությամբ պատասխանելով՝ մենք ուղղակի անվերջանալի դժբախտությունների փոթորկալից տեղապտույտի մեջ ենք դնում մեր կյանքը, ինչը հենց չարի ուզածն է:

Մի քանի օր անց՝ գիշերը, տուն դառնալու ճանապարհին Արամը հանկարծ հիշեց, որ դեղատուն պիտի մտնի. Տաթևը հարբուխ ուներ այդ օրերին, խնդրել էր որդուն տուն վերադառնալիս դեղեր գնել: Քայլերն ուղղեց դեպի մոտակա դեղատուն: Դեղատան մուտքի դռանը հասնելու համար մի քանի աստիճաններ պիտի հաղթահարեր: Մտավ ներս ու այնտեղ երկար մնաց. հավանաբար հերթ էր: Նրա մտքով չէր անցնում, որ իր գործողություններին դրսում հետևող կար հեռվից: Սրտի թրթիռով սպասում էր նրան Նա: Դեղատնից դուրս գալիս, դեռ աստիճաններով ներքև չիջած, մի քիչ հեռու՝ մայթեզրին, աղոտ կերպարանք Արամի աչքովն ընկավ: Մութ էր, լավ չէր երևում: Կարծես տեսիլք լիներ, որն անհագ կլանել էր նրա մտքերը և թույլ չէր տալիս իրենից բացի որևէ այլ բանի վրա ուշադրությունը սևեռել: Արամը խոժոռվեց, երկար կանգնեց տեղում, չիջավ, փորձում էր ուշադիր զննել, քանի որ հասկացել էր՝ այդ ինչ-որ մեկը երկար ու թիրախավորված հենց իրեն է նայում: Վերջապես Արամը որոշեց առաջինը տեղից շարժվել: Մի փոքր մոտենալով՝ տեսիլքը սկսեց ավելի ճանաչելի

ու հողեղեն տեսք ստանալ: Մի աղջիկ էր, հուզմունքից մեկ ոտնաթաթերի վրա էր կանգնում, մեկ նորից հպում դրանք գետնին: Անհանգստությունն ավելի խորացավ, երբ հասկացավ, որ Արամը քայլում է դեպի իրեն: Իզաբելն էր: Արամը մոտեցավ, սակայն չշտապեց գրկել նրան, կանգնել էր կես մետր հեռավորության վրա ու փորձում էր կարդալ աղջկա մտքերը: Լուռ կանգնած էին երկուսով: Խոսքերն անտեղի էին նման իրավիճակում: Դրանք ավելի են խանգարում, երբ խոսում են աչքերը, միմիկան, ժեստերը և ի վերջո հոգին: Իզաբելը բացեց բռունցք արած ձեռքը՝ ափի մեջ ցույց տալով արծաթագույն խաչը: Այլևս ամեն ինչ պարզ էր, խոսելու կարիք չկար. խոսքերն ասված էին: Դրանք ասվել էին անցյալում, բայց հենց այսօրվա համար էին ասվել: Արամի դեմքին ջերմ ու անկեղծ ժպիտ հայտնվեց, բարի ժպիտ, ինչպես իր հոգին էր՝ մաքուր ու անկեղծ: Երկար կանգնած մնացին այդ խորհրդավոր լռության մեջ: Հանկարծ Արամը կայծակնային կտրուկությամբ առաջացավ դեպի նա ու հանդուգն գրկելով՝ համբուրեց Իզաբելի շուրթերը: Արամի ջերմ գրկում Իզաբելն իրեն զգում էր ամենապաշտպանվածն աշխարհում: Այդ զգացողությունն արտասովոր էր, բայց այն դեպքում միայն, երբ մտածում ես դրա մասին, իսկ նրանք չէին մտածում այլևս, նրանք սիրում էին: Իզաբելի գեղեցիկ աչքերից գահավիժող արցունքի երկու կաթիլները նրբորեն շաղախեցին խոնավությունից փայլող այտերը, դողացող շուրթերը, որոնք հուզառատ թովանքով արտաբերեցին.

– Հիմա մենք մեկ ենք, հիմա մեր ամեն ինչն է միասին,– ու նորից նետվեց նա Արամի գիրկը շարունակելու վայելել կիսատ թողած համբույրի բերկրանքը:

Խաղաղության պայմանագիրը կնքված էր: Այն դատարկ թուղթ էր: Վերջում երկու ստորագրություն կար, և միայն այդ ստորագրությունների տերերը գիտեին, թե ինչ է գրված այդ դատարկ թղթի վրա, և միայն նրանք դա կարող էին կարդալ... Վերջապես նույն բանը կարդալ:

Երկուսով նստեցին Արամի մեքենան ու սլացան բոլորի աչքից հեռու: Երկուսով էին, մթնշաղ էր: Ծառերի ճյուղերը ճոճվում էին քամուց, Իզաբելի ոսկեգույն նոսր մազերը՝ ևս: Աշունն իր գույներն էր տարածում ամենուր, դեղին տերևների խշխշոցը ոտքերի տակ դուրեկան էր, երկինքը՝ դեպի իրեն կանչող: Մշուշի մեջ զարմանալիորեն չես կորչում, երբ գտած ես լինում քեզ քո ներսում, ոչինչ այլևս քեզ չի ստիպի վախենալ որևէ բանից: Դու ամուր ես ներսումդ, հաստատակամ՝ քո նպատակների ու ցանկությունների մեջ: Այդպես երկու խելագար սրտեր վերջապես ցանկացան նույն բանը: Երկու խելագար սրտեր երդվեցին միշտ լինել միասին, մնացածը տեխնիկայի հարց է, մնացածը՝ արարողակարգ, որ կլինի հետո: Կարևորն այդ պահն էր, իրականություն մխրճված անկեղծության մարմնացումը, երբ խոսքի արժեքն այնքան ցայտուն է, այնքան հասկացված: «Ես սիրում եմ քեզ»՝ բառեր են, որ հաճախ կարելի է լսել: Բառեր են, որ այդ հաճախության մեջ կարող են կորչել, կորցնել իմաստը: Իսկ երբ դրանք արտասանվում են բազում փորձություններից ու փոփոխական զգացմունքներից հետո, դրանք կնիք են դնում մի ավարտի, որ նոր սկիզբ պիտի դառնա: Այն գիտակցված է, քան երբևէ, այն ամուր է, անսասան ու ճշմարիտ: Արամը նուրբ համբուրեց Իզաբելի ճակատը, թևերով առավ նրան իր գիրկը, որ ջերմացնի իր

տաք շնչով, այլապես քամին ուժեղ էր. իրեն էր ուզում ենթարկացնել այն, ինչ հնարավոր էր ենթարկացնել: Իզաբելը մի պահ ետ քաշվեց, ուզեց ազատվել նրա գրկից, բայց նորից մոտ գնաց, հենվեց Արամի ուսին, հետո երկուսով հենվեցին Արամի՝ շևրոլետ մակնիշի սև գույնի ավտոմեքենային: Իզաբելի սև և մուգ կապույտ վերարկուի փեշերը ուժգին թափահարում էր քամին: Լուռ էին, այդպես մի քանի րոպե երկուսի աչքերը զմայլվում էին մշուշոտ հորիզոնի խորհրդավորությամբ, կարծես այն բան էր պատմում, կարծես այն ևս ասելիք ուներ, այն ևս պատմություն ուներ պատմելու: Արամը թևը նորից գցեց Իզաբելի ուսին, մոտեցրեց իր դեմքը նրա դեմքին, որ Իզաբելի անկանոն ու թրթռացող շունչը զգար, որ խոսեին ցածր, անկաշկանդ, բնությունից թաքուն, բայց նրա մեջ:

– Որքա՜ն էի կարոտել քո բույրը:

– Ո՞նց պիտի կարոտեիր, եթե երբևէ այսքան մոտ իրար կանգնած, իրար զգացած չենք եղել:

– Կարոտում էի այն բույրը, որն ինքս էի պատկերացրել, որ ունես: Պարզվում է՝ գրեթե կռահել էի, թե ինչպիսին է այն: Ինչքա՜ն հաճելի ու ցանկալի է քո մարմնի բույրը, շնչառությունը, ինչքա՜ն բան կորցրեցի իմ մեծամտության պատճառով: Երբ վստահ էի, որ չեմ սխալվի, սխալվեցի ու վանեցի ինձնից մի մարդու, ում կողքին գտնվելու անկարողության մեջ պիտի տանջվեի հետո՝ մինչ այս պահը, մինչ ներկայիս հանգստությունը, որ պարուրել է մեզ երկուսիս: Մենք յուրովի հասունացանք, մենք յուրովի հասկացանք՝ սեր կոչվածն ինչ է, ինչ է տալիս, ինչից է զրկում, մեր դեպքում սկզբից զրկեց, հետո տվեց: Դա է պատճառը, որ երկուսս պարտավոր ենք այն փայփայել,

քանի որ դրա պակասի անտանելիությունը երկուսս էլ զգացել ենք տարբեր ժամանակ, բայց նույն կերպ ու նույն ցավն ապրել ենք տարբեր ժամանակ, բայց էլի նույն կերպ:

– Ես այլևս չեմ ուզում հիշել անցյալը, ես ուզում եմ պատկերացնել ապագան, գծագրել այն այսօր քեզ հետ:

– Այդ քարտեզի մեջ հարազատներին էլ պիտի տեղավորենք ու կներես, բայց պիտի ասեմ, նաև մորդ: Խոստացիր ինձ, որ կհաշտվես նրա հետ:

– Դու նորից ուզում ես նոր վեճի թեմա՞ բացել:

– Ո՛չ, ես պարզապես ուզում եմ փակել այն վեճերը, որոնք առկա են ամենամոտիկ մարդկանց միջև՝ մոր և աղջկա, որ նորերը չհայտնվեն, որ իմ ու քո վեճը այս թեմայով լինի վերջինը: Ոչինչ, որ հիմա տհաճ է, ոչինչ, որ հիմա չես ուզում խոսել, կարևորը՝ նրա հետ ուզենաս խոսել իմ այս խոսքերից հետո: Մենք այնքան բանի միջով ենք անցել, որ սովորել ենք խոհեմ դատել: Սառնասրտությունը վատ բան չէ, երբ գիտակցության հետ համահունչ է շարժվում: Ծնողի ու զավակի միջև գժտություն չպիտի լինի, դա անընդունելի բան է: Խնդրում եմ քեզ, անգի՛նս, մի՛ մերժիր խնդրանքս, խոսիր նրա հետ: Փորձեք լեզու գտնել, որ ես էլ հանգիստ լինեմ, այլապես տանջվելու եմ՝ իմանալով, որ դու տանջվում ես, ու չփորձես ասել, թե չես տանջվում: Անհնար է լինել գժտված ծնողի հետ և չտառապել դրանից՝ անկախ այն բանից, թե ով է մեղավոր: Միևնույն է՝ դա տանելի վիճակ չէ, խոցում է երկուսիդ էլ:

Իզաբելը ոչինչ չասաց, կարծես դա լուռ համաձայնության նշան լիներ: Նա դանդաղ մոտեցրեց իր գլուխը Արամի պարանոցին, ձեռքը զգուշորեն դրեց

տղայի կրծքավանդակին: Նա երջանիկ էր, վայելում էր սիրելիի շունչը, նրա կրքոտ ձայնը, որ մեղմ հնչում էր ականջին, իսկ ձայնը ցածր էր, գրեթե շշուկով ասում էր՝ «հավերժ սիրելու եմ քեզ, ի՛մ միակ»: Ու այդ խոսքերին զուգահեռ նրա շուրթերը նուրբ համբուրում էին Իզաբելի ճակատը, ջերմացնում գիշերվա ցրտից նրա սառած դեմքը:

Նոյեմբերի վերջն էր, արդեն բավականին ցուրտ էր: Ձմեռն էր դուռը թակում և հույս ուներ, որ շուտով կբացեն: Բացեն-չբացեն, նա մեկ է ներս է մտնելու: Բնության օրենքները չեն քննարկվում: Դրանք ընդունված են և մարդիկ, կենդանիներն ու բույսերը ենթարկվում են դրանց: Իսկ մարդկային հարաբերություններում օրենքներ ստեղծողները մարդիկ են հենց, բայց նրանցից շատերը երբեմն չգիտեն դրանց մասին, երբեմն չեն կարդացել, երբեմն հատուկ խախտում են, երբեմն՝ անտեսում:

Բուռն եռուզեռ էր Պատրիկենց տանը, թվում էր, թե սովորական երեկոյան ընթրիք պետք է, որ լինի. հյուրեր չկային, իրենք ընտանիքով էին՝ Պատրիկը, Տաթևը, Արամն ու Իզաբելը, բայց ինչ-որ անհանգստություն էր թևածում օդում, տան պատերից ներս: Դուռը թակեցին, աջ թևը կտրուկ վերև բարձրացնելով՝ Տաթևը բացականչեց

– Ես կբացե՞մ:

Դռան մյուս կողմում հայտնվել էր Սիլվին: Միջին հասակի այդ գեղեցկադեմ օրիորդը նրանց հարևանուհին էր: Նա ասաց, որ Պատրիկի անվամբ երեկ նամակ էր եկել: Տանը մարդ չկար, խեղճ փոստատարը երկար թակեց դուռը և արդեն հեռանալու ճանապարհին հանդիպեց Սիլվիին: Սիլվին խոստացավ

փոխանցել նամակը հասցեատիրոջը: Եվ ահա նա այստեղ է: Նամակը հանդիսավորությամբ թափահարում էր ձեռքում այնպես, ասես խոշոր շահում է, և ինքը տոկոս ունի դրանից, քանի որ այն հանձնելու պատիվն իրեն էր վիճակվել: Շահումը խոշոր չէր, ավելին ասեմ, շահում էլ չէր: Լրիվ ուրիշ բան էր, որը ստիպեց Պատրիկին խիստ անհանգիստ և այլայլված տեսք ընդունել, սակայն Սիլվիին դրանում համոզելը այդքան հեշտ չէր լինելու. նա վստահ էր իր կանխազգալու ունակությունների վրա: Վստահ էր, որ շատ հաջող ու օգտակար բան է բերել իր հարևաններին: Պատրիկը չփորձեց որևէ բան համոզել, նա արագ ու առանց խոսքի վերցրեց նամակը, որ Տաթևը չհասցնի նկատել, թե ումից է, և առանձնացավ: Այդ ընթացքում Սիլվին իր զվարճալի կերպարով գրավել էր տանեցիների ուշադրությունը: Նա այդպիսին էր, միշտ տոն էր բերում իր հետ: Պատրիկի ոտքերը տարան նրան բուխարու մոտ, որը հյուրասենյակի մյուս ծայրում էր: Հանեց նամակը ծոցագրպանից ու սկսեց կարդալ: Նամակը Կլաուդիից էր, որում գրված էին հետևյալ տողերը.

«*Ես, այս տողերը գրելիս, ասես ինքս ինձ չճանաչեմ: Մեկ-մեկ ինձ թվում էր, թե սրանք ես չեմ գրում: Հետո նայում էի դիմացս դրված հայելու մեջ և տեսնում ինձ: Հասկանում էի այդժամ, թե ինչպիսին կարող էի լինել և ինչպիսին չեղա: Ես ինքս ինձ կործանեցի՝ կարծելով, թե կործանում են ինձ ուրիշները: Ես ձեզ բոլորիդ չհավատացի, ես հավատացի միայն «ես»-իս: Պարզվեց՝ «ես» ամենամեծ խաբեբան եմ: Ես ուզում էի ամեն ինչ ու արագ, ու նյարդայնանում իմ ցանկությունների կատարման դանդաղ տեմպից, իսկ*

ավելի հաճախ դրանց չկատարումից՝ փնտրելով մեղավորներ, անվերջ փնտրելով մեղավորներ: Իրականում ցանկություններս էին անկատար, ցանկություններս՝ հպանցիկ: Դրանք իրականում ես չէի ուզում, բայց համոզում էի ինձ, որ ես էի ուզում, որովհետև մի բան պիտի ուզեի: Ես պարտադիր միշտ մի բան պիտի ուզեմ, մանկուց այդպիսին եմ, մանկուց՝ անխելք: Մանկական անխելքությունը դեռ հասկանալի է, սակայն այս տարիքում՝ աններելի: Մենք իրար համար չէինք ստեղծված, մենք պարզապես միասին էինք: Միասին մեր կյանքի ինչ-որ հատված ապրեցինք, իսկ ես այն դարձրի պաթոս, դարձրի հերթական ցանկություն վերադարձնել իմ կյանքի հունը դեպի այդ թակարդային պաթոսը և պարտվեցի: Պարտվեցի, քանի որ տեսա միայն ինձ և չտեսա ձեզ: Ձեր երջանկության մեջ տեսա իմ դժբախտությունը և չհասկացա, որ ուղղակի ալարում եմ կառուցել իմը... սեփականը: Այդ հարցում Իզաբելն իմ կրկնօրինակն է, բայց ինչպես նրան, այնպես էլ ինձ, դուք փոխեցիք: Ես հույս եմ փայփայում, որ մի օր դու կներես ինձ իմ արածների համար, նաև այն արածների համար, որոնք դու չգիտեիր և կիմանաս հիմա...

Այդ ես եմ այնպես արել, որ Տաթևը կորցնի երեխային: Այն սուրճի բաժակը, որ խմեց նա սրճարանում... Այն կինը, ով իրեն գործնական առաջարկ էր անում... պատահական չէին, այդ ամենն իմ սարքածն էր: Ես նաև բժիշկներին էի կաշառել, որ չասեն ձեզ իրական պատճառը, գցեն տարիքի վրա: Ցավում եմ, Պատրի՛կ, անկեղծ ցավում եմ, ես չէի հասկանում, թե ինչ եմ անում: Կներես ինձ, եթե կարող ես, ավել ոչինչ չեմ խնդրում, միայն ներում: Դա ինձ կփրկի»:

Պատրիկը ցնցված էր, ձեռքերը դողում էին, չէր ուզում հավատալ կարդացածին, չէր ուզում և վերջ... «բայց նա է գրել, այո՛, նրա ձեռագիրն է, չի կարող չար կատակ լինել, այսպիսի կատակներ չեն անում, ուրեմն ճիշտ է, ուրեմն նա էր». ծանրութեթև էր անում Պատրիկը հենց նոր կարդացած ամեն մի բառ ու սարսափում: Մարմնով մեկ սարսուռ անցավ, գունատվեց, աչքերն ասես քարանային: Այդպես մի քանի րոպե մեխվել էր տեղում, ոչինչ չէր զգում: Հետո հանկարծ քարացած վիճակը սկսեց քանդվել՝ տեղը զիջելով լրիվ հակառակ զգացմունքին. աչքերից ուզում էին արցունքներ թափվել, բայց զսպեց իրեն, երբ զգաց մեջքի ետևում Տաթևի կրունկների կտկտոցը (նա անշտապ մոտենում էր), միանգամից հավաքեց իրեն:

– Ի՞նչ է պատահել, սիրելի՛ս:

Պատրիկը ջերմագին հայացքով նայեց Տաթևի՝ բարությամբ լի դեմքին և նորից խաղաղվեց, մեղմ ժպտաց ու պատասխանեց.

– Ոչինչ, անո՛ւշս: Ոչինչ չի պատահել:

Պատրիկը Տաթևի մոտենալուն զուգընթաց ձեռքի ափի մեջ ճմրթեց նամակը, հետո նետեց բուխարու մեջ: Կրակը բուխարու մեջ մի պահ թեժացավ, այնուհետև մոխրի աննշան կույտեր նետվեցին բուխարուց դուրս: Դրանք ոչ ոք չնկատեց: Դրանք հետո դռան բացվելուն պես քամին կտանի անորոշ մի տեղ, անկարևոր մի տեղ: Կարևորն այն էր, որ անցյալը կտանի իր հետ, անհետ կտանի, կկորցնի հավետ:

Վերջաբան

Սիրելի՛ ընթերցող, հույս ունեմ, որ այս պատմությունը դիպավ սրտիդ, դու գտար քեզ հոգեհարազատ տողեր այս գրքում, մտքեր, որոնց հետ կհամաձայնվեիր, մտքեր, որոնց հետ կվիճեիր, սյուժեի ընթացք, որը, օրինակ դու, այլ կերպ կտանեիր: Կկառուցեիր քո անկյունը սեփական քարերով մինչ այդ քանդած պատնեշի տեղում, որովհետև սերը պատնեշներ չի սիրում, նա դրանք քանդում է: Իզուր չէ, որ հենց գիրքը բացում ես, առաջին բանը, որ գալիս է աչքիդ, դա ճակատագրի վերաբերյալ իմ երկտողն է: Այն ևս քանդում է: Քանդում է, որ կառուցի: Մենք ենք մեր ճակատագրի հունը տանում, մենք ենք որոշում ինչը այն քանդի, իսկ ինչը՝ ոչ: Սխալվում ենք, այո՛, սխալվում ենք, որովհետև մենք տեսնում ենք այն, ինչը երևում է, իսկ պարզվում է այն, ինչը երևում է, ընդամենը ծովի մի կաթիլ է այդ նույն ծովում, և մենք մեծն հավանականությամբ չենք սխալվի, եթե կարողանանք ծովը տեսնել ցանկացած կաթիլի փոխարեն հենց այդ նույն մի կաթիլում, այն կաթիլում, որը երևում է:

Ցանկացած պատմություն ես սիրում եմ դիտարկել ամբողջության մեջ, մինչ այդ նշյալ ամբողջությունը

լցնում եմ շատ տարբեր ասպեկտներով՝ միմյանց խանգարող, միմյանց լրացնող: Այնուհետև իմ փաթաթած այդ բարդ կծիկը սկսում եմ ինքս էլ ետ փաթաթել: Բարդ է, բայց իրականում ճշմարտությանը հասնելու ամենակարճ ճանապարհն է, բայց ոչ ամենարագը: Երբեմն կարճը արագ չի լինում: Թել առ թել առանձնացնում եմ այդ կծիկը, գունավորում դրանք ներկերով, որոնք ես եմ ուզում, որոնք իմ պատկերացմամբ սիրուն են: Դա էլ իմ ազատությունն է: Ես այդպես եմ երջանկանում, իմ բաժին ազատության մեջ ման եմ գալիս խոսքեր, վանկեր, հնչյուններ ու դարձնում դրանք պատմություն:

Ես փորձում եմ գրել այնպես, որ իմ աշխատանքները հնարավորինս շատ բան տան ընթերցողին, տանեն այն աշխարհ, որում ես էի հայտնվել գիրքը գրելու ընթացքում: Ես այդ աշխարհը ցույց տվեցի, ինչպես կարողացա, ինչպես զգացի... Այս անգամ սիրո աշխարհն էր դա, մեկ ուրիշ անգամ կլինի մեկ ուրիշը: Եթե գրական ձեռագիրս սիրվեց քո կողմից, սպասիր այդ գալիք ուրիշին, այն նույնպես հետաքրքիր է լինելու:

Բովանդակություն

ՆԱԽԱԲԱՆ..... 5

ԳԼՈՒԽ 1 7
ԳԼՈՒԽ 2.....37
ԳԼՈՒԽ 3..... 66
ԳԼՈՒԽ 4..... 87
ԳԼՈՒԽ 5.....113
ԳԼՈՒԽ 6.....143
ԳԼՈՒԽ 7.....162
ԳԼՈՒԽ 8.....184
ԳԼՈՒԽ 9..... 204

ՎԵՐՋԱԲԱՆ.....227

Անի Միրզոյան

ԵՐԵՎԱՆ-ՔԱՐԻՁԸ ՄԻԱՅՆ ՉՎԵՐԹ ՉԷ

Հրատ. բաժնի ղեկավար՝ **Հռիփսիմե Մադոյան**
Հրատ. խմբագիր՝ **Արքմենիկ Նիկողոսյան**
Տեխն. խմբագիր՝ **Արարատ Թովմասյան**
Էջադրող՝ **Նարինե Հովհաննիսյան**
Կազմը՝ **Սևաննա Գրիգորյանի**

Ամտարես

«ԱՆՏԱՐԵՍ» հրատարակչատուն
Երևան 0009, Մաշտոցի 50ա/1
Հեռ.՝ +(374) 58 10 59, 58 76 69
antares@antares.am
www.antares.am

Ինչքա՜ն փոքր ենք մենք՝
մարդիկ, որ մեզ մեծ զգանք:

Անի Միրզոյան

9 789939 768311
Անտարես